This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

**Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

**About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

ANDOVER-HARVARD LIBRARY
AH 5ZUF Q
HARVARD DEPOSITORY
SPECIAL COLLECTION
CIRCULATION RESTRICTED
Digitized by Google

816.9
Armenian
1851




Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Martyrs of Great Britain

Digitized by Google

# ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆ

## ՄԵԾԻՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԷՋ

1400—1558

ԵՒ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՎԿԱՅՈՑ ՔԱՆԻ ՄԸ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

'Ի ԶՄԻՒՌՆԻԱ

'Ի ՏՊԱՐԱՆԻ ԿՈՒԼԻԵԼՄՈՍ ԿՐԻՓՓԻԹԻ

1851

Digitized by Google

# ՑԱՆԿ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## 1400—1546

### ԳԼՈՒԽ Ա։

Երես

Չորեքտասաներորդ դարուն՝ ճշմարիտ կրօնքին ի՛նչ վիճակի մէջ ըլլալը Անգղիոյ մէջ — Մուրացիկ կրօնաւորները — Ուիքլիֆ — Նոր Աստուածաշունչի թարգմանութիւնը — Լօլլարտ կոչուածները — Հալածանք — Կուլիէլմոս Սաւդրին՝ առաջին Անգղիացի մարտիրոսը — Յովհաննէս Պատալի — Գոյափոխութեան վրայ — Կուլիէլմոս Թօրբ — Լորտ Քոբհամի դատաստանը ու դատապարտութիւնը — Ասիկայ բերդէն կը փախչի — Ետքը կը բռնուի ու կ'այրուի . . . . . . . . 1

### ԳԼՈՒԽ Բ։

Դէյլըր — Փիքօք եպիսկոպոսը — Գոյափոխութեան վարդապետութեանը յառաջադիմութիւնը — Տպագրութեան գիւտը — Յովհաննէս Պրաուն — Սուրբ Գիրք կարդացուելուն դէմ հակառակութիւն . . . 22

### ԳԼՈՒԽ Գ։

Թովմաս Ման — Մէկ կրակի մէջ եօթը մարտիրոսներ կ'այրուին Քովէնդրի մէջ՝ իրենց տղոցը Անգղիարէն լեզուով Տասը Պատուիրանքները սորվեցընելնուն համար — Լինքոլնի թեմին մէջ հալածանք կ'ըլլէ — Ժողովրդոց տհաճութիւնը այս հալածանքին վրայով, և եկեղեցականաց օրէ օր աւելի իշխանութիւն ձեռք բերելը — Դոնստալ եպիսկոպոսին հրամանը Անգղիարէն Աւետարանին դէմ — Դինտալ — Իր Նոր Կտակարանին թարգմանութիւնը՝ որ Անգղիարէն լեզուով տպուածներուն առաջինն եղաւ — Այս Աւետարանէն շատ օրինակներ ծախու կ'առնէ Լոնտոնայ Եպիսկոպոսը, ու կ'այրէ . . . . . 30

Digitized by Google

# ՑԱՆԿ

## ԳԼՈՒԽ Դ.

Երես

Պիլնէյ — Իր քննութիւնը՝ Գոնզալ եպիսկոպոսին առջեւ — Իր նամակները՝ որ Եպիսկոպոսին խրկեց — Պիլնէյ կը համոզուի իր վարդապետութիւնները ուրանալու — Իր խորին տրտմութիւնը և զղջումը այս բանը ընելուն համար — Պիլնէյ միտքը կը դնէ որ նորէն Աւետարանին ճշմարտութիւնը քարոզէ — Ասիկայ կը բռնուի ու Նորուիչի մէջ կ'այրուի՝ իբրև նորէն մոլորութեան դարձած հերետիկոս . 37

## ԳԼՈՒԽ Ե.

Լատիմէր՝ որ առաջ նախանձաւոր պապական մըն էր — Պիլնէյին քարոզութեամբը դարձի կու գայ, ու Աւետարանը կը քարոզէ — Իր անկեղծութեամբ գրած նամակը՝ որ Թագաւորին խրկեց — Ասիկայ պապականներէն կ'ամբաստանուի — Մէկ վիճակի մը Եպիսկոպոս կը կարգուի — Կը ջանայ մոլորութիւնները վերցընել — Թագաւորին առջեւ քրիստոնէավայել համարձակութեամբ կը վարուի . 50

## ԳԼՈՒԽ Զ.

Բենհամ — Իր մահուան ժամանակը ըսած խօսքերը — Դրէյսիին կտակը — Ֆրիթ — Փախչելու չուզեր — Ու Հիւեդին հետ մէկտեղ կ'այրուի — Հալածանքը նորէն երեւան կ'ելլէ — Պօնները — Ժողովուրդին փափաքը Սուրբ Գիրք կարդալու համար — Փորդր — Ասոր կրած սաստիկ տանջանքը ու մահը Նիւկէյդի մէջ . . 56

## ԳԼՈՒԽ Է.

Աննա Ասքիւ — Իր համարձակութիւնը ճշմարտութեան համար — Իր կրած անողորմ տանջանքները ձգարանին վրայ — Իր այրուիլը . . . . . . . 69

## ԳԼՈՒԽ Ը.

Սկովտիա — Առջի քրիստոնեայք — Քըլտիզ կոչուածները — Քրիստոնէութիւնը Հռովմայ եկեղեցւոյն միջոցովը չէր որ Բրիտանիա մտաւ — Աս նոյն եկեղեցին կամաց կամաց իր իշխանութիւնը հոն կը մտցընէ — Քըլտիզնեբուն վրայ կը բռնանայ — Սկովտիոյ մէջ Ուիքլէֆեանց

Digitized by Google

Երես

դէմ հալածանք կ՚ելլէ — Գայլըի Լօլլարտները — Հռովմայ եկեղեցւոյն ապականութիւնը Սկովտիոյ մէջ — Պատրիկիոս Համիլտոնը — Իր գրուածքը հաւատոյ և բարեգործութեանց վրայ — Ասիկայ հալածանք կը կրէ ու կ՚այրուի — Կարդինալ Պիդոն — Ուիշարդ — Իր նախանձաւորութիւնը և օգտակարութիւնը — Իրեն դէմ ամբաստանութիւն — Իր դատապարտութիւնը ու այրուիլը . 79

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## 1547—1558

### ԳԼՈՒԽ Ա.

Եդուարդ Զ.ին բնաւորութիւնը — Իր մահը, ու մահուան ժամանակին ըրած աղօթքը — Բարեկարգողները կը բռնուին — Լէտի Ճէյն Կրէյը թագուհի կ՚անուանի — Մարիամ խոստմունք կ՚ընէ բրօթէստանդներուն — Իր մտքին մէջ կ՚որոշէ պապականութիւնը նորէն հաստատել — Գրամէր՝ և Լէտի Ճէյն Կրէյը դատաստանի կը կանչուին — Լէտի Ճէյն Կրէյին գլխատուիլը — Եղիսաբեթ իշխանուհւոյն վտանգը — Մարիամ թագուհւոյն հրամանը հերետիկոսութեան դէմ, և տղոց դաստիարակութեան վրայ — Բրօթէստանդ եկեղեցականք կը մերժուին — Հռովմէական քահանայից վարքը — Անոնց հայհոյալի հպարտութիւնները — Հռովմէական հանդէսներ ու արարողութիւններ . . . . . . 95

### ԳԼՈՒԽ Բ.

Փիլիպպոս թագաւորը Անգղիա կը հասնի — Պօննէր իր թեմին քաղաքներուն այցելութիւն ընելու կ՚ելլէ — Բարլամէնդը Պապին կը հնազանդի — Հռովմէական եկեղեցին նորէն կատարեալ իշխանութիւն կը ստանայ Անգղիոյ վրայ . 107

Digitized by Google

# ՑԱՆԿ

## ԳԼՈՒԽ Գ.

Երես

Հալէս դատաւորը — Ճ՚իւէլ — Խրօթէսդանդները այ-րելու հրաման կ'ելլէ — Հուփր և ուրիշներ ալ այրուելու կը դատապարտուին — Բօձէրս՝ Սմիթֆիլտի մէջ կ'այրուի — Հուփրին տանջանքը ու մահը . . . . 113

## ԳԼՈՒԽ Դ.

Դէյլօր քահանան կը հալածուի Պօններին միջոցով, ու իր իշխանութենէն կը զրկուի — Հատլէյի մէջ կ'այրուի — Սաունտէրս կ'այրուի Գովէնդրի մէջ — Պօննէր ուրիշ Խրօթէսդանդներ ալ կը դատապարտէ . . . 126

## ԳԼՈՒԽ Ե.

Դոմքինս կը դատապարտուի ու կ'այրուի — Հընդր կը հա-լածուի՝ Սուրբ Գիրք կարդալուն համար — Նոքը կը դատապարտուի ու կ'այրուի — Հիկպէտ և Քօսդօն — Լաւրենտիոս — Ֆերրար եպիսկոպոսը կ'այրուի — Ռօ-լէնս Հուայդին հաւատքը ու կրած տանջանքը . 136

## ԳԼՈՒԽ Զ.

Մարշին տանջանքը ու մահը — Քարտմէյքր և Ուարն — Սիմփսօն և Էրտիլէյ — Հաուքս — Ուադս . 151

## ԳԼՈՒԽ Է.

Պրատֆօրտին քննութիւնները — Կը ջանան անոր միտքը դարձընել իր ընդունած վարդապետութիւններէն — Անոր այրուելուն հրամանը կ'ելլէ — Անոր տանջանքներուն քանի մը պարագաները . . . . . . 161

## ԳԼՈՒԽ Ը.

Պլանտ և ուրիշներ ալ կ'այրուին Քանդուարիոյ մէջ — Ուէյդ և Մարգարիտ Բօլլի կ'այրուին — Քարվէր կ'այ-րուի Լիվէսի մէջ — Րիտլէյ և Լադիմէր վերջին անգամ դատաստանի կը կանչուին — Կը դատապարտուին ու կ'այ-րուին — Րիտլէյին անողորմ տանջանքը . . 170

Digitized by Google

# ՑԱՆԿ 

## ԳԼՈՒԽ Թ.

Երես

Կարտինէրին սոսկալի մահը — Աւէրպ, Ռօբէր և Ռաբք — Փօլին վարմունքը — Ֆիլքօդին քննութիւնները ու դատապարտութիւնը — Բանտի մէջ Բրօթէսդանդներուն քաշած չարչարանքները — Եօթը մարտիրոսներ կ'այրուին Սմիթֆիլտի մէջ . . . . . . 185

## ԳԼՈՒԽ Ժ.

Գրամէրին քննութիւնը ու դատապարտութիւնը — Հնազանդութեան գրուածք մը կը ստորագրէ — Ըն գրուածքը կը հերքէ, ու կ'այրուի . . . . . . 198

Digitized by Google

Digitized by Google

# ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆ

## ՄԵԾԻՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԷՋ.

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## 1400—1546

### ԳԼՈՒԽ. Ա.

*Չորեքտասաներորդ դարուն՝ ճշմարիտ կրօնքին ի՛նչ վիճակի մէջ ըլլալը Անգղիոյ մէջ — Մուրացիկ կրօնաւորները — Ուիքլիֆ — Անոր Աստուածաշունչի թարգմանութիւնը — Լոլլարտ կոչուածները — Հալածանք — Կուլիէլմոս Սաուդրին՝ առաջին անգղիացի մարտիրոսը — Յովհաննէս Պատպի — Գոյափոխութեան վրայ — Կուլիէլմոս Թորփ — Լօրտ Քոպհամի դատաստանը ու դատապարտութիւնը — Նոյնկայ բերդէն կը փախչի — Նորէն կը բռնուի ու կ'այրուի.*

Չորեքտասաներորդ դարուն Անգղիոյ մէջ հազիւ ուրեք ճշմարիտ կրօնք-կը գտնուէր, և արդարև արժան է ան օրերը չար օրեր կոչել: Թէ՛ աշխարհականները և թէ եկեղեցականները գրեթէ տեղեկութիւն չունէին Սուրբ Գրոց վրայով: Ընդհանուր մթութիւն մը տիրած էր բոլոր երկրին երեսը, և ամէնքնին ալ թանձր խաւարով պատած էին: Սակայն սկսան անդիէն ասդիէն գանգատներ ելլել եկեղեցւոյ խաբէութեանցը դէմ. տաղանդի տէր մար-



Digitized by Google

դէկ համարձակեցան ան ատենուան մոլորութիւն-ներուն դէմ դնելու . ասոնցմէ զատ՝ ստորին աստի-ճանի մարդիկ ալ կային Աւետարանին պատուական ճշմարտութիւններովը ուրախացող, որ թէ և մարմ-նաւորապէս աղքատ էին, սակայն հոգևորապէս հա-րուստ, ու երկնային թագաւորութեանը ժառանգ :

Յովհաննէս Ուիքլիֆ հռչակաւոր մէկն էր Օքս-ֆորտի համալսարանին մէջ . ասիկայ չորեքտա-սաներորդ դարուն միջին տարիները շատ չանցած՝ մեծ հակառակութիւն սկսեց Դոմինիկեան և Ֆրան-չիսկեան կրօնաւորներուն դէմ, որոնք ան ատենները կը հարստահարէին բոլոր թագաւորութիւնը և մա-նաւանդ աս համալսարանը : Կը քարոզէին թէ իրենց ընդունած անտեղի վարդապետութիւնները Աստու-ծոյ խօսքին մէջ գտնուած ճշմարտութիւններէն կա-տարեալ են : Առամիկ մարդոցմէ հարկ կ'առնէին, մա-նաւանդ երբոր զանոնք հիւանդութեան վիճակի մէջ գտնէին . և շատ մարդիկ սուղ սուղ ծախու կ'առ-նէին այս կրօնաւորներուն հինցած լաթերը՝ հաւա-տալով որ եթէ իրենց մեռած մարմինները անոնցմով պատանուըւի նէ, անշուշտ հոգինին արքայութիւն կ'եր-թայ : Ուիքլիֆ համարձակութեամբ այս կրօնաւոր-ներուն դէմ դրաւ, ու երևան հանեց Պապին Քրիս-տոնէութեան դէմ բռնած ճամբաները, որոնցմով աս կրօնաւորներն ալ համարձակութիւն կ'առնէին անանկ չարութիւններ գործելու : Նա իր հակառակութիւնը յառաջ տանելու ճամբան ալ աղէկ գտաւ : Տեսաւ որ հոգւոյն առանց գիտութեան մնալը դէշ է . վասն որոյ 'ի պէտս յառաջադիմութեան ճշմարտութեան՝ Ուիքլիֆ Աստուածաշունչը Անգղիարէնի թարգմա-նեց, որ ասկէ աւելի յարմար բան չէր կրնար գտնել անոնց մոլորութիւնները կործանելու համար : Հռով-մէական եկեղեցականները շատ դէմ կեցան աս բանիս .

և ան օրուան եկեղեցականաց այս նիւթիս վրայ ի՛նչ կարծիք ունենալը ցուցընելու համար , աստ դէմ բրած խօսքերէն մէկ օրինակը հոս դնենք : «Քրիստոս» կ'ըսէ ասոնց մէկը , «Աւետարանը եկեղեցւոյ վարդապետներուն և միւս պաշտօնեաներուն յանձնեց , որ զանիկայ աշխարհականաց և տկար անձանց մատակարարեն , ժամանակին՝ և ժողովրդոց կարօտութեանցը նայելով . բայց այս Յովհաննէս Ուիքլիֆ վարժապետը բռնեց Լատիներէնէն Անգղիարէնի թարգմանեց , որ այսպէս՝ կարդալ գիտցող աշխարհականներն ու կանայք՝ գիտնական եկեղեցականներէն , և անոնց ալ ամենէն սրամիտներէն աւելի դիւրաւ կրնան հասկընալ . և ահա՛ ասանկով Աւետարանական մարգարիտը գետինը ձգուեցաւ ու խոզերուն ոտաց կոխան կ'ըլլայ կոր . և ան որ առաջ պատուական բան մը կը սեպուէր թէ՛ եկեղեցականաց և թէ աշխարհականաց առջին , հիմա կարծես թէ երկուքին ալ առջին ծաղրալի բան մը կը թուի կոր . և եկեղեցւոյ ադամանդը աշխարհականաց խաղալիքն է եղեր» :

Ուիքլիֆ խռովութեան ատեններու հասաւ , և Աստուած Տէրութեան մէկ քանի երևելի և զօրաւոր իշխաններուն քաղաքական գործերը անանկ կարգի մը դրաւ , որ պաշտպանեցին զինքը Հռովմայու առաջնորդներուն թշնամութիւններէն , և մեռաւ խաղաղութեամբ Լուդդէրվօրդ քաղաքը՝ 1387 ին : Իր վերջին աշխատութիւններուն մէկը իր օրովը եղող Պապերուն (քանզի երկու հատ կային ,) Քրիստոնէութեան հակառակ վարմունքներ ունենալը ցուցընելն եղաւ : Ուրբանոս Զ. Պապը իրեն հակառակորդ Կղեմէս Պապին դէմ զէնք վերցուց , ու Նորուիչի Հռովմէական Եպիսկոպոսը իրեն զօրապետ ըրաւ , և կոնդակներ խրկեց Անգղիա , որոնց միջոցովը՝ թէ՛ ան-

Digitized by Google

ձամբ և թէ սատկով ալ իր ամբարշտական գործին օգնութիւն ընողներուն մեղաց թողութիւն և նե-րում կը խոստանար, թէ աս և թէ հանդերձեալ աշխարհին մէջ ։ «Քրիստոսի խաչին վրայի դրօշակը», կ'ըսէ Ուիքլիֆ, «որ խաղաղութեան ողորմութեան և սիրոյ նշան է, քրիստոնեաները ջարդելու համար կը գործածեն կոր» ։ Առհասարակ «Աւետարանի վարդապետ» կը կոչէին զինքը ․ և յայտնի է թէ բոլոր ըրած բաներուն մէջ իրեն առաջնորդ բռնած կանոնը Աւետարանին յարիլն էր ։

Հռովմէական առաջնորդները շատ խորհուրդներ ըրին եւ՝ Բարլամէնդին խնդիր ըրին որ Ուիք-լիֆին թարգմանած Աստուածաշունչին տարածուե-լուն արգելք դնէ, սակայն անոր անդամներուն մեծ մասը ասոնց խնդիրը մերժեցին ։ Անատենները Անգ-ղիարէն «Նոր Կտակարանը» անանկ գնով մը կը ծա-խուէր, որ մեր ժամանակի քսան լիրայէն աւելի էր, և աս պատճառաւ շատ քիչ կը տարածուէր ․ բայց Հոգւոյն Սրբոյ առաջնորդութիւնովը ու ազ-դեցութիւնովը մեծ արդիւնք յառաջ բերաւ ։ Ա-նոնք որ դարձի գալով Քրիստոսի աշակերտներն եղան, շուտով մեր Տէրոջը աս խօսքին փորձը ա-ռին, որ կըսէ՝ «Որովհետև աշխարհէ չէք՝ հապա ես ձեզ ընտրեցի աշխարհէն, անոր համար աշխարհ ձեզ կ'ատէ, թէ որ զիս հալածեցին, ձեզ ալ պիտի հալածեն» ։

Քօրդնէյ՝ Լոնտրայի Եպիսկոպոսը մեծ փութով այս Քրիստոսի հետևողներուն ետևէն ինկաւ, որոնք ան ատեններ Լոլլարտք կը կոչուէին ։ Կը կարծուի թէ այս անունը Ուալդըր Լոլլարտուսէն եկած ըլլայ, որ այս ճշմարտութիւնը սորվեցընողներուն մէկն էր, և կամ Գերմանացւոց լեզուով սաղմոսերգու նշա-նակող բառէ մը եկած ըլլայ ։ Ուէյմերոս անու-

Digitized by Google

նով այն ատենուան Հռովմէական Արքաքննիչներէն մէկը ասանկ ստորագրութիւն մը կ'ընէ Լոլլարտներուն վրայով . և զարմանալին աս է որ դատապարտութեան արժանի կը սեպէ զանոնք այս ստորագրած վարքը ունենալնուն համար ։

“ Ուիքլիֆին աշակերտները խոհական և պարկեշտ վարուց տէր մարդիկ են , հանդերձի վերաբերեալ սնափառութիւններէ բոլորովին հեռ կեցած։ Անոնք աշխարհային զբաղմունքներու մէջ շատ չեն մտներ , և մարդոց ըրած անարդարութիւններէն շատ կը գանգատին ։ Միայն իրենց աշխատութիւնովը կ'ապրին , և բոլորովին կ'ատեն հարստութիւնը . միայն պէտք եղածներովը գոհ ըլլալով ։ Վաճառականութիւն չեն ըներ , այնչափ սուտերով՝ երդումներով և խաբէութիւններով գտնուելուն համար ։ Ողջախոհ ու ժուժկալ են . գինետուն չեն երթար , և երբեք ունայն զբօսանաց խնճոյք չեն տար ։ Միշտ զբաղած կը գտնես զանոնք՝ կամ սորվելու կամ սորվեցընելու ։ Կարճ ու ջերմեռանդ աղօթք կ'ընեն , և կը մեղադրեն առանց ջերմեռանդութեան երկար երկար աղօթքներ ընողները ։ Ամենևին երդում չեն ըներ . քիչ կը խօսին . և իրենց հրապարակական քարոզներուն շատը սիրոյ վրայ է ։ Եկեղեցւոյ օրօշեալ ժամերգութիւններուն չեն գար , քանզի կ'ըսեն թէ՝ ջերմեռանդութեամբ մէկ երկու Հայրմեր ըսելը՝ առանց ջերմեռանդութեան ձանձրալի ժամեր անցընելէն աղէկ է ։ Սուրբ վարդապետներէն և Հռովմայ եկեղեցիէն տարբեր կերպով մը կը մեկնեն Սուրբ Գիրքը ։ Անոնց խօսքը քիչ և խոնարհութեամբ է , ու վարքերնին բարի կ'երևի" ։

Ան ժամանակը Ռիքարտոս Բն էր Անգղիոյ Թագաւորը , ու Արքեպիսկոպոսին ձեռնտուութիւն ըրաւ Ուիքլէֆեանները հալածելու . հրովարտակ



Digitized by Google

եղաւ աս վարդապետութիւնները սորվեցընողներուն և ընդունողներուն՝ և Ուիքլիֆին ու իրեն հետեւող-ներուն գրած գրքերին ու տետրակները առնողներուն դէմ: Ատոր վրայ՝ շատերը բանտարկեցին, և շատ անարգական կերպերով աշխարանք քաշել կու-տային. սակայն չէրևիր թէ այս բանիս համար մարդ մեռցուցած ըլլան իր թագաւորութեան ժամա-նակը:

1399ին Հենրիկոս Լանքասդրեցին աթոռը նըս-տաւ: Ատիկայ աթոռը նստելուն պէս քաջալերու-թիւն տուաւ եկեղեցականաց որ ձեռք զարկած գոր-ծերնին յառաջ տանին: Այս թագաւորին ու Ա-րունտէլ անուն Քանդուարիոյ Արքեպիսկոպոսին օրովը շատ մեծ հալածանք մը սկսաւ: Տէրութեան ամէն կողմը հալածանք կար, և ամէն տեղ մեծ ջանքով Լոլլարտներուն առջևը առնելու ետևէ է-ին: Եւ ահա՛ առջի անգամ այս թագաւորին օ-րովը եղաւ Անգղիոյ մէջ Հռովմէականաց մոլո-րութիւններուն դէմ կեցող քրիստոնեաները ՈՒ. Գ. ՈՒ. Գ. ՍՑՐԵՆՈՎ մարտիրոսացընելու սատանայա-կան չարագործութիւնը: Այս ժամանակէս սկսելով՝ շարունակուեցաւ այս հալածմունքը մինչև ան ատենը՝ որ Բարեկարգութիւնը Պապին շղթաներէն ազա-տեց Անգղիոյ տէրութիւնը: Քրիստոսի հետեւող-ներուն շատերը "սանձանքներու ու ծեծերու, կա-պերու ու բանտերու փորձը առին". ուրիշներն ալ "յոյսերնին վարձքերուն հատուցմանը վրայ դը-րած" կեանքերնուն անցան:

Առաջիկայ համառօտ պատմութեանս նպատակը՝ այս հաւատարիմ վկաներուն և անոնց պատմու-թեանը հետ միացած անցքերուն վրայ ծանօթու-թիւն մը տալ է:

Կուլիէլմոս Սաուդրին Անգղիոյ մէջ առաջին

Digitized by Google

մարտիրոսն եղաւ՝ Հռովմէական մոլորութեանց դէմ կենալուն համար ողջ ողջ այրուող ։ Սակայն Լոնտրայի մէջ քահանայ էր ։ Թէպէտ Նորուիչի Եպիսկոպոսին առջին՝ անգամ մը ուրացաւ ընդունած կարծիքները , սակայն Աստուծոյ շնորհօքը կարողացաւ իր սխալանքը տեսնելու , և կրկին յայտնապէս դաւանելու Աւետարանին ճշմարտութիւնները ։ 1401 , Փետրվար 12ին՝ որ շաբաթ օր մըն էր , Գանդուարիոյ Արքեպիսկոպոսին առեանը քաշեցին՝ ամբաստանելով թէ հերետիկոսական վարդապետութիւններ ընդունած է ։ Իրեն դէմ բերուած բաներուն գլխաւորները ասոնք են . մէյմը որ ըսեր էր թէ "Ես խաչափայտին երկրպագութիւն չեմ ըներ , այլ միայն անոր վրայ խաչեալ Քրիստոսին". մէյմ՚ ալ՝ թէ "քահանաներն ու սարկաւագները յաւէտ պարտական են եկեղեցւոյ մէջ Աստուծոյ խօսքը քարոզելու , քան թէ այն սահմանեալ ժամերգութիւններն ընելու". մէյմըն ալ աս՝ թէ "հաղորդութեան հացը սրբագործուելէն ետև՝ առաջ ի՞նչ էր նէ՝ ան՚ նոյն հացը կը մնայ",

Քանի մը օր միջոց տուեին որ այս իրեն դէմ եղած ամբաստանութիւններուն պատասխանը տայ ։ Սահմանեալ ժամանակը լրանալուն՝ եկաւ պահանջած պատասխաններնին մէկիկ մէկիկ տուաւ , անոնց վրայ իր ունեցած կարծիքները յայտնապէս ամենուն առջին ցուցընելով . և երբ Արքեպիսկոպոսը ըսաւ որ հերքէ զանոնք , անիկայ չհերքեց , Ետքը սկսան նորէն աղէկ մը քննել հաղորդութեան խորհրդոյն վրայով անոր ունեցած կարծիքները , ու նայեցան որ առաջուան պէս կրկին կը պաշտպանէ կոր նէ , զանիկայ իբրև հերետիկոս դատապարտեցին ։

Ժողովը քանի մը օր վճիռը ուշացընելէն ետև՝

Digitized by Google

"Նորուիչէ Եպիսկոպոսին այս Սաուդրին դէմ ըրած դատը կրկին անգամ ձեռք առին , և ատեանը կանչելով զինքը՝ հարցուցին թէ հաղորդութեան հացը՝ քահանան սրբագործելէն ետև խմոր էր նէ անանկ հաց կը մնայի՞ն վրա՞յ է տակաւին . և երբոր անանկ գտան նէ , ալ սկսան ընելիքնին ընել : Փետրվար 26ին քահանայական կարգը առին՝ Հռովմայ եկեղեցւոյն այս բանիս համար ունեցած արարողութիւններովը , և Ընգղիոյ Բարձրագոյն Քօնդէսդապլին ու Զօրագլուխին քով պահ տուին :·

Այս Հռովմէական եպիսկոպոսները Թագաւորին ետևէն ինկան՝ որ շուտով մահուան վճիռ տայ . և նոյն օրը Թագաւորին անունովը հրաման եղաւ Լոնտրայի Քաղաքապետին և ուրիշ պաշտօնատարներուն՝ մէկ "նոր եղած հերետիկոսի մը դէմ , որ զանիկայ քաղաքին հրապարակներուն մէկուն մէջ (յանցանքը հասարակութեանը իմացընելով՝) կրակը ձգեն ու այրեն մոխիր դարձընեն , որ մէկալ քրիստոնեաներն ալ օրինակ առնելով՝ անանկ սոսկալի յանցանք չգործեն" :

Առանց ժամանակ անցընելու սա հրամանը կատարուեցաւ . և ահա՛ այսպէս Հենրիկոս Դր Ընգղիոյ մէջ Քրիստոսի սուրբերը այրող Թագաւորներուն առաջինը եղաւ . և Կուլիէլմոս Սաուդրին եղաւ՝ հոն ամենէն առաջ այս դատապարտութիւնը կրողը , ինչպէս որ կ'երևնայ հասարակաց արձանագրութիւններէն , և շատ ուրիշ հաւատարիմ վկայութիւններէ ,

Երկրորդ մարտիրոսն եղաւ Յովհաննէս Պատպին , որուն մահը յիշատակութեան արժանի է : Ասիկայ ստորին աստիճանի մարդ մըն էր , արհեստով դերձակ : 1409 , Մարտի 1ին՝ կիրակի օրը՝ Քան-

Digitized by Google

դուսափոյ Արտանակէլ անուն Արքեպիսկոպոսին և Լաւոդիայի Եպիսկոպոսին և շատ ուրիշ մեծերու ու եպիսկոպոսներու առջև բերին սա յանցանքով՝ թէ այս մարդը կը հաստատէ որ «Հացը Քրիստոսի մարմին ըլլալու համար քահանայն սրբագործութիւնը կատարելէն ետև, նիւթական հացը սեղանին վրայ առաջ ինչպէս էր նէ՝ անանկ կը մնայ. քահանային սրբագործութիւններովը հացը Քրիստոսի բուն մարմնոյն չփոխուիր» : Նու թէ «անկարելի բան է որ քահանան Քրիստոսի մարմին չընէ, և չեմ կրնար այս բանիս հաւատալ՝ մինչև որ Քրիստոսի մարմինը յայտնապէս քահանային ձեռքին մէջ չտեսնեմ». և թէ «Քրիստոս՝ իր աշակերտներուն հետ ընթրիք ըրած ատենը՝ իր մարմինը ձեռքը բռնած չէր՝ որ իր աշակերտներուն տար. հապա այն ըրած խօսքերը այլաբանութիւն էին, ինչպէս որ ուրիշ տեղեր ալ այլաբանութիւններ կը գործածէ» : Արքեպիսկոպոսը խել մը խօսքերով ու յորդորանքներով աշխատեցաւ որ անոր միտքը դարձընէ : Ըրած խօսքերէն մէկն ալ սա կը պատմուի թէ՝ Արքեպիսկոպոսը ամենուն առջին խոստացեր ու հաստատեր է «որ (եթէ Քրիստոսի վարդապետութեանը համաձայն եղած ճամբան մտնէ նէ,) իր հոգին անոր հոգւոյն տեղը դրաւ դնէ դատաստանին օրը» : Անանկ մեծ մեծ խոստմունքներ հիմա ալ շատ կ'ընեն հռովմէականները :

Պատալիին դէմ ըսուած ամբաստանութիւնները նորէն մէյմ'ալ կարգացուեցաւ, ու իրմէն պատասխան ուզեցին : Պատալին աներկիւղ հաւատարիմ վկայութիւն տուաւ, և հաղորդութեան վրայ ունեցած կարծիքն ալ պարզապէս ցուցուց ըսելով թէ՝ «Սրբագործութենէն ետև ան առջի նիւթական հացը՝ նիւթական հաց կը մնայ. տակային սա կայ

որ՝ այն հացը կենդանի Աստուծոյ խորհրդաւոր նշանն է" ։

Շատ ժամանակ վէճով անցնելէն ետև Պատպին զգուշութեամբ բանտի մէջ պահուեցաւ մինչուան Մարտի 15 ։

Մարտի 15ին առաւօտուն դատապարտութեան վճիռը որոշուեցաւ . և նոյն օրուան կէս օրէն ետքը թագաւորէն հրաման ելաւ որ մեռցուի ։ Անմիջապէս առին Պատպին Սմիդֆիլտ տարին . հոն զինքը պարապ տակառի մը մէջ խոթած՝ շղթաներով ցիցի մը կապեցին , ու բոլորտիքը չոր փայտեր գիզեցին ։ Թագաւորին երէց որդին՝ (որ ետքը Հէնրիկոս Ը . եղաւ ,) հոն էր , և յորդորեց Պատպին որ ուրանայ ընդունած կարծիքները , սպառնալով որ եթէ այն հերետիկոսութիւններուն մէջ յամառեալ մնայ նէ՝ շատ չարիքներ պիտի գայ գլխուն ։ Վորզնէյ՝ Օքսֆորտի ատենադպիրն ալ ելաւ քարոզ մը տուաւ Հռովմայ եկեղեցւոյն հաւատքին վրայ ։ Ասոր միջոցին Սմիդֆիլտի Սուրբ Բարթուղիմէոս եկեղեցւոյն աւագերէցը թափօրով՝ տասուերկու կերոն առջևէն՝ սկիհը բերաւ մօտեցուց ցիցին կապուած խեղճ Պատպիին , ու մէջի սրբագործեալ հացը ցուցընելով հարցուց թէ՝ անոր վրայ ինչ հաւատք ունի ։ Ան ալ ըսաւ . "Աղէկ գիտեմ որ սրբագործեալ հաց է , բայց Աստուծոյ մարմին չէ" . ասոր վրայ անմիջապէս կրակ տուին փայտակոյտին . և երբ խեղճ մարդը սկսաւ այրիլ , "Ողորմութի՜ւն" պոռաց . (հաւանականաբար ոչ թէ մարդոց , այլ Աստուծոյ) ։ Արքայազուն իշխանը այս ձայնը լսելուն պէս՝ հրաման ըրաւ որ կրակը մարեն . կրակը մարեցին . և հարցուց թէ՝ հիմա կը ձգե՞ս հերետիկոսութիւնդ՝ ու սուրբ եկեղեցւոյ հաւատքը կ՚ընդունի՞ս մի . այս խոստմունքն ալ ը-

Digitized by Google

նելով որ եթէ դառնայ նէ՝ մեծ պարգև պիտի տրուի իրեն , և արքայական գանձէն ալ ուզածին չափ տարեկան թոշակ ։ Ահա՛ ժամ փորձութեան . մէկ դին անմիջական դառնակսկիծ մահ , մէկալ դին ներում և ազատութիւն ու երջանիկ կեանք մինչև ՚ի մահ ։ Սակայն Պատրին Աստուծոյ զօրութիւնովը կարողացաւ այն խոստմունքները մերժելու , և այն յորդորանքին յանձնառու չըլլալու ։ Վասնորոյ հրաման ըրաւ արքայազուն իշխանը որ նորէն տակառը խոթեն , ըսելով թէ՝ ալ անկէ ետև չնորհք կամ ողորմութիւն ընելիք չունի ։ Պատրին՝ ինչպէս որ ըրած խոստմունքներովնին չհամոզուեցաւ , անանկ ալ տուած սպառնալիքներովնին չյաղթուելով՝ ինչուան վերջը հաստատ մնաց . Քրիստոսի շնորհքին տուած կարողութիւնովը աշխարհիս կատաղութեանը և զօրութեանը դէմ գրաւ , թէպէտ մեծ դժուարութեամբ և նեղութեամբ , սակայն նաև փառաւոր յաղթութեամբ ։

Արունտէլ՝ Քանդուարիոյ Արքեպիսկոպոսը շարունակեց Լոլլարտներուն դէմ կրցածը ընել ։ Աս վճիռը հանեց՝ որ եկեղեցւոյ ընդունած մէկ բանին դէմ վիճաբանելով յանցաւոր եղողներուն առաջին յանցանքին պատիժը՝ բանադրանք ըլլայ , երկրորդանգամ անանկ յանցանք մը գործելնուն՝ ողջ ողջ այրուելն ։ Նաև շատ խիստ ու հաստատուն խօսքերով արգիլեց Անգղիարէն կամ ուրիշ լեզուաւ Սուրբ Գրոց ո՛ և իցէ մասը կարդալը , ինչուան որ առաջնորդը չընդունի այն թարգմանութիւնը , ու հաստատեց նաև՝ թէ "շատ վտանգաւոր բան է Սուրբ Գիրքը մէկ լեզուէն մէկալը թարգմանելը" ։

Այս սուրբերուն տրուած հաւատքին համար քաջութեամբ պատերազմողներուն մէկն ալ Կուլիէլմոս Թօրբ անուն երևելի քահանան էր ։ 1407ին

Գէնթ քաղաքին Սալտվուտ ամրոցին մէջ բանտար-
կուեցաւ . եւ երբ Արքեպիսկոպոսին առջեւ հանե-
ցին՝ որ ուրանայ բռնած ճշմարտութիւնները . ան
ալ իր հաւատքին գլխաւոր բաները մէկիկ մէկիկ
ցուցընելէն ետեւ , խնդրեց որ եթէ Աստուծոյ օ-
րէնքին հակառակ բան մը ընդունած է նէ , իրեն
ցուցընեն իր սխալմունքը : Անոր պատասխան՝ Ա-
րունտէլ կրկին հրամայեց որ ելլէ Լոլլարտներուն ա-
ղանդէն , և անկէ ետեւ եկեղեցիէն արգիլուած կար-
ծիքները չընդունի . և աս ալ առաջարկեց որ
երդմամբ հաւանութիւն տայ այս բանիս , և ան-
կէց զատ խօսք ալ տայ՝ որ ան նոյն կարծիքները
ընդունող ուր որ գտնէ նէ՝ գայ իմացընէ . սակայն
Թօրբ աս առաջարկութիւնները բոլորովին մերժեց :
Անատեն Արքեպիսկոպոսը սպառնալիք ըրաւ թէ
Սմիթֆիլտի մէջ պիտի այրուի : "Աս սպառնալիքը
բերնէն ելած ատենը" , կ'ըսէ Թօրբ , "հանդարտ
կայնեցայ , ու բերնէս խօսք մը չհանեցի . հապա
մտքիս մէջ կը խորհէի թէ Աստուած մեծ շնորհք
ըրած կ'ըլլայ ինծի , եթէ՝ իր ողորմութիւնովը զիս
աստանկ վախճանի մը հասցընելու ըլլայ" : Այս
ալ կ'ըսէ թէ՝ "Մտքովս կ'աղաչէի Տէրոջը որ զիս
մխիթարէ ու զօրացընէ անոնց դէմ կենալու , և
կը խնդրէի Աստուծմէ՝ որ իր բարութիւնովը շնորհէ
ինծի հեզ հոգիով ու հանդարտ սրտով խօսիլ այն
միջոցին մէջ և ամէն ատեն . և թէ բոլոր խօսած-
ներուս Սուրբ Գրքէն ճշմարիտ վկայութիւններ
կամ բացայայտ պատճառներ բերեմ": Ահա՛ "հա-
ւատքի մէջ հաստատուն" և հեզութեամբ իր ու-
նեցած յոյսին պատճառը ցուցընելու փափաքող
քրիստոնէին պարզ և գեղեցիկ օրինակը :

Անոր վրայ՝ սկսան երկար բարակ քննութիւններ
ընել : Գոյափոխութեան վարդապետութեանը վրայ

Digitized by Google

Թօրք ուզեց որ պարզապէս Սուրբ Գրոց խօսքերը առաջ բերուի. ո՛չ ինքը մեկնեց իր քովէն, և ո՛չ ուզեց որ անոնք մեկնեն մարդկային տրամաբանութիւններով, ինչպէս Թովմաս Աքուինասին հնարած դպրոցական իմաստակութիւններովը՝ զորոնք Հռովմայ եկեղեցին ընդունած էր: Պատկերներու վրայ որ խօսք բացուեցաւ նէ, Արքեպիսկոպոսը ըսաւ՝ թէ «Խաչին երկրպագութիւն ընելու է, քանզի անոր վրայ Քրիստոսի խաչելութիւնը ցուցուած է. և երբոր խաչ տեսնենք նէ՝ ան միտուընիս կ՚իյնայ. նոյնպէս ալ Սուրբ Երրորդութեան, Մարիամ Կոյսին և ուրիշ սրբոց քանդակներուն ու նըկարուած պատկերներուն երկրպագութիւն ընել պէտք է»: Այս նիւթիս վրայ քիչ մ՚ալ քննութիւն ընելէն ետև՝ երբոր Թօրք՝ Արքեպիսկոպոսին սա խնդիրը առաջարկեց նէ, ալ անոր վրայ վէճ չըրին: Խնդիրն աս էր. «Աստուած իր աստուածութեամբը անծանօթ բաներուն ամենէն անծանօթը՝ աքանչելի հոգի մըն է, որուն վրայ մահկանացու արարածոց ո՛չ ձեռը, ո՛չ կերպարանքը և ո՛չ մէկ անդամը կայ. արդ՝ ի՞նչ նմանութիւն կամ ի՞նչ քանդակ կրնայ շինուիլ, որ Հօր Աստուծոյ պատկերն ըլլայ»: Խոստովանութեան՝ ուխտագնացութեան և Հռովմայ եկեղեցւոյն ուրիշ մոլորութիւններուն վրայով քիչ մ՚ալ քննութիւն ըլլալէն ետև՝ տաղտկալի բանտ մը դրուեցաւ Թօրք: Վերջապէս աս մարդուն ինչ ըլլալը անյայտ է. բայց որովհետև արձանագրութեանց մէջ այրածներուն կարգը գրուած չէ, վասն որոյ շատ հաւանական կ՚երևնայ որ գաղտուկ սպաննած ըլլան բանտին մէջ, կամ ան տեղը հիւանդութիւնով մը մեռած ըլլայ: Ողջացած ըլլար նէ, անշուշտ Հռովմէականք պիտի պատմէին:

Այս հալածեալ քրիստոնեաներէն ճշմարտակու-թեան արժանի եղող մէկն ալ Լօրտ Քօբհամն է : 1413ին՝ Հենրիկոս Դ. Թագաւորը մեռաւ , անոր տեղը անցաւ իր որդին Հենրիկոս Եը , որ արդէն Յովհաննէս Պատրիին պատմութեանը մէջ յիշուած է : Այն ատենը նստածին պէս՝ Արունտէլ Արքեպիսկոպոսը եկեղեցականաց ժողով մը ըրաւ Սուրբ Պօղոսի եկեղեցւոյն մէջ : Այս ժողովը ընելուն գլխաւոր նպատակը Աւետարանին տարածուիլը արգիլել , և մանաւորապէս ազնուական Լօրտ Քօբհամին հակառակիլ էր , քանզի անոր Լոլլարտներուն պաշտպան կենալը ամէն տեղ ձանձրնուած էր : Աղէկ գիտէին որ ինքը Ուիքլիֆին գրութիւնները օրինակել տուաւ , և շատ տեղ ցրուեց , ու նաև անդին ասդին պտըտող քարոզիչներուն ապրուստը ինքը կը հոգար : Այս ժողովոյս մէջ տասուերկու Արքաքննիչ կար , որոնք առջի տարին այս պաշտօնիս համար որոշուեցան՝ որ հերետիկոսները և Ուիքլիֆին գրքերը փնտռեն գըտնեն : Ասոնք մէկ ցանկ մը բերին մէջը երկուհարիւր քառասունուվեց վարդապետութիւն գրուած՝ զորոնք Ուիքլիֆին հանած գրքերէն ժողվեր էին . և այն գրքերուն շատերը՝ ուրիշ անոնց նման գրքեր ալ մէկտեղ հրապարակաւ այրեցին , ու մէջը գըրուածները իբրև հերետիկոսական վարդապետութիւնք դատապարտեցին : Այս ժողովոյս մէջ գլխաւոր խորհելիքնին՝ Լօրտ Քօբհամին ըրածներն էր . բայց այս մարդը թէ թագաւորին և թէ ժողովըրդոց շատ սիրելի մէկն ըլլալուն համար՝ հարկ եղաւ որ զգուշութեամբ բան տեսնեն : Վասն որոյ ելան Արքեպիսկոպոսն ու խել մը ուրիշ եպիսկոպոսներ , ու գացին թագաւորին դիմացն ելան , և այս ազնուականին դէմ շատ դառնակսկիծ գանգատներ ըրելէն

Digitized by Google

եանէ՝ առջեւը կարդացին Ուիքլիֆին մէկ գրութիւնն ալ՝ որ Լօրտ Քօբհամին քովէն գտեր էին․ երբոր արքան լսեց աս կարդացածնին, այանկ հերետիկոսութիւն լսած չունէի՝ ըսաւ, և հաւանութիւն տուաւ Լօրտ Քօբհամին դէմ ընելիքներնուն․ բայց պատուիրեց որ քիչ մը ատեն սպասեն, ինչու այն որ ինքը անձամբ աշխատի համոզել զանիկայ՝ իր ընդունած մոլորութիւնները ուրանալու ։ Ետքը կանչեց ու յորդորեց զանիկայ որ իր մօրը՝ Սուրբ Եկեղեցւոյն հնազանդի, և իբրև հնազանդ որդի յանցանքի տէր ըլլալը խոստովանի, այս ազնուական քրիստոնեան աս պատասխանը տուաւ․ "Ո՛վ յարգապատիւ իշխան՝ միշտ պատրաստ եմ յօժարութեամբ հնազանդիլ քեզի, որ Աստուծոյ սահմանած պաշտօնեան ես, ձեռքդ սուր ունենալով՝ չարագործները պատժելու համար" ։ Աս խօսքին վրայ ցուցուց նաև բոլոր մարմնաւոր բաներու մէջ անոր իշխանութեանը հնազանդելու համար իր ունեցած յօժարութիւնը ։ "Բայց Պապին", ըսաւ ետքը, "ո՛չ պատիւ կրնամ տալ և ո՛չ ծառայութիւն ընել"։ Աս լսելուն՝ թագաւորը ալ խօսք չըրաւ հետը ։

Արքեպիսկոպոսը իր գործը յառաջ տանելու հրաման ունենալով թագաւորէն՝ դատաստանի կանչեց Լօրտ Քօբհամը, ազնուականը մտիկ չըրաւ այս հրամանին ։ Ասոր վրայ Արքեպիսկոպոսը իր ըրած հրամանը Ռօչէսդրի առաջնորդարանին դրանը վրայ փակցուց․ նայեցաւ որ ասով ալ չեղաւ նէ, բանադրեց զանիկայ, և քաղաքական զօրութիւն ձեռք առաւ՝ անով իր հրամանը կատարելու ։

Լօրտ Քօբհամ երբ տեսաւ որ չորս կողմէն պաշարուեցաւ վտանգներով, հաւատոյ դաւանութիւն մը գրեց, հիմը առաքելական հանգանակին ընելով, իրեն դէմ չարախօսութիւն ըրած բաներնին

Digitized by Google

ալ համառօտ համառօտ յիշելով . այս թուղթը առաւ գնաց թագաւորին , և ամենայն հեզութեամբ աղերսեց Իր Վեհափառութեանը որ մէյմը աչքէ անցընէ ու նայի թէ ինչ է յանցանքը ։ Թագաւորը՝ որ կոյր զկուրայն հնազանդեր էր Հռովմայ կրօնական պահանջմունքներուն , ամենևին ականջ չկախեց Լօրտ Քօքհամին աղերսանացը , ու որոշեց որ զանիկայ իր թշնամիներուն ձեռքը տայ , ու Երքեպիսկոպոսին հրամանը՝ որ էր Քօքհամը ատեան հրաւիրելը՝ թագաւորը հրամայեց որ իր առջևը կատարուի ։ Ասոր վրայ Լօրտ Քօքհամ Պապին բողոքել ուզեց . բայց թագաւորը չթողուց որ այս բողոքը ընէ . և իր հրամանաւը բռնեցին զանիկայ՝ ու Լոնտրայի բերդը նետեցին ։

Սեպտեմբերի 13ին Լօրտ Քօքհամը եպիսկոպոսներուն դիմացը հանեցին ։ Երքեպիսկոպոսը ըսաւ թէ՝ Դուն հերետիկոսութեան յանցանք ունիս . անկէց զատ բանադրուած ալ ես իմ հրամանիս չհնազանդելուդ համար , այսու ամենայնիւ կ'ուզես նէ արձակուիմ տամ ։ Լօրտ Քօքհամ ականջ չկախեց այս խօսքին , հապա ծոցէն թուղթ մը հանեց՝ մէջը իրեն դէմ ամբաստանութիւն ըրած բաներուն գրուած , ու ամենուն առջին կարդաց՝ մէկ օրինակն ալ Երքեպիսկոպոսին տալով ։ Գրուածները ասոնք էին ։ Ա . Հաղորդութիւնը Քրիստոսի մարմինն է հացի ձևով ։ Բ . Ապաշխարանքի համար այս կ'ըսեմ , թէ փրկուիլ ուզող մարդը ատելու է իր մեղքերը , և ապաշխարելու է իր առջի յանցանքները՝ ճշմարիտ խոստովանութիւնով և զղջումով ու պէտք եղած փոխարինութիւնովը՝ Աստուծոյ օրէնքին սորվեցուցածին պէս ։ Գ . Քանդակներ գործածելու թոյլտուութիւն տուաւ եկեղեցին՝ ռամիկ մարդոց Քրիստոսի մահն ու չարչարանք-

Digitized by Google

նորը ցուցընելու համար. սակայն անոնց երկրպագութիւն ընողը կռապաշտ կ'ըլլայ : Դ. Ուխտագնացութեան վրայով ալ աս կ'ըսեմ որ՝ Ամէն մարդ ճամբորդ է դէպ 'ի երջանկութիւն կամ թշուառութիւն. և Աստուած ճանչցողներն ու իր պատուիրանքները չըռնողները բոլոր ուխտատեղիները երթան ալ նէ՝ կը դատապարտուին. իսկ զԱստուած ճանչցողներն ու անոր հրամանները պահողները կը փրկուին , թէ և ամենևին ուխտագնացութիւն մը ըրած չըլլան , ինչպէս որ շատ մարդիկ կ'երթան Հռովմ՝ Գանդուարիա և ուրիշ տեղուանք :

Արքեպիսկոպոսը դարձաւ Գօբհամին ըսաւ. Ատ գրուածիդ մէջ շատ աղէկ բաներ կան , սակայն ատոնցմէ զատ ուրիշ նիւթեր ալ կան , որ անոնց վրայ ալ քննութիւն ընել կ'ուզեմ : Աս ըսելէն ետև սկսեց ուրիշ քննութիւններ ընել հաղորդութեան վրայով , և աս ալ հարցուց թէ՝ Կը հաւատա՞ս մի որ ամէն քրիստոնեայ անհրաժեշտ պարտքի տակ է իր մեղքերը ձեռնադրուած քահանայի մը խոստովանելու :

Բանտարկեալը կ'ուզէր որ գրածին վրայ մնայ՝ որ չըլլայ թէ որոգայթի մը մէջ իյնայ հարցընելու խնդիրներուն առաջարկած ատեններն : Վերջապէս կրկին բանտը դրին ինչուան հետևեալ Երկուշաբթին :

Երկուշաբթի նորէն դատի սկսան Լուտկէյդի Դոմինիկեանց վանքը : Հոն այն կրօնաւորաց խուժանը շատ մը անարգական ու ծաղրաբանական խօսքեր ընելէն ետև , կրկին Գօբհամին առջևը դրին իրեն դէմ եղած ամբաստանութիւնները , և կրկին խոստացան արձակում տալ , եթէ հնազանդութեամբ ուզէ նէ : «Զէ՝ չէ՝ ամենևին» , ըսաւ ազնուականը , «ձեզի դէմ բնաւ յանցանք մը գոր-



Digitized by Google

ծած չուզիմ՝ որ աս բանը ընեմ": Ու գետինը ծունկի վրայ գալով՝ ձեռուըները վեր վերցուց ու ըսաւ. "Ո՜վ քեզի կը խոստովանիմ՝ ով իմ յաւիտենական կենդանի Աստուածս, որ տկարութեամբ շատ սոսկալի մեղքեր գործած եմ քեզի դէմ, հըպարտութիւնով՝ բարկութիւնով՝ ագահութիւնով՝ ցանկութիւնով և անժուժկալութիւնով, շատ մարդոց վնաս տուած եմ բարկութիւնով, և ուրիշ շատ մեծամեծ մեղքեր գործեր եմ. ով ամենաբարի Տէր, թողութիւն կը խնդրեմ քենէ": Ետքը ոտքի վրայ ելաւ, և արտասուալից աչօք այսպէս աղաղակեց բարձր ձայնով. "Ահա՛՝ բարի ժողովուրդք, ահա՛ աս մարդիկը Աստուծոյ օրէնքը և պատուիրանքները կոտրելու համար երբէք զիս չնզովեցին, սակայն իրենց օրէնքներն ու աւանդութիւնները չբռնելու համար սաստիկ անգթութեամբ կը չարչրկեն զիս՝ և ուրիշներ ալ: Ասոր համար թէ իրենք և թէ օրէնքներնին՝ Աստուծոյ խոստմունքին պէս՝ անշուշտ բնաջինջ պիտի ըլլան":

Այս ազդու խօսքերէն քիչ մը ատեն տակնուվրայ եղան եկեղեցականները: Յետոյ՝ Արքեպիսկոպոսը սկսեց բանտարկեալին հաւատքը քննել նէ, ան ալ այսպէս պատասխանեց. "Կը հաւատամ հաւատարիմաբար և կատարելապէս Աստուծոյ օրէնքներուն: Կը հաւատամ որ Աստուածաշունչ Սուրբ Գրոց մէջ ինչ որ կայ նէ՝ ճշմարիտ է: Վերջապէս իմ Տէր Աստուծոյս հաւտացուելու համար տուած բոլոր բաներուն կը հաւատամ": Ետքը եպիսկոպոսները իրենցմէ տրուած գրութեան մը պատասխանը ուզեցին՝ Բօրհամէն՝ մասնաւորապէս հաղորդութեան խորհուրդը յառաջ քշելով: Ազնուականը պատասխանեց ու ըսաւ. Աս թուղթին վրայով ինծի բան մի՛ հարցնէք: Անատենը՝ Կա-

խազահը հարցուց թէ՝ «Ալ հաւատա՞ս որ նիւթական՝ հաց կը մնայ սեղանին վրայ սրբագործութենէն ետև»: Քիչ մը խօսակցելէն ետքը՝ «Սուրբ Գիրքը նիւթական հացի վրայ խօսք չըներ», ըսաւ Քօբհամ: «Հաղորդութեան մէջ Քրիստոսի մարմինն ալ կայ, հաց ալ կայ. աչքով տեսածնիս հաց է, և Քրիստոսի մարմինը ծածկեալ է, և միայն հաւատքով կը տեսնուի»: Աս որ ըսաւ նէ՝ ամէնը մէկ բերան «Հերետիկոսութիւն է» պոռացին: Մանաւանդ եպիսկոպոսներէն մէկը ըսաւ թէ՝ «Անգամ մը սրբագործութիւն ըլլալէն ետև՝ ալ ան տեղը հաց կայ ըսելը՝ յայտնի՝ հերետիկոսութիւն է, քանզի միայն Քրիստոսի մարմինը կը մնայ»: Քօբհամն ալ պատասխան տուաւ ըսելով. «Անտարակոյս Պօղոս առաքեալ քեզի չափ խելք ունէր, և կը հաւատամ որ քեզմէ ալ շատ բան գիտէր Աստուծմէ սորված. անիկայ Կորնթացւոց թուղթին մէջ հաց կը կոչէ հաղորդութիւնը: ‹Ան հացը՝ որ մենք կը կտրենք՝ չէ՞ որ Քրիստոսի մարմնին հաղորդութիւնն է›. ահա՛ հոս Քրիստոսի մարմին չըսեր, հապա լոկ հաց կը կոչէ. և իր ըսածին պէս՝ հացը պարզապէս Քրիստոսի մարմինը ընդունելու միջոց մըն է»:

Ասոր դէմ՝ Առաքեալին աս խօսքը ուրիշ մտքով առնելու է ըսին. քանզի Հացը սրբագործութենէն ետև հաց կը մնայ ըսելը՝ հերետիկոսութիւն է: Հերետիկոսութիւն ըլլալը ինչէ՞ն գիտէք՝ հարցուց նէ Քօբհամ, Սուրբ Եկեղեցւոյ վճռոյն դէմ է՝ ըսին:

Լօրտ Քօբհամին քննութիւնը շատ երկար է. բոլոր եղածները չենք կրնար պատմել: Ամէն անգամ դէմերնին ելլելուն՝ վրան աներկիւղ քաջութիւն ու քրիստոնէական հանդարտութիւն մը կար:

Digitized by Google

Պալմէր կրօնաւորը՝ քանդակներու երկրպագութիւն ընելու վրայով քննութիւն բրած ատենը՝ հարցուց թէ “Երկրպագութիւն կ'ընես ան խաչին՝ որուն վրայ Քրիստոս չարչարուած է”: “Ո՞ւր է”, ըսաւ Լօրտ Քօբհամ: “Դիցուք թէ հոս ըլլար նէ”, ըսաւ կրօնաւորը: “Ի՞նչ խելքի տէր մարդ է աս, որ ուր տեղ ըլլալը չգիտցած բանին երկրպագութիւն կ'ընես կ'ըսէ. Ի՞նչ երկրպագութիւն ընեմ”, ըսաւ Լօրտ Քօբհամ: “Պօղոս առաքեալին բրած երկրպագութիւնը”, պատասխանեց եկեղեցականներուն մէկը. “որ կ'ըսէ”, “Քա՛ւ լիցի որ պարծենամ, հապա միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը”: “Ահա՛ խաչ”, ըսաւ Լօրտ Քօբհամ, թեւերը բանալով, “աս խաչը ձեր փայտէ խաչէն շատ գերապատիւ է, քանզի Աստուծոյ շինածն է, (ո՛չ թէ մարդու,) սակայն և այնպէս չեմ ուզեր որ մէկը երկրպագութիւն ընէ”: “Յա՛րգելի, չես գիտեր որ Քրիստոս նիւթական խաչի վրայ մեռաւ”, ըսաւ Լոնտրայի Եպիսկոպոսը: “Շատ աղէկ գիտեմ”, պատասխանեց Լօրտ Քօբհամ. “աս ալ աղէկ գիտեմ որ՝ փրկութիւննիս նիւթական խաչէն չէ, այլ միայն անոր վրայ մեռնողէն. անկէց զատ՝ ասոր ալ խելքս աղէկ հասած է որ, Սուրբն Պօղոս ուրիշ խաչով չէր պարծենար, այլ միայն Քրիստոսի մահուանը և չարչարանքներովը, ու նաև Քրիստոսի ցուցուցած ընթացքին հետևելով՝ իր քաշած չարչարանքներովը”:

Ասոր վրայ դատապարտութեան վճիռը կարդացուեցաւ, որուն մէջ՝ գրուած էր թէ՝ հերետիկոս է հաղորդութեան խորհրդոյն, ապաշխարանքի, Պապին իշխանութեանը և ուխտագնացութեան վրայով եկեղեցւոյ հակառակ կարծիք ունենալուն համար: Սակայն այս վճռոյն մէջ իր դատաւոր-

Digitized by Google

նները ալ ըսեր են թէ՝ Իրենք կը հետեւին Քրիս-
տոսի օրինակին , որ "չուզեր մեղաւորին մեռնիլը ,
հապա անոր դարձի գալը ու ապրիլը" ։

Երբոր աս վճիռը կարդացուեցաւ , Լօրտ Քօբ-
համ զուարթ դէմքով մը ըսաւ . "Մարմինս կը
դատապարտէք , բայց հաստատ գիտեմ որ Սատա-
նային Յոբ երանելոյն բան մը ընել չկրնալուն
պէս՝ դուք ալ իմ հոգւոյս ամենեւին չէք կրնար
դպչիլ ։ Ան որ ստեղծեց զանիկայ իր անհուն գը-
թութեամբը՝ իր խոստմանը պէս՝ պիտի փրկէ ալ ։
Ես բանիս ամենեւին տարակոյս չունիմ . և իմ հա-
ւատացած բաներուս վրայ՝ Աստուծոյ շնորհօքը
մինչև ցմահ հաստատուն պիտի կենամ" ։ Անկէ
ետև դարձաւ ժողովուրդին՝ և բարձր ձայնով ը-
սաւ . "Ո՛վ բարի ժողովուրդք՝ Աստուծոյ սիրոյն
համար ըլլայ՝ զգուշացէք աս մարդոցմէն՝ որ չըլլայ
թէ ձեզ խաբեն , և կոյր զկուրայն դժոխք տանին
իրենց հետը մէկտեղ" ։ Ետև ծունկի վրայ գալով՝
թեւերը վեր վերցուց , և աչուըները դէպ 'ի երկինք
դարձընելով՝ աղօթք ըրաւ այսպէս . "Տէր Աս-
տուած յաւիտենական՝ կ'աղաչեմ քեզի՝ եթէ կը
կամիս՝ ներէ իմ հալածչացս · քու մեծ ողորմու-
թեամբդ": Յետոյ նորէն առին տարին աշտարակը՝
բանտը դրին , 'ուր որ մնաց շատ ժամանակ ։

Թէպէտև իր թշնամիները 'ի մահ դատապար-
տեցին զանիկայ , սակայն անմիջապէս մեռցընելու
չհամարձակեցան . քանզի հասարակութեան հա-
ճելի , և իրենց պատմիչներուն մէկուն ըսածին պէս ,
"արդար մարդ մըն էր , և թագաւորին ալ շատ
սիրելի" ։ Այս պատճառներով հրապարակաւ կա-
տարուելու սպանման գործադրութիւնը քանի մը
շաբաթ ետ ձգեցին ։ Այս միջոցին խել մը զըր-
պարտութիւններ հանեցին վրան , որոնց մէկն ալ

Digitized by Google

տա էր թէ՝ Իր կարծիքները ուրացեր է ․ երդման թուղթ մըն ալ հրատարակեցին , Լօրտ Գօբհամին իր ձեռօքը ստորագրածն է՝ ըսելով ։ Լօրտ Գօբհամն ալ անդիէն շուտով մէկ ուրիշ թուղթ մը հրատարակել տուաւ այս սուտ խօսքերուն դէմ ։

Ինչևիցէ պատճառաւ որ իր մահուան դատապարտութիւնը ուշացուցին , աս միջոցին ինքը պատեհութիւն գտաւ ազատելու ․ ու մէկ խաւար գիշեր մը փախաւ գնաց Ուէլս , և հոն չորս տարի կեցաւ ։

1417ին վերջերը՝ Լօրտ Փովիս անուն ազնուական մը ձեռք անցուց Լօրտ Գօբհամը Ուէլսի մէջ , և Լոնտրա ղրկեց կապած ։ Ալ հիմա որ ձեռուընին ինկաւ նորէն՝ անոր մահը չուշացուցին ․ առին խեղճը՝ ու կամնասայլի մը վրայ դնելով բարբարոսութեամբ քաշեցին տարին Սուրբ Գիղեսի դաշտերը , կախաղանէ մը վար կախեցին շղթաներով , ու տակը կրակ վառեցին , և այսպէս Լօրտ Գօբհամ ազնուականը կամաց կամաց այրելով մեռաւ ։

## ԳԼՈՒԽ Բ ։

Գէյլօր — Փիքօք Եպիսկոպոսը — Գոյափոխութեան վարդապետութեանը յառաջադիմութիւնը — Տպագրութեան գիւտը — Յովհաննէս Պրաուն — Սուրբ Գիրք կարդացողներուն դէմ հակառակութիւն ։

Հենրիկոս Եին տեղն անցնող Հենրիկոս Զը տղայ էր ․ այս պատճառաւ հալածիչները դեռ իրենց առջի զօրութիւնը ունէին ։ Նոր թագաւորութեանը առաջին տարին այրեցին Կուլիէլմոս Գէյլօք անուն Գանդուարիոյ վիճակին մէկ քահա

նան՝ Պրիսդօլի մէջ հերետիկոսութիւն սորվեցընելուն համար. սորվեցուցած հերետիկոսութիւնն ալ սա կ'երեւնայ ըլլալ, որ ըսեր է թէ՝ «Միայն Աստուծոյ երկրպագութիւն ընելու է, սուրբերը պաշտելու չէ»։ Սակայն Թոյլտուութիւն ըրին որ իր հաստատած բանը մեկնէ առջեւնին. եւ յետոյ վճռուեցաւ որ մինչեւ 'ի մահ բանտի մէջ մնայ. ուրիշ քննութիւններ ալ ընելնէն ետեւ՝ այս տուած վճիռնին ալ ետ պիտի առնէին, ու զանիկայ ազատէին. բայց դժբաղդաբար աստր եւ Սմիթ անուն մէկ ուրիշ քահանայի մը իրարու հետ ըրած մէկ քանի գրութիւններնին Վօրչէսդրի Եպիսկոպոսին ձեռքը հասուցին, ու նորէն գլխուն փորձանք եկաւ. Թէպէտեւ գրածներովը միայն սա էր հաստատեր, «Թէ հոգեւոր շնորհքներու համար եղած աղերսանքներուն ու աղաչանքներուն բոլորն ալ միայն Աստուծոյ ընել արժան է, եւ ոչ թէ արարածներու»։ Վերջապէս Պէյլօր չորս կարգ կրօնաւորաց յանձնուեցաւ որ քննեն զինքը. անոնք ալ քննելով հերետիկոս հանեցին՝ վերոյիշեալ վարդապետութիւնը պաշտպանելուն համար, եւ «Արարածոց աղօթք ընելը՝ կռապաշտութիւն է» ըսելուն համար։ Եւ ուստի ըստ սովորութեան Հռովմէականաց՝ կարգը իրմէ առին, մազերը կտրեցին՝ որ քահանայի կերպարանքէ ելլէ, եւ շատ ուրիշ բաներ ընելնէն ետեւ՝ հրոյ ճարակ ըրին ողորմելին։

1457ին մէկ երեւելի անցք մը պատահեցաւ, որ մեծ շփոթութիւն ձգեց Անգղիոյ եկեղեցականաց մէջ։ Իրենց մէջէն մէկը՝ Ռէյնօլտ Փիքօք անուն՝ Չիչէսդրի Եպիսկոպոսը բանտարկուեցաւ Քրիստոսի Աւետարանին համար։ Կ'երեւի թէ Լօլլարտներուն վարդապետութիւնները կատարելապէս ընդունած չէր, եւ իր գրութիւններուն մէջ երբեմն երբեմն ա-

Digitized by Google

նոնց դէմ խօսած է ․ սակայն զանոնք բնաջինջ ընելու համար այն ատենուան եղած արիւնահեղութիւններուն մասնակից չեղաւ ․ Սուրբ Գրոց կարդացուելուն ջատագով եղաւ , բայց ոչ թէ Անգղիարէն լեզուով կարդացուելուն , և Հռովմայ եկեղեցւոյն ըրած բռնութիւններուն դէմ հակառակեցաւ , որ անիկայ աններելի մեղք էր ․ քանզի եկեղեցւոյ իշխանութեանը վրայ հաստատուն ու անկեղծ հաւատք ունենալը՝ փրկութեան հարկաւոր կը սեպուէր ։ Ատեանը անորոշ խօսքով մը՝ “Ճշմարիտ հաւատքին հակառակ կարծիք ունէր” կ'ըսէ աս մարդուն համար ․ բայց ուրիշ տեղերէ բանը մանաւորելով կը հաստատեն որ Խաչէ Պօղոսի ըսուած եկեղեցւոյ մէջ յայտնապէս քարոզեր է թէ՝ “Քրիստոնեայ եպիսկոպոս եղողին պէտք առջի գործը՝ Աստուծոյ խօսքը քարոզելն ըլլալու է , թէ մարդուս խելքը Սուրբ Գրքէն վեր սեպելու չէ , թէ Սուրբ Գրոց խօսքերը միայն իրենց բուն մտքովը առնուելու են”, և ասոնց նման ուրիշ բաներ ։ Ասանկ վարդապետութիւններ քարոզելուն համար՝ Պուրսկէր Արքեպիսկոպոսին առջին կանչեցին , և երկան բարակ քննութիւններ ընելով , ու շատ սպառնալիքներով ու բռնադատութիւններով վերջապէս համոզեցին զինքը ։ Գէյլոր մարդկային տկարութեան ցաւալի օրինակ եղաւ ․ այրուելէն վախնալով՝ խոստովանեցաւ թէ այն իր սորվեցուցած վարդապետութիւնները սուտ են , որ ասոր պէս խօսք իր գրութիւններուն մէջ տեղ մը չկայ ։ Բայց իր թշնամիները գոհ չեղան այս ստիպմամբ իրենց ուզածը ընելուն , և կ'երևի թէ իր կարծիքները բոլորովին չձգեց , քանզի եպիսկոպոսութենէ հանեցին , ու Գօրձէի վանքը պահեցին զանիկայ մինչև ցմահ ։ Ասոնք կ'ըսեն թէ բանտը մտնելուն վրայ շատ տարեն չան-

Digitized by Google

ցած տարաժամ մահով մը կեանքը վերջացաւ ։

Հետևեալ աղօթքը՝ որ Փիքօք Եպիսկոպոսը կ՚ընէ Քրիստոսի եկեղեցւոյն վրայով՝ թէև համառօտ է , բայց շատ բան կը պարունակէ ։ «Ո՛վ Տէր Յիսուս՝ Աստուած և մարդ , Գլուխ քրիստոնեայ եկեղեցիներուդ և Ուսուցիչ քրիստոնէական հաւատոյ , կը խնդրեմ քու ողորմութիւնդ , գթութիւնդ ու մարդասիրութիւնդ . թո՛ղ սա վտանգը հեռու ըլլայ (այսինքն պապական եկեղեցականներուն ցանկացած՝ Հռովմայ եկեղեցւոյն իշխանութեանը վրայ հաւատք ունենալը) քրիստոնեայ եկեղեցիներէն , և անոնց անդամը եղող ամէն մէկ անձէն . և այսպէս պաշտպա՛ն եղիր որ սա թոյնը քու Եկեղեցւոյդ մէջ չմտնէ , թէ որ թոյլտուութիւն պիտի ընես որ մտնէ քիչ մը ժամանակ , կը խնդրեմ քենէ որ դարձեալ շուտով դուրս ձգուի ։ Սակայն թո՛ղ տուր , հրամայէ՛ ու ըրէ՛ , որ ամէն ժամանակ քու Եկեղեցւոյդ պահած օրէնքը ու հաւատքը քննուի , որպէս զի յայտնի ըլլայ թէ արդեօք քու և Առաքեալներուդ սորվեցուցած հաւա՞տքն է՝ թէ չէ , և թէ բաւական վկայութիւններ կա՞ն անոր ճշմարիտ հաւատք ըլլալուն համար՝ թէ չէ»։

Հենրիկոս Էին յաջորդը՝ Հենրիկոս Ըը եղաւ ։ Ասոր թագաւորութեանը մէջ՝ 1494 , Ապրիլ 28ին՝ Սմիթֆիլտի մէջ այրեցին ութսուն տարեկան որբևայրի մը Յովհաննա Բուղթոն անունով , որ ԱՌԱՋԻՆ ԿԻՆ ՄԱՐՏԻՐՈՍՆ եղաւ Անգղիոյ մէջ ։ Ասիկայ Եունկ անունով Լօրտի մը հետ ամուսնացած աղջիկ մը ունէր , որ ան ալ շատ նեղութիւն քաշեց՝ Ուիքլիֆին մէկ քանի վարդապետութիւնները ընդունելուն համար ։ Շատ բարակ քննութիւն ըրին այն պառաւած մարտիրոսուհիին վրայ , սակայն անիկայ անխախտ մնաց . ճշմար-



Digitized by Google

տութեան մէջ. չվախցաւ երբոր «Միտի այրիս» ըսին նէ, և բոցերուն մէջէն կ'աղաղակէր որ Աստուծոյ ամենատուրբ ձեռքը աւանդէ իր հոգին։

Թէպէտև Սուքիաս և իրեն հետևողները Հռով֊մայ եկեղեցւոյն մոլորութիւններուն և նախապա֊շարմունքներուն շատը երևան հանեցին, սակայն եկեղեցականները յամառութեամբ անոնց մէկն ալ չձգեցին. և մէկուն վրայ բարեկարգութեան նշոյլը անգամ տեսնէին նէ, անողորմելի անգթութիւնով կը հալածէին զանիկայ. ասկէց աղէկ կը հաս֊կցուի թէ որչափ հակառակ կը կենային Բարեկար֊գութեան, որ այն առջի նախապաշարմունքները ու մոլորական արարողութիւնները վերցընելու տեղը՝ դիտմամբ կը շատցընէին։ Գոյափոխութեան վարդապետութիւնը ալ անկէ ետև աղէկ հաստա֊տութիւն գտաւ, և եկեղեցւոյ հանգանակին մէջ գտնուող էականապէս հարկաւոր սեպուած հաւա֊տալեաց մէկն ալ աս եղաւ։ Հաղորդութեան ժա֊մանակ գինի տալը մեծ զգուշութեամբ կամաց կա֊մաց վերջ ըրին։ Սակայն գլուխ հանելու համար՝ նախ հրամայեցին եկեղեցականաց որ շատ աշխատին սա բանը ժողովրդոց միտքը խոթելու, «Թէ միայն հացի տեսակաւ Քրիստոսի մարմինն ալ արիւնն ալ կը տրուի, այսինքն՝ Քրիստոսի ամբողջ կենդանի և ճշմարիտ մարմինը. և թէ սկիհին մէջի գինին հա֊ղորդութիւն չէ, այլ պարզ գինի է, որ կ'ուտան՝ (դեռ անատենը կ'ուտային,) հացը դիւրաւ դարվար երթալու համար»։ Ետքը պատուիրեցին եկեղեցա֊կանաց որ «կամաց կամաց վերցընեն գինին պզտիկ ու անծանօթ եկեղեցիներէն սկսելով, ու խրատեն ժողովուրդը որ առանց ծամելու կլլեն հացը՝ որ չըլլայ թէ ակռաներնուն մէջ մնայ»։ Եկեղեցի֊ները սուրբ Կոյս Մարիամի և ուրիշ սրբոց պատ֊

Digitized by Google

կերներով լեցուցին , որոնց Աստուծմէ աւելի պատիւ կ՚ընէին ։

Գէորգ Ախմէլ Նօրքի Արքեպիսկոպոսը երեսունեօթը տեսակ մեղք կը համրէ , որ անոնց թողութիւնը Պապէն ու եպիսկոպոսներէն զատ ուրիշ մարդ չէր կրնար տալ . աս մեղքերուն առաջինն ու ամենէն մեծը հերետիկոսութիւնն էր ։ Այն ատենները մոլութիւնը՝ տգիտութիւնը և նախապաշարմունքները շատ հաստատութիւն գտան Անգղիոյ մէջ ։

[illegible] երևելի գործը՝ որ Աստուծոյ նախախնամութիւնովը հանդիպեցաւ , ու անոր մարդոց բոլոր գործքերուն վրայ ունեցած իշխողութեանը մէկ օրինակ մը տուաւ . այն է՝ տպագրութեան գիւտը ։ Առաջ ըսած Հռոմէականներէն այն «Մահաբեր պզտիկ գրքեր» կոչուածները անանկ շատնալ , որ ալ անհնար եղաւ առջևը առնելը ։ Աղէկ ըսաւ Ֆօքս թէ՝ «Կամ Պապը կործանելու է տպագրութիւնը , կամ չէ նէ՝ տպագրութիւնը անշուշտ պիտի կործանէ զանիկայ ։ Թէպէտև Յովհաննէս Հուսին և Փրակացի Հերոնիմոսին և այլոց բերանը գոցեց՝ որ չքարոզեն , ու սպաննելով կարծեց թէ իր թագաւորութիւնը հաստատ պիտի մնայ . սակայն անոնց տեղը Աստուած քարոզիչ մամուլ մը հանեց , որ Պապը իր թագին բոլոր ուժովը չկրնար անոր բերանը գոցել ։ Տպագրութիւնը՝ որ Հոգւոյն Սրբոյ գործածած գործիքներուն մէկն է , հին ատենի լեզուներ խօսելու շնորհքին պէս՝ Աւետարանին վարդապետութիւնը՝ երկինքին տակը գտնուող բոլոր ազգերուն և աշխարհիս ամէն կողմը կը խրկէ կոր , ու մէկ մարդու մը յայտնուած բանը՝ շատերուն ականջը կը հասցընէ կոր , ու մէկ

աղգին գիտցածը՝ ամենուն կ'իմացընէ կոր" ։

1509ին՝ Հենրիկոս Ը. ը գահը նստաւ . ասոր օ-րովը Անգղիոյ Թագաւորութիւնը ազատեցաւ Պա-պին իշխանութենէն ։

Ասոր Թագաւորութեանը ժամանակն ալ շատ մարդիկ տեսակ տեսակ դատապարտութիւններ ըն-դունեցին , որոնց մէկն ալ Յովհաննէս Պրաունն էր ։ Ասիկայ բռնեցին Դանդուարիա տարին առանց իր կնկանը և բարեկամներուն իմացընելու՝ թէ ուր կը տանեին . հոն քառասուն օր բանտը պահե-ցին , որ այս միջոցին Արքեպիսկոպոսին և Ա-լէքսանդր Եպիսկոպոսին ձեռքը իյնալ ըլլալով տու-կալէ անգթութեամբ ուղածնուն պէս տանջեցին զինքը . ոտուըները կրակի վրայ դրին՝ որ ուրանայ հաւատքը . բայց Պրաուն համբերութեամբ այն տանջանքներուն դիմանալով՝ իր հաւատքին մէջ անխախտ մնաց ։ Վերջապէս անիկայ իր քաղաքը Ասփորտ խրկեցին , որ հոն այրեն ։ Իր կուան դէմ քաղաքը մտցուցին ու անոր ոտքերը կոճղի մէջ դրին ։ Այս ըրած առեններին դիպուածով իր տանը աղախինը քովէն անցնելով՝ նայեցաւ որ իր տէրն է , շուտ մը վազեց տուն իր խաթունին զրուցեց ։ Խեղճը մինչև այն օրը ամենևին բան մը չէր գի-տեր երկանը գլխուն եկածներուն վրայով . հիմա ելաւ գնաց , և այնպէս ողբալի վիճակի մէջ գտաւ զանիկայ ։ Մինչև առտու քովը նստաւ , ան ալ մէ-կիկ մէկիկ պատմեց բոլոր քաշածները , և այն երկու Եպիսկոպոսներուն իր ոտուըները ինչուան ոսկորը այրելը , անանկ որ ալ վրանին չէր կրնար կոխել . "Ասոնց ամէնը ըրին" , ըսաւ , "որ իմ Տէրս ու-րանամ . բայց ես անանկ բան չեմ կրնար ընել . քանզի թէ որ այս աշխարհիս մէջ ես անիկայ ու-րանամ նէ , ան ալ գալու աշխարհին մէջ զիս կ'ու-

քանայ․ և ես կ'աղաչեմ քեզի՝ ազնիւ Եղիսաբեթ", կ'ըսէր, «Սկսածիդ մէջ յառա՛ջ գնա, և զաւկը-ներդ առաքինի մեծցուր Աստուծոյ վախովը"։ Հե-տևեալ օրը այրուեցաւ․ ու երբոր այրելու վրայ էր, պարզ՝ բայց ջերմեռանդ աղօթք մը ըրաւ սա խօսքերով վերջացընելով․ «Քու ձեռքդ կ'աւան-դեմ իմ հոգիս․ դուն փրկեցիր իս՝ ով Տէր Աս-տուած ճշմարտութեան"։ Իր մէկ աղջիկը՝ որ հոն ներկայ էր, այս ցաւալի անցքերը կը ստորագրէ, ու անկարելի էր որ անիկայ բան մը մոռցած ըլլայ․ քանզի պաշտօնատարին մէկը ըսեր էր թէ՝ «Պրա-ունին տղաքն ալ կրակը պիտի նետենք, որ իրենց հօրը պէս ըլլան"։

Ասկէց հինգ հոգիի համար ալ ամբաստանու-թիւն եղաւ, Հերետիկոսական գրքեր կարդալնուն համար։ Կարդացողը պիտի զարմանայ՝ երբոր իմա-նայ թէ այս Հերետիկոսական ըսուած գրքերը՝ Անգղիարէն լեզուով գրեր Աւետարաններն էին․ և սակայն քուն ամբաստանութիւնը սա հետևեալն է։ «Չեզի գտեր ենք սա պատճառաւ ալ՝ որ դուք ան-ցեալ երեք տարուան միջոցին՝ ատեն ատեն և յատ-կապէս մէկ գիշեր մը մինչև լոյս՝ ծուռ մտքով և չարութեամբ կարդացեր էք այն Ռօպէրդ Տուր-տանդին շինած մէկ մեծ Հերետիկոսական գրքէն Աւետարանին մէկ քանի գլուխները Անգղիարէն լեզուով, որոնց մէջ այլ և այլ մոլար և դատա-պարտելի վարդապետութիւններ․ ու Հերետիկոսա-կան հետևութիւններ կան", և այլն։ Ալ տեսնե՛ս ով ընթերցող, Աւետարանիչներն անգամ Հերե-տիկոս են եղեր՝ Հռոմմայ եկեղեցւոյն հակառակ վարդապետութիւններ քարոզելնուն համար։



Digitized by Google

## ԳԼՈՒԽ Գ ։

Թովմաս Մոր — Մէկ կրակի մէջ եօթը մարտիրոսներ կ'այրուին Գովէնդրի մէջ՝ իրենց տղոցը Անգղիարէն լեզուով Տէրունական աղօթքը սորվեցընելնուն համար — Լինքոլնի թեմին մէջ հալածանք կ'ելլէ — Ժողովրդոց տոկունութիւնը աս հալածանքին վրայով, և եկեղեցականաց օրէ օր աւելի իշխանութիւն ձեռք բերելը — Լոնտոնայ Եպիսկոպոսին հրամանը Անգղիարէն Աւետարանին դէմ — Թինտալ — Իր Նոր Կտակարանին թարգմանութիւնը՝ որ Անգղիարէն լեզուով տպուածներուն առաջինն եղաւ — Աս Աւետարանէն շատ օրինակներ ծախու կ'առնէ Լոնտոնայի Եպիսկոպոսը, ու կ'այրէ ։

1518ին՝ Թովմաս Մորը այրեցին ։ Ասիկայ Լինքոլնի Եպիսկոպոսին ատեանը քաշեցին, ըրած ամբաստանութիւններուն գլխաւորը աս ըլլալով՝ թէ վերջին օծումին վրայ ուղիղ հաւատք չունի ։ Ասիկայ եկեղեցւոյ հնազանդեցաւ. ուստի վճռուեցաւ որ միշտ իր վրան կախէ մէկ նշան մը՝ որուն վրայ խուրձ մը կիսայրեաց փայտ նկարուած ըլլայ, ու բնաւ Օքսֆորտէն դուրս չելլէ ։ Մոր պատեհութիւն գտնելով՝ փախաւ. եւ Լոնտոնայի մէջ առանց նշանը վրան ունենալու գտան զանիկայ, ու նորէն դատաստանի տարին իբրև վերստին հերետիկոսութեան մէջ ինկած ։ Անոր փաստաբան մը տուաւ Եպիսկոպոսին նօտարը. ան ալ քեզի պաշտպան եմ ըսելով՝ Մորին հինգ տարի առաջ ըրած մէկ խոստովանութիւնը բերնէն առաւ, և այսպէս անոր դէմ ամբաստանութիւն ընող վկային մէկուն խօսքը հաստատեց. Մորը պահող բանտապետն ալ ատեանը հանեցին, որ վկայութիւն տուաւ Մորին ասանկ խօսք մը ըսելուն՝ թէ «Եկեղեցւոյ օրէնքները Պիղատոսէն և Կայիափայէն առնուած կերևէին իրեն» ։ Արձանագրութեան մէջ գրուած կը գտնենք՝ թէ

Digitized by Google

եկեղեցւոյ հնազանդեցաւ . բայց սոր սուտ կամ իրաւ ըլլալուն վրայ տարակոյս կայ . ինտոր որ եղաւ նէ՝ եղաւ, Մարտի 29ին՝ Եպիսկոպոսին նօտարին ձեռօքը Լոնտրայի պաշտօնատարին յանձնուեցաւ, այս հետեւեալ կեղծաւորական վճռով . «Կը փափաքինք Տէր Յիսուս Քրիստոսի գութովը՝ որ այս բանիս համար քաշելու պատիժդ շատ թեթեւ ըլլայ՝ առանց ամենեւին խստութեան կամ դժնդակութեան եւ ըստ ամենայնի հոգւոյդ փրկութեանը եւ բարելաւութեանը համար» : Իրաւ բոլորն ալ հոգւոյն բարելաւութեանը համար կ'երեւի թէ եղաւ, բայց իր մարմինը տանջուելով : Պաշտօնատարը ձիու վրայ հեծած՝ ընդունեց բանտարկեալը Եպիսկոպոսին տանը ետեւի դռնէն . նօտարն ալ դուռը կայնած կ'իմացընէր պաշտօնատարին՝ թէ ամենեւին իշխանութիւն չունի Մանը մեռցընելու, եւ «կը փափաքիմ», կ'ըսէր, «որ իբրեւ դատապարտեալ հերետիկոս պատժես, բայց չըլլայ որ մեռցընես» : Պաշտօնատարը այս խօսքերուն բուն միտքը աղէկ կը հասկընար . եւ մահուան վճիռը ելածին պէս՝ տարաւ Սմիթֆիլտ այրեց : Այսպէս Մանին ըսած խօսքը եկաւ ելաւ . քանզի ինտոր որ Կայիափան ու իր Փարիսեցւոց գունդը կ'ըսէին Պիղատոսին՝ թէ «Մեզի չվայլեր մարդ մը մեռցընել», ետեւէն ալ կ'ըսէին՝ «Թէ որ աս մարդը արձակես, Կայսերին բարեկամը չես», անանկ ալ ասոնք՝ պաշտօնատարին ձեռքը կը յանձնեն մարդը, գիտեն ալ թէ հարկաւ պիտի մեռցընէ, ու կեղծաւորելով կ'ըսեն թէ, Չըլլայ որ արիւն թափես :

Այս Թովմաս Մանը գաղտուկ տեղէ տեղ պտըտող Լոլլարտներուն քարոզիչներէն մէկն էր . այս պաշտօնով ինքը շատ տեղ պտըտեցաւ : Նիւպէրի քաղաքը կ'երեւի թէ ճշմարիտ քրիստո-

Digitized by Google

նէից ժողով մը ունէր , որոնք տասնուհինգ տարիի չափ անծանօթ մնացին . ետքը մէջերնուն սուտ եղբայր մը ելաւ գնաց մատնեց : Անոնց մէկ քանին այրեցան , մէկ քանին ալ ուրիշ կերպերով պատժուեցան : Ման անկէց փախաւ գնաց Ամէրշամ կեցաւ՝ ինչուան որ անտեղի ժողովն ալ ցրուեցաւ : Այս անգամ ալ ազատեցաւ Ման , բայց վերջապէս ցիցին կապեցին այրեցին 1519ին : Եօթնհարիւր հոգի էր հաւատքին դարձուցեր էր , որ ատոր համար շատ գոհութիւն կը մատուցանէր Աստուծոյ : Թէ որ Աստուծոյ խօսքին բամծին պէս՝ "Աշակերտը արդարութեան առաջնորդողները աստղերուն պէս յաւիտեանս յաւիտենից լուսաւոր պիտի ըլլան" , յիրաւի Թոմաս Ման հիմա երկնային փառաց լուսով կը փայլի իբրև պայծառ աստղ :

1519ին՝ եօթը մարտիրոս մէկ կրակի մէջ այրեցան Գովէնդրի քաղաքին մէջ :—Անոնց համար եղած ամբաստանութիւնները՝ զաւկըներնուն ու սպասաւորներնուն Տէրունական աղօթքն ու Տասնաբանեայ օրէնքը Անգղիարէն լեզուով սորվեցընելնին էր : Վանքի կրօնաւոր մը քննեց տղոցը իրենց հօրմէն սորված բաները , և պատուիրեց որ՝ եթէ հօրերնուն ընդունելու մահէն ազատ մնալ կ'ուզեն նէ , Անգղիարէն Տէրունական աղօթքը , Հաւատամքը և Տասը Պատուիրանքները մէյմ'ալ բերաննին առնելու չեն :

Կիրակի օր մը աս եօթը հոգին նորէն Գովէնդրի բերին , և վեցին այրուելուն վճիռը տուին . բայց եօթներորդը թող տուին , որ Սմիթ անունով որբևայրի մըն էր : Երբոր դատաստանը վերջացաւ ու ժամանակը իրիկուն էր , Եպիսկոպոսին պաշտօնեաներէն մէկը Սիմէոն Մուրդոն անունով՝ հաճեցաւ որ այս կնկանը հետ ընկերանայ մինչև տու-

Digitized by Google

նը ։ Երբոր թեւը բռնած կը տանէր զանիկայ , Սի-
մէոն թուղթի մը ձայն առաւ թեւին քովէն . տես-
նեմ ատ ինչ է ըսելով՝ առաւ նայեցաւ որ Տաս-
նաբանեան՝ Հաւատամքն ու Տէրունական աղօթքն
է Ընգղիարէն . «Ասանկ հա՞ , աղէ դառնանք , աս-
կէ աւելի յարմար ժամանակ չկրնար ըլլալ» , ըսաւ ,
ու առաւ տարաւ Եպիսկոպոսին . ան ալ անմիջա-
պէս 'ի մահ դատապարտեց ։ Այս եօթը մարտի-
րոսները միատեղ այրեցան Ապրիլի 4ին ։

Ասոնք մեռածնուն պէս՝ [illegible] տու-
[illegible] կռաց ու ինչ կար չկար յափշտակեց բռ-
նութեամբ , անոնց խեղճ կնիկները ու զաւկըները
չոր տախտակի վրայ թողելով ։ Փոքր յանցանքի
մը համար սաստիկ սոսկալի անգթութիւններ տես-
նելով հասարակութիւնը՝ սկսան անդիէն ասդիէն
գանգատներ լսուիլ . այս պատճառաւ Եպիսկո-
պոսը ստիպուեցաւ սաստիկ ձայն մը հանել՝ թէ
Տէրունական աղօթքին՝ և Ընգղիարէնը քովեր-
նին գտնուելուն համար չէր որ այրուեցան , հապա
Ուրբաթ օրերը և ուրիշ պահոց օրերը միս ու-
տելնուն համար ։

Թէպէտև Աստուծոյ խօսքը հրապարակաւ քա-
րոզելու թոյլտուութիւն չկար անատենները , սա-
կայն աշակերտաց թիւը էվէլօք շատ էր . և անոնց
նախանձը մերինին հետ բաղդատելու ըլլանք նէ ,
մենք անոնց քով անհոգ և անփոյթ քրիստոնեաներ
ենք ։ Անոնք գիշերը ինչուան լոյս կը նստէին Ա-
տուծոյ խօսքը կը կարդային , ու մտիկ կ'ընէին ։
Եւ թէպէտ շատ աղքատ էին , սակայն հիմակուան
չորս հինգ ղուրուշի գրքոյկին ութըհարիւր կամ
հազար ղուրուշի չափ ստակ կու տային ու կ'առնէին ։

Աս ալ կայ որ՝ այս հալածեալ քրիստոնէից դէմ
կերպ կերպ ամբաստանութիւններ չէր ըլլար . ե-

ղած ամբաստանութիւններուն ամէնը չորս գլխաւոր բաժանմանց տակ կրնանք առնել, որոնք ամէն ամբաստանութեան մէջ քիչ շատ կը գտնուէին : Առաջինը՝ ուխտագնացութեան հակառակելնին . երկրորդը՝ Կոյս Մարիամը և ուրիշ սուրբերը պաշտելնին . երրորդը՝ հաղորդութեան հացին ու գինիին իրօք Քրիստոսի մարմին և արիւն ըլլալը ուրանալնին . մէյմ'ալ՝ Անգղիարէն Սուրբ Գիրք կարդալնին : Գիտելու բանը սա է որ՝ աս Լոլլարտ- [illegible] սանկ նանկ անվայել չար գործքեր կ'ընեն կորի խօսք չկայ ամենևին :

Յովհաննէս Պարրէդ Լոնտրացի արծաթագործը իր կնկանը ու աղախինին հետ դատապարտեցին՝ անոնց առջևը Յակոբոս առաքելոյն Թուղթը բերնուց զրուցելուն համար :

Կուլիէլմոս Լիդըլփէյճ անուն մէկը՝ իր եղբայրը դատապարտանի քաշեց՝ Տասնաբանեային Անգղիարէնը սորվելուն համար :

Յովհաննէս Գրակէր անուն մէկուն դէմ ամբաստանութիւն եղաւ՝ թէ Քրիստոսի սա խօսքը սորվեցուցեր է Աւետարանէն՝ Ալիս Գրաունին . "Երանի Աստուծոյ խօսքը լսող ու ընողներուն" : մէյմ'ալ Ութը Երանութիւնք ըսուածները Անգղիարէն լեզուով, (այսինքն՝ Մատթ . Ե . 3—12) :

Թովմաս Փիլիպպոսն ու Լաւրենտիոս Գէյլօրը դատապարտանի կանչեցին՝ Հռովմայեցւոց Թուղթը և Ղուկասու Ա . Գլուխը կարդալուն համար :

Կ'երևի թէ չորս հոգի այրեցին այն տարին : Այս չորսին մէկուն՝ Յովհաննէս Աքրիվեներին որդիքը բռնադատուեցան իրենք իրենց ձեռօքը հօրերնուն փայտակոյտը բռնկցընելու :

Քիչ մը գիտութեանց մէջ յառաջ գացած և

լուսաւորուած՝ երկրի մը մէջ՝ [illegible] հալածմանց շատ ժամանակ չքաշելը ամէն մարդ կրնար գուշակել առաջուց . նա մանաւանդ աս ալ տեսնելով՝ որ շատ ժամանակէ 'ի վեր էր՝ որ հասարակութիւնը եկեղեցականաց մոլութիւններէն զզուեր էին , և բոլոր Անգղիոյ բնակիչները այս պատճառաւ չէին ուզեր որ ալ վրանին մնայ եկեղեցականաց այն տաղտկալի լուծը :

Ուիլիէլմոս Դինտալ անունով մէկը՝ որ Բարեկարգութեան ատենները "Առաքեալ Անգղիոյ" կ'ըսուէր , և Աստուածաշունչը Անգղիարէնի առջի թարգմանողներուն մէկն էր , ծնաւ Ուէլսի սահմանները , հաւանականաբար 1490ին , ու հալածման ժամանակները Անգղիայէն ելլելով Անդուերբ կը բնակէր . հոն իր թարգմանութիւնը լմնցուց ու տպել տուաւ : Դոնսդալ Լոնտրայի Եպիսկոպոսը՝ որ շատ նախանձով կը փափաքէր ամէն Աւետարանական գրքերը իր ձեռքէն վերցընելու , մանաւանդ 'Նոր Կտակարանին թարգմանութիւնը , ասանկ հնարք մը բանեցուց իր նպատակին հասնելու համար : Փաքինկդօն անուն մէկը՝ Լոնտրացի վաճառական՝ որ Անդուերբ քաղաքին հետ առուտուր կ'ընէր , իրեն կանչեց ու անոր հետ խորհուրդ ըրաւ թէ ինչպէս այն բոլոր 'Նոր Կտակարանները ձեռք ձգէ ու այրէ : Կ'երեւնայ թէ Դոնսդալ չուզեց ուրիշ եպիսկոպոսներուն պէս անգթութիւններ ու չարագործութիւններ ընել՝ Սուրբ Գրոց առջեւը առնելու համար , և աս պատճառաւ ասանկ հնարք մը բանեցուց :

Կ'ըսուի թէ Փաքինկդօն Դինտալին հետ գաղտնի բարեկամութիւն ունէր , և գիտնալով որ Դինտալ ստակի կարօտ էր ու ձեռքը շատ 'Նոր Կտակարան էր մնացեր չծախուած , աս բանը աղէկ մի-

Digitized by Google

ջոց մը երևցաւ իրեն՝ Պրինտալին օգնութիւն ընելու ։ Ուստի Եպիսկոպոսին ըսաւ որ՝ եթէ հրաման ունի նէ, դեռ ծախու չառնուածներուն ստակը տայ առնէ ։ Եպիսկոպոսը ասոր հաճութիւն տուաւ. Պրինտալ ստակը առաւ, Փաքինկդօն ալ շատ մը շնորհակալութիւններ ։ Եպիսկոպոսը գրքերը ձեռք ձգեց, ու Չիփսայտի մէջ այրել տուաւ, որ աս բանիս վրայ շատերը մեծ զարմանք ու տրտմութիւն ունեցան ։

Եպիսկոպոսը խելքովը կարծեց թէ ալ ամէն բան լմնցուց. սակայն շատ չքշեց՝ տեսաւ որ իր կարծիքը սխալ է եղեր ։ Հոլանտայի տպագրիչները երբոր իմացան որ Նոր Կտակարան շատ կը փնտռուի կոր, շուտով նոր տիպ մը հանեցին, և հետևեալ տարին բազմաթիւ Նոր Կտակարան հասաւ Լոնտրա ։

- Սիր Թովմաս Մօր՝ որ անատենը մեծ ատենադպիր էր, սաստիկ թշնամութիւն ունէր բոլոր բարեկարգութիւն մտցընողներուն, և կ'երևի թէ շատ խստութեամբ կը քննէր ան հերետիկոսները՝ որոնք Հոլանտայի հետ ո և իցէ կերպով հաղորդակցութիւն ունէին ։ Օր մը Գէորգ Կոստանդիանոս անունով մէկը ասոր առջին հանեցին ։ Շատ բաներ հարցընելէն ետև՝ «Քեզի բան չեմ ըներ», ըսաւ, «Թէ որ շիտակը ըսես՝ թէ Պրինտալն ու իր ընկերները որմէ՞ն ապրուստ կ'առնեն կոր»։ «Շիտակը աս է՝ Տէր իմ», ըսաւ Կոստանդիանոս. «Լոնտրայի Եպիսկոպոսն է՝ մեզի օգնութիւն ընողը, քանզի մեզի շատ ստակ տուաւ ան Նոր Կտակարաններուն համար՝ որոնք այրեց, ու մինչև հիմա ան ստակովն է որ կ'ապրինք կոր»։ «Կը հաւատամ իրաւցընէ ասոր ատանկ ըլլալուն», ըսաւ ատենադպիրը, «քանզի ես ըսի Եպիսկոպոսին որ աս բանը ասանկ պիտի ըլլայ»։

## ԳԼՈՒԽ Գ.

Պիլնէյ — Իր քննութիւնը՝ Լոնտոնու եպիսկոպոսին առջեւ — Իր նամակները որ եպիսկոպոսին խրկեց — Պիլնէյ կը համոզուի իր վարդապետութիւնները ուրանալու — Իր խորին տրտմութիւնը եւ զղջումը այս բանը ընելուն համար — Պիլնէյ միտքը կը դնէ որ նորէն Աւետարանին ճշմարտութիւնը քարոզէ — Ասիկայ կը բռնուի ու Նորուիչի մէջ կ'այրուի իբրեւ նորէն մոլորութեան դարձած հերետիկոս :

Թովմաս Պիլնէյը Կանտաբրիգեայի համալսարանը վարժուեցաւ · աշակերտութեանը ատենը անուանի էր , եւ իրաւագիտութեան մէջ շատ յառաջ գնաց : Ասիկայ Հոգւոյն Սրբոյ ազդեցութիւնովը արթընցաւ , ու անկէ ետեւ աւելի մեծ բաներու տուաւ ինքզինքը , եւ շատ նախանձաւոր եղաւ ուրիշները ճշմարտութեան գիտութեանը առաջնորդելու : Իր աշխատանքները պարապը չելան · իր քարոզութիւններուն պտուղներուն մէկն ալ՝ Հուգոն Լադիմէր՝ այն Քրիստոսի հաւատարիմ ծառան էր , որ ետքը Անգղիոյ բարեկարգութեանը երեւելի ջատագովներէն մէկն եղաւ :

Քիչ մը ժամանակէն ետեւ Պիլնէյ ելաւ համալսարանէն , ու շատ տեղ պտըտեցաւ՝ համարձակութեամբ Հռովմայ եկեղեցւոյն մոլորութիւնները ցուցընելով : Շատ չանցած՝ հրաման ելաւ որ Պիլնէյը բռնեն :

1527 , Նոյեմբերի 27ին՝ Պիլնէյին դէմ ամբաստանութիւն եղաւ՝ թէ Լութերի այս ինչ եւ այն ինչ վարդապետութիւնները կը քարոզէ , եւ շատ հերետիկոսական կարծիքներ ունի · զոր օրինակ կ'ըսէ թէ՝ "Սուրբ Գիրքը Անգղիարէնի թարգմանելու է , Պապին ներողութիւնները ընդունելու չէ" , եւ ասոնց պէս շատ բաներ ալ :



Digitized by Google

Դեկտեմբերի 2ին Պինքէյը՝ Լոնտրայի Եպիսկոպոսին՝ Գօնսգալին առջին հանեցին: Շատ համոզութիւններ ըլլալէն ետեւ՝ Պինքէյ Հռովմայ եկեղեցւոյն դառնալու յանձնառու չեղաւ : Հետեւեալ օրը կրկին ատեանը հանեցին . ու Գօնսգալ նորէն սկսեց յորդորել որ զեղջի գայ . բայց Պինքէյ դէմ կեցաւ՝ ըսելով . «Խղճիս վկայածին պէս ինչ որ ըսի նէ՝ ան ըսածներէս անդին չեմ անցնիր» : Վերջապէս՝ շատ խօսքեր ըլլալէն ետեւ , և ատէպ ատէպ իր բարեկամներուն հետ տեսութիւն ընելու թոյլտուութիւն ըլլալէն ետքը , Դեկտեմբերի 7ին՝ Եպիսկոպոսը սկսաւ խստութեամբ խօսիլ հետը՝ իբրև թէ անկէ ետեւ ալ յամառութեանը վրայ մնայ նէ՝ պիտի այրէ զինքը . Պինքէյ՝ ալ չկրնալով դիմանալ , ուրացաւ : Ասոր վրայ՝ խուրձ մը կիսայրեաց փայտ ձեռքը տալով՝ փողոցէ փողոց պտըտցուցին , ցուցընելու համար՝ թէ արժանի էր այրուելու . ու ետքը թող տուին :

Պինքէյ այս Եպիսկոպոսին քանի մը նամակներ գրեր էր՝ ատեանը ելլելէն առաջ , որ ան նամակներուն մէջ գրածներովը քննութիւն եղաւ իր վրայ: Առաջին նամակին մէկ կտորը հոս դնենք , որ իր դարձի գալուն պատմութիւնն է :

«Նամակը կը սկսի՝ նախ և առաջ իր յօժարակամութիւնը ցուցընելով՝ իր վարդապետութիւններուն ինչ ըլլալը իմացընելու , ասս ալ ըսելով թէ՝ «Անոնք մոլար՝ հերետիկոսական և ապստամբեցուցիչ վարդապետութիւններ չեն» : Ետքը կ'ըսէ Գօնսգալին թէ , «Շատ սուտ վարդապետներ կան՝ Քրիստոսի խաչին թշնամի , որոնք հերետիկոսները հալածելը պատճառանք ըրած՝ իրենց շահը կը փնտռեն միայն» : Ասանկ մարդոց մէկ քանի տեղակները մէկիկ մէկիկ համրելէն ետեւ , կը նմանցընէ

Digitized by Google

զանոնք այն բժիշկներուն, որ Աւետարանին մէջ յիշուած տառապես կինը անոնց ձեռքը լեցուց իր բոլոր ունեցածները, ու օգուտ մը չքաղեց. բայց երբոր հաւատքով եկաւ Քրիստոսի հանդերձին ծայրին դպաւ նէ՝ նոյն ժամուն բժշկուեցաւ: «Ո՜վ սքանչելի կարողութեան Ամենաբարձրելոյն, որ ես իմ վրաս զգացի», կ՚ըսէ, ես որ այն կնկանը նման՝ Քրիստոսի ոտքը երթալ իյնալէս առաջ, ունեցածս չունեցածս այս տգէտ բժիշկներուն տալու. հսկումներ ընելէն ու երկար երկար պահքեր բռնելէն՝ զօրութիւնս հատաւ. * Ներողութեան կոն-

* Ներողութեան կոնդակներ ըսելով՝ պէտք իմանանք տեսակ մը թոյլտուութիւն, որով Պապը կը յայտնէ թէ՝ ով որ զանոնք ծախու կ՚առնէ, կամ քիչ ժամանակ՝ կամ երկար ժամանակ և կամ մշտնջենաւորապէս կը ներուի ան մարդուն մեղքերը՝ որ անոնց մէջ յիշուած են: Աս կոնդակներուն գինը՝ ծախու առնողին կարողութեանը համեմատ՝ և կամ անոր ներուելու մեղքին ծանրութեանը համեմատ կ՚որոշուէր: Մինչև անգամ եղեռնագործ մարդիկ ալ աս առեւտուրին մասնակից կ՚ըլլային: Այսպէս արդիւնաւոր շահ մը կ՚ըլլար Պապին: Աս ներողութիւնները ծախողները եկեղեցականներն էին, ու անոնց գործքը աս էր, ասկէց մեծ օգուտ կը քաղէին: Աս կոնդակները յայտնի կը ծախուէին: Անատենի ժամանակագիր մը կը հաստատէ թէ՝ Լոնտոնայի հրապարակներուն մէջ անոնք հասարակ ապրանքներու պէս կը ծախուէին. ու մարդիկը ամէն տեսակ եղեռնագործութիւններու ու անառակութիւններու գրգռուեցին: Ուինգալ Եպիսկոպոսը կ՚ըսէ թէ՝ «Մենք առակով առատօրէն ներողութիւններ ծախու կ՚առնէին Հռոմէն. և ան որ խիստ շատ կոնդակներ առած էր՝ իր թաղման առենը իր հետը գերեզմանը դրուելու, (որ ես աս բանիս ականատես եմ,) մահուան համար ամենէն աղէկ պատրաստութիւն տեսած կը սեպուէր»: Աս ներողութիւններէն մէկ քանիները հիմա ալ գտնուած են՝ անատենի մեռելոց արկղերը բանալով: Երբոր մարտիրոսներ այրուելու կ՚ըլլային, անոնց այրմանը համար փայտ բերողներուն շատ անգամ քառասնօրեայ ներողութիւն կը շնորհուէր: Հռոմայ եկեղեցւոյն աս զզուելի բանը դեռ կը շարունակուի, թէպէտ և առաջինին չափ չէ: 25 տարի առաջ Պապը մէկ հրաւիրանաց կոնդակ մը հրատարակեց, որով կը խոստանար ներողութիւն շնորհել ան ամենուն՝ որոնք ուխտագնացութեամբ Հռոմ պիտի երթային Յոբելեան տարւոյն մէջ, 1825ին:

Digitized by Google

դակներ ծախու առնելէն ու պատարագուց տալէն՝ քանիս սատկ չմնաց , և միտքս ալ բոլորովին տկարացաւ . աս բոլոր ըրածներնին՝ (ինչպէս որ հիմա յայտնապէս կը տեսնենք , ) իրենց շահուն համար է եղեր , և ոչ թէ տկարութեան ու թուլութեան մէջ ինկած հոգիս փրկելու համար :

«Բայց վերջապէս Քրիստոսի ձայնը ականջս հասաւ : Աս ան ատենն եղաւ՝ երբոր Երասմոս առաջին անգամ իր Լատիներէն Նոր Կտակարանը տպագրեց ու հրատարակեց : Լսեցի որ շատ ընտիր ոճով մը յօրինած է , ուստի լեզուին համար մէկ հատ մըն ալ ես առի՝ ամենևին բան մը չգիտնալով մէջը եղածներուն վրայ . բայց հիմա կ՚իմանամ որ՝ Աստուծոյ մասնաւոր նախախնամութիւնովը ծախու առեր եմ զանիկայ : Աղէկ միտքս է որ առաջին անգամ բանալ կարդալուս , Տիմոթէոսի Առաջին թղթին սա խօսքը դէմս ելաւ , (որ իմ հոգւոյս շատ անուշ ու մխիթարական խօսք մըն էր , ) ‹Աս խօսքը ճշմարիտ է՝ և բոլորովին ընդունելութեան արժանի , որ Քրիստոս Յիսուս աշխարհք եկաւ մեղաւորները փրկելու համար՝ որոնց գլուխը ես եմ › : Աս մէկ համարը կարդալուս՝ այն ժամանակը Աստուծոյ զօրութիւնը անծանօթ կերպով մը ազդեց սրտիս , մեղքերուս զգացումովը վիրաւորուած և գրեթէ յուսահատութեան մէջ ինկած հոգիս ուրախացաւ , և մէկ անանկ ներքին ուրախութիւն մը ու հանդարտութիւն մը զգացի՝ որ չեմ կրնար պատմել . բայց աս գիտեմ որ կոտրած սիրտս ցնծութիւնով լեցուեց : Անատենը Սուրբ Գիրքը ինծի մեղրէն անուշ եկաւ , ու խորիսխէ կաթած մեղրէն ալ . կամաց կամաց սորվեցայ որ այն քաշած աշխատութիւններս , պահք բռնելներս , հսկումներ ընելս , ներողութեան կոնդակներ ծախու

առնելս , պատարագուցներ տալս անօգուտ են ե-
ղեր . քանզի զուրկ էի Քրիստոս Յիսուսի Հա-
ւատքէն , որ ան միայն կարող է փրկել իր ժողո-
վուրդը իրենց մեղքերէն . իմացայ որ անոնք պա-
րապ բաներ են եղեր , և Սուրբ Օգոստինոսին ը-
սածին պէս՝ 'Շիտակ ճամբէն խոտորիլ մը միայն'.
և նման այն փոքր ծածկոցին , որով մեր նախնի
ծնողքը ծածկել ուզեցին ինքզինքնին . որ և անոնք
չկրցան Հանգիստ և խաղաղութիւն գտնել՝ ինչուան
որ Աստուած չտուաւ այն խոստմունքը , թէ Կին-
կանը սերունդը օձին գլուխը պիտի ջախջախէ ։
Չկրցայ մեղաց դառն և մահաբեր խայթերէն ա-
զատիլ , ինչուան որ Աստուած չսորվեցուց ինծի
այն դասը , որ Տէրն մեր կը յիշէ Յովհաննու
Աւետարանին Երրորդ Գլխուն՝ մէջ . 'Ու ինտոր
որ Մովսէս անապատին մէջ օձը բարձրացուց ,
անանկ ալ պէտք է որ Որդին մարդոյ բարձրանայ ։
Որ ամէն ով որ անոր Հաւատայ՝ չկորսուի , Հա-
պա յաւիտենական կեանքը ընդունի'։ Այս դա-
սին անուշութեան Համը առնելով , որ մէկը
կարող չէ իմանալ՝ ինչուան որ Աստուած չսորվե-
ցընէ , ինչպէս որ Պետրոս առաքեալին ալ ինքը
յայտնեց . խնդրեցի Տէրոջմէս որ Հաւատքս ա-
ճեցընէ , և այս միայն կ'աղաչէի իրեն , որ իր
փրկութեանը ցնծութիւնը սրտիս մէջն ունենալով՝
Հոգւով Սրբով զօրանամ , ու ան իս պաՀէ ա-
մէն ատեն . և 'ի վերուստ զօրութիւն ընդունե-
լով՝ Աստուծոյ ճամբաները չարերուն սորվեցընեմ ,
որ է ողորմութիւն և ճշմարտութիւն , որպէս զի
մեղաւորները Տէրոջը դարձընեմ , ես՝ որ առաջ
մեղաց գերի էի" ։

Ասկէ ետև Պինէյ՝ Եպիսկոպոսին ու Կարդի-
նալին առջևը տուած քննութեանը վրայ կը խօ-



Digitized by Google

սի , և կ'ըսէ թէ իր այն նեղութեանը ժամանակը մի միայն մխիթարութիւնը Քրիստոս էր , ու կը փափաքէր ցուցընել զանիկայ իբրև մեզի «Աստուծմէ եղած իմաստութիւն՝ արդարութիւն՝ սըրբութիւն և փրկութիւն»։ «Որ և ինքը որ մեղք չէր գիտեր , մեզի համար մեղաւոր սեպուեցաւ , որ մենք անոր ձեռքովը Աստուծոյ արդարները եղած ըլլանք։ Որ ինքը մեզ ծախու առաւ օրէնքին անէծքէն՝ մեզի համար անէծք ըլլալով . ինչու որ արդարները կանչելու չեկաւ , հապա մեղաւորները ապաշխարութեան»։ որ ըսել է՝ ոչ թէ սուտ տեղը ինքզինքնին արդար սեպողները . քանզի «ամէնքը մեղք գործեցին և Աստուծոյ փառքէն պակսած են ։ Իսկ անոր շնորհքովը ձրի կ'արդարանան Յիսուս Քրիստոսով եղած փրկութիւնովը»։ Ա Կորն . Ա ։ Բ Կորն . Ե ։ Գաղ . Գ ։ Մատթ . Թ ։ Հռոմ . Գ ։ «Իսկ ուստի ձեռքէս եկածին չափ կը քարոզեմ՝ որ բոլոր մարդիկ պարտին զգալ մեղքին գէշութիւնն ու ծանրութիւնը , և ճանչնալու են բռնած ճամբաներնուն չարութիւնը , և անօթի ու ծարաւ ըլլալու են ան արդարութեանը , որ կը յիշէ Պօղոս առաքեալ սա խօսքին մէջ . «Աստուծոյ արդարութիւնը Յիսուս Քրիստոսի հաւատքէն՝ բոլոր հաւատացողներուն վրայ է . ու չկայ զանազանութիւն ։ Ինչու որ ամէնքը մեղք գործեցին , և Աստուծոյ փառքէն պակսած են ։ Իսկ անոր շնորհքովը ձրի կ'արդարանան Յիսուս Քրիստոսով եղած փրկութիւնովը՝ ։ Հռոմ . Գ ։ Այս արդարութեանս համար անօթի ու ծարաւ եղող մարդը անշուշտ կը կշտանայ , առանց մէյմ'ալ անօթենալու ու ծարւելու յաւիտեան ։

«Բայց շատերը աշխատեցան սա անօթութիւննին ու ծարաւնին անցընել մարդկային արդարութեամբ ,

Digitized by Google

որ այն արդարութիւնը մեր անկատար գործքերովը կ'ըլլայ . ինչպէս՝ ուխտագնացութիւնով , ներողութիւն ծախու առնելով , որբոց սեղաններուն մոմեր ընծայելով * , պահեցողութիւնով և ուրիշ մնապաշտական արարողութիւններով . ասոնց հետ կրնանք համրել կամաւոր (կամ չափազանց բարեգործութիւնք) ըսուածն ալ , որուն ուղղակի հակառակը կը քարոզէ Աստուծոյ խօսքը . ‹ Ձեզի պատուիրած խօսքիս վրայ բան մը չաւելցընէք , ու անկէց բան մը չպակսեցընէք , այլ ձեր Տէր Աստուծոյ պատուիրանքները պահէք , որոնք ես ձեզի կը պատուիրեմ ›: Արդ՝ ես երբեմն աս բաներուն վրայ

* Սուրբի մը պատկերին առջևը վառելու մոմին կամ կանթեղին ծախքը հատուցանելը՝ մէկ բարեգործութիւն մը սեպուած էր : Հետևեալ պատմութիւնը՝ որ երևելի տօնի մը ժամերգութեանցը մէջ կը կարդացուէր , կը ցուցընէ թէ աս աւելորդապաշտութիւնը ո՛րչափ հարկաւոր բան սեպուած էր : Չար կնկան մէկը՝ իր կենացը մէջ բնաւ աղէկութիւն մը ըրած չէր , բայց միայն Սուրբ Մարիամին մէկ պատկերին առջևը կանթեղ կը վառէր : Երբոր ասիկայ մեռաւ , սատանաները առին անոր հոգին՝ իբրև իրենց օրինաւոր որսը : Սուրբը բարեխօսութիւն ըրաւ . բայց որովհետև անիկայ բարի գործ մը ըրած չէր , անպատճառ դժոխք պիտի երթար : "Բայց", ըսաւ մեր Տիրուհին , "անիկայ մէկ կանթեղ մը կը վառէր իմ առջևս , անոր համար կ'ուզեմ որ անոր բարերարութիւն ընեմ , ինչպէս որ անիկայ ըրաւ ինծի" , ու հրամայեց հրեշտակի մը որ մէկ սուրբ մոմ մը վառէ , ու տանի դժոխքը անոր առջևը դնէ : Աս պատճառաւ սատանաները կը հեռանային , և այնչափ կը նեղուէին , մինչև որ առաջարկեցին անոր հոգին մարմինին դարձընելու . և Մարիամը աս առաջարկութիւնը ընդունեց : Աս կնիկը այսպէս նորէն իր կեանքին վերադառնալով՝ իր մօտալուտ վտանգէն ազատուիլը միտքը բերաւ , ու գնաց իր մեղքերը քահանայի մը խոստովանեցաւ , ու անկէ ետքը սուրբ կեանք մը վարեց : Ի՛նչ ցաւալի բան է աստնկ հայհոյական անտեղի առասպելներ հրատարակելը . սակայն ասիկայ հոս դրինք , վասն զի կը բացատրէ աս նշանակուած աւելորդապաշտութիւնը , ու կը ցուցընէ թէ ի՛նչ զարհուրելի սխալանաց մէջ կրնայ իյնալ մարդկային միտքը , երբոր կը մերժէ Աստուծոյ յայտնուած բանին լոյսը , և Սուրբ Հոգւոյն վարդապետութիւնը :

Digitized by Google

խօսած եմ՝ ոչ թէ զանոնք դատապարտելու յան-դգնելով , այլ միայն անոնց որչափ օրինաւոր ըլլալը ցուցընելով , և ջանալով մինչև անգամ տղայոց հասկըցընելու՝ թէ անանկ յոյս մը դնելու չեն ան բաներուն վրայ , որպէս զի իրենց Փրկչէն հեռանան ։ Ո՛ղջ լեր յանուն Տեառն ամենապա-տիւ հայրդ ։

«Ահա՛ կատարելապէս ցուցուցի հոս սորվեցու-ցած վարդապետութիւնս ։ Թէ որ ուրիշ բանի մը վրայ ուրիշ մեկնութիւն մ'ալ կ'ուզէք նէ , պատ-րաստ եմ կամքերնիդ կատարելու , միայն թէ կ'ա-ղաչեմ որ ժամանակ ալ շնորհէք ։ Ժամանակ խնդրելուս պատճառը մարմնոյս տկարութիւնն է ։ Կը փափաքիմ որ՝ եթէ մէկ բանի մէջ սխալած եմ նէ , ուղղուիմ» ։

Արդարև այս գրած նամակները աղւոր նամակ-ներ էին ․ և մէկ քանի խօսքերէն կ'իմանանք որ՝ անոնց մէջ գրած խօսքերը շատ դպան Գոնսդալ եպիսկոպոսին ․ նաև յիշուած է թէ մինչև անգամ քանի մը ուրիշ բացատրութիւններ ալ ուզեց , ոչ թէ Պինէյին դէմ եղած ամբաստանութիւնները հաստատելու մտօք , այլ ինքը բան սորվելու հա-մար ․ կ'երևի թէ աս պատճառաւ էր՝ որ Եպիս-կոպոսը կ'ուզէր մանաւանդ ազատ արձակել Պի-նէյը , քան թէ պատժել ։

Պինէյ իր ուրացութենէն ետև Կանտաբրիդիա դարձաւ՝ իր տկարութեանը վրայ շատ տրտմած ու զղջացած ։ Լատիմէր իր քարոզներուն մէկուն մէջ՝ այս միջոցին Պինէյին մտքին ինչ վիճակի մէջ ըլլալը աղէկ մը կը ստորագրէ ․ կ'ըսէ թէ՝ «Ան նոյն Պինէյ վարժապետը՝ որ Աստուծոյ խօսքին համար այրուեցաւ , ուրացութեան համոզուեցաւ իր բարեկամներէն ան ատենները՝ որ Կարդինալին

Digitized by Google

ձեռքը շատ զօրութիւն կար ։ Կանտաբրիգիա դառնալէն ետքը՝ ամբողջ տարի մը անանկ սաստիկ տառապանաց և տրտմութեան մէջ էր , որ մէկ բանէ մը մխիթարութիւն չէր կրնար գտնել ․ մինչև անգամ Աստուծոյ խօսքը սփոփանք մը չէր կրնար տալ անոր սրտին , քանզի իրեն անանկ կու գար թէ բոլոր Սուրբ Գիրքը իրեն դէմ է , և ուր որ կարդայ նէ՝ իրեն դատապարտութեանը վճիռը պիտի ընգունի ։ Անոր հետը աղէկ բարեկամութիւն ունենալուս համար՝ շատ անգամ տեսութիւն կ'ընէի հետը ․ բայց մխիթարութիւն մը տալու համար ինչ որ կը ցուցընէի նէ , իրեն դէմ կ'երևնար ։ Սակայն աս ամենուն փոխարէն՝ Աստուած ետքը անանկ զօրաւոր ու կատարեալ հաւատք մը տուաւ անոր , որ չէ թէ միայն իր հաւատքը դաւանեցաւ ամենուն առջին՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Աւետարանին համեմատ , այլ նաև հրոյ ճարակ ըլլալու տուաւ իր մարմինը՝ ան նոյն Աւետարանին համար" ։

Պիլնէյ՝ Կանտաբրիգիա վերադառնալէն ետև՝ երկու տարիի չափ ողբաց իր տկարութեանը վրայ ։ Վերջապէս Աստուծոյ շնորհօքը կարողացաւ հաստատ դիտաւորութեամբ միտքը դնել՝ որ մինչև անգամ իր կեանքը զոհէ այն իր տկարութեան ատենը ուրացած ճշմարտութեանը համար ։ Աս ասանկ հաստատ որոշելով՝ 1531ին՝ գիշեր մը ելաւ իր բարեկամներուն ըսաւ ․ "Մնաք բարով՝ ես Երուսաղէմ կ'երթամ", (անշուշտ Գործոց ․ ժ ի̄ ․ 21 ։ ի̄ ․ 22 Պօղոսին խօսքը յիշելով , ) ու առաւ քալեց ․ շուտ մը Կանտաբրիգիայէն Նօրֆօք հասաւ ։ Առջի բերանը գաղտուկ կերպով կը խօսէր և կը յորդորէր մարդիկը , բայց շատ չանցած՝ սկսաւ յայտնապէս քարոզել դաշտերուն մէջ

խոստովանելով թէ ինքը սխալեցաւ , այն ուրացած վարդապետութիւնները ճշմարիտ էին , և մեծ եռանդով կը յորդորէր ամէնքը՝ որ իրմէ խրատ առնեն , ու հաւատոյ վերաբերեալ բաներու մէջ մարմինին մտիկ չընեն : Վերջապէս ՙՆորուիչ Հասաւ , ու հոն՝ ՙՏինտալին թարգմանած ՙՆոր Կտակարանն ու Հնազանդութիւն ՙՔրիստոնէից անունով գիրք մը մարապետի մը տալով՝ որ իրեն շատ օգնութիւն ըրած էր , բռնուեցաւ բանտը գնաց . Հոն մնաց՝ մինչուան որ դատապարտութեան վճիռն ելաւ Եպիսկոպոսէն , որ զանիկայ իբրև կրկին հերետիկոսութեան դարձող՝ այրուն :

Կրօնաւորները և ուրիշ եկեղեցականները շատ աշխատեցան՝ որ Պիլնէյը կրկին իրենց դարձընեն , բայց պարապ տեղը . և սովորական եղած կերպերովը դատապարտելով ու անարգելով՝ ՙՆորուիչի պաշտօնատարաց ձեռքը յանձնուեցաւ :

Մեռնելէն օր մը առաջ՝ իր մէկ քանի բարեկամները բանտը տեսնելու եկան իրեն , նայեցան որ հանդարտ մտքով և ուրախ սրտով մը նստեր ընթրիք կ՚ընէ կոր : Մէջերնուն մէկը ըսաւ . "Կ՚ուրախանամ որ այսանկ ուրախութեամբ փորդ կը կշտացընես կոր՝ գլխուդ վերևը հասած ցաւալի մահուանէդ այսչափ քիչ ժամանակ առաջ": Պիլնէյ պատասխանեց . "Ես ալ ան փլփլտըկող տուներու տէրերուն պէս կ՚ընեմ կոր , որոնք մինչուան վերջը կը ջանան հաստատել իրենց կործանելու բնակարանները" : Խօսակցած ատեննին՝ մէջերնուն մէկը անոր յիշեցուց ըսելով թէ՝ "Թէև կրակը շատ տաք պիտի գայ մարմնիդ , սակայն Հոգւոյն Սրբոյ մխիթարութիւնը պիտի զովացընէ զքեզ յաւիտեան" : Ընատենը քաջ վկան առջևը դրուած կանթեղին բոցին բռնելով մատը՝ ըսաւ . "Հա՛

փորձով կը զգամ և շատոնցուընէ գիտեմ՝ որ Աստուծոյ սահմանադրութեամբը կրակը բնականապէս տաք է. սակայն Աստուծոյ Սուրբ Խօսքէն, և անոր մէջ պատմուած մէկ քանիներուն փորձառութենէն՝ որոնք բոցերուն մէջը տաքութիւն չիմացան, ու կրակին մէջը՝ այրելնին չզգացին, ես ալ հաստատ կը հաւատամ որ աս մարմինս ինտոր այրի՝ նէ այրի, հոգիս պիտի մաքրուի, ու պիտի ազատիմ. քաշելիքս քիչ մը ցաւ է, սակայն վերջը անպատմելի ցնծութիւն կայ": Ասոր վրայ Եսայիին աս խօսքերը ըսաւ. "Տէրը այսպէս կ'ըսէ, Մի վախնար, վասնզի ես քեզ փրկեցի. քեզ քու անունովդ կանչեցի. դուն իմս ես: Երբոր դուն ջուրերէն անցնիս, ես քեզի հետ պիտի ըլլամ, ու երբոր գետերէն անցնիս, քեզ պիտի չխեղդեն. երբոր կրակի մէջէն քալես, քեզ պիտի չայրէ, և բոցը քեզ պիտի չբռընկցընէ: Վասնզի ես քու Տէր Աստուածդ՝ Իսրայէլին Սուրբը՝ քու Փրկիչդ եմ": Եսայ. խգ. 1—3: Այս համարիս վրայ երկարօրէն խօսեցաւ՝ իրեն և քովն եղող բարեկամներուն վրայ դարձընելով, որոնցմէ ոմանց ազդութիւն մը եղաւ ըսածներէն, և ան խօսքին մխիթարութիւնը շարունակ վայելեցին մինչև իրենց մահուան օրը:

Հետևեալ տարուն՝ 1531, Նոյեմբեր 10ին՝ պաշտօնատարին ծառաները սպանման տեղը տարին զանիկայ: Բանտէն դուրս ելլելու ատենը՝ բարեկամին մէկը կարճ խօսքով մը յորդորեց զանիկայ որ հաստատ կենայ և համբերութեամբ մահուան դիմանայ: Պիլնէյ ալ պատասխան տուաւ՝ նմանցընելով զինքը անանկ նաւավարի մը՝ որ հովերէ ու ալիքներէ կը տառապի, սակայն շուտով իր բաղձացած նաւահանգիստը հասնելու յուսով՝ առջևը

եղած վտանգներուն համբերութեամբ կը տանէր : Տարած ատեննին՝ ինչուան ցիցն որ հասաւ նէ , համբերած աղքատին ողորմութիւն տուաւ : Երբ-կայ գտնուողներուն մէկը կը պատմէ թէ՝ աշխարհականի վերարկու մը առած էր վրան՝ մազերը անձև կտրտած , որ ասիկայ՝ քահանայութեան կարգը իրմէ առած ատեննին ըրէն . և ինքը թէպէտ և մարմնով փոքր էր , սակայն կերպարանքին վրայ ազնուութիւն մը կը փայլէր : Փայտակոյտին պատրաստութիւնը լմնցած չըլլալով՝ դարձաւ իր բոլորտիքը առած բազմութեանը ըսաւ . “Բարի ժողովուրդք՝ ես հոս մեռնելու եմ եկեր , ինչպէս որ աս վախճանիս համար ծնած եմ . և հիմա իմ հաւատոյ դաւանութիւնս ցուցընեմ պիտի ձեզի , որ դուք վկայ ըլլաք՝ թէ ես ամենակարող Աստուծոյ առջևը ուղիղ հաւատք ունենալով՝ երբև ճշմարիտ քրիստոնեայ այս կեանքէս կ'անցնիմ”: Անատենը Առաքելական հանգանակը զրուցեց :

Յետքը Պինէյ վերարկուն ձգեց վրայէն , ցիցին քովը գնաց , ու մեծ հանդարտութեամբ և ջերմեռանդութեամբ աղօթք ըրաւ՝ Ծ̃երորդ Սաղմոսին սա խօսքերովը վերջացընելով . “Ո՛վ Տէր՝ լսէ իմ աղօթքիս . ակա՛նջ դիր իմ աղաչանքիս”. ու երկրորդ համարը իրեք անգամ կրկնելով . “Քու ծառայիդ հետ դատաստանի մի՛ մտներ . ինչու որ բնաւ կենդանի մը չարդարանար քու առջիդ” : Այս գեղեցիկ Սաղմոսը՝ որ կարծես թէ իրեն համար շինուած էր , շարունակելով ինչուան վերջը ըսաւ : Երբոր լմնցաւ , հարցուց պաշտօնատարներուն թէ՝ ամէն բան պատրաստուա՞ծ է . անոնք ալ պատասխանեցին թէ պատրաստ է . ան ատենը վրայի լաթերը հանեց , միայն շապիկ մը ու վարտիք մը թողելով . ելաւ կայնեցաւ այն ոտք գնե-

Digitized by Google

ըլլալուն վրայ՝ որ ժողովուրդը զինքը աղէկ մը տեսնելու համար շիներ էին , ու շղթան անցուցին անոր մէջքը ։ Իր բարեկամներէն մէկը՝ Ուարնըր անուն բժիշկը եկաւ հրաժարական ողջոյնը տալու , բայց հեկեկալէն չէր կրնար խօսիլ ։ Պիլնէյ քաղցր ժպիտով մը շղթային վրայ կռթընելով՝ շնորհակալ եղաւ բոլոր իրմէ ընդունած մարդասիրութեանցը համար՝ Լատիններէն սա խօսքն ալ ըսելով . «Արածէ՛ հօտդ , արածէ՛ հօտդ , որ երբ Տէրը գայ , քեզ արածելու վրայ գտնէ . Մնաս բարով՝ սիրելի բարեկամս , մնաս բարով» ։ Անատենը մէկ քանի կրօնաւորներ քովը եկան , «Պիլնէյ վարժապետ» , ըսին , «ժողովուրդը անանկ գիտէ՝ թէ մենք եղած ենք քու մահուանդ պատճառ , և հաւանական է որ՝ ալ ասկէ ետև ողորմութիւն չտան մեզի . կ՚աղաչենք՝ ըսէ որ դուն սիրով ես մեզի հետ , ու ազատէ՛ մեզ այս բանէն» ։ Պիլնէյ ալ՝ չուզելով անոնց վրէժխնդրութիւն ընել , դարձաւ բարձր ձայնով մը ըսաւ ժողովրդոց . «Կ՚աղաչեմ ձեզի՝ բարի ժողովուրդք , սա մարդիկը իմ մահուանս պատճառ կարծելով՝ անոնց վնաս չտաք . քանզի պատճառը անոնք չեն» ։ Աս խօսքը դարձուածքէն շատ աղէկ կը հասկըցուի որ՝ ժողովուրդը՝ թէպէտև եկեղեցականաց իշխանութեանը կուրօրէն հնազանդելու սովրած էր , սակայն սկսեր էր աս եղած անգթութիւններուն թշնամի ըլլալ ։ Մարտիրոսաց արիւնը քրիստոնէութեան սերմն եղաւ միշտ ։

Մարդիկը խուրձերով փայտ ու եղէգ բերին , բոլորտիքը շարեցին ու բռնկցուցին . շուտ մը բոցը առաւ փայտերը , և սկսաւ երեսը խանձել . իսկ ինքը ձեռուըները վեր բռնած կուրծքին զարնելով՝ երբեմն «Յիսուս» , և երբեմն «Կը հաւատամ» ,



Digitized by Google

կ՚ըսէր ։ Հովը շատ սաստիկ ըլլալով՝ երկու երեք անգամ բոցը առաւ մէկդի տարաւ , ու խեղճը քանի մը անգամ առանց կրակի կեցաւ ։ Վերջապէս բոլորը մէկտեղ աղէկ մը բռնկելով՝ շատ չքշեց հոգին փչեց . մարմինը կծկեցաւ երեսին վրայ դէպ 'ի վար ծռելով՝ շղթային վրայ հեծած ։ Ըս որ իմացաւ պաշտօնատարներուն մէկը , եկաւ նիզակով մը մարմինը ցիցէն ազատեց կրակին մէջը ձգեց , ու վրան փայտ նետեցին , և մարտիրոսացեալ Պինէյին մարմինը շուտ մը մոխիր դարձաւ ։

## ԳԼՈՒԽ Ե ։

*Լադիմէր՝ որ առաջ նախանձաւոր պապական մըն էր — Պինէյին քարոզութեամբը դարձի կու գայ , ու Աւետարանը կը քարոզէ — իր անկեղծութեամբ գրած նամակը՝ որ Թագաւորին խրկեց — Հռոմկայ պապականներէն կ՚ամբաստանուի — Մէկ վիճակի մը Եպիսկոպոս կը կարգուի — Կը ջանայ մոլորութիւնները վերցընել — Թագաւորին առջևը քրիստոնէավայել համարձակութեամբ կը վարուի ։*

Ա

Հուգոն Լադիմէր՝ Պինէյին աշակերտը՝ Համալսարանը եղած ատենը շատ նախանձաւոր էր Հռովմէականաց աւելորդապաշտութիւններուն . ուստի աս հետևեալ խօսքերը՝ որ մէկ ուրիշ մը կը խօսի իր վրայով , խիստ աղէկ կը յարմարի Լադիմէրին ալ ։ "Ես որ Հռովմէական էի" , կ՚ըսէ , "իմ վիճակս աս էր . թէ որ Կիրակի ու տօն օրերը պատարագ տեսնելու երթայի , Կոյս Մարիամին աղօթքը ու երգը ըսէի , ջերմեռանդութեամբ՝ սրբոց (քանդակներուն) ոտքը համբուրէի ըռէի , օրհնեալ ջուր ցրցըքնէի վրաս , ու մեղացս չափովը սահմանեալ ապաշխարանքը քաշէի , կնծի անանկ

կու գար թէ՝ ալ առ Աստուած ունեցած պարտուցս բոլորը վճարած եմ , առանց անգամ մը միտքս բերելու Քրիստոսի պատուական մահուան օգուտը , որով իմ բոլոր առջի մեղքերուս ու յանցանքներուս քաւութիւն եղած է ։ Սանկ յանձնապաստանութիւն ունենալէս զատ , կը կարծէի որ անոնք և խել մը ուրիշ անոնց նման սուտի բաներ ընելէս ետև՝ որչափ պարտաւորութիւն որ ես ունիմ դէպ 'ի Աստուած , այնչափ անիկայ ունի դէպ 'ի ինծի ․ և ճշմարիտը ըսելով՝ ինչպէս որ վաճառականին դահեկան մը տուող՝ ու դահեկանի մը բան առնող մարդը՝ մէկ աւելի բան մը ընդունածի պէս շնորհակալութիւններ չտար վաճառականին նէ , անանկ ալ ես՝ մեղքերուս թողութիւն գտնելուս համար շնորհակալութիւն մը չէի տար Աստուծոյ ։ Բայց գոհութիւն կը մատուցանեմ Տէրոջս , որ իր ողորմութիւնովը ազատեց զիս այս հերետիկոսութենէն" ։

Այս ահարկու վիճակէն Աստուած հաճեցաւ ազատել Լադիմէրը Պիլնէյին միջոցով ։ Քիչ ժամանակէն՝ Լադիմէրին սրտին մէջ մեծ եռանդ մը մտաւ իր ընդունածը ուրիշներուն ալ հաղորդելու , և Աստուծոյ Խօսքին պարզ ճշմարտութեանցը հակառակողներուն քաջութեամբ դէմ կը դնէր ։

Լադիմէր՝ Աստուածաշունչը Անգղիարէն լեզուով հրատարակելու գործին վերատեսչութիւն ընող ուսումնականներէն մէկն ըլլալով , Դեկտեմբերի 1ին՝ նամակ մը գրեց Թագաւորին , որով կ'ուզէր համոզել զանիկայ՝ որ Աստուածաշունչը անխափան ամէն տեղ կարդացուելու համար ազատութիւն շնորհէ ։

Աս նամակին մէջ՝ Առաքելոց օրովը և իրենց օրերը եղող եպիսկոպոսներուն մէջտեղը եղած մեծ տարբերութիւնը Սուրբ Գրքէն ցուցընելէն ետև՝ կ'ըսէ ․

«Ովսանի՝ իբրև անհրաժեշտ հետևութիւն՝ ամս ա-
ղէկ գիտցած ըլլաս որ՝ ուր որ Աստուծոյ խօսքը
քարոզուած է , հոն քարոզչաց և ունկնդրաց դէմ
հալածմունք կ՚ըլլէ , և ուր որ հանդարտութիւն՝
խաղաղութիւն և աշխարհային զուարճութիւններ
կայ նէ , հոն ճշմարտութիւնը բան չունի ։ Քանզի
աշխարհս բոլոր իրենը եղողները կը սիրէ , և իրեն
հակառակ եղողները կ՚ատէ ։ Պօղոս առաքեալ՝ Ա-
ւետարանը Խաչի վարդապետութիւն կը կոչէ ․ և
Սուրբ Գիրքը զինքը ընդունողներուն և իրեն հե-
տևողներուն ուրիշ բան չխոստանար այս աշխար-
հիս մէջ , բայց միայն ցաւ՝ նեղութիւն և հալա-
ծանք , որ ասոնց մէկուն ալ չեն կրնար դիմանալ
աշխարհային մարդիկ» ։ Յետոյ կը ցուցնէ թէ՝
Սուրբ Աւետարանը ինչպէս բոլոր մարդոց գործ-
քերը երևան հանող լոյս մըն է ․ և կը յիշէ թէ
«անոնք՝ որոնց գործքերին որ չար են , չ՚են համար-
ձակիր այս լոյսին գալու , այլ կ՚աշխատին զանիկայ
խափանելու՝ մայրական լեզուովնիս Սուրբ Գիրք
կարդացուիլը ձեռուընուն եկածին չափ արգիլելով» ։
Ասոր ալ կ՚ըսէ թէ՝ «Այս գիրքը քովերնին ունե-
նալնուն համար չարչարուողներուն օրէնքի դէմ
յանցանք մը գործած ըլլալը անկարելի է ցու-
ցընել , բայց մի միայն սա է յանցանքնին՝ որ
Անգղիարէն Սուրբ Գիրք կը կարդան» ։ Ի վեր-
ջոյ՝ այս գեղեցիկ և երևելի նամակը սա խօս-
քերով կը լմնցնէ ․ «Ովսանի՝ գիտցի՛ր Աղջայ՝
անիկայ աղէկ մ՚ադեգ պահէ , խղճա՛ քու հոգւոյդ ,
և յիշէ՛ որ քու պաշտօնիդ և ձեռքիդ սուրովը
թափուած արեանը հաշիւը տալու օրդ մօտ է ։
Ան օրը ամենայն շնորհքիդ փուճը չելլելուն ու
ամօթով չըլլալուդ համար , և Փրկչին մերոյ
Յիսուսի Քրիստոսի արիւնովը՝ որ միայն ինքն է

Digitized by Google

կարող մեզ պահելու ան օրը , քու մեղքերուդ թողութիւն ստանալով հաշիւ տալու պատրաստ գըտնուելուդ համար աղօթող եմ յարաժամ Անոր՝ որ մեռաւ մեր մեղացը համար , որ և ինքը միշտ շնորհք կը խնդրէ մեզի համար ի Հօրէ ։ Որում փառք և գոհութիւն յաւիտեանս , ամէն ։ Աստուծոյ Հոգին շնորհքով պահէ զքեզ" ։

Զարմանալի՜ հաւատարմութիւն , որով Լադիմէր դէպ ՚ի Աստուած ու թագաւորին իր ունեցած պարտականութիւնը կատարեց ։

1532ին սկիզբը՝ Լադիմէր՝ Վարհամի Արքեպիսկոպոսին աթոռը կանչուեցաւ ։ Անիկայ կրկին և կրկին քննութեան հանեցին ժողովին առջևը . երկար բարակ մոլորութեանց ցանկ մըն էին շիներ , որոնց ամէնքն ալ պէտք էր ուրանալ . սակայն վերջապէս՝ թագաւորին օգնականութեամբը ազատեցաւ՝ մէկ երկու բաներու հաւանութիւն տալով . զոր օրինակ՝ քառասնօրեայ պահքը և ուրիշ սովորական պահքերը բռնելու , մէյմ՚ալ ասոր՝ թէ գովելի և օգտակար բան է եկեղեցւոյ մէջ խաչ ու սրբոց քանդակներ գտնուիլը՝ իբրև ՚ի յիշատակ և ՚ի պատիւ և յերկրպագութիւն Յիսուսի Քրիստոսի և սրբոց , սակայն առանց ամենևին քանդակներու երկրպագութիւն ընելը հաստատելու խօսք մը բերնէն հանելով ։ Ասկէ ՚ի զատ՝ ստիպուեցաւ ծունկի վրայ գալով ներումն խնդրել մէկ ընդհանուր խօսքով մը ։

Լադիմէր՝ 1535ին՝ Ուօրսէսդրի վիճակին առաջնորդ կարգեցաւ ։ Շատ մեծ հոգ ունէր իր թեմին ամէն մէկ կողմը երթալ քարոզելու , ինչ սխալմունք որ գտնէր նէ՝ մեծ եռանդով վերցընելու աշխատելով ։ Թէպէտև տարօք էր , սակայն միշտ մէկ տեղէն մէկալը ճամբորդութիւն կ՚ընէր , բոլոր

կարողութիւնովը վերջին աստիճանի ջանքով քարոզելով՝ յորդորելով ու սորվեցընելով՝ ուր որ կ'երթար նէ ։ Իր ճամբորդութիւններուն շատը ոտքով կ'ընէր՝ մէկ երկու հոգի հետը առնելով , պարզ հագուստով մը՝ ու իր գօտիէն ակնոց մը ու Նոր Կտակարան մը կախած ։ Ո՛ւր որ երթար նէ՝ ժողովրդոց կը քարոզէր ․ և երբ տեսնէր որ խել մը մարդիկ ժողվուած են , բայց եկեղեցի չկար որ հոն ժողվուէին , առանց ըստ ամենայնի յարմարութիւն փնտռելու՝ կը քարոզէր , և հարկ եղած ատենը՝ ծառերուն խոռոչներին անգամ ամպիոն կ'ընէր ։

Այն ատենուան պատարագներուն պահանջմունքին նայելով՝ չէր կրնար Հռովմէականաց արարողութիւններուն ամէնը մէկէն վերցընել ․ վասն որոյ յաւէտ կ'աշխատէր անոնց մէջ գտնուած մոլորութիւնները արգիլելու ։ Զոր օրինակ՝ օրհնեալ հացն ու ջուրը վերցընել չկրնալով , իր իշխանութեանը տակն եղող եկեղեցականներուն պատուիրեց որ՝ այն երկու բաներուն վրայ ժողովրդոց ունեցած մոլար կարծիքները վերցընելու համար՝ օրհնուած ջուր ցրցընած ատեննին սա խօսքը ըսեն ։

Յիշէ քու մկրտութեանդ խոստմունքը ․
Յիշէ Քրիստոսի ողորմութիւնն ու անոր ամենասուրբ արիւնը ,
Որուն քու վրադ ցրցընելովը միայն՝
Ձրի թողութիւն կ'ընդունիս քու բոլոր մեղքերուդ ։

Օրհնած հաց տուած ատեննին ալ ասանկ ըսեն ։

Քրիստոսի մարմնոյն նշանն է սա ,
Որ 'ի վերայ խաչին բեկաւ վասն մեր ․
Ուտէ՝ հարկ է մեղքերդ ատեցող ըլլաս ,
Թէ որ Քրիստոսի մահուանը հաղորդ պիտի ըլլաս ։

Digitized by Google

Անգամ մը՝ երբոր Լադիմեր Լոնտրա էր, Կաղանդը վրայ եկաւ : Սովորութիւն կար որ ան օրը պալատական ազնուականներն ու եպիսկոպոսները մէյմէկ ընծայ կու տային Թագաւորին. ուստի եպիսկոպոսներէն ոմանք շատ ստակ ընծայ տուին. բայց Լադիմերին ընծան շատ պարզ բան մըն էր, ու իրեն ինչ մարդ ըլլալը կը յայտնէր, որ էր "Նոր Կտակարան մը՝ Եբրայեցւոց ժգ. գլուխ, 4 համարին երեսը նշան եղած, ուր կ'ըսէ՝ "Շնացողները ու պոռնիկները կը դատէ Աստուած" :

Հենրիկոս չզարկացաւ Լադիմերին այս անկեղծ հաւատարմութեանը վրայ. քիչ ժամանակէն ետեւ՝ Կարտինէր անուն մէկը Լադիմերին վրայով ամբաստանութիւն ըրաւ Թագաւորին, ըսելով թէ՝ "Ապստամբութեան դրգռող քարոզ մը տուաւ պալատականաց առջին": Թագաւորը խստութեամբ մը՝ "Ամբաստանութեանդ պատասխանը տուր" ըսաւ Լադիմերին. ան ալ այսպէս պատասխանեց. "Յանի որ շնորհք ըրած էք ինծի որ քարոզութիւն ընեմ, կը փափաքիմ որ իմ խղճիս հարցընելով՝ ունկնդրացս ինչ որ խօսիլ արժան սեպեմ նէ՝ խօսիմ" : Այսքը ճշմարտութիւնը յաղթող հանդիսացաւ. Աստուած Թագաւորին սիրտը դարձուց. անիկայ ալ հաճելով Լադիմերին անկեղծութեանը՝ խօսքը դարձուց ուրիշ նիւթի վրայ :

# ԳԼՈՒԽ Զ.

Բենհամ — Իր մահուան ժամանակը ըսած խօսքերը — Պրեյսիին կտակը — Փրիթ — փախչիլ չուզեր — Ու Հիւեդին հետ մեկնեղ կ'այրուի — Հալածանքը նորէն երևան կ'ելլէ — Պօնդեր — Ժողովուրդին փափաքը Սուրբ Գիրք կարդալու համար — Փորձը — Նոր կրած սաստիկ տանջանքը ու մահը Նիւկէյթի մէջ :

Յակոբոս Բենհամ՝ ազնուականի մը որդի էր . պզտիկուց քաջ կրթուեցաւ ուսմանց մէջ , և յատկապէս Լատիներէնի և Յունարէնի մէջ մեծ յառաջադիմութիւն ըրաւ : Վերջը իրաւագիտութիւն սորվելու ետևէ եղաւ . ու արուեստին մէջ աղէկ երևցաւ իր ինչ կարողութեանց տէր մարդ ըլլալը : Վարքը առաքինի , յօժար կամօք կարօտեալներուն՝ նեղեալներուն՝ որբերուն և որբևայրիներուն պէտք եղած խրատները ձրի տուող . բարուցը կողմանէ առաքինի էր , խօսակցութեանը մէջ պարկեշտ , և միշտ աղօթքի՝ բարեգործութեանց և Սուրբ Գիրք կարդալու ետևէ ըլլալուն համար՝ կասկածի գացին անոր վրայ , ու Թովմաս Մօր անուն ազնուական մը զանիկայ իր տանը մէջ բանտարկել տուաւ : Քաշած նեղութիւնները շատ ծանր չէին առջի բերանը . բայց՝ երբոր չուրացաւ նէ , սկսան գէշի դարձընել բանը : Ազնուականը իր պարտէզին մէջ "Ճշմարտութեան ծառ" անունով մէկ ծառի մը կապել տուաւ , ու իր ձեռօքը աղէկ ծեծ մը քաշեց . նայեցաւ որ սաստիկ բաներով ալ չըլլար կոր նէ , բերդը նետեց՝ որ հոն ձգարան ըսուած տանջանարանին վրայ երկընցընեն Բենհամը : Աս ձգարան գործին՝ մէկ սոսկալի գործիք մըն է . վրան կը պառկըցընեն տանջուելու մարդը , ու կը սկսին մեքենայով մը քաշել ոտուըներէն ու Թևե-

ըլլէր , անանկ որ՝ շատ անգամ յօդուածները կը քակուէին : Աս տանջանքները շատոնց վերցուեցաւ Անգղիայէն :

Դեկտեմբերէն ինչուան փետրվար՝ քանի՛ քանի անգամ քննութեան հանեցին Բենհադը , ու կամաց կամաց համոզուեցաւ իր ընդունած Աւետարանական վարդապետութիւնները ուրանալու և Հռովմայ եկեղեցւոյն հնազանդելու : Վերջապէս ակամայ կամօք ստորագրեց իր անունը՝ ուրացութեան երդման թուղթի մը տակը : Ասկէ ետև՝ վճռեցին որ երկու հազար դուրուշէն աւելի տալ տուժէ , ու Սրբոյն Պօղոսի թափօրը եղած ատենը ոտքը բոպիկ խաչէն առջևէն երթայ , և այն օրուան քարոզին ժամանակը՝ քարոզչին առջևը կայնի իր ուսին վրայ խուրձ մը փայտ ունենալով՝ 'ի նշան այրուելէ ազատուելուն : Աս ալ ընելէն ետև՝ փետրվար 17ին ազատեցաւ :

Ամիս մը չեղաւ Բենհադին ազատուիլը՝ սկսաւ դառնացուցանք ողբալ իր ուրացութեանը վրայ . ո՛չ հանգստութիւն և ո՛չ մտքի խաղաղութիւն ունէր . ուստի բոլոր ճանչւորներուն առջին խոցաւ իր այն մեծ սխալմունքին վրայ , ու Աստուծմէ և բոլոր մարդոցմէ ներում խնդրեց ան ժողովքին մէջը՝ որ ան ատենները շաբաթանի մը մէջ գաղտուկ կ'ըլլար :

Հետևեալ Կիւրակէին եղաւ Սրբոյն Օգոստինոսի եկեղեցին գնաց՝ Անգղիարէն Նոր Կտակարան մը ձեռքն առած , և բոլոր ժողովրդոց առջին իր նստարանին վրայ ելաւ կայնեցաւ ոտքի վրայ՝ ու լալով ըսաւ . «Ուրացայ զԱստուած , և կ'աղաչեմ որ ներէք իմ յանցանքս , ու իմ օրինակութենէս խրատ առնելով՝ դուք ալ անանկ բան չընէք . քանզի» ըսաւ , գիրքը ցուցընելով . «Ասէ որ

վերստին ճշմարտութեան չդառնայի , ան Աստուծոյ խօսքը պիտի դատապարտէր զիս հոգւով և մարմնով դատաստանին օրը" : Ատեանը նորէն յորդորեց ժողովուրդը որ մահուան յանձնառու ըլլան , և իրեն պէս ճշմարտութիւնը չուրանան . իմացընելով անոնց՝ որ աւ անկէ ետև բոլոր աշխարհքը իրեն տան նէ , անանկ մեծ տառապանաց մէջ պիտի չձգէ ինքզինքը : Աս բանը ձանձրնուելով՝ շուտ մը բռնուեցաւ , ու կրկին Լոնտրայի բերդը խոթեցին :

1532 , Ապրիլի 19ին՝ Եպիսկոպոսին գրագիրին ու փոխանորդին և ուրիշ եկեղեցականաց առջին հանեցին Բենհամը : Փոխանորդը՝ առջի դատաստանին մէջ քննուած հերետիկոսական վարդապետութիւններն ու ստորագրուած ուրացութեան թուղթը կարդաց , և մէկ քանի հատ աւ նամակ բերաւ՝ զորոնք Բենհամ գրեր էր Եպիսկոպոսին և իր եղբօրը : Ուրիշ մէկ քանի բաներու վրայ աւ քննութիւն ընելէն ետև , կրկին բանտը խրկեցին : Հետևեալ օրը՝ փոխանորդը նորէն իրեն կանչեց զանիկայ , ու հաղորդութեան վրայով՝ մասնաւոր քննութիւն ըրաւ : Եւ ըսաւ Բենհամին թէ , "Մեր սուրբ ու կաթուղիկէ Մայր Եկեղեցին սանկ վըճռած է , և սանկ կը սորվեցընէ , թէ սրբագործութիւնը կատարուելէն ետև՝ աւ սեղանին վրայ մնացածը հաց չէ . դուն սանկ կը հաւատա՞ս մի" : Բենհամ պատասխան տուաւ . "Պօղոս առաքեալը զանիկայ հաց կ'անուանէ սա խօսքովը . Քանի անգամ որ աս հացը ուտէք ու աս գաւաթը խմէք , Տէրոջը մահը պատմեցէք՝ մինչև որ ինքը գայ": Ա̄ Կորնթ . ժա̄ . 26 :

Ատեանը աս ամբաստանութիւնը ըրին թէ՝ Բենհամ այնպէս կը հաւատայ և կը սորվեցընէ եղեր

թէ՝ ով որ Աւետարանը հաւատարմաբար քարոզէ նէ, Պապին չափ զօրութիւն ունի ։ Ասոր՝ այս պատասխանը տուաւ. «Ան որ Աստուծոյ պարզ խօսքը կը քարոզէ, և ըստ այնմ կը վարուի, այն ՚ի յերկինս և յերկրի կապող և արձըկող բանալին իր ձեռքն է, որ ան բանալին իր քարոզած Սուրբ Գիրքն է. և Պապն ալ աս բանալիէն ՚ի զատ կապելու արձակելու զօրութիւն չունի»։

Այս ամբաստանութիւնն ալ ըրին թէ՝ Քրիստոսի համար լոկ մարդ էր՝ ըսած է. ասոր ալ պատասխան, «Այս բնաւ ատանկ խօսք ըրած չունիմ», ըսաւ, «ո՛չ ալ ատանկ խորհուրդ մը միտքէս անցած է»։ Սակայն՝ աս Աւետարանական է ըսելով ամբաստանուած անմեղ մարդկանց վրայ ասանկ հայհոյական զրպարտութիւններ դնելը՝ Հռովմէականներէն հեռու բան մը չէ, սովորական անզգամութիւննին է ։

‘Նոյն ամսուն 26ին՝ նորէն քննութիւն ըրին. աս քննութեան մէջն ալ հարցուեցաւ՝ թէ «Հաղորդութիւնը Քրիստոսի բուն մարմի՞նն է մի՝ աստուածութեամբը և մարդկութեամբը ներկայ՝ մարմնով և արիւնով». պատասխանեց, «Հոն է մարդկութեամբն ու աստուածութեամբը՝ հացի տեսակաւ»։

Անատենը դատապարտութեան վճիռն ելաւ, և զինքը պաշտօնատարին ձեռքը տուին ։ Պաշտօնատարը առաւ ‘Նիւկէյդի բանտը տարաւ, և Ապրիլի վերջին օրը՝ այրեցին Սմիթֆիլտի մէջ՝ կէս օրէն իրեք ժամ ետքը ։ Իր ուրացութենէն առաջ բանտարկուած միջոցին՝ շատ գէշութիւններ ըրին ։ Երկու շաբաթի չափ Եպիսկոպոսին ածխանոցը մնաց՝ ոտուըները շղթան զարնուած. երկու գիշեր ալ Թովմաս Մորին տունը՝ շղթայով ցիցի մը

Digitized by Google

կապուած . մինչեւ ալ վերցուցին տարին Ֆուլհամ, և տասնուհինգ օրէ չափ ալ հոն նեղեցին ողորմելին : Շոքը բերդը խրկեցին, և հոն ալ շատ ծեծեցին իր վարդապետութիւնները մերժել տալու համար :

Իր այրուելուն վրայով յիշատակութեան արժանի բան մըն է աս, ինչպէս որ հոն ներկայ գտնուող բոլոր մարդիկը վկայեցին, որ բոցերուն մէջէն՝ Թեւերն ու ոտուըները կէս այրած այս խօսքերը ըսաւ . «Ո՛վ հռովմէականք, դուք հրաշք կ'ուզէք տեսնել, ահա՛ աչուըներնուդ առջին է . փափուկ անկողինի մը մէջ պառկելէն եւվել ցաւ մը չեմ իմանար կոր աս կրակին մէջ . ինծի վարդէ անկողինի պէս կու գայ կոր» : Այնպէս ահա՛ Տէր Աստուած պահեց իր ծառան այն հուրին մէջ, որ առաջ այնչափ ահարկու երեւցեր էր անոր՝ որ հաւատքը ուրացաւ : Եւ դիտելու արժան բան է այս որ՝ երբոր իր հալածչացը կամքին հնազանդելով ազատութիւն գտաւ նէ, ուրախութեան ու երջանկութիւն գտնելուն տեղը՝ իր հոգին անանկ տանջուել սկսաւ, որ անոր նմանը չգտնուիր մարմնաւոր տանջանաց մէջ :

Արդարեւ՝ Պիլնէյին և Բենհամին պէս մարդոց մարմնոյ դրդումէն յաղթուելով՝ առ ժամանակ մի ճշմարտութիւնը ուրանալնին ցաւալի բան է . սակայն իրենց այն տկարութիւնը՝ պաշտպանած կրօնքներնուն իրօք ճշմարտութիւն ըլլալուն՝ շատ հաստատ ապացոյց մըն է : Յայտնի կ'երեւի ասկէ՝ որ խելքերնուն անանկ փչելովը հետեւած չէին հաստատած վարդապետութիւններնուն, այլ սակայն Աստուածային ճշմարտութիւններ ըլլալնին տեսնելով և հաւատալով : Ասոր ասանկ ըլլալը աս փորձէն շատ աղէկ կը հասկցուի : Տանջանքը երբոր դե-

Digitized by Google

մերոնին եղաւ նէ , սաստկութենէն վախնալով մէկդի քաշուեցան • ինչու որ մարդկային ուժը չկրնար դիմանալ ։ Բայց աս ընելով՝ խիղճերնին տակնուվրայ եղաւ , և սկսաւ անանկ սաստիկ տանջանք տալ , որուն մարդ կարող չէր դիմանալ • և Յիսուսի Քրիստոսի զօրութիւնովը՝ որ ան միայն կրնայ զօրացընել , կարողացան կեանքերնին բանի տեղ չդնելու՝ վարձքերուն հատուցմունքին սպասելով ։ Ուրեմն Հռովմայ եկեղեցին պարապ տեղը թող չուրախանայ՝ այս վկաներուն սանկ քիչ մը ժամանակ տկարութեան մէջ իյնալուն համար ։

1532ին՝ մէկ դիպուած մը պատահեցաւ , ուսկից յայտնի կ'երևի Հռովմէական եկեղեցականաց անգութնելի ատելութիւնը՝ որ կը ցուցընէին իրենց հերետիկոս սեպած մարդոցը մեռած մարմիններուն վրայ ։ Ան ատենները սովորութիւն կար որ մէկ մարդ մը կտակ ընէր նէ , աս խօսքով կը սկսէր • "Հոգիս կը յանձնեմ Աստուծոյ , և մեր Տիրամայր Սուրբ Մարիամին , ու երկնից բոլոր սուրբերուն ձեռքը" ։ Կուլիէլմոս Դրէյսի անուն ազնուական մը՝ գիտնալով թէ որչափ անօտի բան է սուրբերէն օգնութիւն յուսալը , որոնք կարող չեն ամենևին օգնութիւն մը ընել , աս մոլար դաւանութիւնը չըրաւ իր կտակին մէջ ։ Ասոր մեռնելէն յետոյ՝ երբոր առին կարդացին կտակը , ասանկ սկսուած գտան ։

"Ամէն բանէն առաջ՝ ինքզինքս Աստուծոյ և իր ողորմութեանը կը յանձնեմ , առանց երկրայնոց հաստատուն հաւատալով՝ որ իւր շնորհօքը և Յիսուսի Քրիստոսի արժանաւորութեամբը՝ որ մեռաւ և յարութիւն առաւ , ներեալ է ինծի իմ բոլոր մեղքերս , ու յարութիւն պիտի առնեմ հոգւով և մարմնով՝ ինչպէս որ գրուած է ։ Գիտեմ



Digitized by Google

որ իմ Փրկիչս ողջ է, ու անձկայ մերձին ժամանակը պիտի ելլէ երկրի վրայ ։ ‹ Եւ թէ և մորթէս ետքը՝ աս ալ փճանայ, բայց իմ մարմինովս զԱստուած պիտի տեսնեմ ›. աս յոյսը աղէկ մը հաստատուած է սրտիս մէջ. և կը հաւատամ որ հոգւոյս փրկութեանը համար այս հաւատքը բաւական է, և ուրիշ մարդոց բարի գործոցը ու արժանաւորութեանը կարօտութիւն չունիմ ։ Կը հաւատամ որ մէկ Աստուած և մէկ միջնորդ կայ Աստուծոյ և մարդոց մէջտեղը. և ուստի Քրիստոսէն զատ՝ ոչ երկնքէն ու ոչ աշխարհէս մէկը կրնամ միջնորդ բռնել Աստուծոյ և իմ մէջս բարեխօսութիւն ընելու ։ Սրբերն ալ շնորհք խնդրելու կարօտ են, բայց ամենեւին կարող չեն շնորհք բաշխելու. ուստի ես ալ իմ ունեցածներուս և ոչ մէկ կտորը կու տամ մէկուն՝ հոգւոյս օգնութիւն մը ընելու համար. քանզի ան օգնութիւնը միայն Քրիստոսէն կը յուսամ ։ Իմ ապացուածքիս վրայով իմ դիտաւորութիւնս աս է, որ Աստուծոյ շնորհքը թողում զանոնք՝ իբրև իմ հաւատքիս պտուղը, գիտնալով որ այս ընելովս մէկ արժանաւորութիւն մը չեմ ունենար. քանզի իմ արժանաւորութիւնս միայն Յիսուսի Քրիստոսի վրայ ունեցած հաւատքէս է, որովհետև այսպիսի գործերը իրմով բարի կ'ըլլան ։ Նաև միշտ միտուրնիս ըլլալու է այս մեծ ճշմարտութիւնը՝ թէ բարի մարդը բարի գործքէն չըլլար, այլ բարի գործքը բարի մարդէն կ'ըլլայ. քանզի մարդս հաւատքով կ'ըլլայ բարի և արդար. ‹ Ինչու որ արդարը հաւատքով պիտի ապրի, և ինչ բան որ հաւատքով չէ՝ մեղք է ›"։

Յովհաննէս Փրիդը՝ Կանտարբրիդիս քաղաքին համալսարանը կրթուած հռչակաւոր գիտնական

Digitized by Google

մըն էր ։ Ասիկայ Աստուծոյ շնորհքովը Դինտալէն՝ Նոր Կտակարանին թարգմանչէն տեղեկութիւն առած Աւետարանին վարդապետութիւններուն վրայով ։

1525ին՝ Կարդինալ Վօլզէյ՝ Կանտաբրիգիոյ համալսարանէն և ուրիշ մէկ քանի տեղերէ խնդրեց և գիտնական մարդիկ ընտրեց՝ Օքսֆորտ քաղաքը նոր շինած ճեմարանին անդամ ըլլալու համար ։ Յովհաննէս Ֆրիթն ալ աս ընտրուածներէն էր ։ Ասոնց մէջ խօսք կը դառնար Հռովմայ եկեղեցւոյն մէջ մտած այն անպատշաճ մոլորութիւններուն վրայ ։ Ասոր համար Կարդինալին ականջը հասնելով՝ զանոնք ճեմարանին տակը ստորերկրեայ շտեմարանի մը մէջ բանտարկեց, որ տեղին մէջ կը պահուէր աղած ձուկերը, (քոլէճի ուսանողները շատ կ'ուտէին պահոց օրերը) ։ Այն գարշելի տեղին ապականեալ օդէն, ձուկին գէշ հոտէն և ուտելիքներուն սակաւութենէն շուտով հիւանդցան ։ Փետրուարէն ինչուան Օգոստոս՝ աս. հոն մնացին նէ, մէջերնուն երեքը մեռան. ասոր վրայ Կարդինալը հրաման ըրաւ որ ալ մէկալ մնացածներուն հետ ամենևին խստութեամբ չվարուին ։ Ասկէ ետև՝ Ֆրիթ քիչ մ'ալ կեցաւ ճեմարանին մէջ, ու ետքը ծովով հեռու տեղ մը փախաւ ։

Երկու տարիի չափ դուրսերը մնալէն ետև՝ Անգղիա վերադարձաւ. բայց հոն չկրնալով երկար ատեն ապահով մնալ, բռնուեցաւ ։ Բանտը եղած օրերը քանի քանի հեղ քննութեան հանեցին. և Հենրիկոս Թագաւորը հրաման ըրաւ Կանդրբուա-բիոյ Արքեպիսկոպոսին որ ալ քննութիւն մ'ալ ընէ, որ անով զղջի գայ նէ՝ գայ, չէ նէ՝ դատապարտուի ։

Ուստի Արքեպիսկոպոսը աստիճանաւոր մարդ մը

խորկեց՝ հետը պաշտօնեայ մը տալով՝ որ բռնէ Փրիդը իրեն բերէ . ասիկայ Փրիդին բարեկամը ըլլալով՝ կը ջանար համոզել զանիկայ որ գեղջի գայ : «Ը՛նկեր՝ շնորհակալ եմ բարեկամութեանդ . սակայն ես իմ խղճիս դէմ վկայութիւն չեմ կրնար տալ» , ըսաւ Փրիդ , «ես պատրաստ եմ իմ վարդապետութիւններս պաշտպանելու Սուրբ Գրքէն և հին հայրապետներէն . ուստի թէ որ զիս դատապարտելու ըլլան նէ , սուրբ Օգոստինոսն ու շատ ուրիշ հայրապետներ , և առնցմէ զատ՝ առաջին դարերը Հռովմայ Եպիսկոպոս և Պապ եղող այն երևելի մարդիկն ալ հետս մէկտեղ դատապարտած կ'ըլլան : Աւելի աղէկ է որ մեռնիմ , քան թէ խղճիս տանջանքներովը ապրիմ . իմ Ամենակարող Աստուածս՝ որ անոր ճշմարտութիւնն է պաշտպանածս՝ և ո՛չ թէ իմս , գիտէ նուաստ ծառայիս ինչ ընելիքը . կը հաւատամ որ իր շնորհօքը՝ քանի որ շունչս վրաս է նէ՝ ձեռքէ չձգեմ պիտի իր ճշմարտութիւնը» :

Վերջապէս բարեկամը չուզելով որ անոր մէկ օգնութիւն մը չըրած՝ զանիկայ իր սպանութեանը առաջնորդէ , ըսաւ . «Եթէ փախչիլ կ'ուզես նէ՝ փախիր . հոգ չէ իմ վտանգի մէջ իյնալս՝ քեզ ձեռքէս փախցընելուս համար» . շատ ալ աշխատեցաւ որ անոր միտքը դարձընէ աս ըսածը ընելու . բայց Փրիդ յանձնառու չեղաւ : «Սուրբ Գրոց վրայ աւելի տեղեկութիւն ստանալու պատեհութիւն գտնելու համար առաջ փախչիլ կ'ուզէի» , ըսաւ , «իսկ այժմ՝ որ Աստուծոյ թոյլտուութեամբը բռնուեցայ , ու եպիսկոպոսներուն ձեռքը մատնուեցայ , ու ճշմարտութեան համար վկայութիւն տալու կանչուեցայ , թէ որ փախչելու ըլլամ , Աստուծոյ դէմ գործած կ'ըլլամ , և յաւիտենական

Digitized by Google

դատապարտութեան կ'արժանանամ ։ Հիմա թէ որ իս ձգէք Երբեպիսկոպոսին երթալ ալ նէ, ես ետենուդ պիտի գամ", ըսաւ ։ Եւ խօսքերէն ետեւ՝ շնորհակալութիւն յուցուց իրեն այն բարի դիտաւորութեանը համար, և զուարթութեամբ բարի ու զուարճալի խօսակցութիւններ ընելով՝ հասան Քրոյտոն քաղաքը՝ ուր էր արքեպիսկոպոսարանը ։ 1533, Յունիսի 20ին՝ Վինչեսդրի՝ Լոնտրայի և Լինքոլնի Եպիսկոպոսներուն առջևը բերին Ֆրիդը՝ Սուրբ Պօղոսի եկեղեցին, և քաւարանին ու գոյափոխութեան վարդապետութիւններուն վրայով նորէն քննութիւն ըրին. Ֆրիդն ալ՝ անոնց վրայ ինչ որ գրեր նէ, նորէն ըսաւ. տեսան որ ուրանալիք չունի նէ, այրելու վճիռ տուին ։

Յուլիսի 4ին՝ քաղաքապետը ու պաշտօնատարները՝ Ֆրիդը առին Սմիթֆիլտ տարին այրեցին ։ Մեծ համբերութեամբ և քաջութեամբ դիմացաւ Ֆրիդ այս սոսկալի մահուանը. ու երբոր փայտի խուրձերը բռընկեցան, թեւերը բացաւ փաթթուեցաւ անոնց, ըսելով թէ ինքը յօժար կամօք Քրիստոսի և անոր ճշմարտութեանը համար մահուան յանձնառու կ'ըլլայ, և արիւն թափելով՝ վկայութիւն կու տայ այն իր պաշտպանած վարդապետութիւններուն ճշմարիտ ըլլալուն ։ Բոցը հովին սաստկութենէն դէպ 'ի անոր քովը այրուող Հիւէդին երթալով՝ իր տանջուիլը երկարեցաւ. բայց Աստուած համբերութիւն և զօրութիւն տալով իրեն՝ կ'ուրախանար իր ընկերին ցաւերուն շուտ վերջանալուն վրայ, առանց իր տանջուիլը հոգալու ։

1541ին՝ շատ մը մարդիկ դատաստանի քաշուեցան հերետիկոսութեան կասկած ըլլալով վրանին ։ Անոնց համար՝ երկու հարիւր հոգիի չափ էին,



Digitized by Google

կըսէ Փօքս պատմիչը ։

Անգղիոյ տէրութեանը մեծ Եպարքոս Պրօմուէլին օրովը հրովարտակ ելաւ, որ բոլոր եկեղեցիներուն մէջ մէյմէկ Անգղիարէն Աստուածաշունչ դրուի ։ Պօններ արքեպիսկոպոսը՝ Պրօմուէլին աչքը մտնել ուզելով՝ այս հրամանն որ եղաւ նէ, շատ ուրախանալ ցուցընելով խոստացաւ որ մէկ հատ մը չէ՝ այլ վեց հատ դնէ իր աթոռանիստ եկեղեցին. ու աս խոստմունքը կատարեց, որ ամէն կարդալ գիտցողը կարող ըլլայ ուզած ատենը կարդալու ։ Այս Աստուածաշունչներուն եղած տեղը մէկ խրատական գրուածք մ՚ալ կար դրուած՝ Աստուածաշունչ կարդալու եկողները յորդորելու համար, որ անաչառութիւնը՝ կեղծաւորութիւնը և բոլոր ապականեալ կիրքերը վրանուն ձգեն, ու խոնհականութեամբ՝ բարի դիտաւորութեամբ՝ սիրով՝ յարգանօք և հանդարտ ոգւով զան կարդան՝ հոգևոր շինութիւն գտնելու համար. սակայն խել մը մարդիկ գլուխնին չժողվեն, ու ես ասանկ անանկ հասկըցայ ըսելով՝ մեկնութիւններ չտան, աստուածային պաշտամունք եղած միջոցին բարձր ձայնով չկարդան, ու իրարու հետ վէճի չմտնեն՝ անոր խօսքերը մէջ ձգելով ։

Այս պատեհութիւնը ժողովրդոց ձեռքն անցածին պէս, սկսան անպատմելի եռանդով մը Սուրբ Գրոց հետևիլ ։ Աստուածաշունչը արգելուած գիրք մըն էր առաջ, բայց այժմ նայեցան որ արգելքը վերցաւ ։ Շատերը տղաքնին պզտիկ պզտիկ դպրատուն խրկել սկսան, որ շուտով կարդալ սորվին, ու առնեն զանոնք Սրբոյն Պօղոսի եկեղեցին տանին՝ որ "Աստուծոյ օրէնքներէն հրաշքներ լսեն" ։ Կ՚երթային եկեղեցի, և Աստուածաշունչները վրան դրուած սեղաններուն բոլորտիքը կը դիզուէին, ու

Digitized by Google

կը ստիպէին կարդացողը՝ որ լսուելու չափ ամուր ձայնով կարդայ. Արքեպիսկոպոսին գրած խրատը այնչափ չկրցաւ ազդել, մանաւանդ երբեմն Հրապարակաւ կը ծանուցանէին այն ինչ խօսքերէն ինչ Հասկընալնին : Հնարաւո՞ր բան էր որ Քրիստոսի Հաղորդութեան գինիին Համար ըսած՝ «Ամէնքդ ալ ասկէ խմեցէք» խօսքը, և կամ օտար լեզուով Աստուծոյ երկրպագութիւն ընելուն դէմ՝ Պօղոս առաքելոյն ըսած խօսքերը կարդացուած ատենը, ժողովրդոց մտքէն չանցնէր Հռովմայ եկեղեցւոյն այս բաներուն մէջ ճիշդ Սուրբ Գրոց Հակառակը գործելը : Ասոր վրայ Արքեպիսկոպոսը յորդորական գրուածքը երկընցուց՝ դանդատելով աս եղած բաներուն Համար, և սպառնալիք ընելով՝ որ եթէ ասանկ երթալու ըլլայ նէ, շուտով վերցընէ պիտի Աստուածաշունչները :

Աս Աստուածաշունչ կարդացողներուն մէջ՝ Յովհաննէս Փորդըր անուն երիտասարդ մը կար. ասիկայ միշտ մեծ ջանքով Սուրբ Գրոց Հետեւելով, և Բարեկարգիչ անձանց քարոզութիւնները մտիկ ընելով, աղէկ մը սորվեցաւ Աստուծոյ խօսքին ճշմարտութիւնները : Աս բաները ասանկ գացին ինչուան Քրօմուէլին վախճանիլը. անկէ ետև Աւետարանականներուն դէմ աշխարհիս ունեցած ատելութիւնը կրկին բորբոքեցաւ : Նաատենը Պօններ արքեպիսկոպոսը իրեն կանչեց Փորդըրը, ու եկեղեցիին մէջ բարձր ձայնով Աստուածաշունչ կարդալուն Համար՝ վերջին աստիճան կշտամբանօք յանդիմանութիւն մը ըրաւ. աս ալ ըսաւ Փորդըրին թէ, «Դուն մեկնութիւն ալ կու տաս եղեր կարդացած խօսքերուդ ; և գունդ գունդ մարդիկ գլուխդ կը ժողվես եղեր աղմուկ Հանելու մտօք» : Փորդըր ասոր պատասխան՝ «Ատ ըսածներուդ մէկն

ալ խրօք ընելս չեն կրնար ապացուցանել , և ես քու հաստատած կանոններուդ դէմ բան մը բրած չունիմ ", ըսաւ :

Ըս ինքզինքը պաշտպանելու համար ըրած խօսքերը Արքեպիսկոպոսին ականջը չմտան • Պօններ բռնեց զանիկայ ' Սիւկէյդ խրկեց • Հոն ձեռուըները ոտուըները շղթան զարկին , ու վիզը երկաթէ անուր մը անցուցած՝ զինդանին պատին կապեցին ոտքի վրայ : Ըս աղէտալի վիճակին մէջ իր մէկ ազգականին լուր խրկեց որ իրեն գայ • և աս մարդը մինչև Եղիսաբեթին թագաւորութեանը ժամանակը ողջ ըլլալով՝ Ֆօքսին պատմեց տեսած բաները : Երբոր եկաւ , և զանիկայ անանկ անտանելի թշուառութեան մէջ որ տեսաւ , սիրտը չդիմանալով բանտապետին ոտքը ինկաւ , վերջապէս աղ՚րսանքով ու ստակով համոզեց որ զինդանէն հանէ : Զինդանէն ելաւ Փորդը ; ու վիճակը ինկաւ գողերուն ու մարդասպաններուն մէջը : Հոն որ գնաց՝ նայեցաւ որ առտուընէ ինչուան իրիկուն բաներնին գործերնին հայհոյութիւն ու այլ և այլ պիղծ խօսքեր ըսել է նէ , սկսաւ իր այն անդուլ աշխատութեամբը Սուրբ Գրքէն սորվածները քարոզելով յորդորել՝ որ ձգեն ան չարութիւնները ու վարք ընեն չիտկելու աշխատին : Բայց աս ըրածը զինքը բանտարկողներուն առած բանն էր • ուստի երբոր ականջնին հասաւ բանտին մէջ 'ալ քարոզութիւն ընելը , շղթայ շղթայի վրայ զարկին խեղճին չորս դին , ու ստորին զինդանը իջեցուցին • ասոր վրայ շաբաթ մը չանցաւ , մեռելը դուրս հանեցին զինդանէն : Քովի ներքնատանը մէջ պառկող բանտարկեալները՝ անոր մեռնելէն գիշեր մը առաջ լսեցին որ աղիողորմ կը հեծէր , որ ասկէ կասկածի գացին թէ՝ Սիւկէյդի

Digitized by Google

քանոր գործածուած Վ ւէղի վրայ սատանայ ըսուած այն սարսափելի տանջանարանով կը տանջեն կոր , որ շատ սաստիկ ցաւ կու տար տանջուողին . ու անոր մէջը մտնողը քանի որ ցաւերէն երերար նէ , այնքան կը ճզմուէր մեքենային տակը , մինչև որ մէկ քանի ժամէն ետև՝ ալ երերալէն կը դադրէր , սիրտ չդիմանալու աղաղակներով հոգին փչելով :

## ԳԼՈՒԽ Է :

Աննա Ասքիւ — Իր համարձակութիւնը ճշմարտութեան համար — Իր կրած անողորմ տանջանքները ձգարանին վրայ — Իր այրուիլը :

1546ին՝ սպաննուողներուն մէկը շատ երևելի ազնուատոհմիկ կին մըն էր . ուստի այս պատճառաւ ամէն մարդ ուշի ուշով կը նայէր թէ ինչ պիտի ընեն այս մեծազգի կնկանը . և երբոր բրած բարբարոսութիւննին տեսան նէ , հասարակութիւնը բոլորը մէկէն շատ մեղքցան անոր : Անոր պատմութիւնը արժան է որ իր սեռէն եղողները՝ կանայք առաւել ևս մտադրութեամբ մտիկ ընեն :

Աննա Ասքիւն՝ Սիր Կուլիէլմոս Ասքիւին աղջիկն էր՝ Լինքօլնշիր նահանգը ծնած : Իր օրովը կանանց սովորութիւն եղածէն աւելի կրթութիւն ստացաւ , և իր մանկութենէն կ'երևէր թէ կրօնական բաներու վրայ շատ սէր ունէր : Իր մեծ քոյրը Գայմ անունով մէկուն նշանուած էր , բայց չամուսնացած մեռաւ . Սիր Կուլիէլմոս աղջկանը հայրը՝ աս մարդը ձեռքէ չփախցընելու համար՝ ստիպեց իր պզտիկ աղջիկը Աննան՝ որ առնէ զանիկայ , թէպէտ և Աննան բնաւ չէր ուզեր անոր հետ ամուս-

նուեալ ։ Վերջապէս՝ իր կամքին դէմ առուանա-նալով ալ մարդուն հետ՝ իր երջանկութիւնն ու հանգիստը ձեռքէն գնաց․ քանզի կոյր նախանձ-ձաւոր Հռովմէական մըն էր դէմն ելլողը․ ասոր հակառակ՝ Աննան ալ մեծ մտադրութեամբ Սուրբ Գրոց հետեւելով, և Բարեկարգիչ ոմանց գրու-թիւնները կարդալով՝ ճշմարտութեան անգիտա-ցած լուսաւորուած մէկն էր ։ Վերջապէս՝ Քայմ իր կնոջը բռնած ճամբաներուն բարկանալով՝ տու-նէն դուրս ըրաւ զանիկայ․ ան ալ ելաւ Լոնտրա գնաց՝ դատաստանարանէն արձակման թուղթ առ-նելու ։ Լոնտրա հասնելուն՝ հոն մեծ մարգասիրու-թեամբ ընդունեցին զինքը Կատարինէ թագուհին ու պալատական տիկիններէն ոմանք, որոնք գաղտնի կերպով Աւետարանին ճշմարտութիւններուն կը հետեւէին․ և ալ անկէ ետեւ՝ իր աղջկութեան անունովը կը կանչէին Աննան ։ Անոր էրիկը ու Հռովմէական քահանաները մէկ եղան, ու միտեր-նին դրին որ զանիկայ այն ատենուան անողորմ օ-րէնքներուն զոհ ընեն․ ուստի 1545ին՝ ամբաստա-նութիւն եղաւ անոր համար՝ թէ հաղորդութեան վրայով հերետիկոսական գաղափարներ ունի ։

Իրեն եղած քննութիւններուն շատ բաները ինք իր ձեռօքը գրած է ։ Առաջին քննութիւնը Քրիս-տափոր Տէյր անուն Արքայքննիչէն առաջնը եղաւ, 1545ին ։ Արքայքննիչը սկսեց ասոր հարցընել՝ թէ «Հաղորդութեան հացը իսկապէս Քրիստոսի մար-մի՞նն է մի»․ «Ասոր պատասխան», կ՚ըսէ ինքը, «աս հարցումը ըրի․ Ի՞նչ բանի համար Սուրբն Ստեփաննոս քարկոծուեցաւ»․ աս գիտնական Արքայքննիչը խոստովանեցաւ՝ թէ չգիտեր ինչու հա-մար էր ։ Ահա ուրիշ բաներ ալ հարցուցին, և հարցման քննիչներուն վերջինը աս էր․ «Պատարագը

Digitized by Google

հանգուցեալ հոգւոյ օգուտ չունի՞ մի" ։ Նոր այս պատասխանը տուաւ , թէ "Մեծ կռապաշտութիւն է Քրիստոսի մահը ձգելն՝ ու անոր վրայ յոյս դնելը" ։

Յետոյ տուին գիրքը՝ Սիր Մարտինոս Պօղէս մեծ դատաւորին առջեւը տարին , որ կրօնական բաներու դատաստանները տեսնելու որոշուած ըլլալով՝ արժան սեպեց հաւատոյ վերաբերեալ բաներու մէջ իրեն ինչ աստիճան խելքի տէր մարդ ըլլալը անձնուն ցուցընել այս միջոցիս . և ուստի "Ներեցէք բարեկամներ" ըսելով իր պաշտօնակիցացը՝ սկսեց այսպէս հարցմունքներ ընել . "Խենդ կնիկ՝ կ'ըսեն որ քահանաները Քրիստոսի մարմին չեն կրնար շինել" ։ "Այո՛ տէր իմ", ըսաւ Աննա , "քանզի շատ հեղ Աստուծոյ մարդս ստեղծելը կարդացի , սակայն մարդուս զԱստուած ստեղծելը ինչուան հիմա տեղ մը կարդացած չունիմ , և անկէ ետև չկարդալուս ալ բոլորովին անտեղեակ եմ" ։ "Ո՞յդպէս , խենդ կնիկ" , ըսաւ դատաւորը վախճարար , "սրբագործութիւնը ըլլալէն ետև՝ հացը Քրիստոսի մարմին չըլլար" ։ Պատասխանեց Աննա . "Ո՛չ , հապա լոկ սրբագործեալ հաց է , և ոչ այլ ինչ" ։ "Դա ի՞նչ կ'ըսես կոր" , ըսաւ դատաւորը , "խելքդ թռուցեր ես դուն՝ խենդ կնիկ , ես մտիկ ըրէ , նայէ՛ ինչ պիտի հարցընեմ . թէ որ սրբագործութենէն ետև մուկ մը գայ անկէց ուտէ նէ , ինչ կ'ըլլայ այն մուկը , դուն ինտո՞ր կը հաւատաս" ։ "Ձեր մեծութիւնը ինչպէս կը հաւատայ" , հարցուց Աննա քաղաքավարութեամբ ։ "Ի՞նչ պիտի ըսեմ , դատապարտեալ է այն մուկը" ։ "Վա՜խ , ողորմելի մուկ" , ըսաւ Աննա՝ անոր պատասխան ։ Նոր վրայ աստուածաբան դատաւորին պաշտօնակիցները նայեցան որ բանը խայտառա-

կութեան կը դառնայ կոր նէ , չուտով խօսքը բերաննուն առին , և սկսեցին ուրիշ խնդիրներ ընել ։

Քննութեան ատեն Արքեպիսկոպոսին փոխանորդը ըսաւ Աննային . «Սուրբ Գրքէն վկայութիւններ բերելովդ մեծ մեղք կը գործես կոր . քանզի Պօղոս առաքեալ արգիլած է կնիկները Աստուծոյ խօսքին վրայ զրոյցք ընելէն» ։ Պատասխան տուաւ Աննա և ըսաւ . «Պօղոս առաքեալ ան տեղը (Ա Կորնթ . ԺԴ) ըսած խօսքովը ըսել կ'ուզէ թէ՝ կնիկները ժողովներու մէջ իբրև ուսուցիչ խօսելու չեն» . և հարցուց թէ՝ իրեն ամպիոնը ելլել քարոզ տալը տեսած ունի՞ մի ։ «Ոչ», ըսաւ փոխանորդը ։ «Ա-նանկ է նէ , այս օրէնքին դէմ չմեղանչած՝ զիս մի՛ մեղադրեր», ըսաւ Աննա ։

Վերջապէս բանտը դրին զանիկայ . ու մէկ քանի օրէն ետքը քահանայ մը խրկեցին անոր քովը , որ նենգութեամբ բաւական խնդիրներ ընելէն ետև՝ հարցուց անոր . «Թէ որ նշխարը սկիհէն վար իյնայ , ու կենդանի մը զանիկայ ուտելու ըլլայ նէ , ան կենդանին զԱստուած իր ներսիդին ընդու-նած կ'ըլլա՞յ՝ թէ չէ» ։ «Խնդիրը հրամանքդ ըրիր , պատասխանն ալ հրամանքդ տո՛ւր . ես պատասխան չեմ տար . քանզի կը տեսնեմ որ զիս փորձելու համար եկար», ըսաւ Աննա ։ «Դպրոցական կա-նոններուն դէմ է հարցընողէն պատասխան ուզելը», զրուցեց քահանան ։ «Ես կնիկ եմ , անանկ դպրո-ցական օրէնքներէ չեմ հասկընար», պատասխանեց Աննա ։

Մարտի 23ին՝ Պրիդէյն անունով իր ազգական-ներէն մէկը՝ մեծ դատաւորին գնաց աղաչեց որ իր երաշխաւորութեամբը թող տայ Աննան . դատա-ւորը զանիկայ Արքեպիսկոպոսին փոխանորդին խրը-

Digitized by Google

կեց , ան ալ Արքեպիսկոպոսին , Արքեպիսկոպոսն ալ ըսաւ որ՝ վաղը ես պիտի քննեմ զանիկայ :

Հետեւեալ օրը՝ Պօններ արքեպիսկոպոսը ազնուատոհմիկ Աննան իրեն կանչել տուաւ : Երբոր Աննային բարեկամները ժողվուեցան , Արքեպիսկոպոսը բռնադատեց զանիկայ՝ որ հաւատոյ վերաբերեալ վարդապետութեանց մէջ ինչ որ իրեն խիղճ եղած է նէ , թող խօսի . սակայն Աննա՝ Արքայքննիչներուն սովորական եղած այս խորամանկ հնարքները աղէկ գիտնալով՝ զգուշացաւ , ու լարած որոգայթներնուն մէջ չինկաւ : Սատանը Պօններ քանի մը վարդապետարան խնդիրներ ըրաւ հաղորդութեան վըրայով , որոնց ամենուն ալ մէյմէկ համառօտ պատասխան տուաւ Աննա Գրքէն . և սանկ կարճ կարճ խօսքեր ընելուն համար աղէկ յանդիմանութիւն մ'ալ կեց Արքեպիսկոպոսէն : Երկար քննութիւն մը ընելէն ետև , Պօններ թուղթի մը վրայ գրեց գոյափոխութեան վարդապետութիւնը մէկ անսովոր ոճով մը , ու հրամայեց Աննային որ ստորագրէ . քովը կայնողներն ալ վրան խնալով՝ Աննա ստիպուեցաւ ստորագրել , բայց սա խօսքով . «Ես՝ Աննա Ասքիւ , կը հաւատամ Կաթուղիկէ Եկեղեցւոյն (ըսել կ'ուզէր Քրիստոսի եկեղեցւոյն , և ոչ թէ Հռովմայ) բոլոր հաւատացածներուն» :

Երբոր Պօններ կարդաց աս խօսքը , խիստ շատ զայրացաւ , ու շատ մեծ դժուարութեամբ բարկութիւնը իջեցուցին : Վերջապէս՝ Արքեպիսկոպոսը ազատ թող տուաւ զանիկայ , սակայն աս դաշինքով՝ որ իր ուզած ատենը նորէն իրեն բերեն անոր բարեկամները :

Շատ չանցած՝ նորէն բռնուեցաւ Աննա , և Գրինուիչ քաղաքը Թագաւորին ու խորհրդականաց առջևը հինգ ժամ քննուեցաւ : Հետեւեալ



Digitized by Google

օրը կրկին աս նոյն ատեանը հանելնէն ետև՝ Նիւ-կէյդի բանտը խրկեցին ։

Ի վերջոյ՝ Կիլտհալի ժողովին դիմացը հանեցին ․ հոն ըսին իրեն որ , «Եթէ ատ կարծիքներուդ վրայ մնաս նէ՝ հերետիկոս ես , և ըստ օրինաց դատա-պարտեալ» ։ «Ես հերետիկոս չեմ» , ըսաւ անոր պատասխան , «և Աստուծոյ օրէնքով մահուան ալ արժանի չեմ ․ բայց իմ բանտարկուած ատենս գրած հաւատոյ դաւանութեանս համար կը հար-ցընէք նէ , ճշմարիտ է ան , և ամենևին չեմ կրնար ուրանալ» ։ Միւսանգամ հարցուցին թէ՝ «Չե՞ս հա-ւատար որ սրբագործեալ հացը Քրիստոսի մար-մինն է» ։ Պատասխանեց , «Ո՛չ ․ քանզի ան նոյն Որդին Աստուած՝ որ ծնաւ Մարիամ Կոյսէն , փա-ռաւորեալ է այժմ երկինքը , և վերջին օրը կրկին պիտի գայ , ինչպէս որ համբարձաւ ․ Գործ ․ ա ․ բայց այն ձեր Աստուած ըսածը՝ հացի կտոր է ․ ու ատոր շիտակ ըլլալը իմանալու համար , իրեք ամիս տուփին մէջ թողուցէք անիկայ , ետքը բորբոսեալ պիտի գտնէք , որ ալ անկէ ետև բանի մը չիգար ․ ատոր համար աղէկ խելքս հասած է որ ան հացին կտորը Աստուած չկրնար ըլլալ» ։

Անատենը ստիպեցին որ քահանայի մը խոստո-վանի ․ ատոր վրայ ժպտեցաւ Աննա ։ «Ինչո՞ւ , գէշ բան է խոստովանանքը» , հարցուցին անոր ։ Պատասխանեց , «Ես իմ մեղքերս Աստուծոյ կը խոստովանիմ , քանզի աղէկ գիտեմ որ կը ներէ ինծի իմ բոլոր մեղքերս» ։ Ժողովը յանցաւոր գտաւ զանիկայ և դատապարտեց ։

Դատապարտութեան վճիռն ելլելէն ետև՝ Աննա այս նամակը գրեց Հենրիկոս Ը ․ թագաւորին ․ «Ես՝ Աննա Ասքիւ , որ աղէկ յիշողութեան տէր եմ , թէպէտև Աստուած իմ հացս ներողութեան

և իմ ջուրս թշուառութեան ըրաւ , սակայն մեղ-քերուս արժան եղածէն շատ պակաս է , կը փա-փաքիմ ծանուցանել Տէրութեանդ՝ որ թէ և օրէն-քով իբրև չարագործ դատապարտուեցայ , սակայն երկինք և երկիր վկայ են որ անմեղութեամբ պիտի մեռնիմ . և ինչպէս որ առաջ ըսի , ու ինչուան վերջն ալ պիտի ըսեմ , ատելով կ՚ատեմ ես ամէն տեսակ հերետիկոսութիւնը : Հաղորդութեան վրայ ունեցած հաւատքս ալ՝ Տէրն մեր Յիսուս Քրիս-տոս ինչ որ ըսաւ նէ , ան է , որ և իր ըսածները իր պատուական արիւնը թափելով հաստատեց : Իր սուրբ կամքը ինտոր որ կ՚ուզէ նէ , և իր Կա-թուղիկէ Եկեղեցին ինչպէս որ կը սորվեցընէ նէ , անանկ կը հաւատամ . քանզի իր սուրբ բերնէն ելած պատուիրանքին անհնազանդութիւն պիտի չընեմ . բայց Աստուծոյ իր բերնովը ինծի հրա-մայածները ներսի դիս պահած եմ: Այսպէս ահա՛ խօսքս կը վերջացընեմ իմ ագիտութեանս պատ-ճառաւը . Աննա Ասքիւ":

Դատապարտութեան վճիռն ելլելէն ետև՝ Նիւ-կէյդէն Լոնտրայի բերդը խրկուեցաւ :

Կարտինէր եպիսկոպոսը ու իր ընկերները շատ կ՚ուզէին որ Կատարինէ Փար թագուհւոյն և պա-լատական տիկիններէն մէկ քանիներուն վրայ ամ-բաստանութիւն ըլլայ , որոնք Աւետարանականաց շատ օգնութիւն կ՚ընէին . ուստի խորհեցան որ մէկ կերպով մը Աննան համոզեն՝ որ ամբաստանող ըլլայ :

Առին զանիկայ զընդանը իջեցուցին , ու ձգարան կոչուած տանջանարանին վրայ պառկեցուցին , որ այսպէս անոր միտքը դարձընեն՝ ան կնիկներէն մէկ քանիներուն վրայով ամբաստանութիւն ընե-լու : Սըր Անտոնիոս Նէվէդ՝ բերդին հրամանա-

մարը պատուէր տուաւ քահանայեային որ քանեցընէ այն սոսկալի մեքենան . քահանայերը սկսեց դարձընել , ու քաւոտկան ժամանակ անցնելէն ետև թոզ պիտի տար , ինչպէս որ իր տէրը իրեն հրամայեր էր . սակայն մեծ Դշպարքոս Րիօզէպլին չուզեց որ ազատի՝ առանց իրենց կամքը կատարելու խօսք տալու . վասն որոյ հրաման ըրաւ Սիր Ընտոնիոսին որ նորէն քանեցընել տայ մեքենան : Ըստոնիոս՝ կնկանը ակարութեանը համար սիրտը չըփմանալով , յանձնառու չեղաւ սա հրամանը կատարելու : Ըսոր վրայ Րիօզէպլին՝ քաղկութենով "Այս սա անհնազանդութենդ թագաւորին կ'իմացընեմ" ըսելով՝ նետեց վերարկուն վրայէն , նոյնպէս ալ Րիշ անուն արքունի խորհրդականն մը . ու սանկը զինացէ գինաց անցան՝ իրենք իրենց ձեռքը սկսան անողորմաբար տանջել խեղճ կինը : Զարմանալու բանը սա է որ՝ սա գործը չսկսած հարցուցին թէ՝ Երկու հոգուօ՞վ ես մի : "Ըտիկա՞յ հոզ կ'ընեք կոր", ըսաւ , "գուք ձեր կամքը կատարելնիդ նայեցէք" : Ըսատենը սկսան կրցածնուն չափ արագ դարձընել . և նայեցան որ հանգարտ պառկած ամենևին չպոռար կոր նէ , այնչափ քաշեցին որ՝ ալ ոսկորները ու յօդուածները գրեթէ բաժնուեցան իրարմէ , ու կիսամեռ մնաց : Վերջապէս բերդին հրամանատարը քակել տուաւ՝ ձգարանէն վար իջեցուց . Ըմնան անմիջապէս մարեցաւ գետինը ինկաւ . բայց շուտով խելքը գլուխը բերին : "Ըսկէ ետև", կ'ըսէ ինքը , "երկու ժամու չափ գետինը նստայ , ու մեծ Դշպարքոսին հետ վիճաբանեցայ . շատ շողոքորթութիւններով աշխատեցաւ համոզել զիս որ հերետիկոսութիւն ըսպած բաներնին ձգեմ . բայց իմ Տէրս՝ որուն յաւիտենական գթութենէն կը գոհանամ , զօրութիւն տուաւ ին-

Digitized by Google

ծի այդ տանջանքներուն դիմանալու, և կը հաւա-տամ որ ինչուան վերջին ալ զիս անտէր չձգէ իր ձեռքէն”: Ի՞նչ զգացումի տէր մարդ ըլլալու է՝ ամենէն խղճալի վիճակի մէջ գտնուած կնկան մը հետ աս կերպով վիճաբանողը:

Հիմա Աննային դատապարտութեան վճիռը ե-լած ըլլալով՝ Հռովմէականները անանկ ձայն մը հանեցին թէ՝ զեղջի եկաւ, ծածկելով այն դա-ւանութեան թուղթը ինչ խօսքով ստորագրելը: Ուստի երբոր ականջը հասաւ այս սուտ խօսքը, հաւատոյ դաւանութիւն մը հրատարակեց՝ մէջը հաղորդութեան վրայ ունեցած կարծիքը բացատ-րած, և այս հետեւեալ աղօթքն ալ վերջաւորան գրած:

«Ո՛վ Տէր, ահա՛ թշնամիներս գլխաւոր մարդիկ շատ են. բայց՝ ո՛վ Աստուած իմ, չըլլայ որ ա-նոնք կարենան իրենց սուտ խօսքերովը յաղթել զիս. այլ դուն՝ ո՛վ Տէր, իմ տեղս պատերազմէ՛, քանզի քեզի կը յանձնեմ իմ բոլոր հոգս: Ձեռ-քերնուն եկած թշնամութիւնը կ՚ընեն կոր ինծի՝ ողորմելի աղախնոյդ. սակայն՝ ո՛վ իմ անուշիկ Աստուածս, չըլլայ որ ես աս բաները հոգ ընեմ, քանզի իմ բոլոր ուրախութիւնս դուն ես: Ու ո՛վ Տէր, բոլոր սրտովս կը խնդրեմ որ քու գթառատ բարութեամբդ ներես անոնց իրենց ըրած ու ընելու բռնութիւնները, և բանաս սրտերնուն կուրցած աչուըները, որ ասկէ ետև քեզի ընդունելի եղածը ընեն, ու քու ճշմարտութիւնդ չծածկեն. այլ յայտնեն զանիկայ ամենուն՝ մէկդի ձգելով մեղան-չական մարդոց երևակայութիւնէն ծնած մոլորու-թիւնները: Եղիցի և եղիցի, Տէր Ամենակալ»:

Թէպէտև Աննան այնչափ տանջանք քաշած էր՝ որ ալ երկար ատեն չկրնալով ապրիլ, պի-



Digitized by Google

տի մեռնէր խեղճ իրմէն , սակայն իր թշնամիները չթողուցին որ խաղաղութեամբ վախճանի . այլ՝ օր մը սահմանեցին որ դատապարտութեան վճիռը ՚ի գործ դնեն . ու երբոր օրը եկաւ՝ աթոռի մը վրայ նստեցուցած Սմիթֆիլտ տարին , քանզի իր քաշած տանջանքներէն քալելու կամ ոտքի վրայ կայնելու կարողութիւն չունէր . Հոն ցիցին կապեցին շղթայով մը , որուն վրայ ձգեց իր մարմինը ողորմելին՝ խեղճիկը բռնելու ճար չունենալուն համար ։ Ականատես եղողին մէկը կ'ըսէ թէ՝ "այս միջոցին Աննան խնդում երես մը ունէր հրեշտակի նման" ։ Իրեն հետ մէկտեղ ուրիշ իրեք հոգի ալ մարտիրոսացան նոյն տեղը ։

Ահագին բազմութիւն մը ժողվուած էր անոնց այրուիլը տեսնելու . ընելու չարագործութիւններնուն մէկ ահարկութիւն մը տալու համար , իրիկուան մթնշաղին ձգեցին ։ Սուրբ Բարթուղիմէոս եկեղեցւոյն առջին՝ բազմոցի մը վրայ նստեր էին մեծ Եպարքոսը , Նորֆոլքի դուքսը , Պետֆորտի կոմսը , քաղաքապետը և մէկ քանի ուրիշներ ։ Մեծ Եպարքոսը թագաւորէն գրաւոր ներողութիւն մը խրկեց Աննային , որ եթէ զեղջի գայ նէ՝ ազատութիւն գտնէ ։ Վրան անգամ չնայեցաւ Աննան , ըսելով թէ՝ Ես Տէրս ուրանալու չեկայ հոս ։ Անոր պէս առաջարկութիւններ մէկալներուն ալ ըրին , որ անոնք ալ մերժեցին իր օրինակէն քաջալերութիւն առնելով ։

"Ահա՛ այսպէս" , կ'ըսէ Փօքս պատմիչը , "այս բարի կինը այն իրեք մարտիրոսներուն հետ այնքան տանջանքներ քաշեց , այն երկարատև դառնակսկիծ չարչարանքներուն դիմացաւ , և իբրև ողջակէզ ընդունելի Աստուծոյ՝ բոցերուն մէջէն անցնելով ննջեց Քրիստոսի գիրկը . և տանելով քրիստո-

Digitized by Google

նէական հաստատութեան անանկ օրինակ մը թողուց , որ մարդու կը վայլէ անոր հետևիլ :

## ԳԼՈՒԽ Ը.

Սկովտիա — Աուջի քրիստոնեայք — Քըլտիզ կոչուածները — Քրիստոնէութիւնը Հռովմայ եկեղեցւոյն միջոցաւը չէր որ Բրիտանիա մտաւ — Նոյն եկեղեցին կամաց կամաց իր իշխանութիւնը հոն կը մտցընէ — Քըլտիզներուն վրայ կը բռնանայ — Սկովտիոյ մէջ Ուիքլիֆեանց դէմ հալածանք կ՚ելլէ — Քայլթի Լոլլարտները — Հռովմայ եկեղեցւոյն ապականութիւնը Սկովտիոյ մէջ — Պատրիկիոս Համիլտոն — Իր գրուածքը հաւատոյ և բարեգործութեանց վրայ — Անիկայ հալածանք կը կրէ ու կ՚այրուի — Կարդինալ Պիգոն — Ուիշարդ — Իր նախանձաւորութիւնը և օգտակարութիւնը — Իրեն դէմ ամբաստանութիւն — Իր դատապարտութիւնը ու այրուիլը :

Ինչպէս որ Անգղիա՝ նոյնպէս և Սկովտիա հասած էր Քրիստոս Յիսուսով եղած փրկութեան աւետիսը՝ Առաքեալներուն և կամ անոնց աշակերտացը ձեռօքը : Հռովմայ հեթանոս կայսրերուն բրած հալածմունքներուն ժամանակները՝ շատ քրիստոնեաներ Բրիտանիոյ հիւսիսային կողմերը փախան . և ինտոր որ կ՚ըսէ Տերտուղիանոս՝ երկրորդ դարու հայրապետը , Աւետարանը Բրիտանիոյ մէջ տարածուեցաւ՝ մինչև անգամ Հռովմայեցւոց բռնած տեղերէն ալ անդին անցնելով : Հռովմայէն փախչող ու Բրիտանիա գացողները խաղաղութիւն գտան հոն , և տեղացիները մեծ մարդասիրութեամբ ընդունեցին զանոնք : Աւետարանին լոյսը՝ որ հեռուներէն տարեր էին , փարատեց ան տեղացիներուն կռապաշտութեան խաւարը . կռոց երկրպագութիւն ընելը վերցաւ . խարեբայ քուր֊

Digitized by Google

մերուն տեղը՝ Հոգևոր և աստուածապաշտ մարդիկ անցան. և այսպէս քրիստոնեաները բազմացան Հոն, ու շատ դարեր Քրիստոսի ճշմարիտ Հաւատքին վրայ անխախտ մնացին. և Հռովմայ եկեղեցւոյն Հոգևոր ու մարմնաւոր իշխանութեանց տէր. նոր եղած ատենները՝ առջի գործած բարբարոսութիւններուն ալ դէմ կեցան: Այս իրենց մէջը ելլող բարեպաշտ մարդիկը՝ որ Քըլտիք կը կոչուէին առՀասարակ, մասնաւոր պատմութիւններ ունին յիշատակութեան արժանի, բայց Հոս տեղս չենք կրնար զանոնք ծայրէ 'ի ծայր պատմել:

Սակայն ետքէն ճշմարտութիւնը սկսաւ կամաց կամաց Հեռանալ: Մարգարիտ՝ Մալքօլմի թագուՀին մետասաներորդ դարուն մէջ կարողացաւ մէկ ընդՀանուր միութիւն մը Հաստատել Հռովմայ եկեղեցւոյն Հետ՝ թէ վարդապետութեանց, և թէ պաշտամանց եղանակներուն կողմանէ. ուստի այս ատենէս սկսան Քրիստոսի Հօտին այն ցիրուցան եղած մնացորդները Հալածմունք կրել Հոն: Պատմիչները ասոնց վրայ մասնաւոր տեղեկութիւններ չեն կրցեր տալ. սակայն Սկովտիոյ մէջ ասանկ մարդիկ գտնուիլը Հռովմէական մատենագիրք ալ կը վկայեն, որոնք Վալտենսեաց աղանդին վրայ խօսած ատեննին՝ յիշած են, թէ նոյն մարդոցմէն և Ուիքլիֆին Հետևողներէն՝ ինչպէս որ Անգղիոյ մէջ՝ նոյնպէս և Սկովտիոյ մէջ կան: Անշուշտ ասոնք ալ նոյն Հալածմունքները կրած են:

Սակայն և այնպէս՝ ան օրերն անգամ Սկովտիոյ լեռներն ու ձորերը ապաստանարան էին՝ այն երկրին մէջ Աստուծոյ ունեցած փոքրիկ ժառանգութեանը. և Փիէմոնթի Հովիտներուն մէջ՝ Աստուծոյ ու մարդոց մէջտեղը Քրիստոսը մի միայն միջնորդ ճանչցողներու փոքրիկ ժողովներ կ'ըլլային: 1494ին

Digitized by Google

Պլաքատեր՝ Գլասկովի Արքեպիսկոպոսը Թագաւորին ու անոր խորհրդականներուն առջին ամբաստանութիւն ըրաւ երեսուն հոգիի համար , որոնք Քայլի Լոլլարտներ կը կոչուէին ։ Ասոնց վրայ գրուած յանցանքները Գլասկովի արձանագրութեանց մէջ գրուած են , որոնց մէկ քանին ասոնք են ։ Պատկերներուն և մասունքներուն երկրպագութիւն չեն ըներ ․ Քրիստոս՝ Պետրոսին և միւս Առաքեալներուն իշխանութիւն տուաւ , բայց Պապին չէ՝ կ՚ըսեն ․ գոյափոխութիւնը , այսինքն՝ հացին իսկապէս Քրիստոսի մարմնոյն և արեանը փոխուիլը կ՚ուրանան ․ Քրիստոս Պետրոսին “Յետս գնա՛ սատանայ” ըսած ատենը՝ Պետրոս ինչ վիճակի մէջ էր նէ , Պապը միայն այն վիճակին յաջորդն է , Պետրոսի յաջորդը չէ՝ կ՚ըսեն ։ Նաև կ՚ըսեն՝ թէ Պապը ժողովուրդը կը խաբէ կոնդակներով և ներողութեան թուղթերով ․ թէ պատարագը քաւարանին մէջն են բռնուած հոգիներուն օգուտ մը չըներ ․ թէ Պապը ինքզինքը Աստուծմէ վեր կը դասէ ։ Անիկայ քաւարանին մէջ՝ հոգիներուն քաշելու տանջանքը չկրնար դադրեցընել ․ թէ քահանաները կրնան ամուսնանալ ․ թէ Պապը մեղաց թողութիւն չկրնար տալ , բայց միայն Աստուած ․ թէ Հռովմայ եկեղեցւոյն հրաշքներուն հաւատք ընծայելու չէ ․ և թէ փառաւորել Մարիամ Կոյսին աղօթք ընելու չէ , այլ միայն Աստուծոյ ․ քանզի ան միայն կարող է լսել և օգնութիւն ընել մեզի ։

Ասկէ յայտնի կ՚երևի որ ան ժամանակը Սկովտիոյ մէջ գտնուող “Ճշմարտութեան վկաներուն” բռնած վարդապետութիւնները՝ Անգղիոյ մէջ գրոնուածներուն դաւանածներուն նման էին , ինչպէս որ հիմա ալ ։

Digitized by Google

Այս Պայլըի Լօլլարտները Թշնամիներնուն ձեռքէն խալսեցան : Այս ժամանակէն սկսելով մինչև քսան տարուան միջոց մը անցնիլը՝ այն ատենին մարտիրոսաց տանջանք քաշելուն և կամ հալածմունքին վրայ մասնաւոր պատմութիւններ չկայ . սակայն անշուշտ քիչ շատ հալածմունք եղած ըլլալու է :

Սկովտիոյ մէջ տանջուողներէն գիտցածներնուս երկրորդը՝ Պատրիկիոս Համիլտոնն է : Ասիկայ արքունական տնէն ըլլալով՝ իր պատանեկութեան ժամանակը մեծ մեծ պատուոյ աստիճաններու հասաւ , ու իր հասակին քսանուիրեքերորդ տարին վանքի մը մեծաւոր կարգուեցաւ . սակայն աշխարհիս ունայնութիւնները չկրցան եա բռնել զանիկայ այն լաւագոյն աշխարհքը փնտռելէն : Համիլտոն ելաւ գնաց Գերմանիա՝ աստուածգիտութիւն ձեռք ձգելու մտքով . հոն Լուտերին՝ Մելանքթոնին և ուրիշ Բարեկարգիչ անձանց հետ ծանօթացաւ , և մանաւանդ Ֆրանչիսկոս Լամպէրդին հետ շատ մտերմացաւ . ու աս մարդուն խօսքերէն՝ Աստուծոյ շնորհքովը շատ բան սորվեցաւ , և Աւետարանին վարդապետութիւններուն վրայ որոշ գաղափար ունեցաւ , ինչպէս որ կ'երևի հաւատոց և գործոց վրայ իր շինած ճառէն , որ արդարև կարդալու արժանի բան է . անկէ մէկ երկու կտոր բան հոս դնենք .

‟Օրէնքը և Աւետարանը իր մէջին իրարու հետ :

‟Օրէնքը կ'ըսէ . Պարտքդ վճարէ :
‟Աւետարանը կ'ըսէ . Քրիստոս վճարեց :
‟Օրէնքը կ'ըսէ . Մեղաւոր ես . յուսահատէ , պիտի դատապարտուիս :

Digitized by Google

«Աւետարանը կ'ըսէ․ Ներուած են քեզի քու բոլոր մեղքերդ․ մխիթարուէ՛, պիտի փրկուիս։

«Օրէնքը կ'ըսէ․ Մեղքերուդ համար վճա՛րք ըրէ։

«Աւետարանը կ'ըսէ․ Քրիստոս ըրաւ քու տեղդ։

«Օրէնքը կ'ըսէ․ Զօրութեանց Տէրը բարկացած է քեզի։

«Աւետարանը կ'ըսէ․ Քրիստոս հաշտեցուց զԱ-նիկայ քեզի հետ։

«Օրէնքը կ'ըսէ․ Ո՞ւր է քու արդարութիւնդ՝ բարութիւնդ և փոխարինութիւնդ։

«Աւետարանը կ'ըսէ․ Քրիստոս է քու արդարու-թիւնդ՝ բարութիւնդ և փոխարինութիւնդ։

«Օրէնքը կ'ըսէ․ Գերի ես ինծի՝ Սատանային և դժոխքին։

«Աւետարանը կ'ըսէ․ Քրիստոս ազատեց զքեզ անոնց ամէնէն ալ։

«Ես բարի գործքերը չեմ դատապարտեր, այլ բարի գործոց վրայ դրուած սուտ յոյսը․ քանզի երբոր մարդս իր գործքերուն վրայ յոյս կ'ունենայ, անոնք կը թունաւորին, և վերջը կը չարանան։ Ուստի բարի գործքեր ըրէք, բայց սա ալ աղէկ նայեցէք՝ որ մտքերնիդ չդնէք թէ անոնցմով օրհ-նութեան պիտի արժանանաք․ քանզի թէ որ անանկ ընէք նէ, անատենը Աստուծմէ ընդունած օրհ-նութիւննիդ՝ ո՛չ թէ իբրև շնորհք, այլ իբրև պարտք պիտի ընդունիք․ ասանկով ինքզինքնիդ Աստուծոյ հաւասար դասած կ'ըլլաք, քանզի ձրի բան մը չէք առներ կոր իրմէ։ Ի՞նչ ըսել է այս․ միթէ Աստուած քու մէկ բանիդ կարօ՞տ է, որ ինքն է ամէն բարեաց պարգևողը, ու իր պարգևը տալով չաղքատանար։ Ուստի իրեն շնորհք մը ընելու մտօք բան մի՛ ըներ, բայց միշտ ա՛ռ իրմէն․ քանզի հեզ ու քաղցր է Տէրը, և մեզի պէտք եղած-

Digitized by Google

նորուն ամէնը ինքը աւելի յօժարականութեամբ կու տայ՝ քան որչափ մենք յօժարական ենք առնելու : Նոյն թէ որ մէկ հարկաւոր բանի մը պակասութիւնը ունենանք ; մենք զմեզ թող մեղադրենք՝ յանցանքը մերը սեպելով : Ուրեմն մի՛ յանդգնիր քու բարի գործքերովդ երկնից թագաւորութիւնը բանի առնելու . քանզի աս ընելովդ՝ դուն քեզ բոլորովին սուրբ՝ և հաւասար դասած կ՚ըլլաս Անոր , քանզի առանց հատուցման բան մը առնել չես ուզեր կոր իրմէ . վասն որոյ աս ճամբով՝ չար հրեշտակին իր հպարտութեանը համար 'ի յերկնից թօթափուելուն պէս՝ դուն ալ պիտի ելնաս դժոխքին անդունդներուն մէջը" :

Քիչ մը ատենէն ետև՝ Համիլտոնն Սկովտիա վերադարձաւ , ու թէ գաղտնի և թէ հրապարակաւ սկսեց Սուրբ Գրոց ճշմարտութիւնները քարոզել , և համարձակութեամբ Հռովմայ եկեղեցւոյն մոլորութիւնները ու նախապաշարմունքները երևան հանել : Իր քարոզութիւնները շատ ազդուութիւն ըրին ժողովրդոց սրտին , և մեծ վախ ձգեցին եկեղեցականաց վրայ : Պիտոն արքեպիսկոպոսը Սուրբ Անդրէի եկեղեցին հրաւիրեց զանիկայ՝ քարոզած վարդապետութիւններուն վրայ խօսակցիլը առա պատճառանք ընելով , և բուն նպատակը անոր վրայ ամբաստանութիւն ընելու առիթ մը գտնել էր . այս նպատակաւ նաև Աղեքսանդր Քամպէլ անուն կրօնաւորին մէկը կը խրկէր՝ կեղծաւորութեամբ ճշմարտութիւնը սորվիլը պատճառանք ընելով , որ իմանայ անոր ինչ վարդապետութիւններ ունենալը : Վերջապէս քննեցին նայեցան որ , այս մարդուն քարոզածները ուղղակի հակառակ կու գայ կոր իրենց վարդապետութիւններուն նէ , եպիսկոպոսները խորհեցան ժամանակ չանցուցած

ընելիքնին ընել ։ Ուստի Թագաւորը (որ դեռ պատանի մըն էր ,) համոզեցին որ ուխտ ընէ՝ երթայ Րոզշայրի մէջ եղած Սուրբ Տութակին մասունքը տեսնէ . Եւ երբոր Թագաւորը գնաց , ձեռուընին պատեհութիւն անցնելով՝ Համիլտօնը կէս գիշերուան անկողնէն առին տարին՝ նետեցին բերդը ։

Հետեւեալ օրը՝ 1528 , փետրվար 28ին՝ մայր եկեղեցին բերին զանիկայ եպիսկոպոսներուն ու եկեղեցականներուն առջեւը , եւ անոր վրայով ամբաստանութիւն ըրին՝ թէ ուխտագնացութեան՝ քաւարանին՝ սուրբերուն աղօթք ընելու՝ ննջեցելոց համար բարեխօսութիւն պէտք ըլլալուն՝ եւ ուրիշ վարդապետութեանց վրայ Լուտերին ունեցած կարծիքները ունի ։ Համիլտօնին աս ըսածներուն մէկն ալ չուրանալէն զատ՝ անանկ մէկ համարձակութեամբ մը ամէնն ալ պաշտպանեց , որ իր թշնամիները ալ աւելի հաստատ միտուընին դրին զանիկայ կորսնցընելու ։ Եւ ուստի՝ իբրեւ յամառ հերետիկոս դատապարտեցին , ու անմիջապէս տարին հին ճեմարանին առջեւը ցիցին կապեցին ։

Ամէն մարդ զարմացաւ աս ըրածնուն վրայ , եւ աս կարծիքը ըրին՝ թէ Համիլտօնը՝ վախցընելու համար է . բայց նայեցան որ իրաւ կ'այրեն կոր ։ Սպանման տեղն որ հասան նէ , Համիլտօնին մէկ քանի կտոր լաթերը վրայէն հանեց՝ ու սպասաւորին տուաւ՝ ըսելով . « Կրակին մէջը ասոնք ինծի պէտք չեն , բայց դուն կրնաս գործածել . ասիկայ ինծմէ ընդունած օգուտներուդ վերջինն է , մէկդի հանելով մահուան օրինակը , որն որ կ'աղաչեմ աղէկ միտքդ պահես . վասն զի թէպէտ աս այրելը մարդուս սոսկալի բան կ'երեւի , եւ արդարեւ մեծ տանջանք է մարմինին , սակայն յաւիտենական կենաց դուռ է , որ ան կեանքը՝ մեր Տէր Յիսուս Քրիս-

տմարը այս չար ազգին առջևը ուրացողներուն մէկը կարող չէ գտնել" ։

Փայտակոյտը վառօդով բռնկցընել ուզելով՝ խել մը վառօդի կրակ տուին, որ միայն աՀարկու բոց մը Հանեց, ու ողորմելի մարդը խանձեցաւ սաստիկ ցաւով, բայց անշարժ կեցաւ. և վերջապէս երբոր բռնկցուցին փայտակոյտը՝ բարձրաձայն կ'աղաղակէր Համիլտոնը, "Տէր Յիսուս՝ ընկա՛լ զոգի իմ ։ Մինչև երբ խաւարը աս երկրիս վրայ պիտի տիրէ, և ինչուան ո՞ր ատեն պիտի թողուս որ աս մարդիկը ասանկ բռնութիւններ ընեն"։ Քամ Պէլ կրօնաւորն ալ դուրսէն կ'ըսէր. "Դարձի՛ր՝ դարձի՛ր՝ Հերետիկոս. Մարիամ Կոյսին աղաղակէ", ևն ։ Երբոր ասանկ խօսքեր կը կրկնէր, Համիլտոնը պատասխան տուաւ. "Չա՛ր մարդ՝ գիտես որ ըսածդ մոլորութիւն է, և ինծի խոստովանած ալ ես անանկ ըլլալը. Յիսուսի Քրիստոսի ատեանը դատաստանի կը Հրաւիրեմ քեզ". աս ըսելով վշտալից մաՀուամբ մը վերջացաւ ։ Դիտելու արժանի բան մըն է աս, որ մէկ երկու օր չանցած՝ Քամ Պէլ մեռաւ՝ յուսաՀատութենէն խելքը ցնորած ։

Յակոբոս Պիդոն՝ Սուրբ Անդրէի արքեպիսկոպոսը մեռաւ 1539ին. իր տեղն անցաւ Դաւիթ Պիդոն եղբօրորդին, ասիկայ անվեՀեր՝ խոժոռադէմ և անգութ մարդ մըն էր, որ երկար ատենէ 'ի վեր շատ յարմար մէկը սեպուած էր Պապին առջին՝ Սկովտիայէն Հերետիկոսութիւնը բնաջինջ ընելու. և մեծ եռանդով աս գործը կը կատարէր ։

Գէորգ Ուիշարդ երևելի ընտանիքէ մըն էր, և իր պատանեկութեանը ժամանակը մեծ Համբաւ ստացաւ՝ ուսման մէջ ըրած յառաջադիմութեանը Համար ։ 1540ին՝ Արէքի եպիսկոպոսը զանիկայ

Digitized by Google

Սկովտիայէն հալածեց ։ Մոնդրոզ ըսուած քաղաքին մէջ մէկ քանի հոգիի Յունարէն Նոր Կտակարան ուսուցանելուն համար . նա ալ Գերմանիա փախաւ ; և անկէ ալ ելլելով Կամպրիճիա քաղաքը Ճեմարանի մը մէջ ապաստանութիւն գտաւ ։

1544ին՝ Վիշարդ կրկին Սկովտիա դարձաւ ։ Այս ազնիւ մարդուն վրայ իր աստուածպաշտական եռանդին՝ քաջութեանը՝ և ճշմարտութեան համար ունեցած նախանձաւորութեանը հետ մէկտեղ՝ մեծ հեզութիւն՝ համբերութիւն և խոհեմութիւն ալ կար ։ Ժամանակ մը իր ընտանիքին հետ մնալէն ետև , տըլ դուրս ելաւ , սկսեց համարձակութեամբ քարոզել Հռովմայ եկեղեցւոյն ծուռ վարդապետութիւններուն՝ և եկեղեցականաց մոլութիւններուն դէմ ։ Ուր որ կ'երթար նէ , շատ մարդ կը ժողվուէր գլուխը , և խօսած խօսքերը մեծ ազդեցութիւն կ'ընէին ունկնդիրներուն . և այսպէս շատերը իր միջոցովը ճշմարտութեան գիտութեանը հասան ։

Եկեղեցականներն ու յատկապէս Կարդինալ Պիդոն սաստիկ զայրացան Վիշարդին աս ըրածին վրայ , և խորհեցան սպաննել զանիկայ ։ Նախ և առաջ ուզեցին որ գաղտուկ սպաննեն՝ ժողովուրդէն վախնալնուն համար ։ Այս առեններս՝ Վիշարդ Տունտի քաղաքը գնաց , ուր շատերը ժանտախտով բռնուած էին . տեղացիները շատ ուրախացան իր գալստեանը վրայ . և քարոզութիւն կ'ընէր երբեմն եկեղեցւոյն մէջ՝ և երբեմն եկեղեցւոյն արևելեան դրանը վրայէն , ցաւէն բռնուածները դրանը մէկ կողմը ու աղէկ եղողները մէկալ կողմը կայնեցընելով ։ Հոս Վիշարդ ժամանակ մը կեցաւ , ու հիւանդներուն տես կ'երթար , և անոնց հոգևոր ու մարմնաւոր պէտքերը կը հոգար ։ Ինքը քանի

Digitized by Google

որ սաստիկ զբաղած էր , կրօնաւորին մէկը՝ Աւէյ-դօն անունով՝ վրան առաւ զանիկայ սպաննելու գործը . և գիտնալով որ Միշարդ՝ քարոզը լմնցընելէն ետև մինչև որ եկեղեցին չպարպուէր՝ ամպիոնէն չէր իջներ , գնաց օր մը ամպիոնին սանդուղքին վարի ծայրը կայնեցաւ՝ զգեստին տակը դաշոյնակ մը բռնած : Միշարդ՝ որ շատ սրատես մէկն էր , սանդուղքէն վար իջած ատենը կրօնաւորին կերպարանքը տեսնելով՝ հասկըցաւ որ բան մը կայ , և երբոր ձեռքովը ալ զգեստին տակը բան մը բռնած տեսաւ նէ՝ կասկածի գնաց , յանկարծ յարձակեցաւ կրօնաւորին վրայ , խլեց ձեռքէն դաշոյնը՝ աղաղակելով , «Ո՜վ բարեկամ , ի՞նչ պիտի ընէիր ինծի» : Աս ձայնէն ներս վազեցին մէկ քանի հոգի՝ որ դրանը առջևը կեցեր էին , ու քիչ մնաց որ կրօնաւորը կտոր կտոր պիտի ընէին . բայց ազնուասիրտ Միշարդը թևերուն մէջ առաւ զանիկայ՝ ու աղաղակեց մէկալներուն , թէ «Ո՛վ որ աս մարդուն վնաս նէ՝ ինծի վնասած կ՚ըլլայ . ան ինծի վնաս չըրաւ», ըսաւ , «այլ օգուտ . քանզի յայտնեց ինծի որ առջևնիս վտանգ կայ . մենք ալ ատկէ ետև պէտք եղած զգուշութիւնը կ՚ընենք» :

Տուանտիէն ելաւ Միշարդ՝ Մոնդըրոզ գնաց : Հոն եղած ատենը՝ Կարտինալ Պիդոն՝ Միշարդին մէկ խիստ մտերիմ բարեկամին անունովը սուտ նամակ մը խրկեց , որով կը ծանուցանէր թէ յանկարծական հիւանդութիւնով մը բռնուած է , և կ՚ուզէ որ առանց ժամանակ անցընելու գայ՝ զինքը շուտով տեսնէ :

Թղթաբեր տղան ձի մըն ալ բերեր էր հետը , ու Միշարդ շուտ մը մէկ քանի բարեկամ առնելով հետը՝ ճամբայ ելաւ : Երբ դեռ շատ հեռացած չէին , Միշարդ կանգ առաւ , ու ձին ետ դարձուց . «Ես

չեմ երթար" , ըսաւ , "Աստուած չուզեր կոր որ երթամ . աղէկ գիտեմ որ Հոս մէկ սատանութիւն մը պիտի ըլլայ . գացէք սա տեղը , նայեցէք թէ ինչ կայ": Անան գացին , նայեցան որ վաթսուն զի-նուոր գիւղէն մղոն ու կէսի չափ Հեռաւոր տեղ մը՝ Կարդինալին Հրամանաւը կը սպասէին կոր Վի-շարդին , որ զանիկայ սպաննեն : Երբոր եկան Վի-շարդին պատմեցին՝ անանկ որոգայթ մը լարուած ըլլալը , անիկայ ըսաւ . "Գիտեմ որ ան արիւնա-Հեղ մարդուն ձեռօքը կեանքս պիտի վերջանայ , բայց այս կերպով պիտի չըլլայ եղեր" :

Անկէ ետև դնաց դէպ 'ի Էտիմպուրկ . քանզի Հոն կանչեցին զինքը որ Հռոմէականներուն Հետ Հրապարակաւ կրօնական վիճաբանութիւն ընէ : Ճամբուն վրայ Ինվէրկորի գիւղը իջևան ըրաւ . իր բարեկամներէն երկու Հոգի գիշերը լսեցին ա-սոր անկողինէն ելլելը , ու իրենք ալ կամաց կամաց ետևէն գացին ինչուան տանը բակը , և նայեցան որ մէկ ժամէն աւելի աղօթք ըրաւ մեծ ջերմեռան-դութեամբ : Հետևեալ առտուն այնքան աղօթք ընելուն պատճառը Հարցուցին ու շատ աղաչեցին որ ըսէ . վերջապէս ըսաւ . "Գիտեմ որ իմ վախ-ճանս մօտ է . վասն որոյ աս խնդրեցի իմ Տէրոջմէս , որ փորձութեանց սաստկութեան ժամանակը զիս պաշտպանէ՝ որպէս զի չըլլայ թէ վախ մը գայ վրաս":

Երբոր Վիշարդ Էտիմպուրկի մօտերը Հասաւ , արևմուտքի կողմէն իրեն գալու խօսք տուող բա-րեկամները չեկան . ուստի քաղաքին մօտը գըտ-նուող գիւղերուն մէջ քարոզելով պտըտեցաւ քիչ մը ատեն : Այս միջոցիս Թշնամիներուն ձեռքը ինկաւ . Էտիմպուրկէն Սուրբ Անդրէաս տարին զանիկայ , Հոն բանտը դրին Փետրվար ամսուն սկիզ-բէն ինչուան վերջը . որ աս միջոցիս իր դատը տես-



Digitized by Google

նելու համար ընելու պատրաստութիւններնին տե-
սան . իր պատճառաւը Կլասկովի Արքեպիսկոպոսն
ու Կարդինալ Պիդոն՝ որ իրարու թշնամի էին ,
հաշտուեցան :

1545 , փետրվար 1ին՝ Վիշարդը եկեղեցի բերին
դունդ մը զինուորով , և հոն երկրորդ վանահայրը
ազդու քարոզ մը տուաւ հերետիկոսութիւնը բնա-
ջինջ ընելուն հարկաւորութեանը վրայով : Քա-
րոզը լմըննալէն ետև՝ ամպիոնը հանեցին Վիշարդը ,
ու երկար ամբաստանութեան թուղթ մը կարդա-
ցին : Անատենը մարտիրոսը ծունկի վրայ եկաւ ,
ու աղօթքով ինքզինքը Աստուծոյ յանձնելէն ետև՝
ոտքի վրայ ելաւ , ու թոյլտուութիւն խնդրեց , որ իր
բռնած վարդապետութիւններուն ինչ ըլլալն ու
Սուրբ Գրոց ինչպէս համաձայն գալը ցուցընէ .
քանզի հայհոյալի վարդապետութիւններ կը հաս-
տատէ ըսելով՝ շատ զրպարտութիւններ ըրեր էին
վրան : Եպիսկոպոսները հրաման չտուին որ խօսի ,
այլ իրենք և իրենց նման չար ժողովուրդները նա-
խատական անուններ կու տային միշտ անմեղ մար-
դուն : Ասոր վրայ շուտով դատապարտութեան
վճիռը պիտի տային . սակայն Կարդինալին խնդիր
ըլլալով՝ հրաման ըրաւ որ ամբաստանութեան
թուղթը անգամ մըն ալ կարդացուի . կարդա-
ցուեցաւ . սակայն քանի որ Վիշարդ խօսքի կը
սկսէր նէ , մէկ երկու խօսք չըսած՝ լռել կը հրա-
մայէին : Աս առաջին ամբաստանութենէն յայտնի
կ'երևի՝ մնացածներն ալ ինչ ոգւով գրելնին :

«Դուն՝ ով սուտզրուց հերետիկոս , ուրացող ,
մատնիչ , գող , որ ժողովուրդը կը խաբես , որ
եկեղեցին կ'անարգես , և մեր տէր իշխանին խօսքը
ոտքի տակ կ'առնես : Որ երբ Տունտի գիւղը քա-
րոզութիւն ըրած ատենդ՝ մեր տէր իշխանը հրաման

Digitized by Google

ըրաւ քեզի որ ձայնդ կտրես , չհնազանդեցար . այլ քու կամակորութեանդ վրայ կեցար ։ Ես բանիս համար Պրէքի Եպիսկոպոսը նզովեց քեզ ու Սատանային մատնեց և պատուիրեց որ մէյ մ'ալ քարոզութիւն չընես , սակայն դուն քու բռնած ճամբէդ ետ չդարձար և յամառութեամբ քու կամքդ կատարեցիր" ։

Մէկ ուրիշ օրինակ մըն ալ գտնենք ։ Հռովմայ եկեղեցւոյն շատ վարդապետութիւնները յիշելէն ետև՝ մետասաներորդ յօդուածին մէջ կ'ըսէ . "Դուն՝ ով սուտըղրուց հերետիկոս , կ'ըսես թէ՝ Ուրբաթ օրը կիրակի օրուան պէս օրինաւոր է միս ուտել" ։ Վիշարդ պատասխան տուաւ աս կտորը կարդալնէն ետև . "Պօղոս առաքելոյն թուղթին մէջ կարդացի որ մաքուր եղողին՝ ամէն բան մաքուր է . ասոր հակառակ պիղծ եղողին ալ՝ ամէն բան պիղծ է ։ Հաւատարիմ՝ մաքուր ու սուրբ մարդը Աստուծոյ ստեղծուածները սուրբ խօսքով կը սրբացընէ . բայց ստեղծուածը չկրնար ընդունելի ընել մարդս Աստուծոյ ։ Պիղծ և անհաւատարիմ մարդը ստեղծուածներով չսրբանար . իսկ հաւատարիմ մարդուն ամէն բան սուրբ է՝ աղօթքով և Աստուծոյ խօսքովը" ։ Ասոր վրայ եպիսկոպոսն'երը և իրենց կողմնականները աղաղակեցին , "Ալ վկայի կարօտութիւն չմնաց . ահա՛ յայտնապէս հայհոյութիւն ըրաւ" ։

Կարդինալը հրաման ըրաւ որ կրակը պատրաստուի . և Վիշարդը կրկին բերդը խրկեց , որ ինչուան պէտք եղած պատրաստութիւնները ըլլալը՝ հոն մնայ ։ Երկու կրօնաւոր խրկեցին քովը որ խոստովանի . ան ալ պատասխանեց , "Ես չեմ խոստովանիր" ։

Բերդին կառավարիչը մէկ քանի բարեկամներ

Հետը առած՝ Վիշարդին քովն եկաւ և հարցուց անոր՝ թէ հետեւնին նախաճաշիկ ընել կ՚ուզէ՞ մի ։ Ուզեց ․ նախաճաշիկը պատրաստուեցաւ ․ նստան ուտելու ։ Այս միջոցին Վիշարդ երկար խօսեցաւ անոնց հետ՝ Տէրունական ընթրիքին և Քրիստոսի չարչարանացը վրայով , և յորդորեց զանոնք որ սիրով բարի գործքերու հետևէ ըլլան ։

Յետոյ երկու զինուոր եկան , և անոր չորս դին պարկերով վառօդ կախելէն ետև՝ թևերը ետին կապեցին , ու տարին ցիցին քովը՝ բերդին արևմտեան դրանը առջևը ու վանքին մօտ ։ Աս սպաննման տեղին վրայ նայող բերդին պատուհանները պատուական վարագոյրներով ու բարձոցներով զարդարեր շիտկեր էին ․ Կարդինալն ու ուրիշ եպիսկոպոսներ փառաւորապէս բազմեր էին հոն՝ մարտիրոսին քաշելու տանջանքներուն վրայ նայելու ․ մէկ կողմէն ալ թնդանօթները լեցուած պատրաստ՝ զինուորներն ալ լուցկիքը ձեռուընին վառած կայներ էին , որ եթէ ժողովուրդը զՎիշարդը ազատելու ըլլէ նէ՝ պարպելն ։ Երբոր զանիկայ դէպ 'ի փայտակոյտը կը բերէին , այն երկու կրօնաւորները ըսին ․ "Պարո՛ն Գէորգ , աղաչէ մեր Տիրամօրը որ քեզի համար բարեխօսութիւն ընէ իր Որդւոյն" ։ Անիկայ հեզութեամբ պատասխանեց ․ "Դադրեցէք , կ՚աղաչեմ ձեզի՝ ալ մի՛ փորձէք զիս" ։ Ու տարին զինքը փայտակոյտին քովը , ուր ծունկի վրայ գալով՝ իրեք հեղ ասանկ ըսաւ ․ "Ո՛վ Փրկիչ աշխարհի՝ ողորմէ՛ ինծի , ո՛վ երկնաւոր Հայր՝ հոգիս քու ձեռքդ կ՚աւանդեմ" ։ Ետքը դարձաւ յորդորեց ժողովուրդը՝ որ Աստուծոյ խօսքը սիրեն , և չմոռնան ան բաները , զորոնք Աստուծոյ շնորհօքը աշխատեցաւ սորվեցընելու անոնց ․ աս ալ ըսաւ՝ թէ "Իմ վարդապետու-

Digitized by Google

թիւնս մարդոցմէ հնարուած առասպել չէ. քանզի թէ որ սորվեցուցածս մարդոց վարդապետութիւն ըլլար նէ, մարդոցմէ պատիւ կը գտնէի. բայց Աստուծոյ խօսքին և իր շնորհքովը ինծի տրուած Աւետարանին համար՝ ահա՛ այսօր կը չարչարուիմ կոր. ո՛չ թէ տրտմելով, այլ ուրախ սրտով և համբերատար մտքով. ասոր համար խրկուեցայ ես՝ որ Քրիստոսի համար կրակով այրուիմ: "Այրեցէք՝ ու իմ դէմքիս վրայ բնաւ այլայլութիւն մը պիտի չտեսնէք. այս ահարկու կրակէն ես չեմ վախնար. և թէ որ Աստուծոյ խօսքին համար ձեր վրայ ալ հալածմունք գայ նէ, մի՛ վախնաք անոնցմէ՝ որ միայն մարմինը կրնան սպաննել, բայց ամենևին կարողութիւն չունին հոգին սպաննելու": Յետոյ՝ իր վրայ ամբաստանութիւն ընողներուն համար աղօթք ըրաւ: Զինուորը ներումն խնդրեց, ան ալ յօժար կամօք ներեց. անատենը բռընկցուցին փայտակոյտը: Երրորդին կառավարիչը մօտ եկաւ՝ ու ըսաւ որ կտրիճ կենայ, և իր մեղքերուն թողութիւն խնդրէ Աստուծմէ: Վիշարդ պատասխան տուաւ. "Աս կրակը մարմինս կը տանջէ, բայց հոգիս չկրնար թուլցընել": Նոքս պատմագիրը կ'ըսէ թէ՝ յետոյ Կարդինալին դարձաւ ու ըսաւ. "Աս բարձր տեղը նստող ու իմ տանջանքներովս զուարճացողը քանի մը օրէն ան նոյն պատուհանէն վար պիտի կախուի՝ հիմակուան վայելած փառքին չափ անարգութեամբ": Անատենը զինուորը քաշեց վիզը կապուած չուանը, ու խեղդուեցաւ վկան, և մէկ քանի վայրկեանէն բոլորովին այրեցաւ մոխիր դարձաւ:

Կարդինալը՝ այս յանդգնութեամբ գործած մեծ անգթութիւնովը՝ կը կարծէր որ ա. կատարելապէս յաղթական հանդիսացաւ հերետիկոսաց վրայ, և

Digitized by Google

քիչ առենէն բոլորովին բնաջինջ պիտի ըլլան ան երկրէն. սակայն այնպէս չեղաւ: Աս ըրած բաներնուն վրայ շատ մարդիկ սաստիկ զայրացան. և Աւետարանին վրայ անհոգ եղողներն անգամ մտածեցին՝ որ ասանկ խռովութեանց մէջ իրենց կեանքն ու ստացուածքներն ալ ապահով չկրնար մնալ: Ուստի Վիշարդին մահուանը վրայ շատ չանցած, քանի մը հոգի յանկարծ բերդը մտնելով Կարդինալին վրայ հասան, ու զարկին մեռցուցին, և անոր մարմինը ժողովրդոց ցուցընելու համար՝ ան նոյն պատուհանէն վար կախեցին, ուր որ նստեր էր Վիշարդին այրուիլը տեսնելու համար:

# ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆ

## ՄԵԾԻՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԷՋ

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## 1547—1558

### ԳԼՈՒԽ Ա.

Եդուարդ Զ.ին բնաւորութիւնը — Իր մահը, ու մահուան ժամանակին ըրած աղօթքը — Բարեկարգողները կը բռնուին — Լէտի Ճէյն Կրէյը թագուհի կ'անուանի — Մարիամ խոստմունք կ'ընէ բրօթէսդանդներուն — Իր մտքին մէջ կ'որոշէ պապականութիւնը նորէն հաստատել — Գրանմէր՝ և Լէտի Ճէյն Կրէյը դատաստանի կը կանչուին — Լէտի Ճէյն Կրէյին գլխատուիլը — Եղիսաբեթ իշխանուհւոյն վտանգը — Մարիամ թագուհւոյն հրամանը հերետիկոսութեան դէմ, և տղոց դաստիարակութեան վրայ — Բրօթէսդանդ եկեղեցականք կը մերժուին — Հռովմէական քահանայից վարքը — Անոնց հայհոյալից հրատարակութիւնները — Հռովմէական հանդէսներ ու արարողութիւններ:

Հենրիկոս Ը. 1547, Յունվարի 28ին՝ վախճանեցաւ. իր միակ որդին՝ իշխան Եդուարդը (որ Եդուարդ Զ. կը յիշուի,) ինը տարեկան ըլլալով՝ անոր տեղը անցաւ: Ասիկայ ճշմարիտ Աւետարանական բրօթէսդանդ թագաւոր մըն էր:

Digitized by Google

1552ին՝ շատ բաներ եղաւ աւելորդապաշտ սրաբողութիւնները եւս առաւել փճացընելու համար ։

Եդուարդ մէկ քանի ամիս հիւանդ պառկելէն ետեւ՝ 1553 , Յուլիսի 26ին մեռաւ ։

Մեռնելէն մէկ երկու ժամ առաջ՝ կարծելով թէ քովը մարդ չկայ՝ սա աղօթքն է ըրեր ։

"Ո՛վ Տէր՝ ազատէ զիս այս ցաւալի ու թշուառ կեանքէս , և քու ընտրեալներուդ մէջն ա՛ռ ․ բայց ո՛չ թէ իմ կամքս , այլ քու՛կդ թող ըլլայ ։ Տէր՝ հոգիս քու ձեռքդ կ՚աւանդեմ ։ Ո՛վ Տէր՝ դուն գիտես որ եթէ քեզի հետ ըլլամ նէ՝ ո՛րչափ երջանիկ կ՚ըլլամ ․ սակայն քու ընտրեալներուդ համար կեանք և առողջութիւն տուր ինծի՝ որ ճշմարտապէս քեզի ծառայեմ ։ Ո՛վ Տէր իմ և Աստուած իմ՝ օրհնէ քու ժողովուրդդ , և փրկէ քու ժառանգութիւնդ ։ Ո՛վ Տէր Աստուած՝ փրկէ Անգղիոյ մէջ ունեցած ընտրեալ ժողովուրդդ ։ Ո՛վ Տէր իմ և Աստուած իմ՝ աս թագաւորութիւնը պապականութենէ պաշտպանէ ․ և քու ճշմարիտ հաւատքդ թող տիրէ , որ ես և իմ ժողովուրդս քու սուրբ անուանդ գոհութիւն մատուցանենք՝ քու Որդւոյդ Յիսուսի Քրիստոսի համար"։

Աղօթքը լմնցընելէն ետեւ՝ դարձաւ նայեցաւ որ քովը կայնողներ կան նէ , "Ի՞նչ էք եղեր" , ըսաւ , "կարծեցի թէ դուրս էք ելեր" ։ Վերջին խօսքերը ասոնք էին ․ "Կը մարիմ կոր ․ Տէր՝ ողորմէ՛ ինծի , և ա՛ռ հոգիս"։

Այսպէս վախճանեցաւ Եդուարդ Զ․ ուսումնականութեան՝ հանճարի՝ և մանաւանդ աստուածպաշտութեան կողմանէ երեւելի թագաւորը ։

Անոր տեղն անցաւ իր մեծ քոյրը՝ Մարիամ իշխանուհին , յաջորդութեան կարգը անանկ պահանջելուն , և հայրերնին՝ Հենրիկոս Ըն ալ կտա-

կով այնպէս պատուիրելուն համար ։ Նա թագու-
հին կոյր նախանձաւոր հռովմէական մըն էր ։
Եդուարդէն ետև աթոռին ժառանգը ինք ըլլալը
առաջուց յայտնի ըլլալով՝ շատ կասկածներ մտաւ
բոլոր ճշմարտութեան յարողներուն սրտին մէջ ։
Մանաւորապէս Եդուարդ թագաւորը շատ վախ-
ցաւ , խորհելով որ՝ եթէ աս բանը ըլլայ նէ ,
ճշմարտութեան համար իր ըրած բոլոր ջանքերը
պարապը պիտի ելլէ ։ Եւ ուստի երբոր Նորթըմ-
պըրլանտ դուքսը «Կտա՛կ ըրէ , ու թագաւորու-
թիւնդ Հենրիկոս Է՞ին թոռանն աղջկանը՝ Լէտի
Ճէյն Կրէյին թո՛ղ» , ըսաւ նէ , շուտ մը համո-
զուեցաւ ։

Բայց Մարիամ իր թշնամեացը վրայ դիւրաւ
յաղթութիւն ստացաւ՝ Բրօթէսդանդներուն ձե-
ռօքը ։ Բարեկարգութեան պաշտպանները հաւա-
նութիւն չտուին օրինաւոր ժառանգին իր ժառան-
գութենէն զրկուելուն ։ Եղան շատերնին միատեղ
Մարիամ իշխանուհւոյն գացին , հարցուցին թէ
բոլոր կրօնից վերաբերեալ բաները Եդուարդ թա-
գաւորին օրովը ինտո՞ր էր նէ՝ անանկ պիտի թողո՞ւ
մի ։ Իշխանուհին ամենահաստատ խոստմունքներ
տալով հաւատացուց անոնց՝ թէ ամենևին փոփո-
խութիւն մը ընելու չէ . այլ մինակ սա կ՚ուզէ՝
որ զինքն ալ թողուն որ իր կրօնքը բռնէ ։ Ասոր
վրայ շատ ազնուական մարդիկ ոտք ելան , և ըրին
չըրին՝ վերջապէս Մարիամին ձեռքն անցուցին թա-
գաւորութիւնը . և Օգոստոսի 3ին՝ յաղթութեամբ
Լոնտրա մտաւ Մարիամ՝ թագուհի եղած ։

Սակայն շատ չանցած՝ ըրած խոստմունքներէն
դարձաւ , առանց ամենևին պատճառ մը տալու
խօսքին վրայ չկենալուն . որ ասով յայտնապէս
սա խոստովանած եղաւ , թէ հռովմէականները

հերետիկոսներու հետ ըրած ուխտերնին աւրեն նէ, հոգ չէ։ Այսպէս Մարիամ հաստատեց մտքին մէջն որ՝ Պապին իշխանութիւնն ու Հռովմէական կրօնքին պատիւը տեղը բերէ։ Նախ և առաջ Բրօթեստանտ եպիսկոպոսները ելան, ու Հռովմէական եպիսկոպոսները նորէն իրենց առջի տեղերը բռնեցին։

Նոյեմբերի 13ին՝ Կրամեր արքեպիսկոպոսը և Լէտի Ճէյն Կրէյը ու իր այրը դատաստանի քաշեցին Կիլտհալ ըսուած տունը. և Մարիամ թագուհւոյն դէմ դաւաճանութիւն գործող համարելով՝ անոնց դատապարտութեան վճիռը տուին։

1554ին Աւագ շաբթուան մէջ՝ առաւել ևս աղէտալի դիպուած մը պատահեցաւ։ Թէպէտև Լէտի Ճէյն Կրէյին այնչափ ակամայ կամօք թագուհի անունը վրան առնելը, ու ետքը մեծ ուրախութեամբ արքունի թագը ետ տալը շատ յայտնի էր ամենուն, ու թէպէտև անանկ ազնիւ բնութեան տէր էր՝ որ մարդուս գութը չէր ներեր աս ազնուուհւոյն ձեռք դպցընելու՝ մանաւանդ անանկ դեռափթիթ հասակի մէջ. սակայն արիւնահեղ Մարիամ՝ որ միշտ կ՚ատէր զանիկայ՝ մանաւանդ անոր կրօնքին համար, թէ և առաջ չկրցաւ համարձակիլ դատապարտութեան վճիռը 'ի գործ դնել տալու, բայց ետքը յարմար պատեհութիւն մը գտնելով՝ զանիկայ սպաննելու հրաման ըրաւ։

Աստի Լէտի Ճէյն՝ որչափ որ իր ազգականացը փառասիրութեանը զոհ եղաւ նէ, իր բռնած կրօնքն ալ մեծ պատճառ մըն էր իւր սպաննուելուն։ Փետրվարի 12ին՝ իր այրը Լորտ Կիլտֆորտ Տըտլին՝ որ դեռ տասնուինը տարեկան պատանի էր, գլխատուեցաւ Դաուըր Հիլ ըսուած բլուրին վրայ. մէկ ժամէն ետքն ալ Լէտի Ճէյնը նոյնպէս Թուրէ անցուցին այն մօտ տեղուանքը եղող

Digitized by Google

բերդի մը մէջ ։

Լէտի Ճէյնին համար հղփացած այս ձախորդ դիպուածին վրայ ամէն մարդ լացաւ . մանաւանդ այս պատճառաւ որ բարեպաշտութեան և խելացութեան կողմանէ խիստ երևելի մէկն էր ։

Պիտելու արժանի բան է որ՝ իր մահուանը գործին մէջ դատաւորներուն քանի քանիները տարաժամ մահուամբ մեռան . որոնց մէկն ալ Մօրկան դատաւորը՝ Լէտի Ճէյնին մահուան վճիռը տուողն էր ։ Լէտի Ճէյնին մահէն մէկ քանի օր ետքը՝ մոլեգին խելագար մը եղաւ աս մարդը՝ ու այն վիճակին մէջ մեռաւ , անդադար աղաղակելով՝ որ Լէտի Ճէյնը աչքին առջևէն անդին տանին ։

Երբ Նախանձաւոր Մարիամ Թագուհին՝ կասկած ըրաւ թէ՝ իր քոյրը Եղիսաբեթ իշխանուհին (որ ետքէն Թագուհի եղաւ ,) համաձայնութիւն ունէր իր իշխանութեանը դէմ ընդդիմներուն , և կամ օր կ՚ըլլայ որ իր թշնամիները պանիկայ գործիք կ՚ընեն՝ իրեն վնաս մը հասցընելու ։ Մեծ Եպարքոս Կարտինէլն ալ շատ կ՚ուզէր որ աս իշխանուհին սպաննուի . քանզի՝ երբոր Մարիամ մեռնէր , ու Եղիսաբեթ աթոռը նստելու ըլլար նէ , գիտէր գլխուն գալիքը ։ Ուստի պէսպէս հնարքներ բանեցուցին Եղիսաբեթին դէմ պանիկայ յանցաւոր հանելու համար . և Կարտինէլին՝ ու ժողովի անդամներէն տասնուինը հոգին առջև քննութիւն ըլլալէն ետև՝ բերդը խրկեցին բանտարկուելու , ու պանիկայ մատնիչներու սանդուխէն ներս մտցուցին՝ որ աս բանը ան օրերը մահուան կարապետ էր . և Եղիսաբեթ ինքն ալ անանկ կարծեց թէ պիտի մեռցընեն զինքը ։ Սակայն այս փորձութիւններուն մէջ չտկարացաւ . և կ՚երևէր որ իր յոյսը Աստուծոյ օգնութեանը վրայ էր ։ Բայց Քրիստոսի վրայ հաստատեալ

Digitized by Google

յոյս ունենալը կամ չունենալը չենք գիտեր աղէկ մը ։ Թէպէտ և Ռուսաստանին վարդապետութիւններուն յարեալ էր , սակայն և այնպէս դրսուանց Հռովմայ եկեղեցւոյն արարողութիւնները կը կատարէր , ու պատարագի կ'երթար ։ Բայց այս բռնած ճամբովը անհնար բան էր՝ որ Կարտինէրը իր դիտաւորութիւնները 'ի գործ դնելէն ետ կենալու համոզուէր ․ անիկայ իր գործը յառաջ տարաւ մինչև այն աստիճան , որ բերդին կառավարիչին հրամանագիր խրկեց՝ ժողովին անդամներէն մէկ քանիներուն ստորագրութեամբը՝ որ Եղիսաբեթը սպաննէ ։ Բերդին կառավարիչը չհամարձակեցաւ՝ աթոռին ժառանգ ըլլալու Եղիսաբեթ իշխանուհւոյն դէմ եղած այս հրամանը անմիջապէս կատարելու , որ դեռ դատաստանը տեսնուած կամ դատապարտուած չէր ։ Ուստի ելաւ գնաց Թագուհիին ․ ան ալ՝ "Այս աս բանը չեմ գիտեր , աղէկ ըրիր որ ան հրամանը չկատարեցիր" , ըսաւ բերդին կառավարիչին ․ բայց որովհետև Կարտինէրին սաստիկ բան մը ընելուն ․ բնաւ տհաճութիւն մը չցուցուց , ուստի ասկէ յայտնի կ'երևի որ՝ այս բանը չըլլալուն փափաք մը ցուցընելը սուտ էր ։ Սակայն Եղիսաբեթը իր մէկ հատիկ քոյրը ըլլալուն համար՝ չուզեց որ անոր սպաննման վճիռը ինքը տայ ։

Մայիս ամսուան մէջ՝ Եղիսաբեթը Ուստդօֆ խրկեցին անգութ վերակացուի մը ձեռօք , որուն հետ մէկտեղ ազնուական մը կար , որ ան չըլլար նէ՝ իշխանուհւոյն չքաշածը չէր մնար այն գազանաբարոյ մարդուն ձեռքէն ։ Հոն քանի մը ամիս անցուց մեծ նեղութիւնով ․ ամէն օր կը սպասէր կամ հրապարակաւ գլխատուելու , և կամ գաղտնի կերպով սպաննուելու ։ Օր մը՝ երբոր մէկ կաթ ծախող կնկան մը ուրախ սրտով երգելը լսեց ,

Digitized by Google

«Աւելի աղէկ է կաթ ծախող ըլլալ, քան թէ իշխանուհի», ըսաւ, «Երանի՜ թէ ան իմ տեղս անցնէր, ու ես ալ անոր տեղը»։ Ասիկայ շատ ազնու օրինակ մըն է բարձր աստիճանի մէջ եղող անձանց ինչ նեղութիւններու ենթակայ ըլլալուն ։

Մարտի 4ին՝ Թագուհին հրովարտակ հանեց եպիսկոպոսներուն, որով Եդուարդ Թագաւորին օրովը եղած անկարգութիւնները ըստ իւր կարծեացը ցուցընելէն ետև, կը պատուիրէր եպիսկոպոսներուն՝ որ իր հօրը օրովը եղած եկեղեցական կանոնները ու օրէնքները զգուշութեամբ կատարեն. ասկէց զատ՝ կրօնական բաներու մէջ արքունի իշխանութեան հնազանդելու համար ըրած երդումներնէն արձակեց եկեղեցականները, և հրամայեց որ՝ հերետիկոսութեանց ու եղեռնագործութեանց առջևը առնեն՝ մանաւանդ եկեղեցականաց մէջ եղածներուն. և ան հերետիկոսութիւնները հանողները ու անանկ յանցանքներ գործողները ըստ արժանւոյն խրատեն՝ պատժեն ։ Նաև աս պատուէրն ալ կար՝ որ հերետիկոսական գրքերը դատապարտեն, ամուսնացեալ եկեղեցականներուն բոլորն ալ պաշտօնէ հանեն, ու կնիկներնէն զատեն, և այն յանցանքին արժանաւոր պատիժը տան. և Հենրիկոս Թագաւորին օրովը ինչ արարողութիւններ ու տօներ կային նէ, անոնց ամէնն ալ նորէն պահուին ։ Եդուարդին թագաւորութեանը ժամանակը կարգ առնող եկեղեցականներէն՝ որն որ իր պաշտօնին մէջ մնալու արժան տեսնեն նէ, զանիկայ վերստին ձեռնադրեն ։ Վարժապետներն ալ աղէկ քննեն, և թէ որ մէկուն ծուռ վարդապետութիւններ ընդունած ըլլալուն վրայ կասկածի երթալու ըլլան նէ՝ զանիկայ հանեն, ու անոր տեղը Հռովմէական վարժապետ մը դնեն. որպէս զի

տղաքը կարող ըլլան պատարագի ժամանակ իրենց վերաբերեալ պատասխանը տալու քահանաներուն ։ Հռովմէականաց բռնած ճամբան միշտ աս է ։ Ան երկիրներն որ իրենց մոլորութիւններուն դէմ հակառակութիւն մը չկայ՝ կամ եղածը ոչինչ բան մըն է նէ , ան տեղուանքի տղաքները խորին տգիտութեան մէջ կը թողուն . սակայն այն տեղերն որ ճշմարտութեան լոյսը կը հասնի , և տգիտութեան խաւարը փարատելու կ'ըլլայ նէ , շուտով իրար կ'անցնին ու կը սկսին տղոցը միտքը աւելորդապաշտութիւններով նախապաշարել . և աս ընելով՝ խելքերնին կը կարծեն թէ՝ ալ Աւետարանին լոյսը անոնց մտքերուն մէջը մտնելու տեղ չմնար ։

Թագուհին՝ աս ըրած պատուէրներուն սաստկութիւնը ցուցընելու մտօք՝ ինք իր վճռովը հրամայեր էր հրովարտակին մէջ՝ որ այս ինչ անունով չորս եպիսկոպոս պաշտօնէ հանեն՝ ամուսնացած ըլլալնուն համար . իրեք ուրիշ ալ . վկայականներնուն մէջ այսպէս գրուած ըլլալուն համար , թէ "Որչափ ատեն որ բարի վարքերնուն վրայ մնան նէ , այնչափ ժամանակ եպիսկոպոսութիւն պիտի ընեն" ։ Հրովարտակին մէջ աս եօթը եպիսկոպոսներուն համար ըսեր էր թէ՝ "Իմացայ որ ասոնք մոլար վարդապետութիւններ կը սորվեցնեն , և Աստուծոյ օրէնքներուն ու ընդհանրական եկեղեցւոյն սովորութեանցը հակառակ բաներ կ'ընեն" ։ Ասպէս եօթը եպիսկոպոս անմիջապէս իշխանութենէ ելան՝ Բարեկարգութեան յարելնուն համար . և աս բանը միայն թագուհւոյն կամքովը և իշխանութեանը եղաւ . և ասանկով իր հօրը ու եղբօրը եկեղեցւոյ վրայ բանեցուցած իշխանութենէն աւելի իշխանութիւն բանեցուցած եղաւ ինքը , որ աս բանիս եկեղեցւոյ դէմ ըլլալը ինք կը բերանովը

Digitized by Google

խոստովանած էր ։ Գրամէրը՝ Միտլէն և մէկ քանի ուրիշ եպիսկոպոսներ ալ պաշտօնէ հանեցին՝ զանազան պատճառանքներ գտնելով վրանին ․ երկու ուրիշ եպիսկոպոս ալ մեռան ․ և ասոնց ամենուն տեղը նոր մտնող Հռովմէադաւան եպիսկոպոսները տասնուվեց հոգի էին , որոնք ան նոյն տարին միայն եկեղեցւոյ մէջ , և զանիկայ կրկին իր առջի վիճակին դարձուցին ։

Աս նոր նստող առաջնորդները առանց ժամանակ անցընելու՝ Թագուհւոյն պատուէրները սկսան կատարել ։ Ամէն եկեղեցւոյ մէջ ըստ նախնի սովորութեան պատարագ կ՚ըլլար , ու այլ և այլ հին սնապաշտական թափօրներն ու արարողութիւնները կը կատարուէին ։ Աս հրովարտակին Լոնտրայի մէջ տարածուած օրինակներուն հետ յաւելուած ազգարարութիւն մ՚ալ կար Պօններ եպիսկոպոսէն , որով իր Թեմին մէջ գտնուող տասուերկու տարուընէ վեր եղողներուն ամենուն ալ պատուէր կու տար՝ որ քահանաներուն երթան խոստովանին , և ըստ սովորութեան Հռովմէականաց՝ հաղորդ առնեն յառաջիկայ Զատկին ։ Քաղաքապետը պատուիրեց Լոնտրայի խորհրդականներուն ամենուն ալ՝ որ պահապաններուն ապսպրեն որ ամէն տուն երթան , պատուիրեն տանը մեծերուն՝ թէ հարուստներուն և թէ աղքատներուն՝ որ թէ իրենք և թէ կնիկնին՝ թէ իրենց զաւկըները և թէ սպասաւորները պարտական են ան նոր հաստատուած կրօնական պատուէրները ամէն կերպով պահելու ․ և որու համար որ ան պատուէրներուն դէմ յանցաւոր գըտնուին ըսեն՝ նէ , շուտով գան իմացընեն ։

Բրօթէսդանդ եկեղեցական՝ ալ չմնաց ․ քանզի Թագուհին աթոռը նստածին պէս , անոնց մէջ գըտնուող երևելի քարոզիչները լռեցուցին ․ ամենու-

նացած քահանաներուն դէմ ելած հալածանքներուն համար անոնք ալ քահանայութենէ ելան ։ Յետոյ շատը ձգեցին ուրիշ երկիր փախան , շատն ալ բանտարկուեցան ։ Եկեղեցական պատմագրին մէկուն հաշուին նայելով՝ անատենը տասնուվեց հազար եկեղեցական կար Անգղիոյ մէջ , և անոնց տասուերկու հազարի չափը պաշտօնէ ինկան , ու առանց մէկ ստակի՝ կնիկներովնին ու զաւկըներովնին յետին նեղութեան մէջ ինկած մնացին , Հենրիկոսին օրովը՝ պաշտօնէն զրկուող կրօնաւորներուն տրուած ոչինչ թոշակն անգամ ձեռուընին անցնելու հնարքը չըլլալով ։ Ասկէ 'ի զատ՝ անոնց դէմ սաստիկ հրաման եղաւ որ իրենց կնիկներէն զատուին։

Ըս իրենց ըրած անիրաւութիւնները ծածկելու համար՝ եկեղեցականաց ամուսնանալ արժան չըլլալուն վրայ խել մը գրքեր հանեցին . որ աս բանիս օրինաւոր ըլլալը ա՛յնքան յայտնի ցուցուած է Սուրբ Գրոց մէջ , որ ալ ասոր վրայ երկար բարակ վէճի մտնել հարկ չէ հոս ։ Ըս աղէտալի վէճակին մէջ ինկողներուն մէկ քանին աս բանիս դէմ գրեցին , ու ցուցուցին որ ան Հռովմէական քահանայից ծախած անարատութիւնը ուրիշ բան չէ՝ բայց միայն իրենց ըրած բազմատեսակ ապօրինաւոր գործքերը ու անառակութիւնները ծածկելու պատրուակ մը ։ Հռովմէական եկեղեցականաց երևելիներէն շատերուն ունեցած զաւկըները աս բանիս ստուգութիւնը կը հաստատէին ։ Վօնները եպիսկոպոսը՝ Սավէյճ անուն Էյսէտըրշիրի քահանայի մը պոռնկորդին կը սեպուէր առհասարակ . և Վօններ՝ ինքն ալ տասնեկ զաւակներու հայր էր ։ Նուտի՝ Սթրայփ պատմագրին ըսածին պէս՝ աս ատեններս եկեղեցին աղէկ մը լեցուած էր տգէտ ու անառակ քահանաներով , թեպէտ և չամուսնացած ։

Անոնք մէյմէկ գեղ կը խրկուէին . կ'երթային ինչ կ'ընէին՝ հարցընես նէ . քաներնին գործերնին աս էր . եկեղեցւոյ պաշտօնները կատարել լմըռտելով՝ անանկ լեզուով մը՝ որուն առհասարակ ոչ իրենք և ոչ ժողովուրդը տեղեկութիւն ունէին . ժողովուրդոց հետ կռիւ ընել , իւղագինը , օրհնած ջուրին սակը , հաւկիթներ , իրենց երեքամեայ իրաւունքը , մեռելոց քաւարանէն ազատուելուն համար մատուցուած պատարագին սակը պահանջելով , ևն : Անոնք՝ որ բարձր աստիճանի եկեղեցականներ էին , մեծ պատուոյ և փառաց մէջ էին . իսկ ստորին կարգի եղողները շատ անարգ մարդիկ էին . քանզի այնչափ Բրօթէսդանդ քահանաներ իրենց եկեղեցիէն հանուած էին , որ եթէ կրթուած ու խոհեմ կրօնաւորները ընտրելու ըլլային նէ , շատ պարապ տեղեր պիտի մնար . անոր համար՝ առանց քննելու անոնց որպիսութիւնը , ամէն մէկը մէյմէկ տեղ կը խրկէին : Անոնցմէ շատերը Սուրբ Գիրք կարդալու և Աւետարան քարոզելու կողմանէ բոլորովին անհոգ էին . հապա խելունին կու տային իրենց պաշտպանին տանը պարտէզը շիտկելու , անոր հաւերը ու թռչունները նայելու , ու եկամուտներնին հաշուելու . սակայն և այնպէս՝ Աւետարանականները մատնելու , և զանոնք կերպ կերպ նեղութիւններու մէջ ձգելու ջանքէն ետ չէին կենար : Իսկ այն ստորին կարգի կրօնաւորները՝ որ յիշեցինք , թէպէտ և շատ ծուլաստ մարդիկ էին , բայց եպիսկոպոսները միշտ կը բարձրացընէին զանոնք : Եկեղեցական ժողովի մը մէջ՝ Պօննէր եպիսկոպոսը բոլոր մարդոցմէ և հրեշտակներէն ալ վեր կը դասէր քահանաները : Ըրած խօսքերուն մէկ քանիները ասոնք են . կ'ըսէր թէ , «Քահանաները բոլոր մարդոցմէ երկրպագութիւն

ընդունելու արժանի են , և անոնք Մարիամ Կոյսին նման են" . աս բանձներուն ճշմարտապէս տեանել ըլլայն ալ՝ աս կերպով կը հաստատէր . "Արբագործութեան ժամանակ՝ քահանան հինգ բառով նշխարը Քրիստոսի մարմնոյն կը դարձընէ", կ'ըսէր , "և Կոյս Մարիամին զանիկայ իր թևերուն վրայ առնելուն նման՝ քահանան ալ կը վերցընէ Քրիստոսի մարմինը , կը պտըտցընէ , և ձեռուըներովը կը շօշափէ . ուստի ասկէ յայտնի է որ քահանայք հրեշտակներէն գերապատիւ են . քանզի հրեշտակներէն մէկուն կարողութիւն տրուած չէ Քրիստոսի մարմինը շինելու . ըսել է որ քահանաներուն պիտոյ յետինը՝ ամենաբարձր հրեշտակին երկինքին մէջ ընելու կարող չեղած բանը կընայ ընել աշխարհիս մէջ . վասն որոյ քահանայք մեծ պատուոյ արժանի են աշխարհիս բոլոր թագաւորներուն՝ իշխաններուն և մեծերուն առջին . քանզի քահանան թագաւորէ ալ 'մեծ' և հրեշտակէ ալ երանելի է՝ իր Արարիչը ստեղծելովը", ԾԶ , ԾԷ :

Երևելի եկեղեցական հանդէսներ ըլլալու կողմանէ՝ Մայիս ամիսը առաջին էր . և աս ամսուն տասնին՝ հանգուցեալ Թագաւորաց հոգւոցը համար պաշտօն կը կատարուէր Վեսդմինիսդրի և Սուրբ Պօղոսի եկեղեցւոյն մէջ : Աս տօնիս՝ մեծերը շատ առատ պատարագուց կու տային Հենրիկոս Էին և իր Թագուհւոյն , Հենրիկոս Ըին , և Արագոնացի Կատարինէ Թագուհւոյն , ու նաև Եդուարդ Զին հոգւոցը համար :

Մայիսի 23ին՝ Լոնտրայի մէկ հրապարակին մէջ կնիկ մը նստեցուցին՝ գլուխը տախտակի մը մէջ անցուցած . ու մէկ քանի օրէն ետքը՝ երկու կնիկ ու իրեք էրիկ մարդ ալ նոյն պատիժը կրեցին : Ասոնց ասանկ պատժուելուն պատճառը հաւանա-

կանխաբար ալ ըսուած էր, որ Մարիամ Թագու-հւոյն Սպանիոյ Թագաւորին հետ ամուսնանալուն դէմ՝ հասարակութեան մէջ եղած տրտունջը դադ-րեցընելու. քանզի այս բանիս վրայ մեծ վախ ինկաւ ժողովրդոց մէջ, կասկածելով՝ որ չըլլայ թէ ան կոյր նախանձաւոր Թագաւորին իր հպատակներուն բռած անգթութիւնները՝ Անգղիոյ մէջ ալ մտնեն, և սրբաքննութեան ատեան հաստատուի :

## ԳԼՈՒԽ Ը :

*Փիլիպպոս Թագաւորը Անգղիա կը հասնի — Պոնները իր Թեմին քաղաքներուն այցելութիւն ընելու կ'ելլէ — Խորհրդարանը Պապին կը հնազանդի — Հռովմէական եկեղեցին նորէն կատարեալ իշխանութիւն կը ստանայ Անգղիոյ վրայ :*

1554, Յուլիսի 20ին՝ Փիլիպպոս Թագաւորը Անգղիա հասաւ, ու մէկ քանի օրէն ետքը ամուսնացաւ Մարիամին հետ Վինչէստր քաղաքը :

Փիլիպպոս նայեցաւ որ ազգը շատ տհաճութիւն կը ցուցընէ կոր այս բանիս դէմ՝ նէ, մտածեց որ ժողովրդոց աչքը մտնելու համար մէկ քանի բաներ ընէ : Աս նպատակաւ Եղիսաբեթ իշխանուհին, և մէկ քանի ուրիշ երևելի բանտարկեալներ արձըկեց. անկէ ետև՝ իր այս կեղծաւորեալ մարդասիրութիւնը չկտրեց Եղիսաբեթէն, այլ միշտ կը պաշտպանէր զանիկայ իր թշնամիներէն. բայց աս բանը ընելուն բուն նպատակը սա էր. կը խորհէր որ Մարիամ զաւակ պիտի չկրնայ ունենալ. եթէ մեռնի նէ, ալ անկէ ետև Անգղիոյ վրայ իշխանութիւն պիտի չունենայ. վասն որոյ Եղիսաբեթին հիմա ասանկ բարեկամութիւն կը ցուցընէր, որ քոյրը մեռնելէն

Digitized by Google

եւս զանիկայ առնու իրեն կին , ու Անգղիոյ վրայ ունեցած տէրութենէն չզրկուի ։ Ինչուան այսչափին հասաւ Սպանիոյ ինքնակալէն Անգղիացւոց ցուցուցած քաղաքավարութիւնը , ու հոս կանկ առաւ ․ բողոքեղանդ եկեղեցական մ՚ալ ազատելու ձեռքը վրայ չգնաց ։

Աս ամառ Հռովմէական եպիսկոպոսները իրենց թեմերը այցելութեան գացին՝ որ տեսնեն թէ Թագուհւոյն հրովարտակով պատուիրած բաները կը պահուին կոր մի ։ Արժան է հոս Պօննէրին աս միջոցիս ըրածներուն վրայով քիչ մը խօսիլ ․ բայց առաջ պէտք է Սրբոյն Պօղոսի մայր եկեղեցին՝ խաչ մը տնկելու համար կատարուած արարողութեան ինչ ըլլալը հասկցընել ։ Խաչափայտը , որ էր խոշոր փայտէ խաչ մը՝ Քրիստոս վրան խաչը ելած , երկու քովն ալ մէյմէկ արձան , մէկը Մարիամ՝ Քրիստոսի մայրը , մէկալն ալ Յովհաննէս առաքեալը , կը բերէին եկեղեցւոյն յատակին վրայ կ՚երկընցընէին ։ Յետոյ՝ եպիսկոպոսն ու իր կրօնաւորները զգեստաւորեալ կու գային բոլորտիքը կը շարուէին ․ ու խել մը բաներ կարդալէն ու երգելէն ետեւ՝ սուրբ իւղով կ՚օծէին ․ ետքը մէկիկ մէկիկ սողալով կը մօտենային , և մեծ ջերմեռանդութեամբ կը համբուրէին ան արձաններն ու խաչը ։ Աս արարողութիւնները լմըննալէն ետեւ՝ խաչափայտը իր որոշուած տեղը կը կանգնեցընէին ․ աս միջոցին դպիրներն ալ բարձր ձայնով օրհնութեան երգը կ՚երգէին , և 'ի նշան ցնծութեան ո՛րչափ զանգակ կար նէ , կը հնչեցընէին ։

Պօննէր եպիսկոպոսը այցելութեան ելաւ՝ Սեպտեմբերի 6ին ։ Իր թեմին մէջ քիչ մը տեղ պտըտելէն ետեւ՝ Ֆուլհամ հասաւ ․ ու նայեցաւ որ ան եկեղեցին ո՛չ խաչափայտ մը կանգնեցուցած է ,

ոչ հաղորդութեան նշխար կայ եկեղեցւոյ մէջ կախուած , և ոչ ըստ սովորութեան զանգակ չալելով Եպիսկոպոսին գալուստը բարեւել կայ : Ասոր վրայ սաստիկ զայրացած՝ սկսաւ եկեղեցւոյն մէջ փոխանորդին վրայ թափել իր բոլոր բարկութիւնը . ու անէծք ու հայհոյանք չմնաց՝ որ չընէր ողորմելի կրօնաւորին : «Տէր իմ՝ ըսաւ փոխանորդը , շատ շուտով եկար , ամենեքին յոյս չունէինք ասանկ յանկարծ գալուդ , հիմա ինչ որ կ'ուզես նէ՝ շուտով ամենն ալ կ'ընենք . հրամայէ մեր տունը , հոն սեղան կը պատրաստուի կոր , հաց ուտենք» . այսպէս փոխանորդը խել մը խօսքերով ինքզինքը արդարացընելու ու Եպիսկոպոսին բարկութիւնը իջեցընելու աշխատեցաւ . սակայն անիկայ այնպէս կատղեր էր , որ ամենեքին ականջ չէր դներ անոր խօսքերուն . հապա՝ «Կորիր քովէս՝ ա'նիծեալ և անզգամ հերետիկոս», ըսելով , ձեռքը վերցուց փոխանորդին ուժով ապտակ մը զարնելու , սակայն քովը Մեր Թովմաս Խօսէկիւնը կայնած ըլլալով՝ դիպուածով անոր ականջին եկաւ ապտակը : Այսպէս հեծաւ իր ձին՝ ու առաւ քաշեց Սէյր քաղաքը՝ ժողովուրդը մեծ զարմանքի մէջ թողուցած : Այս այցելութեան միջոցին՝ Պօննէրին շատ ըրածներին ալ իր գրութիւններէն յայտնի է , որոնց մէջ շատ սաստիկ հարցումներ կան . «Եկեղեցականներէն ամուսնացող և ամուսնացածներէն կնոջմէն չթողուող կա՞յ մի . հերետիկոսութիւն պաշտպանող , Ընդղեկարէն լեզուով աղօթք ընող մարդ կը գտնուի՞ . հաղորդութիւնը ուղիղ կերպով կը կատարե՞ն կոր մի», ԽԷ , ԽԷ : Ար ասանցմէ յայտնի կ'երևնայ թէ՝ ատ այցելութեան եկելուն բուն նպատակը՝ Բարեկարգութեան յարմարները փնտռել գտնել և չարչարել էր :



Digitized by Google

Երբոր այս նշանաւոր հալածիչը աս բաներով զբաղած էր, Քրիստոսի աշակերտներն ալ ուրիշ բաներով զբաղած էին. թէպէտ և բանտարկեալ, բայց բանտի մէջ ալ կարող էին Սուրբ Աւետարանին խոստմունքները կարօտելոց առջին դնել, և մեղքէն ետ կենալու յորդորել զանոնք. աս մարդիկն ալ ասանկ կ'ընէին :

Հոկտեմբերի սկիզբը՝ յիսունէն աւելի անձինք բանտարկուեցան Լոնտրայի մէջ՝ քովերնին Գերմանիայէն եկած գրքեր գտնուելուն համար, որոնց մէկ քանին երևելի մարդիկ էին : "Նոյեմբերի 4ին՝ հինգ քահանայ ապաշխարանք քաշեցին, Եդուարդ Թագաւորին օրովը եղած օրէնքներուն համեմատ ամուսնացած ըլլալնուն համար. ատոնք աս բանիս համար քահանայութեան պաշտօնէն զրկուած էին, բայց երբոր կնիկներնին թողուցին՝ և ապաշխարանք քաշեցին նէ, նորէն ընդունուեցան :

Աս ատեններս էր որ Պօններ հրաման հանեց՝ որ եկեղեցիներուն պատերուն վրայ Սուրբ Գրքէն առնուած որչափ խօսքեր գրուած կայ նէ, անոնց ամէնն ալ աւրեն : Աս գրուածները Եդուարդին թագաւորութեանը ժամանակները եղած ըլլալուն համար, աս Եպիսկոպոսը "Անօրէնութեան որդւոց հերետիկոսութիւններն են անոնք, կ'ըսէր, որով մոլութեան ճամբայ կը բանան, և առաքինութեան ճամբան կը գոցեն": Աստի եկեղեցպաններուն ապսպրեց՝ որ Սուրբ Գրոց խօսքերէն պատի կամ քարի վրայ գրուած չմնայ :

Երբոր Պօններ այսպէս եռանդով ճշմարտութիւնը հալածելու ետևէ էր, Կարտինէր եպիսկոպոսն ալ ոչինչ ընդհատ՝ մանաւանդ թէ առաւել ժրութեամբ աս սատանայական գործին մէջ կ'աշխատէր : Այցելուներ խրկեց Օքսֆորտ և Կան-

Digitized by Google

*տարրիգխա քաղաքները , որ երթան Ճեմարաններն ու Համալսարանները աչքէ անցընեն : Գտացին ու խռովութիւն մը ձգեցին . և Համալսարաններուն շատ անդամները դուրս ըրին :*

*Ընգղիոյ Բարլամէնդն ալ՝ աս առեններս ժրութեամբ Հռովմէականութիւնը նորէն հաստատելու ետևէ էր : Մէկ վճիռ եղաւ՝ որ 1529էն հետէ Պապին իշխանութեանը դէմ հաստատուած բոլոր օրէնքները խափանուին :*

*Երկրորդ վճիռ մ'ալ աս եղաւ՝ որ Հերետիկոսներուն ու Լոլլարդներուն դէմ հին առենները ինչ կանոն որ կար նէ՝ Հենրիկոս Ըին և Եդուարդ Զին օրովը խափանուած , անոնց ամէնն ալ նորէն հաստատուի : Ասանկով Հերետիկոսները կրկին Հռովմէական եկեղեցականաց ձեռքը ինկան , և ինչոր որ առաջ ուզած մարդերնին կը բռնէին , բանտը կը նետէին , կը դատէին և կը դատապարտէին նէ , անանկ հիմա ալ կարողութիւն ունէին աս բաները ուզածնուն չափ ընելու :*

*Բարլամէնդի ժողովը որոշեց որ ուրախութեան հանդէս մը կատարուի , Ընգղիոյ Հռովմայ Պապին հետ հաշտուելուն համար . ամէն տեղի պաշտօնատարներուն գիր խրկուեցաւ , որոնց մէջ խօսուածներուն նիւթը սա էր որ՝ "Ալ հիմա Ընգղիոյ տէրութիւնը կրկին Աստուծոյ շնորհքը ձեռք ձգած է , և մայր սուրբ եկեղեցւոյ հետ միացած է". և Ամենակարող Աստուծոյ ընծայած աս և ասոնց պէս ուրիշ անհամար պարգևներուն համար՝ հրաման կար ան թուղթերուն մէջ՝ որ պատարագներ ըլլայ՝ , և գոհութեան երգեր երգուի , ու կրակախաղութիւններ ըլլայ ամէն տեղ յուրախութիւն հասարակաց : Աս միջոցիս Փիլիպպոս թագաւորն ու Մարիամ թագուհին եղան հանդէսով , Կարտինէր*

եպիսկոպոսը առջեւնուն՝ Կարդինալն ալ միասին՝ ծիրանիներով զգեստաւորեալ՝ իր խաչն ալ առջեւէն մէկը բռնած, քաղաքին չորս դին պտըտեցան։ Ճամբաներուն մէջ 'ի գլխին հանդիսին կայնողներուն առատ առատ օրհնութիւն կու տար Կարդինալը։ Բայց աս անգամ ըրած աս խնդակցութիւններուն՝ առջի տարիներուն պէս յարգութիւն չկար. ժողովուրդը արհամարհանք մը ցուցուց անոր՝ ու իր պարգեւած օրհնութեանցը։

Եւ օրերս Հռովմէականք սանձրեւի պէս գիրք թափելու եւ եւ էին. բայց ինչպէս որ իրենց սովորութիւնն էր, Սուրբ Գիրք կարդալը կ'արգիլէին միշտ։ Մատենագրին մէկը երեւուն պատճառ հրատարակեց՝ Անգղիարէն լեզուով Սուրբ Գիրք տարածուելուն դէմ։ Հրատարակած ճառին մէջ կ'ըսէր թէ, «Անգլիայ ժողովուրդ հոգին կը կորսնցընէ. եւ թէ աս դատապարտելի ազատութեամբս մարդիկ կարդալով բոլոր սուրբ խորհուրդները ոչինչ բաներու տեղ կը դնեն կոր, եւ իրենց Անգղիարէն Աստուածաշունչին մէջ բոլոր չգտնուած բաները (բոլոր վարդապետութիւններն ու օրէնքները) կը դատապարտեն կոր. թէ Կաթողիկէ ընդհանրական եկեղեցին երբէք հաւանութիւն տուած չունի աս բանին՝ որ Աստուածաշունչը աշխարհիկ բարբառի թարգմանուի. այլ ամէն ժամանակ ուրիշ մոլորութեանց հետ մէկտեղ աս բանիս ալ դէմ առած է։ Ասոր թող ամէն մարդ մէկդի ձգէ սա Անգղիարէն դատապարտեալ Աստուածաշունչները, եւ թող Աստուծոյ խորհուրդները յարգութեամբ բերնանց առնէ, եւ Սուրբ Գրոց մէջ չգտնուած բաներու ալ հաւատայ"։ Զարմանալի բան մըն է որ՝ Սուրբ Գիրք տարածուելուն դէմ հիմակու հակառակիմաստ պապականաց ամուր բռնած խօս-

քերը որչափ համաձայն են՝ հոս տեղս յիշուած մատենագրին վարդապետութեանցը ։ "Ճանապարհ ճշմարտութեան և Քրիստոսի" անունով ուրիշ ճառ մըն ալ հրատարակուեցաւ. ասիկայ յորդորակ մըն էր ժողովուրդին՝ որ մօտերս երեսէ ձգուած ան հինաւուրց աղամանդներուն յարգը ճանչնան, և գթառատ Մարիամին ալ Նոր և սքանչելահրաշ թագաւորութեանը մէջ՝ ան հին սովորութիւնները նորոգուելուն վրայ ուրախանան և ցնծան ։

## ԳԼՈՒԽ Գ ։

Հալէս դատաւորը — Ճիւէլ — Բրօթէստանդները այրելու հրաման կ՚ելլէ — Հուփր և ուրիշներ ալ այրուելու կը դատապարտուին — Բօձէրս՝ Սմիթֆիլտի մէջ կ՚այրուի — Հուփրին տանջանքը ու մահը ։

Հոս արժան կը համարիմ Քէնդցի Յակոբոս Հալէս անունով՝ արքունական ատեանին մէկ իմաստուն և աստուածավախ դատաւորին գլխուն եկածը համառօտ պատմել ։ Ճէյն Կրէյը թագուհի նստեցընելու համար եղած խորհուրդին դէմ էր աս մարդը. և ուստի պէտք էր որ Մարիամ թագուհին որ նստաւ նէ՝ աս մարդուն պատիւ ընէր. բայց ինչ օգուտ որ հերետիկոս էր. և շուտով աս մարդուն գլուխը փորձանքի հանդպցընելու միջոց մը ձեռք ձգեցին ։ Մարիամին թագաւորութեանը առաջին տարին՝ որ դեռ պատարագին դէմ հաստատուած օրէնքը արքունի հրամանաւ աւրուած չէր, Քէնդի սահմաններէն մէկ քանի քահանայ բռնուեցան՝ նոր կերպով հաղորդութիւն ընելնուն համար, և ատեանը քաշուեցան ։ Յակո-



Digitized by Google

բան ալ մեռնող գաղը տեսնելով՝ ան ատենի օրէնքին համեմատ վճիռ տուաւ ։ Ես պատճառաւ Կարտինէր՝ 1553 Հոկտեմբերի Յին՝ ատենանի հրաւիրեց աս դատաւորը , և ըսաւ որ՝ «Թէպէտև օրէնքը քեզի պաշտպան ունիս , սակայն պէտք էր որ Թագուհւոյն ըստանձնելուն համաձայն կերպով մը վճռէիր»։ Ասոր վրայ Յակոբոս ինքզինքը պաշտպանեց նէ , ալ պատասխան չեն՝ ըսաւ Կարտինէր լմնցուց ։ Ան ալ Թագուհւոյն կամքին հնազանդ ըլլալը ցուցընելէն ետեւ՝ դուրս ելաւ գնաց ։

Մէկ քանի օր չքշեց՝ բանտը դրին զանիկայ ։ Հոն ինչուան Ապրիլ ամիսէն ետեւ՝ մէկ քանի բարեկամաց համոզանքներէն և աղերսանքներէն ստիպուելով՝ իր աւետարանական կարծիքները ուրացաւ ։ Ասոր վրայ շատ չանցած՝ այսպէս իւր Տէրը և Վարդապետը ուրանալուն մտմտուքէն խենդդարձաւ , ու յուսահատութենէն մազ մնաց որ ինքզինքը կը սպաննէր կոր ։ բաղդաւոր գտնուեցաւ՝ որ սպասաւորին մէկը դիպուածով՝ եղած սենեակէն ներս մտնելով , չթողուց որ անձնասպանութիւն ընէ ։ Հետեւեալ օրը՝ Կարտինէր ատենանին մէջ խօսքը աս ցաւալի դիպուածին դարձուց , և ալ կրցածին չափ հայհոյութիւն ըրաւ Սուրբ Աւետարանին դէմ՝ «Յուսահատութեան վարդապետութիւն», եւ կոչելով զանիկայ ։ Սակայն աս ըսելով՝ չէր գիտեր որ ինք իրեն դէմ կը գործէր կոր ։ քանզի յայտնի էր որ Յակոբոսին յուսահատութիւնը Աւետարանը ընդունելէն չէր , այլ Աւետարանը ուրանալուն համար անանկ եղաւ ։ Աս աղէտաւալի մարդը վերջապէս իր տունը խրկուեցաւ , բայց իր տրտմութենէն և յուսահատութենէն չկրցաւ մէկ կերպով մը ազատ մնալ , հապա ողբալի և ցաւալի մահուամբ կեանքը վերջա-

ցաւ ․ ճիզվիտը գետի մը մէջ նետելով ։

Բրօթէսդանդ եկեղեցականաց գլխաւորներուն շատ ետևէն ինկան Հռովմէականները՝ որ ուրա֊ցութեան բերին ։ Մէկ քանիներուն ըրած աշխա֊տութիւնները յաջողեցան ։ Աստուած անանկ տնօ֊րիներ էր՝ որ աս օրերս ցորենը և յարդը որոշուին իրարմէ ։ Մէկ քանին ալ եղաւ որ քիչ մը ժա֊մանակ ուրացութեան մէջ մնացին ․ բայց շուտով՝ Պետրոսին սխալմանը պէս ․ և դառնարցունք լալով ՚ի սրտէ զեղջի գալուն պէս ․ իրենց ան մեծ տկա֊րութեանը վրայ խիստ շատ տրտմած՝ զեղջի եկան ։ Ասանկներէն մէկն ալ Հռչակաւոր Ժիւէլն էր ։ Ասիկայ Օքսֆորտի համալսարանին մէջ իր բարե֊պաշտութեանը և գիտութեանը կողմանէ շատ ա֊նուանի մէկն էր ․ և Մարիամին թագուհի ըլլալէն՝ գալու հետևանքներուն նախատես եղողներուն ալ առաջիններէն մէկը ։ Ասիկայ երբոր պատարագ ըսելու հրաւիրեցին՝ չգնաց նէ ․ անմիջապէս վռըն֊տեցին համալսարանէն ։ Ժամանակ մը մեծ պաշտ֊պանութիւն գտաւ համալսարանին անդամներուն շատերէն ․ և զինքը հրապարակական ատենաբան ալ ըրին ․ բայց երբոր պապականութիւնը սկսեց ու֊ժովնալ նէ ․ խեղճը՝ զինքը մեծ վտանգներու մէջ գտաւ ։ Մարշէլ անունով աւագերեց մը՝ ուրա֊ցութեան թուղթ մը խրկեց ․ աս թուղթը ստո֊րագրեց Ժիւէլ տկարութեան րոպէի մը մէջ ։ Բայց առջինէն շատ գէշ վիճակի մէջ ինկաւ ․ քանզի՝ մէկ դիէն խիղճը աս գործած մեղքին հա֊մար կը տանջէր զինքը ․ մէկալ դիէն ալ իր թշնա֊միները զինքը ուրիշ որոգայթի մէջ ձգելու հնարք մը կը փնտռէին ․ վասն զի գիտէին որ աս ըրածը լոկ վախուն համար էր ։ Վերջապէս կեանքը ազա֊տելու համար ձգեց փախաւ ․ ու շատ դժուարու֊

թեամբ Անգղիոյ սահմաններէն դուրս որ ելաւ նէ, իր հաւատքը ուրանալուն վրայ շատ ցաւ ունենալով՝ գեղջի գալը հրապարակաւ խոստովանեցաւ: Երկու եպիսկոպոս ալ Պարլօլ և Աքօրի անուն, իրենց պաշտօնէն իյնալնէն ետև ուրացան, բայց անոնք ալ շուտով դարձի եկան, ու Անգղիայէն հեռացան:

Բայց անանկներ ալ եղան, որ յաւիտեանս իրենց ուրացութեանը վրայ մնացին՝ Քրիստոսի թշնամի դառնալով: Կրիմպօլտ անուն մէկը՝ Մարշէլսի մէջ բանտարկուեցաւ, ու հոն ուրացաւ. սակայն ասոր ուրացութիւնը ծածուկ պահուեցաւ, և իբրև բանտարկեալ իր առջի ընկերներուն հետ մնաց՝ զանոնք լրտեսելու համար: Աս սատանայական հնարքով՝ Ռիտլէյ եպիսկոպոսին շատ գրութիւնները ձեռք ձգեց, (քանզի առաջ անոր եկեղեցւոյն մէկ վարդապետն էր,) և հալածիչ կրօնաւորաց ձեռքը յանձնեց զանոնք: Հարտինկ անունով մէկ ուրիշ ուրացող մ'ալ կար, որ ուրանալէն ետև Ճիւէլին հակառակորդը եղաւ: Աս մարդը՝ Լէտի Ճէյն Կրէյին ուսուցիչն էր. բայց պապականութեան դառնալով՝ մեծ ցաւի պատճառ եղաւ իր աղնիւ աշակերտուհւոյն:

Փէնտլիդօն անուն երևելի Բարեկարգիչ մը կար. սակայն՝ երբոր Մարիամ աթոռը նստաւ նէ, կ'ըսէր թէ անշուշտ հաւատքիս վրայ ամուր պիտի կենամ: Օր մը աս մարդն ու իր մէկ բարեկամը՝ Լօրէնս Սաունտէրս անուն՝ աս նիւթիս վրայ որ խօսք բացին նէ, Սաունտէրս՝ «Կը վախնամ կոր որ գլխուս գալու փորձութիւններուն չկրնամ պիտի դիմանալ» ըսաւ: Փէնտլիդօն՝ «Բան չկայ, մի՛ վախնար, չըլլայ որ հօտդ երեսի վրայ ձգես» ըսելով, խել մը քաջալերական խօսքեր ընելէն ետև, «Ես քենէ

շատ մեռած եմ, քենէ աւելի վախնալու եմ տան-ջանքէ", ըսաւ, "բայց հաստատ գիտեմ որ՝ ինչուան աս մարմնոյս վերջին կտորին մոխիր դառնալը և աս ճարպիս վերջին կաթիլին հալելը՝ պիտի դիմանամ": Երկուքին ալ գլուխն՝ կախած ըրած փորձանք-նին եկաւ հասաւ : Երկչոտը՝ Աստուծոյ զօրու-թիւնը իրեն օգնական կանչելով՝ դիմացաւ . իսկ Հպարտն փէնտլիդօն՝ ինք իր զօրութիւնովը մնա-լով՝ շուտով ուրացաւ , և նախանձաւոր ջատա-գով մը եղաւ Հռովմէականութեան :

Մարիամ Թագուհին աթոռը նստելէն գրեթէ անմիջապէս ետքը՝ Բարեկարգութեան քարոզիչնե-րէն խիստ աշխոյժ և նախանձաւոր եղողները այլ և այլ պատճառանքներով ժողվեցին բանտը դրին , ու առանց օրինաւոր ամբաստանութիւն մը կամ դատաստան մը ընելու՝ հոն թողուցին , և կը սպա-սէին որ Հռովմէականաց փնտռածին պէս ամէն բան անգամ մը կարգի դրուի , որ անկէ ետև ու-զածնին ընեն աս բանտարկեալներուն : Երբոր ա-տենը հասաւ , առանց ժամանակ կորսնցընելու սկսան գործ տեսնել . առաջին զոհ ըլլալիքները եկեղեցականներէն ընտրեցին . և պիտի առաջ Հուփր եպիսկոպոսը զոհել արժան խորհեցան : Յունիսի 22ին՝ առտըմէ ոմանք Կարտինէր՝ Վին-չէսդրի եպիսկոպոսին պալատը բերուեցան , ուր որ մէկ քանի երևելի անձինք ներկայ էին . Հար-ցուցին աս մարդոցը թէ՝ Պապին պիտի գա՞ք , ու թագուհւոյն ներողութիւնը պիտի ընդունի՞ք , թէ սորվեցուցած վարդապետութիւններնուդ վրայ ան-շարժ պիտի կենաք , և ըսած յանդգնութիւններնուդ չար հետևանքներուն յանձնառու պիտի ըլլաք : Ինչպէս որ ըսինք , աս մարդիկը այլ և այլ պատճա-ռանքներով բանտը նետեր էին , բայց հիմա՝ դուք

Digitized by Google

ապստամբ ու յանցաւոր մարդիկ էք ըսելով՝ անոնց վրայով ամբաստանութիւն չէին ըներ , Հապա ամէն բան ուզածնուն պէս առջի ատեններուն ընթացքին փոխուած ըլլալով՝ մինակ անոնց կրօնական կարծիքները փոխելու համար աս երկու առաջարկութիւնները ըրին անոնց . կամ ուրացութիւն և ներումն , կամ յամառութիւն և աղէտալի հետևանքներ : Անոնց մէկը՝ որ Լոնտրացի էր , ուրացաւ : Ուրիշ մէկն ալ կար՝ որ ան ալ խախտեցաւ , բայց մէկ ուրիշ միջոցով մը . Լորտ Կուլիէլմոս՝ դատաստան տեսնողներուն մէկը՝ աստ բարեկամն ըլլալով , սովորական քննութիւնը ընելու տեղը՝ աս հարցմունքը ըրաւ , թէ "Հօրդ պէս արդար մարդ ըլլա՞ս պիտի" . ան ալ՝ Այո՝ ըսաւ , ազատեցաւ : Իսկ մէկալները՝ որ շատ բարակ քննուեցան , հաստատ մնացին հաւատքներնուն վրայ : Յունվարի 28ին՝ Հուփր եպիսկոպոսը , Ռօճէրս՝ Սուրբ Գերեզմանի եկեղեցւոյն աթոռակալը և Քարտմէյքր կրօնաւորը կրկին Կարտինէրին և անոր օգնական գործակցացը՝ առջին հանեցին : Քարտմէյքրին տուած պատասխաններէն՝ յոյս ըրին որ դարձի պիտի գայ , և ուրիշ բանտ մը դրին ան : Իսկ Ռօճէրսն ու Հուփրը , հետևեալ օրը անգամ մըն ալ առանձին քննութիւն ընելէն ետև , դատապարտութեան վճիռը տուին ու խրկեցին Նիւկէյդ՝ որ այրուին : Հետևեալ օրը , Յունվար 30ին՝ ուրիշ քանի մը հոգի ալ քննութեան կանչեցին , որոնցմէ իրեք երևելի կրօնաւորներ՝ այսինքն Ռօլանտ Գէյլօր՝ Սաունտէրս և Պրատֆորտ բանագրուեցան և դատապարտուեցան , ու յետոյ պաշտօնատարաց ձեռքը յանձնուեցան՝ որ այրուին :

Երբոր Ռօճէրսին դատապարտութեան վճիռն ելաւ , Հրաման խնդրեց՝ իր կինը և տանուտէկ որ-

դիքը տեսնելու, որ անոնց իր հրաժարական ողջոյնը ու պէտք եղած պատուէրները տայ: Այս թոյլտուութիւնը՝ որ ան առենը խիստ մեծ եղեռնագործներուն անգամ կ՚ըլլար, Աստուծոյ խօսքը մեծ նախանձով քարոզող Ռօճէրսին չըրին. և Կարտինէր թոյլտուութիւն չըլլալուն վճիռը տուած առենը, Անզգամ՝ ան քու կինդ չէ, ինչ բան ունիս անոր հետ՝ ըսելով՝ անարգական խօսք չմնաց՝ որ չընէր անոր: Հուփրին ու Ռօճէրսին դատապարտութեան վճիռը ելլելէն ետև պահեցին զանոնք՝ մինչուան որ մութը կոխեց, հապա թէ գիշերանց Լոնտրայի պաշտօնատարաց ձեռօքը՝ մեծ գունդ մը զօրքով՝ Նիւկէյթ ըսուած բանտը խրկեցին: Պաշտօնատարները՝ աս եղած բաները ժողովուրդէն գաղտուկ պահելու մտօք, և կամ վախնալով՝ որ չըլլայ թէ հասարակութիւնը բռնութեամբ ձեռուընուն առնեն կապուածները, իրենց մարդիկներէն քանի մը հոգի խրկեցին առջենուն, որ երթան իրենց անցնելու փողոցին խանութներուն վառուած ճրագները մարեն. (ան առենը Լոնտրայի մէջ լապտեր չկար.) բայց շատ մարդ գիտեցին զասոնք, ու ճրագներնին առնելով իրենց դռներուն մէջը կայնած՝ ան կապեալներէն օրհնութիւն կը խնդրէին, և ջերմեռանդութեամբ բարեմաղթութիւններ կ՚ընէին՝ ըսելով. "Տէրը զօրութիւն տայ ձեզի՝ որ իր կարողութիւնովը ինչուան հիմա պաշտպանած հաւատքներնուդ վրայ մինչև վերջը հաստատ մնաք":

Վեց օր մնացին Նիւկէյթ, ամէն ժամ կը սպասէին դատակնիքին գործադրութեանը: Փետրվար 4ին՝ բանտին մատուռը՝ Վօննէրին առջևը տարին աս մարդիկը, որ կարգերնին առնէ: Աս բանը ընելու ինչ արարողութիւններ որ կար նէ՝ զանոնք

կատարելէն ետեւ , Ռօճէրսը պաշտօնատարաց ձեռքը տուին կրկին : Անոնք ալ առին անմիջապէս Սմիթֆիլտ իջեցուցին , ուր պատրաստուած էր փայտակոյտը : Ռօճէրս՝ կարգը առնուած տանը՝ նորէն թոյլտուութիւն խնդրեր էր Եպիսկոպոսէն , որ կնոջը հետ տեսնուի . բայց անիկայ առաջուան պէս մտիկ չէր ըրեր : Սակայն Սմիթֆիլտ որ կ'երթային , ճամբուն վրայ Ռօճէրս տեսաւ որ իր սիրելի ամուսինը՝ փոքրիկ մանուկը գիրկը՝ մէկալ տասը սիրուն որդիքն ալ քովիկը կայներ՝ զինքը անգամ մըն ալ տեսնելու կը սպասէր այն ցաւալի վիճակին մէջ : Սրտառուչ տեսարան . սիրտ պէտք էր առանց փորձութեան դիմանալու . բայց Աստուծոյ կարողութիւնովը տոկաց ալ դիմացաւ . և երբոր կրկին անգամ "Դարձի եկուր՝ կ'ազատիս" , ըսին նէ , պատասխան տուաւ՝ թէ "Այն ճշմարտութիւնն որ քարոզեցի , արիւնովս պիտի կնքեմ": "Հերետիկոս ես" , ըսաւ պաշտօնատարը : "Ատ վերջին օրը կը յայտնուի", ըսաւ Ռօճէրս : "Բնաւ աղօթք պիտի չընեմ քեզի համար" , պոռաց այն նոյն հալածիչը : "Ես քեզի համար կ'ընեմ", ըսաւ Քրիստոսի հեզահոգի վկան : Կապեցին զինքն , բորբոքեցուցին փայտակոյտը , և համբերութեամբ այրելով մարտիրոսացաւ Ռօճէրս : Սա եղաւ ԱՌԱՋԻՆ ՄԱՐՏԻՐՈՍ Մարիամ թագուհւոյն թագաւորութեանը ատենը , իր աթոռը նստելէն տարի ու կէս ետքը :

Հուփր եպիսկոպոսը կը յուսար որ Ռօճէրսին հետ միատեղ զինքն ալ կ'այրեն , բայց նայեցաւ որ նորէն բանտը տարին զինքը . իրիկուանը լուր առաւ՝ թէ Գլօսէսդըր պիտի տանին զինքը , որ իր ժողովուրդին առջևը այրեն : Այս լուրին վրայ շատ ուրախացաւ Հուփր : Իր հալածիչները կը մտա‐

Digitized by Google

ծեծին որ՝ եթէ իր ժողովուրդին առջեւը այրելու ըլլան նէ զինքը , սրբատեղինին վրան կը մեռնէ , ու ետ կը կենան իրենց Եպիսկոպոսին սորվեցուցած կրօնքէն . բայց Հուփր փառք կու տար Աստուծոյ , հաւատալով որ Անոր կարողութեամբը պիտի դիմանայ ան ցաւալի մահուանը , եւ իր ժողովուրդն ալ՝ ճշմարտութեան համար իր մարտիրոսանալը տեսնելով՝ քաջալերութիւն պիտի առնեն , եւ հաստատուին հաւատքներնուն վրայ : Հետեւեալ առտուն կանուխ արթնցուցին Հուփրը , եւ Թագուհւոյն վեց թիկնապահ զինուորներուն ձեռօքը դեռ չլուսցած քաղաքէն դուրս իջեւան մը իջեցուցին . հոն անոր երեսը ծածկեցին , ու անկէ ճամբայ ելան դէպ 'ի Կլօսէսդր : Երրորդ օրը հասան ան քաղաքը . եւ դռնէն ներս որ պիտի մտնէին , նայեցան որ մեծ բազմութիւն մը կայներ՝ իրենց սիրելի հովուին գլխուն եկած աս փորձանքին վրայ կ'ողբային : Սիր Անտոն Քինկսդոն անուն մէկը՝ որ Հուփրին մտերիմ բարեկամն էր , ու անոր քարոզութեամբը իր մեղանչական ընթացքը ձգած էր , եւ հիմա Հռովմէականաց անգթութեամբը փայտակոյտը բռնկցընելու որոշուեր էր , Հուփրին դիմացը ելաւ , ու լալով կ'ըսէր . "Ափսո՜ս որ կեանքը շատ անուշ բան է , բայց մահը շատ տանելի" : Իսկ Հուփր պատասխան տուաւ թէ՝ "Ես հոս եկայ՝ որ առաջուց աս տեղերը քարոզած ճշմարտութեանց համար մեռնիմ . եւ թէպէտ կեանքը ցանկալի եւ մահը տանելի բան է , սակայն Աստուծոյ Սուրբ Հոգւոյն զօրութեամբը յոյս ունիմ որ առանց վախնալու պիտի քաշեմ աս տանջանքը , ու ճշմարտութիւնը պիտի չուրանամ" : Հուփրին այրուիլը օր մ'ալ ուշացուցին . ան օրը ծոմով ու աղօթքով անցուց , եւ այն միջոցին՝ խել մը մարդոց



Digitized by Google

հետ տեսութիւն կրցաւ ընել ։ Տորին անուն՝ երակու աչքը կոյր տղուն մէկը շատ աղաչանք ընելով հրաման առաւ՝ ելաւ գնաց Եպիսկոպոսին քովը ․ ան ալ խել մը ատեն հետը խօսելէն ետեւ՝ նայեցաւ որ Քրիստոսի վրայ հաստատ հաւատք ունի նէ ， ըսաւ ․ «Խեղճ տղայ ， Աստուած մէկ պատճառաւ մը՝ որ ինքը աղէկ գիտէ ， մարմնոյդ աչքը առեր է ․ բայց ահա՛ մէկ ուրիշ աչք մը տուեր է քեզի առջինէն շատ պատուական ， հոգւոյ աչք ， որով գիտութիւն և հաւատք ունեցեր ես ․ Աստուծոյ շնորհքը միշտ վրադ ըլլայ՝ որ աս լոյսը չկորսընցընես ․ քանզի անատենը՝ չէ թէ միայն մարմնով ， այլ հոգւով ալ կոյր կ՚ըլլաս»։ Ետքէն աս աստուածավախ տղան ալ այրեցաւ ։

Պաշտօնատարները ան գիշերը բանտը պիտի դնէին Հուփրը ․ բայց Սենտրայէն զէնքը բերող զինուորները պատմեցին՝ թէ ինտոր հանդարտութեամբ՝ հեզութեամբ և համբերութեամբ մինչև հոն եկաւ ， ու ըսին որ պզտիկ տղայ մըն ալ ըլլայ քովը՝ հերիք է ， և հաճեցան ան գիշերը անոր քովը կենալ ， որ անանկ նեղութեան մէջ չմնայ խեղճը ։ Ուստի Հուփր իր եղած տանը մէջ մնաց ․ կանուխկեկ գնաց պառկեցաւ ， ըսելով թէ՝ Շատ բաներ ունի յիշելու ․ և անուշ քուն մը քաշելէն ետեւ՝ արթընցաւ ， և գիշերուան մնացորդը աղօթքով անցուց ， խնդրելով որ իր եղած սենեակը մարդ չմտնէ ինչուան ժամը ութը՝ իր մեռնելուն համար որոշուած ժամանակը ։ Փետրվար 9ին՝ դուրս հանեցին ， ու տարին զանիկայ այրելու համար պատրաստուած տեղը՝ որ էր մայր եկեղեցւոյն առջին ։

Հուփր՝ նայեցաւ որ բոլորտիքը զինուորները առած՝ զէնքը փայտակոյտը կը տանին կոր նէ ， «Ես մատնիչ չեմ»， ըսաւ ․ «պէտք չէ այսչափ

զգուշութիւն . թէ որ ինծի հրամայէիք՝ ես ինքնիրմէս պիտի երթայի" : Աղորմելի մարդը այնքան ժամանակ բանտը մնացեր էր որ՝ շատ տկարացեր էր , և հիմա առանց գաւազանի չէր կրնար քալել մինչև փայտակոյտը երթալու : Եօթը հազարէն աւելի մարդիկ 'ի զննին այս մարդագոհիս կեցեր էին : Յուսիփ կ'ուզէր քիչ մը բան խօսիլ ժողովուրդին , բայց չէր կրնար . քանզի թագուհւոյն հրամանաւը զանիկայ բռնադատեր էին որ խոստմունք տայ՝ իր մեռնելու ատենը ժողովուրդին բան մը չխօսելու , սպառնալով որ եթէ խոստմունք չտայ՝ լեզուն պիտի կտրեն : Աս բռնի կերպով խոստմունք առնելը պապականաց սովորութիւնն էր , որ մարտիրոսներուն կ'ընէին : Այս միջոցիս՝ երանելի վկային դէմքին վրայ նշանաւոր համբերութիւն և զուարթութիւն մը կը փայլէր : Գնաց փայտակոյտին քովը՝ ծունկի վրայ եկաւ աղօթք ընելու . անատենը տուփ մը դրին անոր առջևը , որուն մէջ ներողութեան թուղթ մը կար . անով ներուում պիտի գտնար ու պիտի ազատուէր՝ թէ որ իր կարծիքները ուրանար : "Հոգւոյս բարեկամն էք նէ , վերուցէք աս առջևէս" , ըսաւ : Անատենը Լորտ Հանտաս ըսաւ . Հոս ըրէ : Իսկ Յուսիփ աղաչեց որ թող տան՝ որպէսզի համբերութեամբ լմնցընէ իր աղօթքը , որուն մէկ մասը մօտը կայնողները լսեցին , և էր այս . "Տէր՝ դու ես Փրկիչ Աստուած գթած և ողորմած . ուստի ողորմէ՛ ինծի՝ թշուառ մեղաւորիս՝ քու մեծ ողորմութեամբդ և քու անբաւ բարութեամբդ : Դուն երկինքը համբարձար . գիս ալ արժանի ըրէ մասնակից ըլլալու քու ուրախութեանցդ երկինքին մէջ , ուր որ քու Հօրդ աջ կողմը կը նստիս հաւասար փառօք : Քանզի դուն աղէկ գիտես՝ ով Տէր , թէ ինչ պատճառաւ հոս եմ

եկեր աս զառն մահը Յուշանկերու , և խաչու համար չարերը զիս՝ քու Նուաստ ծառադ կը հալածեն . յայտնի է քեզի՝ որ չէ թէ քեզի դէմ մեղաւոր և յանցաւոր գտնուելուս համար է , հապա աս պատճառաւ՝ որ դէմ եմ իրենց չար գործքերուն քու սուրբ արիւնդ պղծելնուն , և քու Ճշմարտութեանդ գիտութիւնը աշխարհէս վերցնելնուն , որ անն ճշմարտութիւնը հանեցար քու Սուրբ Հոգւովդ ինծի սորվեցընելու . և ես քու անդրդուելութեանդ զանիկայ մարդոց յայտնելու կանչուելով՝ ատրդմելի ու թշուառ մարդու մը ունեցած կարողութեանն չափովը քարոզեցի ՚ի փառս քո : Իսկ ահա՛ հիմա կը տեսնես՝ ո՛վ Տէր , թէ ինչպէս ատոնցմէ տանջանքներ պատրաստեր են քու ծառայիդ համար . անանկ տանջանքներ , որոնց անհնար է որ մէկը կարող ըլլայ համբերութեանը դիմանալ՝ առանց քու օգնականութեանդ : Բայց մարդոց անհնար եղած բաները քեզի հնարաւոր են . վասն որոյ զօրացո՛ւր զիս քու բարութեամբդ , որ կըրնամ մէջ եղած առնեմ՝ համբերութիւնս չհատնի . կամ չէ նէ՝ թեթևցո՛ւր յառաջիկայ տանջանաց ցաւերը՝ քու փառքիդ համար" : Խնչուան հոս որ եկաւ ձէ . թաղապահապետը՝ իմանալով որ մարդիկ կ՚ըսեն , եա կեցուց ժողովուրդը : Քիչ մ՚ալ աղօթք ըրաւ , ու եսքը ցըցին կապեցին Հոգւոյն : Իրեք երկաթի մանեակ բերին՝ զանիկայ ցըցին ամուր կապելու համար . "Թո՛յլ տուր մի՛ ձեռքէք խըռզենկոնիք" , ըսաւ . "ես հաստատ գիտեմ որ Տէրունս ասանց ալ կապերուդ ալ զօրութիւն կու տայ ինծի կրակին դիմանալու . բայց թէպէտ և ես Տէրունդս զօրութեանը վրայ կատարեալ վստահութիւն ունիմ , անկայն մարմինս տկար է , կապեցէք ուզածնուդ պէս" : Մէջտեղն համար չինուած

մանեակը պզտիկ եկաւ, և դժուարաւ կրցան անցը-նել *: Երբոր փայտակոյտը բռնկցուցին, անոր բոլորտիքը ուրիշ բան չէր տեսնուեր, բայց միայն ժողովուրդին տրտմութիւնը ու լացը: Ու որովհետև ցիցին բոլորտիքը երկու ձիու բեռ թաց փայտեր էին դիզեր, աղէկ մը բոցը չառաւ. և ան առտուն շատ հով ալ ըլլալուն համար՝ ելած բոցն ալ միշտ մէկդի կ'երթար: Նայեցան որ պիտի չըլլայ նէ, քանի մը չոր փայտեր բերին նետեցին, բայց այսչափը քիչ էր. և հովն ալ այնչափ սաստիկ կը փչէր, որ մարմնոյն միայն վարի դին այրեցաւ: Ըս միջոցիս Հուփր աղօթք կ'ընէր և կ'ըսէր. “Յիսուս՝ որդի Դաւթի, ողորմէ՛ ինծի՝ և հոգիս ա՛ռ”: Երբոր չոր փայտերը վառեցան հատան, ձեռուըներովը աչուըները սրբեց, և հեզութեամբ՝ շատ թախանձանօք աղաչեց որ շատկեկ կրակ վառեն: Վերջապէս երրորդ անգամ աւելի սաստիկ կրակ մը վառեցին. վրան պարկով վառօդ կապեր էին, ան ալ բռնկեցաւ, բայց շատ գործ չկրցաւ տեսնել. քիչ մը առեննէն եաքը բոցը պատեց մարտիրոսին բոլորտիքը: Ըսիկայ շարունակ աս ըսելու վրայ էր. “Տէր Յիսուս՝ ողորմէ՛ ինծի, Տէր Յիսուս՝ ա՛ռ հոգիս”: Մօտ կայնողներուն մէկը՝ որ մանրամասն կը պատմէ աս վկային այրուիլը, կ'ըսէ թէ աս աղօթքը ըրաւ՝ ինչուան որ լեզուն բերնին մէջ ուռեցաւ, և ալ կարող չէր խաղցընել: Սակայն անկէ ետև ալ՝ շրթունքները կը շարժէր միշտ. բայց քիչ առեննէն անոնք ալ քաշուեցան, և ալ չկրցաւ բերանը բանալ գոցել. հապա ձեռուըներովը շարունակ կուրծքը կը ծե-

* Մէկ քանի տարի առաջ՝ հասարակութեանը մէջ՝ Հուփր եպիսկոպոսը հոն այրուեցաւ ըսուած տեղը փորել հարկ եղաւ. փորած առեններնին՝ ցիցին մնացորդները և երկաթի կտոր մըն ալ գտան:



Digitized by Google

ծէր · վերջապէս մէկ թեւը փրթաւ ինկաւ , բայց մէկալովը շարունակ կուրծքին կը զարնէր · ինչուան որ արիւն ու ջուր ցաթկել սկսաւ մատուըններուն ծայրերէն , ու քիչ մ'ալ ետքէն՝ ալ թեւը շարժելու ուժ չունենալով՝ կուրծքին երկաթը բռնեց մնաց ։ Յետոյ վար ծռելով՝ հոգին աւանդեց , իրեք քառորդ ժամու չափ խռխռքով չարչարուելու տանջանքներ քաշելէն ետեւ · սակայն և այնպէս տղու մը իր անկողինին մէջ մեռնելուն նման՝ հանդարտութեամբ մեռաւ ։

## ԳԼՈՒԽ Գ ։

Գէյլօր քահանան կը հալածուի Պօննէրին միջոցովը , ու իր իշխանութենէն կը զրկուի — Հատլէյի մէջ կ'այրուի — Սաունտէրս կ'այրուի Քովէնդրի մէջ — Պօննէր ուրիշ Բրօթէսդանդներ ալ կը դատապարտէ ։

Պապականք՝ ուզելով Բրօթէսդանդ ժողովրդոց վրայ մեծ վախ ձգել , տէրութեան զանազան կողմերն ալ ուրիշ քարոզիչներ այրեցին՝ իրենց քարոզութիւնները լսող ժողովրդոց առջեւը ։ Ռօլանտ Գէյլօր քարոզիչը՝ որն որ քիչ մը առաջ յիշեցինք , Հատլէյ խրկեցին՝ հոն այրելու համար ։ Աս Հատլէյ քաղաքը՝ ճշմարտութիւնը ընդունողներուն առաջիններէն էր ։ Պիլնէյ հոս քարոզութիւն ըրած էր · և իր ըրած քարոզութիւնները՝ քաղաքացեաց սրտին բարի սերմ եղաւ , ու առատօրէն պտուղ բերաւ ։ Գէյլօր՝ աս թեմին վրայ քարոզիչ դրուած ատենը՝ Կրամէր արքեպիսկոպոսին աւագերէցն էր · գնաց հոն , և որչափ ատեն որ կեցաւ նէ՝ անդուլ ջանիւք իր պարտքերը

Digitized by Google

կատարելու եղած էր ․ շատ մեծ ժրութեամբ և նախանձաւորութեամբ Ռեւտարտը կը քարոզէր , և մեծ յաջողակութեամբ՝ Հռովմայ եկեղեցւոյն մոլորութիւններն ու աւելորդապաշտութիւնները կը ցուցնէր ։

Երբոր հերետիկոսներուն դէմ գործածուած հին օրէնքները նորէն հաստատուեցան , Հուփըրը Կար-տինէլին և անոր գործակցացը առջին հանեցին 1555 , Յունուար 30ին ։ Ինչպէս որ վերը յիշեցինք՝ տանց ըսին որ , «Կա՛մ կ'ուրանաք հերետիկոսական կարծիքներնիդ և Պապին կը հնազանդիք , կամ չա-րաչար մահուամբ կը մեռնիք»: Անոնք Աստուծոյ օգ-նականութեամբը կարողացան հաւատքնիրնուն վրայ հաստատ մնալու ․ և ուստի դատապարտուելով՝ Եպիսկոպոսին բանտը դրուեցան ։ Հուփըր բանտը գացած ատենը՝ երբոր Սուրբ Փոլիս եկեղեցւոյն բոլորտիքը լեցուած խուռն բազմութեան մէջէն կ'անցնէր , որ հոն ժողվուեր կը սպասէին իր ինչ ըլլալուն վրայով լուր առնելու , քաջասրտութեամբ կ'ըսէր ժողովրդոցը ․ «Փա՜ռք Աստուծոյ՝ բարի ժողովուրդք , որ ատենց ձեռքէն անարատ ազատե-ցայ , և ահա՛ ես ալ ճշմարտութիւնը արիւնովս պիտի հաստատեմ»։ Փետրուարի 4ին Պօնէր՝ Ռօ-ճէրսին և Հուփըրին կարգը առնելէն ետև , «Աս-կէյղէն ելաւ՝ Ռօլանտին կարգն ալ առնել եկաւ ։ Պօնէր շատ կ'ատէր Հռովմէական եկեղեցականաց զգեստները ․ և երբոր զգեստաւորեցին զինքը , «Զուարճալի ըլլայի նէ», ըսաւ , «աս կարգիս լաթե-րովս գունտ մը տղաք ետևէս կը քաշէի»։ Ռօլանտ բնաւորութեամբ զուարթաբարոյ մարդ մը ըլլա-լով՝ կարգը առնուելու արարողութեանց ատենը՝ կը պատմուի թէ , ատանկ բան մըն է ըսեր ․ երբոր Պօնէր արարողութեանց ան մասին հասեր է՝ որ

Digitized by Google

գաւազանով պաշտօնէ ելողին կուրծքին պիտի զարնէր, աւագերէցը՝ «Մի՛ զարներ՝ մի՛ զարներ, տէր իմ», ըսեր է, «եարքէն կ՚ելլէ ան ալ, քեզի կը զարնէ»։ «Հապա», ըսեր է Գէյլոր անդիէն՝ խնդալով ըրած կասկածներուն վրայ, «գործը Քրիստոսինն է. և թէ որ իմ Տէրոջս համար չպատերազմիմ նէ, ինչի՞ն քրիստոնեան կ՚ըլլամ»։ Եպիսկոպոսը ալ չէ զարկեր գաւազանով, հապա միայն նզովեր է։ «Ի՞նչ կ՚ըսես սա մարդոցը», ըսեր է եաքը Գէյլոր՝ Գրատֆորտին, խնդալով և ձեռուըները շփելով, «Իրաւցընէ պիտի զարնեմ հաւտացին»։ Սակայն ամօթ չէր Հռովմէական եկեղեցականաց՝ որ սանկ ծուռ կասկածներու երթային, քանզի ամէնևին չէին զգար և իմանար՝ թէ անիկայ ինչ ոգւոյ տէր էր։ Ըն իրիկունը Գէյլոր՝ մէկալ մարտիրոսներուն չվայելած մէկ բանը վայելեց, այսինքն բանտապետին բարեկամութեամբը՝ իր կնոջը և սիրելի որդւոյն և մէկ հաւատարիմ սպասաւորին հետ ընթրիք ըրաւ բանտին մէջ։

Կէս գիշերը երկու ժամ անցած՝ որ սանկ գործքի մը յարմար ատենն էր՝ Լոնտրայի պաշտօնատարը բանտը եկաւ, և Գէյլորը Ըլտկէյդ քաղաքը տարաւ իջևան մը իջեցուց՝ լուսնալէն առաջ, սա միջոցով կը կարծէր թէ տեսնող մը չըլլար. բայց Գէյլորին կինը՝ իմանալով որ սա բանտարկեալները պիտի մեռցընեն, ան իրիկունը երկանը բանտէն ելլելէն ետև՝ գնաց Ըլտկէյդ, ու եկեղեցւոյ մը գաւիթը կեցաւ բոլոր գիշերը, իր մեծ աղջիկն ու իր պահծու աղջիկը հետը առած։ Տակաւին շատ մութ էր՝ երբոր պաշտօնատարը ու անոր հետ եզողները անկէց կ՚անցնէին, այսու ամենայնիւ որբ աղջիկը տեսաւ՝ ու սկսեց պոռալ. «Սիրելի՜ հայրս. մա՛յր իմ՝ մա՛յր իմ՝ նայէ՝ նայէ հայրս կը տանին

կոր": Մայրը մեկէն 'ի մէկ չկրնալով տեսնել մու-թեան , "Ռօլանտ՝ ո՞ւր ես" , պոռաց : "Հո՛ս եմ՝ մայրիկս", ըսաւ , ու եկաւ քովը : Պաշտօնատարը մարդասիրաբար թող տուաւ որ վերջին անգամ բա-րովն ըսէ : Միատեղ ծունկի վրայ եկան աղօթք ըրին : "Աստուած Հետդ ըլլայ" , ըսաւ կինը , "Աստուծով Հատլէյի մէջ ալ կը տեսնուինք" : Բայց վերջը պաշտօնատարը քաղցրութեամբ մը արգիլեց աս բանը , ու չկրցան Հատլէյի մէջ ալ տեսութիւն ընել : Անկէց անցան գացին իջեւանը , և Հոն Դէյլորը՝ Էսսէքսի պաշտօնատարին ձեռքը տուին . ան ալ կէս օրին իր պաշտօնեաներովը մեկտեղ առաւ զանիկայ ու Ճամբայ ելաւ :

Վերջի մը օր Ճամբայ երթալով վերջապէս Հա-սան Հատլէյ՝ Փետրուարի 8ին , և առանց քաղա-քին մէջ կանգ առնելու կ'անցնէին : Աղքատ մար-դուն մէկը՝ Հինգ տղաքը քովը առած կայներ էր , ու կուլար սա մարտիրոսանալու Հովուին անցնելուն կը սպասէր կամուրջի մը մօտ : Երբոր Հասան , ծունկի վրայ գալով խոնարհութիւն ըրաւ իր տը-ղոցը Հետ միատեղ և ըսաւ . "Ո՛վ սիրելի Հայր և բարի Հովիւ՝ Դէյլօր . Աստուած որ շատ անգամ դուն ինծի և իմ որդւոցս օգնութեան Հասար , անանկ ալ Աստուած Հիմա քեզի օգնութեան Հասնի" : Անցած փողոցներուն երկու կողմը ժո-ղովուրդը խիտ առ խիտ շարուած էր , և առջե-նուն անցած ատենը՝ անոր Համար աղօթք կ'ընէին , և իր օրՀնութիւնը կը խնդրէին , լալով և ողբա-լով իրենց բարի Հովուին ատանկ ցաւալի կերպով մը իրենցմէ զատուելուն վրայ : Ան ալ շատ Հեղ սա խօսքը կը կրկնէր անոնց . "Աստուծոյ խօսքը և Ճշմարտութիւնը ձեզի քարոզեցի , և Հիմա ե-կայ որ զանիկայ արեամբս կնքեմ": Երբոր աղքա-

Digitized by Google

տանոցին քովէն կ'անցնէին , քովը քիչ մը սատկ կար՝ հանեց աղքատներուն նետեց : Վերջապէս զինքը Ալոհամ կոչուած հրապարակը հասուցին , ուր տեղ մինչև հիմա քար մը կայ տնկուած՝ անոր այրուած տեղը : Ահագին բազմութիւն մը ժողվուեր կայներ էին : Երբոր Պէյլօր իմացաւ որ հոն պիտի այրեն զինքը , "Փոհուլթի՜ն Աստուծոյ , հիմա տունս եկայ", ըսաւ , ու ձիէն վար իջաւ , և քաշեց երեսի ծածկոցը հանեց : Գլխուն մազերը անդիէն ասդիէն անձև կտրուած՝ ու խենդի գլխու մազերու պէս այլանդակ բան մըն էր եղեր : Ասիկայ Պօմներ եպիսկոպոսն էր ըրեր՝ կարգը առած ատենը : Բայց ժողովուրդը երբոր անոր շնորհալի դէմքին վրայ անգամ մըն ալ տեսաւ ան քաղցր ժպիտը , որն որ քանի կը տեսնէին նէ՝ սրտերնին կ'ուրախանար , մեծ կոծ մը փրցուցին , կու լային ու կ'ըսէին . "Աստուած ազատէ քեզ՝ բարի հովիւ Պէյլօր , Յիսուս Քրիստոս օգնութեան հասնի քեզի , և զօրացընէ քեզ . Հոգւոյն Սրբոյ մխիթարութիւնը հետդ ըլլայ" : Հիմա պիտի խօսէր ժողովուրդին , բայց զինուորներէն մէկը ձեռքի ցուպը բերանը խոթեց՝ ու չթողուց որ խօսի . պաշտօնատարն ալ հրամայեց որ խօսքին վրայ կենայ , ու բերանը չբանայ : Յետոյ Պէյլօր հանուեցաւ , ու լաթերը մէկուն մէկալին տուաւ . կօշիկները Սօյս անուն մարդու մը տուաւ՝ որ քովը կայներ էր , ըսելով՝ "Առ , երկար ժամանակէ 'ի վեր փնտռածդ աս չէ՞ր մի" : Ու դարձաւ ժողովուրդին ալ ըսաւ . "Ո՛վ բարի քրիստոնեայք , Աստուծոյ սուրբ խօսքէն զատ ուրիշ բան չքարոզեցի ձեզի , և Աստուածաշունչէն քաղած վարդապետութիւններէս զատ ուրիշ բան չսորվեցուցի . և ահա՛ այսօր իմ քարոզածներս արեամբս կնքեմ պիտի աչուընուդ առջին" : Զի-

Digitized by Google

նաւորդներէն մէկը գլխուն զարկաւ՝ լռեցուց ։ Նայեցաւ որ ժողովրդոցը հետ պիտի չկրնայ խօսիլ նէ, ծունկի վրայ եկաւ՝ ու աղօթք ըրաւ ։ Աղքատ կնիկ մը ելաւ անոր քովը գնաց՝ հետը աղօթք ընելու ։ Հոն գտնուող զինուորները շատ աշխատեցան որ մէկդի առնեն զանիկայ, և կը սպառնային թէ ձիերնուն ոտքերովը պիտի կոխկըռտեն զանիկայ. բայց անիկայ տեղէն չերերաց, ու Քրիստոսի վկային հետ աղօթքը ըրաւ լմնցուց ։ Դէյլօր՝ աղօթքէն ետև գնաց ցիցը համբուրեց, ու իրեն համար պատրաստուած տակառին մէջը մտաւ, և աչուըները դէպ 'ի յերկինս վերցուցած՝ միշտ կ'աղօթէր ։

Պաշտօնատարը չորս դին նայեցաւ որ մարդ չկայ խուրձերը դիզելու. վերջապէս դժուարաւ չորս հոգի գտնուեցան, որ ասոնք էին. մէկը՝ Միւլէն, զոր տեսնողը կը վճռէր թէ՝ դահիճ ըլլալու մարդ է. մէկալը՝ Սօյս անուն անուանի գինեմոլ մը. երրորդը՝ Ուարուիք անուն մէկը, որ Էդուարդ Թագաւորին օրովը՝ Նօրֆօքի մէջ ելլող ապստամբներէն էր. մէկն ալ՝ Քինկ կը կոչուէր՝ ան սահմաններուն մէջ Թատրոնական խաղարկու մը ։ Աս չորսն էին մարտիրոսին այրուելուն համար պէտք եղած բաները հոգացողները, յարմար պաշտօնեայք անօրէն Թագուհւոյն, որ՝ աս իրենց յանձնուած գործը անգթութեամբ կատարեցին ։ Ուարուիք անանկ ուժով փայտ մը նետեց մարտիրոսին վրայ, որ սկսեց զարկած տեղէն արիւն վազել ։ "Բա՛րեկամ", ըսաւ Դէյլօր անուշութեամբ, "կրելու տանջանքս գիտես որ կ'օգտէ, ալ ի՞նչ պէտք էր ատանկ անգթութիւն" ։ Յիսունումէկերորդ սաղմոսը սկսաւ զրուցել Ագղիարէն լեզուով. Սէր Յովհաննէս Շէլդոն երբոր

լսեց, «Լաստինները չես ըսեր՝ հա՞, ա՛նզգամ» ըսելով՝ բերնին ամուր մը զարկաւ։ Խուրձերը բռնկցուցին. Դէյլօր ձեռուըները վեր վերցուց ու կ՚ըսէր. «Ողորմած Հա՛յր երկնաւոր, Յիսուսի Քրիստոսի՝ իմ Փրկչիս անուանը համար՝ հոգիս քու ձեռքդ ընդունէ»։ Հանդարտ կեցաւ բոցերուն մէջ, առանց ձայն մը հանելու կամ շարժելու, ձեռքը ձեռքին կապած։ Մինչև որ Սօյս նիզակով մը հրեց կրակին մէջը պառկըցուց զանիկայ, որ այրեցաւ մոխիր դարձաւ։ Ախուալ՝ Դէյլօրին տեղը անցնող Հռովմէական քարոզիչը՝ հետևեալ օրը քարոզ մը տուաւ աս բանիս վրայ, և քարոզին մէջ՝ Դէյլօրին անանկ համբերութեամբ դիմանալը՝ Սատանային զօրութեանը տուաւ, ու ըսաւ որ՝ Նէ-թէ անզեղջ մեռաւ նէ՝ անշուշտ դժոխքն է։

Լաւրենտիոս Սաունտէրսն ալ առջի այրուող-ներէն էր։ Ասիկայ Իթոնի դպրոցը և Կանտաբրի-գիոյ համալսարանը կրթուած էր. բայց ետքը իր մայրը ուզեց որ վաճառական ըլլայ, սակայն Լաւրենտիոս չէր ուզեր անանկ գործի մը մէջ մըտ-նել. ու քիչ մը դէմ կեցաւ նէ՝ մայրն ալ շուտ մը թող տուաւ որ ուսման պարապի և քարոզ-չութեան հետևի։ Ժամանակ մը Լիչֆիլտի մէկ գեղին մէջ՝ հաւատարմութեամբ և մեծ եռանդով քարոզչութիւն ընելէն ետև՝ Լոնտրայի մէկ եկեղե-ցւոյն քարոզիչ կարգեցաւ, Մարիամին թագուհի ըլլալէն քիչ մը առաջ։ Ան միջոցին Լաւրենտիոս միտք ունէր՝ Լիչֆիլտի թեմին քարոզչութեան պաշ-տօնէն հրաժարելու. բայց նայեցաւ որ չար ժա-մանակներ վրայ կու գան կոր նէ, ալ իր միտքին մէջ որոշեց որ իր բոլոր զօրութեամբը հոն ալ ճշմարտութիւնը քարոզէ։ 1553, Հոկտեմբերին երբոր Լոնտրա կը դառնար կու գար կոր, ճամբուն

Digitized by Google

վրայ Սիր Յովհաննէս Մօրտանդ անուն մէկու մը հանդիպեցաւ , որ արքունի ժողովին անդամն էր . աս մարդը յորդորեց զանիկայ՝ որ քարոզչութիւնը ձգէ ։ Լաւրենտիոս պատասխանեց ու ըսաւ . «Միթէ աս բանը ընելով կրնա՞մ արդարանալ Աստուծոյ առջևը , քանի որ մէկը օրինաւոր իշխանութեամբ չհանէ զիս քարոզչութեանս պաշտօնէն . եթէ հրամանքդ իշխանութիւն ունիս նէ , ըրէ ըսէ , կ՚ելլիմ»։ «Այս քեզի չեմ հրամայեր» , ըսաւ Սիր Յովհաննէս , «միայն կը խրատեմ քեզ՝ որ աս պաշտօնէն հրաժարիս» ։ Ասոր վրայ գնաց Պօններին իմացուց Լաւրենտիոսին միտքը ։ Լաւրենտիոս առաւօտուն ելաւ՝ քարոզ տուաւ . քարոզ մըն ալ կէսօրէն ետև պիտի տար , սակայն Արքեպիսկոպոսին պաշտօնեաները եկան՝ զանիկայ առին՝ ու իրենց տիրոջը առջևը տարին ։ Պօններ ըսաւ . «Դուն՝ մատնիչ , խռովարար և հերետիկոս ես» . բայց առջի երկու յանցանքները ձգեց առանց քննութեան , և երրորդը ձեռք առաւ . ու «Գոյափոխութեան վրայ ինչ կարծիք որ ունիս նէ՝ գրէ նայիմ» , ըսաւ ։ Լաւրենտիոս գրեց , վերջն ալ սա խօսքը ըսաւ . «Տէր իմ՝ դուք իմ արիւնս կը փնտռէք կոր , և պիտի գտնէք» ։ Բանտարկուեցաւ Լաւրենտիոս , և տարի մը իրեք ամիս բանտի մէջ մնաց մեծ խնդութիւնով ։ Յետոյ Հռովմէական եպիսկոպոսները ձեռք ձգեցին անարտօնութիւնը՝ որ ուզածնին ընեն հերետիկոսներուն , առանց ժամանակ անցընելու՝ նորէն մէյ մ՚ալ քննեցին Լաւրենտիոսը՝ և դատապարտութեան վճիռը տուին ։ Փետրվարի 5ին՝ մէկ քանի հոգիի ձեռամբ Գլովէնդրի քաղաքը խրկեցին ։ Յետոյ Գլովէնդրի հասան , խեղճ կօշկակար մը եկաւ՝ Լաւրենտիոսին ըսաւ . «Բարի վարդապետ՝

Աստուած զօրացընէ և մխիթարէ զքեզ" ։ «Աղօթք ըրէ ինծի համար», պատասխանեց Լաւրենտիոս. «Ես շատ անյարմար մէկ մըն եմ աս մեծ պաշտօնին. բայց իմ ողորմած Աստուածս և սիրելի Հայրս կարող է պէտք եղած ուժը տալու" ։ Ան գիշերը հասարակաց բանտը դրուեցաւ չարագործ մարդկանց մէջ. և բոլոր գիշերը աղօթքով ու քովինները յորդորելով անցուց ։ Հետևեալ առտուն՝ փետրվարի 8ին, Լօլլարտներուն այրուած տեղը տարին. զանիկայ ցիցին կապած ատենին՝ համբուրեց ցիցը ու ըսաւ. «Բարի տեսանք, խա՛չ Քրիստոսի, կեա՛նք յաւիտենական" ։ Իբր առջի ստորագրած մարտիրոսներուն պէս՝ աստ ալ տանջանքները երկար քշեց. որովհետև զանիկայ այրելու համար քիչ փայտ դրին, ու ան ալ թաց էր ։ Բայց քրիստոնէական համբերութեամբ դիմացաւ ամէնուն ալ՝ Աստուծոյ շնորհօքը զօրանալով. և թէպէտ շատ կը վախնար աս կրակի փորձէն, սակայն Տէրոջը ողորմութեամբը կարողացաւ հաւատքին վրայ հաստատ մնալու ։

Կարտինէր կարծեց որ աս մարդիկը սաստիկ դատապարտէ՝ այրէ նէ, անանկ վախ մը կ'իյնայ Բրօթէսդանդներուն սիրտը՝ որ ալ չե՛ն կրնար համարձակիլ յայտնի բրօթէսդանդութիւն դաւանելու. բայց կարծածին պէս չելաւ ։ Ան նոյն ատենը՝ որ աս մարտիրոսները կը տանջուէին, շատ ուրիշ մարդոց վրայով ալ հերետիկոսութեան ամբաստանութիւն եղաւ, որոնք քաջութեամբ կը պաշտպանէին ընդունած կրօնքնին. և երկար ժամանակ բանտի մէջ մնացողներն ալ՝ ուրախ սրտով իրենց մեռնելու օրուանը կը սպասէին ։ Ասոր Կարտինէր նայեցաւ որ ուզածին պէս չեղաւ բանը նէ, յայտնի հրատարակեց՝ թէ աս հալածանքի գործը՝

Digitized by Google

որ խնդիր առած տարեր էր , Թագուհւոյն հրամա-նովն էր . բայց ասկէ ետև՝ ալ ան գործը ուրիշ-ներուն պիտի թողու :

Գազանաբարոյն Պօններ յօժար կամօք սկսեց աս գործին : Փետրվարի 8ին՝ ասոր առջևը վեց հոգի քննուեցան . և հետևեալ օրը ամենուն ալ դա-տապարտութեան վճիռը տուաւ : Դատապար-տուողները ասոնք էին . Փիկօդ՝ մսագործ . Նայդ՝ սափրիչ , Դօմքինս՝ ոստայնանկ , Հընդր՝ արհես-տաւորի աշակերտ մը , Հաուքս՝ յարգի ազնուա-կան մը և Լաւրենտիոս անուն քահանայ մը :

Սակայն այս մարդիկը անմիջապէս չայրեցին . քանզի Ռօկրէսին և իր ընկերներուն այրուելէն՝ տէ-րութեան ամէն կողմը մեծ շփոթութիւն ինկեր էր : Թէպէտ և յայտնի էր Թագուհւոյն նախանձաւո-րութիւնէն՝ որ ասանկ բաներ պիտի ըլլային , բայց երբոր իրօք աս մարդասպանները եղան նէ՝ շատ սոսկում ինկաւ մարդոց վրայ . և ամէն կողմէն՝ «Էդուարդ Թագաւորին օրովը ասանկ անգթու-թիւններ եղած ունէ՞ր մի» ըսելու գանգատներ կը լսուէր : Աս ալ կ'ըսէին թէ՝ ոչ Էդուարդ Թա-գաւորին օրովը՝ և ոչ ալ անկէ ետև մէկը այրած ունէին Հռովմէական ըլլալուն պատճառաւը : Բա-րեկարգութեան համար դրուած օրէնքներուն տակը չմտնող Հռովմէական եկեղեցականաց՝ պինտ շատ ըրածնին՝ պաշտօնէ զրկել էր զանոնք . Թէպէտ և շատ անգամ ալ կեղծաւորեալ հնազանդութիւն մը ցուցընելով՝ կրնային աս պատիժէս ալ ազա-տիլ : Բայց հիմա բարձրագոյն աստիճանի և բարի վարուց տէր մարդիկ՝ սուտ պատճառանքներով կը բռնեն բանտը կը նետեն կոր . կը պահանջեն որ հաւատքնին ուրանան , և առանց դատաստանի կը մեռցընեն խիստ ցաւալի մահուամբ : Մինչև ան-

դամ Ուեստմարանին վրայ համարձակ չունեցող մար-դիկ՝ ան այրուող մարտիրոսներուն ցուցուցած համբերութիւնը տեսնելով՝ ապշած կը նայէին սա եղած անդթութիւններուն վրայ ։

## ԳԼՈՒԽ Ե ։

Տոմքինս կը դատապարտուի ու կ'այրուի — Հընդր կը հալածուի՝ Սուրբ Գիրք կարդալուն համար — Հոքը կը դատապարտուի ու կ'այրուի — Հիկպէտ և Քօզդօն — Լաւրէնտիոս — Ֆարրար եպիսկոպոսը կ'այրուի — Ռօլէնս Ուայթին հաւատքը ու կրած տանջանքը ։

Բայց 1555, Մարտ ամսուն մէջ՝ փայտակոյտները նորէն երևան ելան, և սկսան իրարու ետևէ բռընկիլ ։

Աս անգամ հրոյ ճարակ եղողներուն մէկն ալ Թովմաս Տոմքինս անուն ոստայնանկն էր ։ Ասիկայ շատ աստուածավախ մարդ մըն էր . մինչ զի երբոր ան ատենի սովորութեանցը պէս՝ տանտիկին խաթուններ կտաւ գործելու մանած կը բերէին, հետերնին աղօթք չըրած չէր թող տար զանոնք ։ Աս բանը՝ դրսուանց բարեպաշտութիւն մը ցուցընելու համար չէր . այլ համեմատ իր բոլոր վարմունքը կը յայտնէր իր ինչ ոգւոյ տէր մարդ ըլլալը ։ Անշուշտ սանկ մարդը Հռովմէական մոլորութեանց հաւանութիւն տալով չէր կրնար հընազանդիլ, աս յայտնի է . ուստի Պօննէրին ականջն որ հասաւ նէ աս մարդուն սանկ մէկն ըլլալը, շուտ մը բանտը դրաւ զանիկայ, ուր որ մնաց վեց ամիս՝ մինչև իր այրուելու օրը . և աս միջոցին՝ շատ հեղ քննութեան հանեցին զանիկայ ։

Պօնները եպիսկոպոսին՝ անմեղ Պոմբինսին ըրած բաներէն աղէկ կ'երեւի իր խնտոր անգութ հալածիչ մը ըլլալը ։ Ընդամ մը՝ խեղճ մարդուն մօրուքէն քաշեց՝ մէկ մասը փրցուց ։ Մէկ քանի օրէն զանիկայ Փուլհամ խրկեցին՝ որ երթայ խոտ հնձէ ։ Օր մը Պօնները ելաւ դաշտը եկաւ , նայեցաւ որ Պոմբինս սաստիկ կ'աշխատի կոր նէ՝ ըսաւ . «Հիմա աչքս մտար , աղէկ կ'աշխատիս կոր . կը յուսամ որ՝ բարի Հռովմէական մը պիտի ըլլաս»։ «Հապա», ըսաւ Պոմբինս , «Պօղոս առաքեալ չըսեր մի՝ թէ ան որ չաշխատիր , հաց ալ թող չուտէ»։ «Պօղոս առաքեալ քու առջեւդ մեծ մարդ մըն է՝ հա՞» , ըսաւ Պօնները . քանի մը ուրիշ խօսքեր ալ ընելէն ետեւ , «Աս խնտո՞ր մօրուք է՞» ըսելով , մօրուքին երեւոյթին յանցանք դրաւ , (որուն անշուշտ բուն պատճառը՝ իր չարութիւնը միտքը իյնալն էր ,) եւ հրաման ըրաւ որ՝ սափրիչ մը բերեն մօրուքը ածիլեն ։

Պօնները շատ աշխատելէն ետեւ՝ նայեցաւ որ աս բարի մարդը իր հաւատքէն չխախտիր կոր նէ , Կեցի՛ր՝ ատոր իր քաշելու տանջանքին փորձը ընեմ , նայիմ կը դիմանա՞յ մի , ըսաւ միտքէն , ու օր մը՝ իր եկեղեցականներէն մէկ քանին քովը եղած ատենը՝ Պոմբինսը կանչել տուաւ . ծեծելը ձգեց , հիմա ալ այրել սկսեց ողորմելի մարդը ։ Հաստ մոմ մը կար սեղանին վրայ . զանիկայ առաւ Պօնները , քաշեց Պոմբինսին մատները՝ բոցին վրայ բռնեց խել մը ատեն ։ Խեղճ մարդը՝ Եպիսկոպոսին ան զարհուրելի կատաղութիւնը տեսաւ նէ , Ալ վերջերնիս եկաւ , ըսաւ միտքէն , եւ սկսաւ աղօթք ընել՝ ըսելով . «Ով Տէր՝ քու ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս»։ Ետքը աս բանը իր մէկ բարեկամին պատմեց , ու ըսաւ թէ՝ «Ան միջոցին Աստուած



Digitized by Google

միտքս անանկ յափշտակեց՝ որ ցաւ չիմացայ , և առանց երերալու թող տուի ձեռքս՝ ինչուան որ ջիղերն ու երակները քաշուեցան , և արիւնը Հարփսֆիլտին երեսը ցայթկեց . որ ան ատենը Հարփսֆիլտ աղաչեց Եպիսկոպոսին որ թող տայ : Ըս բանը Պօնները Փուլհամի պալատին մեծ սրահին մէջն եղաւ :

Ըն նոյն օրը՝ կէս օրէն ետև Գօմքինս անգամ մըն ալ Պօնները և իր գործակցացը դիմացն ելաւ , որ աւելի վերջի ելլելն եղաւ : Փաթ քաղքին եպիսկոպոսը շատ յորդորեց որ ան հերետիկոսական գաղափարները ձգէ . "Տէր իմ", ըսաւ Գօմքինս , "ես ազատութեան մէջ ծնայ , և ազատութեան մէջ մեծցայ . բայց հիմա՝ որ ճշմարտութիւնը սորվեցայ նէ , ալ զանիկայ չեմ կրնար ձգել , հապա անոր մէջը պիտի մնամ մինչև 'ի մահ": Ընկէ ետև անոր դատապարտութեան վճիռը տուին , ու պաշտօնատարին ձեռքը յանձնեցին . բայց անոր մահը ինչուան Մարտի 6 ուշացուցին . և ան օրը Սմիթֆիլտի մէջ այրեցին զանիկայ առտուանց ժամը ութին : Զարմանալի համբերութեամբ կրեց Գօմքինս ան սոսկալի տանջանքը , և խաղաղ սըրտով մեռաւ :

Մարտի 10ին՝ ուրիշ մէկն ալ մարտիրոսացաւ Պրէնդվուտ քաղաքը : Ուլիէլմոս Հընդր անուն պատանի մըն էր աս՝ տասնուինը տարեկան՝ և դեռ աշակերտութենէ չելած : Պօններ հրաման հաներ էր որ՝ Զատկին ամէն մարդ հաղորդ առնէ . աս տղան չառաւ . ուստի սպառնալիք ըրին թէ՝ զինքը Եպիսկոպոսին պիտի տանին : Վարպետը՝ աս տղուն պատճառաւը չելլէ գլուխս փորձանքի մը հանդիպի ըսելով՝ բռնեց զանիկայ Պրէնդվուտ իր հօրը տունը խրկեց : Հընդր վեց շաբաթի չափ հոն

Digitized by Google

կեցաւ ․ ու օր մը ելաւ եկեղեցի գնաց , նայեցաւ որ՝ սեղանի մը վրայ Անգղիարէն Աստուածաշունչ մը կայ , բացաւ ու սկսեց կարդալ ։ Եպիսկոպոսին սպասաւորին պաշտօնեաներէն Ըգվէլ անուն մէկը վրայ եկաւ , տեսաւ որ Հընդր Աստուածաշունչ կը կարդայ կոր նէ , «Ա՛ս ի՞նչ բան ունի քու ձեռքդ», ըսաւ ․ «կարդացածդ կը հասկընա՞ս կոր , կարօ՞ղ ես դուն Սուրբ Գիրք մեկնելու»։ Պատանին պարկեշտութեամբ մը պատասխան տուաւ ․ «Հա՛յր Ըգվէլ՝ ես Սուրբ Գրոց խօսքերուն մեկնութիւն չեմ կրնար տալ ․ քանզի կարգաւոր չեմ ․ աս տեղը Աստուածաշունչ մը գտայ , ես ինծի մխիթարութիւն գտնելու համար առեր կը կարդամ կոր , ուրիշ բան չէ ըրածս»։ Ըսեր Հռովմէականը դարձաւ սա խօսքը ըսաւ , որ ինչուան հիմա Հռովմէականաց մէջ իբրև առած կը գործածուի ․ «Ո՛րչափ որ Անգղիարէն Աստուածաշունչ գիրքը տարածուեցաւ , այնչափ ալ աշխարհիս ուրախութիւնը իրմէ պակսեցաւ»։ Ետքի խօսակցութիւններէն ալ կ'երևի ան օրերուն ինչ օրեր ըլլալը ։

— Հընդր ․ «Չէ՛ չէ՛ մ'ըսեր՝ հա՛յր Ըգվէլ , ասիկայ Աստուծոյ խօսքն է , ուսկից՝ ո՛վ որ շնորհք ունի նէ , կրնայ սորվիլ թէ ո՛րն է Աստուծոյ հաճելին և ո՛րն է անհաճոյն»։ — Ըգվէլ ․ «Հիմա մի սորվեցանք Աստուծոյ հաճոյ կամ անհաճոյ եղած բաները ․ առաջ չէ՞ինք գիտեր»։ — Հընդր ․ «Թէ որ Աստուածաշունչը հիմա ալ ձեռուընիս ըլլար նէ , ինչպէս որ էր քիչ մը առաջ , անատենը աւելի կը սորվէինք ․ և իմ աղօթքս աղաչանքս աս է՝ որ աս օրհնեալ Աստուածաշունչը միշտ ձեռուընիս ըլլայ»։ Վերջ մ'ալ երկընցուցին խօսքը ․ ետքը Ըգվէլ «Իմացայ», ըսաւ , «դուն ալ թագուհւոյն օրէնքները արհամարհողներուն մէկն ես եղեր ․ և յայտնի

Digitized by Google

է թէ՝ «Ես պատճառաւ Լոնտրայէն փախեր եկեր եմ. բայց գիտցած ըլլաս որ՝ եթէ դարձի չգաս նէ, դուն ալ և շատ ուրիշ հերետիկոսներ ալ պիտի խորովիք ձեր ըրած կարծիքներուն համար»։ Հընդը պատասխանեց. «Թող ես իր խօսքին հաւատալու և իր անունը դաւանելու շնորհքը ունենամ իմ Աստուծմէս, ու ալ ինչ հետևի նէ՝ հոգս չէ. թող հետևի»։ «Իր անունը մի պիտի դաւանիս. քա՛ւ լիցի. դուք ամէնքդ ալ Սատանային քովը դժոխքը պիտի երթաք»։ Ըս ըսելով՝ արտորնօք եկեղեցիէն դուրս ելաւ ծեր Հռովմէականը, ու մօտը եղող գինետուն մը մտաւ, և հոն. Մուտ անուն քահանայ մը գտնելով՝ ըսաւ թէ՝ «Հընդը եկեղեցին նստեր Աստուածաշունչ կը կարդայ կոր»։ Քահանան անմիջապէս եկեղեցի վազեց, ու հարցուց Հընդըին թէ՝ «Որո՞ւ հրամանաւ Աստուածաշունչ կը կարդաս կոր». շուտ մը խօսքը գոյափոխութեան վարդապետութեանը հասաւ. և Յովհաննու վեցերորդ գլխուն վրայ քիչ մը խօսակցութիւն ըլլալէն ետև, «Ես քեզի կը հասկըցընեմ», ըսաւ քահանան, ելաւ գնաց։ Հընդը գիտնալով գլխուն գալիքը՝ շուտ մը ելաւ տուն գնաց, ու իր հօրը միաս բարով ըսելով՝ քաղաքէն դուրս փախաւ։

Մէկ քանի օրէն՝ ան տեղի դատաւորը հօրը հրաման խաւրեց՝ որ զաւակը գտնէ ձեռուընին տայ։ «Վա՜յ», ըսաւ տղուն հայրը, «Ես իմ զաւակս պիտի փնտռեմ ու ձեռուընին տամ որ այրե՞ն»։ Բայց ինչ օգուտ, ճարը չկար, փնտռելու էր։ Ուստի խեղճ մարդը՝ Կ՚ելլեմ կ՚երթամ՝ մէկ քանի օր կը պտըտիմ՝ կու գամ չգտայ կ՚ըսեմ՝ մէկդի կ՚ելլեմ, կարելի է այսչափով կը լմըննայ ըսելով՝ ճամբայ ելաւ. մէկ քանի օր անդին

Digitized by Google

տաղին պտըտելէն ետև, դժբաղդաբար որդին զինքը տեսաւ հեռուէն, ու եկաւ դիմաւորեց և իմանալով որ իր հայրը անանկ մեկ վտանգի մը մէջ ինկեր է, Ուրեմն "Տուն գալու եմ" ըսաւ, ելաւ հօրը հետ եկաւ. Թէպէտ աս բանիս հայրը ամենևին հաճութիւն չունէր:

Իրիկունը հասան տուն: Դատաւորին պաշտօնատարը անմիջապէս առաւ տարաւ տղան, ոտուըները կոճղի մէջ դրաւ մինչև հետևեալ առտուն. առտուան դատաւորը դիմացը կանչեց Հընդըրը, Աստուածաշունչ մը բերել տուաւ, և գոյափոխութեան վրայ ունեցած կարծիքները քննեց: Հետևեալ օրը՝ Պօններ եպիսկոպոսին խրկուեցաւ. Եպիսկոպոսը առջի բերանը անուշութիւնով գընաց, և ըսաւ որ՝ "Դարձի գաս նէ, ապաշխարանք քաշելէն ալ կ'ազատեմ քեզ": Տեսաւ որ չյաջողեցաւ նէ, հրամայեց որ ոտուըները կոճեղի մէջ դնեն: Երկու օր երկու գիշեր առանց կերակուրի՝ կտոր մը սև հացի կեղևով ու գաւաթ մը ջուրով մնաց բանտին մէջ:

Ետքը նորէն կանչեցին՝ քննեցին: Աս քննութեանը վրայ՝ բանտապետին սաստիկ հրաման ըրին որ՝ զանազան երկաթի կապանքներ դնէ վրան՝ որչափ որ կարող է տանիլ:

Ինը ամիս չափ կրկին և կրկին քննուելով բանտը մնալէն ետև՝ անգամ մըն ալ Եպիսկոպոսին դիմացը հանեցին Սուրբ Պօղոսի եկեղեցւոյն խորհրդարանը՝ փետրվարի 9ին. եղբայրն ալ աս ժողովոյս մէջն էր: Առաջ անոր դաւանութիւնը կարդացին. և որովհետև "Հաղորդութիւնով՝ Քրիստոսի մարմինը հոգևորապէս կ'ընդունիմ", ըսեր էր, "Հացը՝ հոգևորապէս Քրիստոսի մարմի՞նն է ըսել կ'ուզես", հարցուց Պօններ: "Ոչ",

ըսաւ պատանին. «Աս ըսել կ'ուզեմ թէ՝ երբոր արժանաւորապէս մասնակից կ'ըլլամ սուրբ հաղորդութեան, հոգեւորապէս սնունդ կ'ընդունիմ իմ Տէրոջմէս հաւատքով. եւ Քրիստոսի՝ իր չարչարանքը եւ պատուական մահուանը ու յարութիւն առնելովը բոլոր ճշմարիտ հաւատացելոց համար պատրաստած պարգեւներուն հաղորդ կ'ըլլամ. հացը՝ ոչ հոգեւորապէս Քրիստոս է, եւ ոչ մարմնաւորապէս»:

Վերջապէս Եպիսկոպոսը քննութիւնը լմնցուց սա խօսքերով. «Դու միշտ քեզ աս կարծիքներուդ վրայ առանց յամառել գտայ, ու ալ ասկէ ետեւ ամենեւին յոյս չունիմ քեզ Կաթուղիկէ եկեղեցւոյն դարձընելու. դուն յաւիտեան առանց ապականեալ անգամ պիտի մնաս»: Յետոյ առանց անդամները եկեղեցիէն կտրելու համար՝ Հռովմէականաց ունեցած կանոնովը դատապարտեց Հընդըրը: Բայց քիչ մը ետքը՝ նորէն կանչեց, «Եթէ ուրանաս նէ», ըսաւ, «40 լիրա կը բաշխեմ քեզի, եւ կ'ուզես՝ վաճառականութեան կը դնեմ, կ'ուզես՝ իմ տանս տնտես կ'ընեմ քեզ»: «Մեծապէս շնորհակալ եմ աս շնորհքներուդ տէր իմ», ըսաւ պատանին, «բայց իմ խիղճս Սուրբ Գրքով համոզել չկրնալէդ ետեւ՝ ալ առանց խոստմունքներ ընելդ ազդուութիւն մը չըներ ինծի. քանզի աշխարհիս սիրոյն համար չեմ կրնար զԱստուած ձգել. ինչու որ աշխարհիս բոլոր բաները կորուստ կը սեպեմ Քրիստոսի սիրոյն հետ բաղդատելով»:

«Ա՞յդպէս», ըսաւ Պօններ, «յաւիտեան դատապարտեալ ես»: Ասոր պատասխան պատանին ալ ըսաւ թէ՝ «Աստուած արդարութեամբ կը դատէ, եւ մարդոց անիրաւութեամբ դատապարտածները ինք կ'արդարացընէ»: Մարտի 28ին՝ շաբաթ օրը

Digitized by Google

Հընդրը Պրէնդվուտ խրկեցին , և վճռեցին որ՝ երեքշաբթի օրը այրուի : Սուան ըսուած իջևանը եղած ատենը՝ իր հայրն ու մայրը թոյլտուութիւն գտան անոր հետ տեսութիւն ընելու , և իբրև ճշմարիտ աշակերտք Քրիստոսի՝ քաջալերութիւն տուին իրենց որդւոյն՝ ճշմարտութեանը վկայ ըլլալու : Մանաւանդ մայրը ըսաւ . "Որդեակ , կ'ուրախանամ որ Քրիստոսի անուանը համար ասանկ իր կեանքը զոհ ընող զաւկի մը տէր եղայ" : "Քաշելու քիչ մը տանջանացս փոխարէն՝ Քրիստոս ուրախութեան պսակ մը պատրաստած է ինծի . չե՞ս ուրախանար՝ մա՛յր իմ", ըսաւ Հընդր անոր պատասխան : Անատեն մայրը ծունկի վրայ եկաւ և աղաչեց Աստուծոյ՝ որ զօրացընէ իր որդին մինչև վերջը համբերութեամբ դիմանալու : Հիկպէտ անուն մէկը՝ որ ինքն ալ պիտի մարտիրոսանար , և մէկ քանի ուրիշներ՝ որ հոն կեցեր էին , շատ ուրախացան աս աստուածավախ ծնողաց ասանկ յօժար կամօք զաւակնին Քրիստոսի նուիրելուն վրայ:

Երեքշաբթի օրը առտուանց կանուխ պաշտօնատարը այրելու տեղը տարաւ Հընդրը : Տարած ատեննին՝ ճամբուն մէջ հայրը դիմացն ելաւ , ու լալով ըսաւ . "Աստուած հետդ ըլլայ , որդիս Կուլիէլմոս": Ան ալ անոր՝ "Աստուած քու հետդ ալ ըլլայ՝ հայր իմ , և քեզ մխիթարէ . կը յուսամ որ՝ երկինքը ցնծութիւնով իրար կը տեսնենք նորէն", ըսաւ : Հասան քաղաքին ծայրը՝ ցիցը տնկուած տեղը , բայց փայտը դեռ պատրաստ չըլլալուն՝ սպասել հարկ եղաւ : Աս միջոցին ներողութեան թուղթ մը տուին Հընդրին , որ ուրանայ՝ ազատի : "Քա՛ւ լիցի . ես Աստուծոյ օգնականութեամբը պիտի չուրանամ", ըսաւ պատանին : Յետոյ ցիցին կապեցին . Հընդր աղաչեց

ժողովրդոցը որ իրեն համար աղօթք ընեն՝ քանի որ զինքը ողջ կը տեսնեն ։ «Բեզի՞ համար աղօթք ընենք», պոռաց Պրաուն՝ աստր բռնուելուն պատճառ եղող դատաւորը, «քեզի՞ համար. շան մը համար աղօթք կ'ընեմ, քեզի համար չեմ ըներ»։ «Կը խնդրեմ Աստուծմէ՝ որ ասիկայ մեղք չսեպուի քեզի վերջին օրը», պատասխանեց հեզահոգի և հաւատարիմ վկայն Քրիստոսի ։

Քահանայ մը քովը եկաւ, ու իրենց մոլորական գրքերէն մէկ հատ մը երկընցուց որ առնէ ։ «Մէկդի՛ գնա՝ սուտ մարգարէ», ըսաւ Հընդր. դարձաւ ժողովուրդին ալ պոռալով ըսաւ, «Զգուշացէք ասս մարդոցմէ, և անոնց պղծութիւններէն ետ կեցէք, որ չըլլայ թէ դուք ալ անոնց կորստեանը հաղորդ ըլլաք»։ Տմարդի քահանան՝ «Կը տեսնե՞ս», ըսաւ, «ահա՛ հիմա խնտոր որ հոս պիտի այրիս նէ, դժոխքին մէջն ալ յաւիտեանս անանկ պիտի այրիս»։ Մօտը կայնողներուն մէկը՝ «Աստուած ողորմի՛ հոգւոյդ», ըսաւ. ամէնը մէկէն՝ Ամէն պոռացին, և փայտակոյտը բռընկեցաւ ։ Հընդր քովը ունեցած Սաղմոսը՝ եղբօրը նետեց. եղբայրն ալ՝ «Կուլիէլմոս», ըսաւ, «Քրիստոսի չարչարանացը վրայ մտածէ՛, մի՛ վախնար, քա՛ջ եղիր»։ «Չեմ վախնար», պատասխանեց ծաղկահասակ վկան. յետոյ աղաղակեց. «Տէ՛ր՝ Տէ՛ր՝ ընդունէ՛ իմ հոգիս»։ Այսպէս աստուածավախ Կուլիէլմոս Հընդր իր անձը ճշմարտութեան զոհեց ։

Նոյն օրը այրեցին նաև Թովմաս Հիկպէտ անուն Էսսէքսցի մը, և Թովմաս Քօսդօն անուն ազնուական մը ։ Ասոնց երկուքն ալ ճշմարտութիւնը քաջութեամբ պաշտպանող մարդիկ էին, և Պօններին հրամանաւը բռնուեցան՝ Քօլչէսդր երկուեցան ։ Ասոնք երևելի մարդիկ ըլլալով՝

Digitized by Google

Պօննէր վախցաւ որ ասոնց այրուելովը ետքէն խռովութիւն մը կ'ելլէ , անոր համար ինքը մէկ քանի ընկերներով հոն գնաց՝ զանոնք համոզելու և մայր սուրբ եկեղեցւոյ գիրկը դարձընելու ։ Ըրած աշխատութիւններուն բոլորը պարապը գնաց . ուստի նորէն Լոնտրա դարձաւ եկաւ՝ աս մարդիկը և ուրիշ մէկ քանի հերետիկոս անունով ամբաստանեալներ ալ հետը առած ։

Երբոր որոշեցին դատապարտել աս երկու մարդիկը , Եպիսկոպոսին առջևը հանեցին զանոնք Սուրբ Պօղոսի եկեղեցւոյն խորհրդարանը ։ Աս եղաւ Փետրվարի 27ին՝ Կիրակի օրը . առաջուան պէս կրկին հարցուցին թէ՝ Մոլորութիւններնիդ ուրանա՞ք մի պիտի , թէ չէ . վաղը եկէք պատասխանը տուէք՝ ըսին ։ Ասոնց դէմ եղած ամբաստանութիւնը դիտելու արժանաւոր բան է . բայց շատ երկար ըլլալուն՝ մէկ մասը միայն դնենք հոս ։ Մէջը ասանկ գրուած էր թէ՝ "Աս մարդիկը իրենց կնքահօրը երաշխաւորութեամբը քրիստոնէական եկեղեցւոյն հաւատքովը մկրտուեցան , և չափահաս ըլլալով դրոշմը ընդունած ատեննին՝ խոստացան ան հաւատքովը մնալ , և ան հաւատքին պահանջածին պէս ընդունիլ՝ թէ Քրիստոսի բնական մարմինն ու արիւնը իրապէս ներկայ կ'ըլլայ հացի և գինիի կերպարանքով հաղորդութեան սեղանին վրայ ։ Թէ աս մարդիկը ճշմարիտ պատճառ մը չունին աս հաւատքը ձգելու ։ Թէ շատ մարդիկ , որոնց հերետիկոս ըլլալը աղէկ գիտէին , գովեցին մեր առջևը , և անոնց կարծիքները ընդուներ են , և մոլորեր հերետիկոս եղեր են" ։ Ասոնք ալ աս բաներուն ամենուն ալ պատասխանը տուեր են իրենց վարդապետութիւններէն անոնց մէջը գրուածները ընդունելով ։ Աս մարդոցը դատապար-

տութեան. վճիռը ինչուան Մարտի ինը ուշացուցին ։ Մարտի 9ին՝ Նորէն Եպիսկոպոսին խորհրդարանը փարուեցան , հաւատոյ դատաւորութիւններն ալ հետերնին առած , զոր կարդացին ժողովրդոց առջեւը՝ շատ մեծ դժուարութեամբ հրաման առնելով Եպիսկոպոսէն ։

Յետոյ Հիկալէաին ու Պէնդոմին դատապարտութեան վճիռն ելաւ , և Ախուկէյրի բանտը խրկուեցան ։ Մարտի 23ին՝ շաբաթ օրը առաւօտուանց ժամը չորսին հանեցին զանոնք , ու Ճաստէրաի պաշտօնատարին ձեռքը յանձնեցին ։ Անկէ ետև սայլի վրայ կապեցին ու Պրէնդվոլա խրկեցին , ու չորս օրէն ետքը այրուեցան ։

Մարտի 20ին՝ Յովհաննէս Լաւրենտիոսը այրեցին Քօյչէապրի մէջ ։ Ասիկայ Դոմինիկեանն և անոր ընկերներուն հետ մէկտեղ դատապարտուեցաւ , բայց քահանայ էր , և պէտք էր որ առաջ կարգը առնուէր , անոր համար ուշացաւ իր մահը ։ Այնքան ժամանակ այնչափ նեղութեանց մէջ ինկած մնացեր էր՝ որ ծնկաընները չէր բռներ , և ուստի ոտքով ցիցը երթալ չկրնալուն՝ աթոռի մը վրայ նստեցուցին տարին , ու անանկ աթոռի վրայ նստած այրեցաւ ։

Աստէրը նահանգը՝ հերետիկոսութիւնով ապատրկուածներուն առջենը սեպուած էր . և այնչափ մարդ հոն այրելուն պատճառը սա էր՝ որ ժողովրդոց մէջ վախ մը ելնայ , և հալածման պատճառաւ Աստուրայէն փախչողները չկրնան հոն երթալ պատսպարուիլ ։ Բայց ինչ օգուտ , Աւետարանին վարդապետութիւնները ան ժողովրդոցը մէջ շատ հաստատ արմատ կապեր էր ։ Լաւրենտիոս աթոռին վրայ նստեր էր , խել մը մանր տղաք կրակին բոլորտիքը շարուեցան , անուշ ձայնով մը սա խօսքը

կը կարդային. «Տէր՝ քու խոստմունքիդ պէս պա-
հէ քու ծառադ». ինչպէս որ գրուած է թէ,
«Պզտիկ տղոց ու կաթնկերներու բերնէն օրհնու-
թիւն հաստատեցիր»: Ըս բանիս մէջ չէ թէ միայն
Աստուծոյ փառքին մեծութիւնը կ'երեւի՝ աս պզտի
տղոցը արտին մէջ ասանկ իր շնորհքը վերցնելովը,
այլ և ան տղաքը անանկ Աստուծոյ գիտութիւնովը
մեծցընող ծնողաց քրիստոնէական գովելի նախան-
ձաւորութիւնն ալ բացայայտ կը տեսնուի:

Մարտի 30ին՝ Փարար եպիսկոպոսը այրեցին
Քարմարթէն քաղաքը: Ըսանկցուցինք աս մարդը
Հռովմէականաց ատեղի մէկն էր, և մինչև անգամ
Եգիպտոսի թագաւորին օրովը համարձակեցան շատ
մը գեղ զօրավարութիւններ ընել: Մարիամ Թա-
գուհի ըլլալուն պէս, սկսեցին նորէն աս մարդուն
ձեռնէն իյնալ: Բայց աս մեզանի ըրած անիրա-
ւութիւններին հաւատոյ վերաբերեալ ըլլալով՝
փետրվարի 4ին՝ Ռօճէրսին ու Հուփրին հետ միա-
տեղ քննուեցաւ Կարտինէր եպիսկոպոսին առջեւը:

Փարար եպիսկոպոսին պատմութիւնը՝ շատ ու-
րիշ մարտիրոսներու պատմութեանց չափ մանրա-
մասն չէ. բայց գլխաւոր բաները գիտենք: Մարտի
13ին՝ վերջին անգամ Եպիսկոպոսին դիմացն ելեր
եղաւ, քանզի դատապարտուած դուրս ելաւ:
Յետոյ արշաւանաւորին քովը պահ տուին, և
Մարտի 30ին այրեցին: Փոքր պատմագիրը զար-
մանալի բան մը կը պատմէ աս մարդուն այրուած
ժամանակը ցուցուցած համբերութեանը վրայ:
Ճ՚օնս անուն պատանի մը՝ Ռէյլըցի ասպետի մը
որդին, Փարարին այրուելէն քանի մը օր առաջ
քովը եկաւ, և սկսաւ ողբալ ան քաշելու դառն
տանջանքին վրայ: Փարար եպիսկոպոսը՝ որ հա-
տատուն յուսով կը հաւատար թէ ինքն ալ միւս

Digitized by Google

մարտիրոսներուն պէս պիտի ընդունի ան երկնային զօրութիւնը, որով կրնար տանիլ տանջանքներու դիմանալ, ըսաւ պատանիին. «Եյրուած ժամանակս զգուշութեամբ նայէ, թէ որ անգամ մը երերալս տեսնես նէ, քարոզած վարդապետութեանս մի՛ հաւատար»։ «Մնտոր որ ըսաւ նէ, ճիշդ անանկ ըրաւ», կ'ըսէ Փօքս, «քանզի անանկ համբերութեամբ կայնեցաւ՝ որ բնաւ տեղէն չերերաց. հապա ինչ դիրքով որ կայնեցաւ նէ՝ անանկ մնաց, ինչուան որ մարգուն մէկը գաւազանով մը գլխուն զարկաւ, ու կրակին մէջը ձգեց»։

Ռօլէնս Հուայդ անուն խեղճ ձկնորսի մը վրայ ալ դիտելու արժանի պատմութիւն մը կայ, որ սեպէ թէ՝ ան ալ Փարարին այրուած տեղնները այրեցաւ։ Իր դրացիները կը յարգէին զինքը բարի վարուց տէր մարդ մը ըլլալուն համար, և առաջ Հռովմէական աւելորդապաշտութիւնները շատ ամուր պահող մէկն էր։ Եօիկայ Եդուարդ թագաւորին օրովը ճշմարտութեան գիտութեանը հասաւ Աստուծոյ շնորհօքը, և մեծ եռանդով ալ անկէ ետև աստուածգիտութեան պարապեցաւ։ Ինք կարդալ չէր գիտեր. ուստի տղան դպրատուն խրկեց, կարդալ սորվել տուաւ, և ամէն իրիկուն Սուրբ Գիրք և կամ ուրիշ հոգևոր գրքեր կը կարդացընէր, ու ինք մտիկ կ'ընէր։ Եւ ձկնորսը չափազանց սուր յիշողութեան տէր և կենաց ջուրին շատ ծարուած մարդ մը ըլլալով, լսած ճըշմարտութիւնը մտքին մէջ կը դանձէր. և սրտի զգացումով ան սորված ճշմարտութիւնները ուրիշներուն քարոզելով, շատ մարդոց 'ի մահուանէ 'ի կեանս փոխուելուն պատճառ եղաւ։

Յայտնի էր որ՝ Հռովմէական հալածիչները երկար ատեն հանգիստ պիտի չթողուին զանիկայ։

Իր բարեկամները խրատեցին զանիկայ որ փախչի. բայց անիկայ գիտնալով որ ինքը շատերուն օրինակ պիտի ըլլայ, հաստատ որոշեց որ իր եղած տեղը մնայ: Վերջապէս խեղճ մարդը բռնեցին՝ Լանտաւի եպիսկոպոսին առջեւը հանեցին, եւ քանի քանի անգամ քննելէն ետեւ՝ Պապական բռնած բերդը բանտարկեցին տարի մը: Ու միջոցին՝ փախչելու պատեհութիւններ շատ ունեցաւ. բայց որովհետեւ քովը մարդ երթալու թող կու տային, եւ ով որ ուզէր՝ կրնար գալ տեսութիւն ընել հետը, այնչափին գոհ ըլլալով՝ իրեն պարտքը սեպեց բանտը մնալ: Վերջապէս փորձութեան ժամանակը հասաւ. Ուոլէնը կրկին Եպիսկոպոսին դիմացը հանեցին. Եպիսկոպոսը երկար բարակ յորդորանք մը ըրաւ որ եկեղեցւոյն դառնայ: Ուոլէնս ալ մինակ սա պարզ պատասխանը տուաւ ըսածներուն դէմ. «Տէր իմ՝ փառք Աստուծոյ որ քրիստոնեայ եմ, եւ Աստուծոյ խօսքին հակառակ կարծիքներ չունիմ. թէ որ անանկ կարծիք մը կամ վարդապետութիւն մը ընդունած եմ նէ, կը փափաքիմ սխալս շտկելու Աստուծոյ խօսքովը՝ ինչպէս որ քրիստոնէին կը վայլէ ընել»:

Ասոր վրայ խեղճ ձկնորսին դատապարտութեան վճիռը եղաւ. եւ քիչ մը ետքը հրամանն եղաւ որ այրուի: Երբոր ցիցին քովը կ'երթար կինն ու որդիքը տեսաւ, որ կայներ կու լային: Ու իր սրտին ընտանիքը տեսնելուն՝ սիրտը թուլնալ եղաւ. «Զա՛ք մարմին», պոռաց՝ կուրծքին զարնելով, «մեծի արգելք պիտի ըլլաս. զիս յաղթել կ'ուզես. Աստուծոյ շնորհօքը դուն պիտի յաղթուիս»: Դարբինը երբոր զանիկայ ցիցին կը կապէր, «Ո՛վ բարեկամ», ըսաւ Ուոլէնս, «կ'աղաչեմ ամուր զարկ, կարելի է որ մարմինս շատ ուժով պատերազմի:

Բայց ո՛վ Տէր՝ քու մեծ ողորմութեամբդ զօրութիւն և համբերութիւն տո՛ւր ինծի"։ Տէյն անուն մէկը՝ որ աս բաները կը պատմէ , հոն մօտը կայներ էր . և Իոլէնս ըսաւ անոր թէ՝ "Մարմինիս ու հոգիիս մէջը պատերազմ կայ , թէ որ նկուն ըլլալու նշան մը վրաս տեսնես , մատդ վեր վերցուր . կը յուսամ որ աս միջոցով միտքս վրաս գայ՝ ու ինքզինքս բռնեմ"։

Խուրձերն ու յարդը բոլորտիքը դիզած ատեննին՝ ինքն ալ մէկտեղ զուարթութեամբ մը կը տեղաւորէր զանոնք հետերնին ։ Քահանային մէկը բարձր տեղ մը կայնած՝ ժողվուած բազմութեան քարոզ կու տար . Իոլէնս ալ մտիկ ըրաւ՝ ինչուան որ քահանան սկսեց չարաչար կշտամբել հացին ու գինիին իրապէս Քրիստոսի մարմինն ու արիւնը ըլլալը չընդունողներուն բոլորն ալ ։ Ընատենը ալ չդիմանալով Իոլէնս յանդիմանեց զանիկայ՝ ու ըսաւ . "Հապա ան Քրիստոսի ըսած՝ 'Ա՛ս ըրէք զիս յիշելու համար' խօսքն ի՞նչ է"։ Աս որ լսեց նէ քահանան՝ կամացուկ մը լռեց . և հրաման եղաւ որ փայտակոյտը բռընկցընեն , ու բռընկցուցին . Իոլէնս ձեռուըները կրակին մէջը պտըտցուց , ինչուան որ այրեցան հատան . ոտուըներն ալ այրեցան , ու մարմինը շղթային վրայէն ինկաւ կրակին մէջը ։ Երկարատև սաստիկ տանջանք մը եղաւ քաշածը , բայց համբերութեամբ կրեց , բարձր ձայնով մը՝ "Ո՛վ Տէր՝ ընդունէ հոգիս , ո՛վ Տէր՝ ընդունէ հոգիս", պոռալով ։ Փոքս աս հաւատարիմ վկային վրայով շատ մանրամասն պատմութիւններ ունի , վերոյիշեալ Տէյն անուն Իոլէնային բարեկամէն առած ։ Մէկը սա է , թէ շատ մարդիկ՝ Իոլէնս ցիցին կապուելէն ետև՝ քովը երթալով ձեռքը կը բռնէին . իսկ Տէյն ձեռքը բռնեց կեցաւ քովը ,

Digitized by Google

մինչև որ բռնկեցաւ փայտակոյտը, անատենը մէկ-դի քաշուեցաւ։ Քահանան աս բանը տեսնելով՝ բարկանալով մը ըսաւ անոր, թէ "Ատանկ մարդուն ձեռքը բռնել կ'ըլլա՞յ, չէ՞ս գիտեր որ հերետիկոս է, և եկեղեցին ալ դատապարտած է զանիկայ":

Փարար եպիսկոպոսին այրուելէն ետև՝ մարդ չայրեցին երկու իրեք շաբաթ։ Ասոր պատճառը շատ յայտնի չէ. կարելի է որ աս արիւնահեղութիւններուն համար հասարակութեան մէջ ելած շշունջէն եղած ըլլայ, և կամ թէ Զատիկ ըլլալէն. վասն զի հաւանական կը թուի թէ հալածիչները՝ զատկական արարողութիւններով զբաղած ըլլալով՝ ժամանակ չունեցան մարդ այրելու գործերին ալ տեսնելու ան օրերը։

## ԳԼՈՒԽ Զ.

Մարշին տանջանքը ու մահը — Քարտմէյքր և Ուարն — Սիմփսոն և Էրտիլէյ — Հաուքս — Ուադս։

Զատկէն ետև՝ 1555ին՝ Բրօթէսդանդները այրելը նորէն ձեռք առին։ Ապրիլի 4ին՝ Գէորգ Մարշ մարտիրոսացեալ Սաունտէրս քարոզչին փոխանորդը այրեցին Չէսդր քաղաքը։ Երբոր նոր բռնած՝ տարին զանիկայ Տէրպայի Կոմսին առջևը, Բրօթէսդանդ եպիսկոպոսէ ձեռնադրուած ըլլալուն վըրայով խօսեցան, ու հարցուցին թէ՝ "Հանդարտ խիղճով պաշտօնդ կընայիր կատարել": "Այո", ըսաւ Մարշ։ "Ուրեմն քու տուած հաղորդութիւնդ հաղորդութիւն չէ՝ սատանայական բան մըն է", ը-

Digitized by Google

տալ Հռովմէադաւան քահանայքին մէկը՝ որ քովը կայներ էր ։ Անկէ ետեւ Մարշը քննութեան կը հանէին ։ Դուն տգէտ ես՝ յամառ ես՝ ինքնահաւան ես՝ ըսելով, խել մը սաստիկ նախատական խօսքեր կ'ընէին ։ Ան ալ հեզութեամբ այսպէս պատասխան կու տար ըրած խօսքերնուն. «Ես կամաւ կ'ուզեմ ուրիշ բան չգիտնալ, այլ միայն զՅիսուս Քրիստոս՝ և զնա ալ խաչը ելած ։ Իմ հաւատքս միմիայն Աստուծոյ խօսքին վրայ հիմնեալ է, և աներկբայ գիտեմ որ՝ Աստուծոյ ընդունելի հաւատք մին է, և անով պիտի կրնամ ազատ մնալ Աստուծոյ բարկութենէն դատաստանին օրը ։ Ես յամառութեամբ՝ ինքնահաւանութեամբ՝ փառասիրութեամբ և կամ աշխարհային նպատակներով ձեզի խօսք մը՝ բան մը չըսի, հապա ինչ որ ըսի, բարի խղճմտանքով և Աստուծոյ երկիւղովս էր»։ Վերջապէս Լանքաստեր խրկեցին, ու հոն գողերուն բանտը դրին՝ ոտուըները երկաթի մէջ ։ Մարշ կ'ըսէ թէ՝ Հռովմէականք շատ գէշ խօսքեր և սպառնալիքներ կ'ընէին իրեն՝ ըսելով. «Դուն բանտին մէջէն դուրսը կայնողներուն կը քարոզես, և դուրսէն լսուելու չափ բարձրաձայն կը կարդաս և աղօթք կ'ընես»։ «Բայց շիտակը աս է որ՝ ես ու Վարպըրդոն ընկերս ծունկի վրայ կու գայինք՝ առաւօտեան և երեկոյեան աղօթքներնիս կը կարդայինք Անգղիարէն աղօթագրքէն, մէյմը կէս օրէն առաջ՝ մէյ մ'ալ կէս օրէն ետեւ՝ ուրիշ աղօթքներ ալ ընելով. ամէն օր Աստուածաշունչ ալ կը կարդայինք, մանաւանդ երիկուան դէմ ։ Ասոնց ամէնն ալ անանկ ձայնով մը կը կարդայինք՝ որ փողոցը կայնողները աղէկ մը կը լսէին, և շատ անգամ երիկուանները կու գային՝ բանտին պատուհաններուն տակը կը նստէին՝ մեզ մտիկ կ'ընէին. Հռովմէա-

Digitized by Google

կանք ալ երբոր աս ըրածնիս կը տեսնէին , կը բար-կանային մեզի դէմ ու նախատինքներ կը թափէին":

Ժամանակէ մը ետքը Զէյթունի եպիսկոպոսը Լանկասդէր եկաւ , և նոր սկսած հալածանքը հաստատեց : Առաջ Մարշը դատաստանի կանչեց . հաւատարիմ քրիստոնեան՝ թէ հոս և թէ ետքէն Զէյթունի մէջ եղած քննութեանը առենը՝ ճշմարտութիւնը քաջութեամբ պաշտպանեց : "Թէ որ Աստուծոյ խօսքովը կրնաք զիս համոզել նէ , կը համոզուիմ", ըսաւ կրկին և կրկին . բայց Եպիսկոպոսը իրենց օրէնքը մէջ բերաւ՝ որ կ'ըսէ . "Արժանի չէ հերետիկոսաց հետ վիճիլ": Վերջապէս դատապարտեց Մարշը . դատապարտութեան վճիռը կարդալէն ետև՝ սա խօսքն ալ ըսաւ թէ , "Շունէ մը աւելի արժան չեմ սեպեր քեզ աղօթքի": Յետոյ զանիկայ պաշտօնատարաց ձեռքը յանձնեցին , անոնք ալ զնդանը դրին : Զէյթունի մէջ մէկ քանի հոգիներ կային , որոնք Մարշը կը սիրէին Աւետարանին համար . անոնք իրիկունները զնդանին քովը կու գային՝ կը խօսէին հետը . երբեմն պատին մէկ պզտիկ ծակէն ստակ կը նետէին ներս , ու "Ինտո՞ր ես , ի՞նչ կ'ընես , աղէ՞կ ես", կը պոռային դուրսէն : Մեծ խնդութիւնով՝ "Աղէկ եմ", կ'ըսէր , "շնորհակալ եմ Աստուծոյ՝ որ իր ողորմութեամբը ընտրեց զիս իր ճշմարտութեանը վկայ ըլլալու՝ տանջանքով . մինակ աս կը խնդրեմ , որ շնորհէ ինծի տանջանացս մէջ չտկարանալ , այլ համբերութեամբ տանիլ 'ի մխիթարութիւն և 'ի փառս Քրիստոսի եկեղեցւոյն": Սպանման տեղը տարած առենին , անանկ կը փայլէր վրան քրիստոնէական ճշմարիտ քաջութեան ու համարձակութեան հոգին , որ տեսնողները՝ "Աս մարդուն 'ի մահ դիմելը մահապարտ գողի մը 'ի մահ դիմելուն

չնմանիր կոր'' կը կանչէին ։

Այրուելուն պատմութիւնը՝ իրմէ առաջ մարտիրոսացեալներուն վրայով պատմածնուս նման է ։ Անոնց եղածին պէս՝ սոր ալ թող չտրուեցաւ ի զինքն կայնող ժողովուրդին քանի մը խրատական խօսք խօսելու . անոնց նման իր տանջանքն ալ շատ երկար քշեց՝ աղէկ վառելու բաներ շատ չըլլալուն համար ։ Բայց աս վկայիս տանջանք մ'ալ աւելի եղաւ . տակառ մը կպրանիւթ կախեցին գլխուն վրայովը , հաւանականաբար աս միջոցով պէտի ըլլար՝ որ կամաց կամաց վրան վազէ , ու անանկով ալ եւելոք տանջուի ։ Վերջին կապուելէն ետև՝ ներողութեան թուղթ մը տուին՝ որ զղջայ ու ազատի . մէկդի ըրաւ՝ ըսելով թէ , «Ատով զիս Աստուծոյ ձեռքէն խլել է միտքերնիդ»։ Աչկար ատեն այրելէն ետև՝ որ ալ քովը կեցողները մեռած կը կարծէին , յանկարծ թևերը բացաւ , ու «Հա՛յր երկնաւոր՝ ողորմէ՛ ինծի» ըսելով՝ հոգին աւանդեց։

Անանկ համբերութեամբ ինչուան վերջը դիմանալը տեսնողները կ'ըսէին թէ՝ Անտարակոյս աս մարդը մարտիրոս եղաւ , քանզի ճշմարիտ քրիստոնէի պէս մեռաւ ։ Չեստըրի Եպիսկոպոսը՝ ժողովուրդոց մէջ սանկ ձայն մը ելնելը իմանալով՝ քարոզ մը տուաւ . աս քարոզին նպատակը սա էր , թէ Մարշը հերետիկոս էր , իբրև հերետիկոս այրեցաւ աս աշխարհիս մէջ , և իբրև հերետիկոս դժոխքին մէջ կ'այրէր ։ Աս խեղճ եպիսկոպոսը մէկ քանի օրէն մեռաւ . և իր մահուանը պատճառ եղող ախտէն յայտնի եղաւ ինչ անառակ մարդ ըլլալը ։

Աս օրերս կրկին քիչ մը դադրեցան մարդ այրելէն . բայց որու վրայ որ հերետիկոսութեան կասկած կ'ըլլար նէ , բռնելու ետևէ էին ։ Աս

գործը աղէկ մը առաջ տանելու համար՝ Մարտի 25ին՝ Հրովարտակ ելաւ տէրութեան ամէն կողմը ղրկուող բոլոր դատաւորներուն, որ ամէն մէկերնին իրենց իշխանութեանը տակը եղած տեղերը աղէկ նային, և քաջալերութիւն տան Հռովմէական եկեղեցականաց՝ իրենց հաւատքին չեկողները դատապարտելու․ և մանաւանդ հերետիկոսութիւն քարոզող կամ սորվեցընողները բռնելու բանտը դնելու։ Աս հրամանն ալ կար՝ որ ամէն գեղ և ամէն քաղաք, գաղտուկ կերպով հաւատարիմ մարդիկ հանեն, որ լրտեսեն հերետիկոսները, և գտածնին երթան իմացընեն դատաւորաց։

Աս գաղտնի ճամբաներով հերետիկոսները փնտռելնին՝ սրբազնութեան այնչափ մօտեցաւ արդեամբք, որ յայտնի եղաւ՝ աս ճամբան բռնելնին Սպանիոյ Թագաւորին առաջարկութեամբն ըլլալը։ Ամենայն ճշդութեամբ սկսան աս արքունի հրամանները կատարել։ Բայց ո՞վ Անգղիացին կրնար առանց դժկամակութեան հաւանութիւն տալ աս բաներուն՝ մէկ քանի կոյր նախանձաւորներէ զատ։ Մինչև անգամ Պօնները եպիսկոպոսը ձանձրացաւն արիւնահեղութեան պաշտօնէն, և ըստ արքունի հրամանին՝ դատաւորաց բռնած ու իրեն խրկած մէկ քանի հոգին թող տուաւ․ բայց չկրցաւ աս ընթացքը շարունակել։ Մայիսի 24ին՝ Փիլիպպոս Թագաւորին և Մարիամ Թագուհւոյն ստորագրութեամբը նամակ մը եկաւ Պօններին, որով կը գանգատէին անոր ըրածէն, ըսելով թէ՝ "Զարմացանք՝ երբոր լսեցինք որ մեր հրամանին համեմատ դատաւորներուն քեզի խրկած մարդիկը թող ես տուեր՝ որ մոլորութիւններնուն մէջ մեռնին"։ Աս բանը Թագաւորին ալ Թագուհւոյն ալ շատ զարմանք էր եղեր, և խրկած թուղթովնին կը յորդո-

Digitized by Google

րէին Պօննէրը՝ որ «բարի Հովուի և եպիսկոպոսի վայելուչ գործ տեսնէ՝ անկէ ետև ձեռքն անցած Հերետիկոսները դատապարտելով, որ իր ձեռօքը Աստուծոյ փառքը ևս առաւել յառաջանայ» : Ա՜Հ, մարդիկ ինչուան աս աստիճան ալ կը խաբուի՞ն եղեր : Պըրնէդ պատմիչը կարծեօք կ'ըսէ թէ՝ «Եպիսկոպոսը աս նամակը խորամանկութեամբ աս ճամբով ձեռք ձգեց, որ իր ընելիքները աւելի համարձակութեամբ ընէ» : Իրաւցընէ սա՛նկ էր՝ թէ չէր, ան մէկդի՛ թող մնայ. սա գիտենք որ՝ աս իրեն եղած պատուէրը իր բնութեանը շատ համաձայն էր. և շուտ մը սկսեց ան քիչ մը առաջ եղած դադարման տեղը լեցընել :

Մայիսի 30ին՝ Յովհաննէս Քարտմէյքր քահանան ու Յովհաննէս Աւարն արհեստաւորը այրեցին Սմիթֆիլտի մէջ : Քարտմէյքրը Ֆրանչիսկեան կրօնաւոր էր, բայց ճշմարտութիւնը ընդունեց : Եդուարդ թագաւորին օրովը Սուրբ Պօղոսի եկեղեցին քարոզիչ էր. և կը պատմուի թէ՝ ունկնդիրներուն մէջ գտնուող Հռովմէականները այնչափ կը նեղանային տուած քարոզներուն, որ քարոզ տուած ատենը՝ վերարկուն մկրատով կը կտրտէին : Ան ատեն այնչափը կու գար ձեռուընուն, ուրիշ բան չէին կրնար ընել. բայց երբոր Մարիամ թագուհի եղաւ, ոխ առնելու ժամանակը գտան. և շատ ուրիշներու ըրածնուն պէս՝ աս ալ բռնեցին բանտը դրին մէկ քանի սուտ պատճառանքներով՝ ինչուան որ եկեղեցականաց կատարեալ արտօնութիւն տրուեցաւ՝ որ Հերետիկոսները ուզածնուն պէս այրեն՝ մեռցընեն. և Կարտինէլին առջևը քննութեան ելլողներուն առաջիններէն մէկն եղաւ, բայց սակայ ժամանակ մը ձգեցին ու մէկալները առաջ այրեցին : Նոր դատապարտու-

Digitized by Google

թիւնը ուշացընելուն պատճառը յայտնի չէ։ Բայց աս միջոցին Հռովմէականք անանկ ձայն մը հանեցին՝ թէ Քարտմէյքր իր կարծիքները ուրանալու միտք ունի. հաւանական է որ ուրիշները գայթակղեցընելու համար ասանկ սուտ խօսք մը ձանձընեցին ասդին անդին։

Վերջապէս երբոր աս ըսածնին չկատարուեցաւ, ու Քարտմէյքր հաւատքին վրայ հաստատ մնաց նէ, նորէն Պօններին դիմացը հանեցին։ Անոր դէմ եղած ամբաստանութիւնները ասոնք էին, թէ՝ «Դուն կրօնաւոր էիր, ու ամուսնացար. թէ Քրիստոսի մարմնապէս կամ իրօք՝ հաղորդութեան հացին և գինիին մէջ գտնուելուն չես հաւատար»։ «Ատոնց ամէնն ալ ատանկ են», ըսաւ Քարտմէյքր, ու դատապարտուեցաւ։

Վերոյիշեալ հրովարտակին հրամանին համեմատ Էսսէքսցի Յովհաննէս Սիմփսոնն ու Յովհաննէս Արտիլէյը բռնուեցան դատաւորաց ձեռօքը։

Յունիսի 10ին՝ աս երկու մարտիրոսները այրուեցան. Սիմփսոնը Ռօքֆըրտի մէջ, Արտիլէյն ալ Ռալէյի մէջ։ Ասոնց երկուքն ալ մեծ համբերութեամբ դիմացան տանջանքներուն։ Դատաւորաց դիմացը եղած ատեննին՝ իրենց վրայ աս ամբաստանութիւնը եղաւ, թէ՝ «Դուք յամառ մարդիկ էք, և փառասիրութեան համար է՝ որ աս տանջանքին յանձնառու կ'ըլլաք կոր»։ Անոնք ալ յայտնի ցուցուցին թէ անանկ փափաք մը չունին. և թէ՝ «Յօժար կամօք մեր բոլոր ստացուածքներէն կ'անցնինք», ըսին, «թէ որ մեզի մեր խղճմտանքին ցուցուցած ճամբովը ազատօրէն երթալու հրաման տաք, և չքռնադատէք Հռովմէականաց կռապաշտական արարողութիւնները կատարելու»։ Յայտնի է որ՝ անանկ թոյլտուութիւն մը ան ժամանակները

անհնարին բան էր ։

Այս միջոցիս Ամսէքսի մէջ ուրիշ մարդիկ ալ այրուեցան . և անոնց հետ՝ Փոզովին հրամանաւը դատապարտուած մէկ քանի ազնուականներ ալ կային ։ Յունիսի 10ին՝ Թովմաս Հուքս այրեցաւ Բոկէշալի մէջ . սակայն ազնուական ցեղէ՝ շատ ստացուածքի տէր մարդ մըն էր՝ արքունեաց մէջ մեծցած ։ Եդուարդ թագաւորը վախճանեցաւ նէ , ինքն ալ մէկդի քաշուեցաւ , և կ'ուզէր իր մնացած օրերը առանձին խաղաղութեամբ անցընել . բայց ամենուն աչքը վրան էր ։ Դիտեցին տեսան որ՝ իր նոր եղած որդւոյն ծննդեանը վրայ իրեք շաբաթ անցաւ , մկրտութեան չքերին . և երբոր քահանաները մկրտել ուզեցին երախան , ու հայրը թող չտուաւ որ ան քովերնուն հնարած արարողութիւնները կատարեն տղուն վրայ ; Օքսֆորտի կոմսին տարին զանիկայ՝ որուն գործին մէջն էր առաջ ։ Կոմսը վախնալով՝ որ չըլլայ թէ հրովարտակին դէմ յանցաւոր գտնուի , բռնեց զանիկայ Պօննէրին խրկեց . Պօննէրն ալ մարդը դիմացը հանածնուն պէս՝ առջի բերան սա խօսքը խօսեցաւ . «Դուք եղբայրութիւն մըն էք , սակայն հաստատ գիտցիր որ՝ ես ձեզ բնաջինջ պիտի ընեմ»։

Սովորական եղած քննութիւնները՝ ետ՝ ընելէն ետև , Փետրվար ամսուն դատապարտեցին ազնուական Թովմասը . բայց այրելու գործը ինչուան Յունիս ուշացուցին , որ ատեն հալածանքը յոյժ սաստկացաւ ։ Մեռնելէն քիչ մը առաջ իր բարեկամներէն մէկ քանին՝ հաւանական կարծեօք իրենց գլխուն ալ ան նոյն դատապարտութիւնը կրնայ գալ կարծելով՝ եկան խնդիրք ըրին իրեն՝ որ եթէ այրուած ատենը ան քաշած տանջանքը տարուելու բան գայ նէ իրեն , և թէ ինքը կարենայ

Digitized by Google

համբերել, իրենց նշան տայ. և անանկ խօսք կապեցին որ, նշանն ալ՝ ձեռուընները վեր վերցընելնին ըլլայ :

Այրուելուն ժամը հասաւ. մարտիրոսը ցեցին կապեցին, ու փայտակոյտը բռընկցուցին : Բարեկամները մօտը կայներ՝ աչուընին անոր վրայէն անդին չխաղցընելով անթարթափ կընայէին՝ որ նշան պիտի տայ՝ թէ չէ : Երկար ատեն նայեցին ետև՝ ալ նշան առնելու յոյսերնին կտրեցին. քանզի վրայի մորթը կռնձմռեցաւ բոցէն, ձայնն ալ կտրեցաւ, անանկ որ՝ ամէն մարդ կարծեց թէ մեռաւ. մէյմ'ալ նայիս՝ 'ի զարմացումն բոլոր 'ի զննին կեցողներուն՝ յանկարծ թևերը վեր վերցուց բոցավառ, և իբրև նշան մեծ խնդութեան՝ իրեք հեղ ծափ զարկաւ : Աս նշանին վրայ՝ ուսկից իր ինչ աստիճան հաստատուն հաւատք ունենալը կ'երենար, բոլոր ժողովուրդը ուրախութեան աղաղակ վերցուց, մանաւանդ նշանի սպասող բարեկամները : Անկէ ետև հաւատարիմ վկան ծռելով հոգին աւանդեց :

Թովմաս Աւադս անուն մէկն ալ նոյնպէս այրեցին Չելմսֆորտի մէջ, որ չուխայավաճառ էր Կոկսէրիզէյ քաղաքը. ժամանակին չարիքները տեսնելով՝ վախուն ընտանիքին հոգը կարգի մը դրաւ, և ձեռքը որչափ ապրանք կար նէ՝ ծախեց, մեծ մասը աղքատաց բաժնելով. քանզի գիտէր որ եթէ անանկ չընէր նէ՝ ետքը թշնամիները պիտի ուտէին իր ստացուածքը : Ապրիլի 6ին՝ բռնեցին աս մարդը տարին ան տեղի դատաւորին դիմացը, սա ամբաստանութիւնը ընելով, թէ եկեղեցի չգար : Լօրտ Ռիչ անուն մէկը ըսաւ թէ՝ «Աս մարդը անոնցմէն է, որոնք եկեղեցի երթալ պատարագ տեսնելնուն տեղը, գաղտուկ տեղեր

հերետիկոսաց ժողովները կ'երթան՝ հերետիկոսութիւն սորվելու ու սորվեցընելու" : Պլրաուն դատաւորը հարցուց Մուադսին թէ՝ "Աս կրօնքը ո՞վ քեզի սորվեցուց" . (Էդուարդ Թագաւորին օրովը աս դատաւորը Աւետարանականներուն առաջիններէն էր, բայց Դեմասին նման՝ աս աշխարհիս սիրուն չդիմանալով՝ ուրացեր էր ճշմարտութիւնը .) "Քենէ՝ տէր իմ", ըսաւ Մուադս, "Ճշմարտութիւնը քենէ շատ սորվեցընող չեղաւ ինծի . քանզի Էդուարդ Թագաւորին օրովը հիմակուան բռնած կրօնքիդ դէմ կը քարոզէիր" :

Աս մարդը Պօննէրին խրկեցին . ան ալ սովորական քննութիւնը ընելէն ետեւ՝ դատապարտութեան արժանի տեսաւ : Շատ բան ըրին միտքը դարձընելու համար, բայց բոլորը պարապը գնաց : Վերջապէս զանիկայ և մէկ քանի ուրիշներ ալ հետը պաշտօնատարաց ձեռքը տուին, ու Չելմսֆօրտ խրկեցին : Ասիկայ հրաման առնելով անգամ մըն ալ իր ընտանիքը տեսնելու, այս խօսքերով վերջին մնաք բարեւն ըսաւ իր կնոջը ու որդւոցը . "Ամուսինդ իմ՝ և դուք ո՜վ սիրական որդեակք՝ հիմա ես ձեզմէ պիտի զատուիմ . ալ ասկէ ետեւ իրարու տեսութիւնը պիտի չվայելենք . ուստի ինտոր որ Տէրը ձեզ ինծի տուաւ, ես ալ անանկ նորէն իրեն կու տամ զձեզ . և կը փափաքիմ որ իրեն հնազանդիք, և զինքը 'ի բոլոր սրտէ սիրէք, ու իրմէն վախնաք . զգուշացէք՝ չըլլայ որ ան պապական պիղծ կրօնքին դառնաք, որուն զուտ ստութիւն ըլլալուն վկայութիւն տալու համար հիմա արիւնս պիտի թափեմ : Աստուծոյ սուրբերուն մահը թող վախ չձգէ սրտերնուդ մէջ, հապա անոնցմէ խրախոյս առէք, և քաջալերութիւն ունեցէք Տէրոջը պատերազմը պատերազմելու, և աներկբայ կը

Digitized by Google

հաւատամ՝ որ ան ալ ձեզ ողորմած հօր պէս կընայի" ։

Մայիսի սկիզբը՝ վեց ոստայնանկ բռնեց Օքսֆորտի կոմսը, ու Պօննէր եպիսկոպոսին խրկեց ։ Ասոնց վրայով սովորական ամբաստանութիւնը ու քննութիւնը ըլլալէն ետև, անոնցմէ իրեքը ուրացան. մէկալ իրեքը հաստատուն վկայութիւն տուին ճշմարտութեան, ու դատապարտուելով այրուեցան Յունիսի 14ին ու 15ին. որ ասոնք էին. Նիկողայոս Չէմպըրլէյն՝ Քօգշէսդըրցի, Թովմաս Օսմընտ՝ Մանինկդրիցի և Վուլիէլմոս Պամֆըրտ՝ Հարուիչցի ։

## ԳԼՈՒԽ Է ։

Գրատֆորտին քննութիւնները — Կը ջանան անոր միտքը դարձընել իր ընդունած վարդապետութիւններէն — Անոր այրուելուն հրամանը կ'ելլէ — Անոր տանջանքներուն քանի մը պարագաները ։

Մարիամ Թագուհւոյն օրովը այրուող մարտիրոսներուն մէկ նշանաւորն ալ Յովհաննէս Գրատֆորտն է ։ Աս մարդը Մանչէսդըրցի էր, և Հենրիկոս Ը.ին գանձապետներուն մէկուն՝ Սիր Յովհաննէս Հարինկդօնին գործին վրայ էր, և շատ հաւատարիմ մէկը սեպուած էր իր տիրոջը առջին ։ Աս գործին վրայ եղած ատենը՝ անգամ մը Գրատֆորտ չդիմանալով Սատանային փորձութեանը՝ ծուռ հաշիւ մը ըրաւ՝ քիչ մը բան կողոպտելու համար ։ Բայց Լադիմէրին մէկ ազդու քարոզովը՝ ըրած բանին ի՛նչ աստիճան չարութիւն ըլլալը տեսնելով՝ սիրտը չկրցաւ հանգչեցընել՝ ին



Digitized by Google

չուամ որ իր բոլոր ժառանգութիւնը առածին տեղը չվճարեց ։ Բայց այսչափով չմընցաւ Սուրբ Աւետարանին քարոզութեանը անոր սրտին մէջ տեսած գործը ․ ուստի իր մարմնաւոր զբաղմունքներուն և վաստակներուն ամէնը ձգեց , ու Սուրբ Գրոց վրայ տեղեկութիւն առնալու փափաքով Կամպրիճիա գնաց՝ աշակերտութեան մտաւ ։ Հոն շատ յարգի և սիրելի եղաւ ամենուն ։ Մանաւորապէս Միւսէր կը սիրէր զանիկայ՝ որ քարոզիչ ըլլայ ։ Նա երբոր Պրատֆօրտ մեծ խոնարհութեամբ գիտութեան կողմէ ունեցած թերութիւնը մէջ կը բերէր , յարգի բարեկարգիչ Միւսէրն ալ սա խօսքով անոր պատճառին դէմը կ'առնէր ․ "Թէ որ ցորենի ճերմակ հաց չունիս նէ" , կ'ըսէր , "Աստուած քեզի գարիի հաց՝ կամ ուրիշ ինչ որ տուեր է նէ՝ ան տուր կարօտելոց"։ Ռիտլէյ եպիսկոպոսը ուրախութեամբ ձեռնադրեց զանիկայ , որ Սուրբ Պօղոսի եկեղեցին՝ Էդուարդին թագաւորութեանը վերջին իրեք տարին քարոզութիւն ըրաւ ։ Շատ զօրաւոր և ազդու խօսքերով մեղքը կը յանդիմանէր , անուշութիւնով զՔրիստոս խաչեալ կը քարոզէր , մեծ քաջութիւնով կը ջրէր հերետիկոսութիւններն ու մոլորութիւնները , և զամէնքը մեծ եռանդով աստուածպաշտութեան կը յորդորէր ։ Արդար և Աւետարանին քարոզութիւնը աս բաներուս վրայ հիմնեալ է ․ և ուր որ Աստուծոյ խօսքը աս ճամբով հաւատարմաբար քարոզուի , Աստուծոյ օրհնութիւնովը շատ պտուղ յառաջ գալուն յոյս կրնանք ունենալ ։ Բայց աստանկ բարեգործ մարդիկ միշտ ատելի եղած են , և յաւիտեանս ատելի պիտի ըլլան աս աշխարհիս աստուծոյն զօրութիւնովը աչուըննին կուրցածներուն ․ ուստի երբոր Մարիամ թագուհի եղաւ ,

Digitized by Google

շուտ մը թշնամիները Պրատֆորտին հորը փորեցին ։ Զինքը բռնելու համար ըրած պատճառանքներին՝ կը ցուցընէ Հռովմէականութիւնը կենդանացընելու ջանք ընողներուն ի՛նչ աստիճան վատ մարդիկ ըլլալը ։ Պուրն եպիսկոպոսը՝ Մարիամ աթոռը նստածին պէս՝ Պօղոսի խաչ ըսուած տեղը Բարեկարգութեան դէմ քարոզ մը տուաւ . ժողովուրդը աս տուած քարոզին վրայ բարկանալով՝ երբոր վրան թափեցան որ ընելիքներին ընեն , ան միջոցին Պրատֆորտ ինքզինքը վտանգի մէջ դնելով՝ ժողովուրդը ետ կեցուց , ու Պուրնը ազատեց ։ Պրատֆորտին՝ ժողովրդոց վրայ ասանկ իշխանութիւն մը բանեցընելէն , "Դուն ապստամբ ես", ըսին , ու բանտը դրին ։

Թագուհւոյն բանտապետներուն ձեռաց տակն եղած ատենները՝ շատ հանգիստ էր Պրատֆորտ , քանզի շատ քաղցրութեամբ կը վարուէին հետը . թող ալ կու տային՝ որ քովը ժողովուող բարեկամներուն քարոզութիւն ընէ , և հետերնին մէկտեղ հաղորդութեան խորհուրդը կատարէ ։ Եւ վերջապէս այնչափ վստահութիւն ունեցան աս մարդուն վրայ՝ որ միայն իր խօսքովը թող կու տային երբեմն գիշերը դուրսը անցընելու . քանզի բնաւ իր խոստմունքէն դուրս ելած չէր՝ երբոր հրաման առնէր հիւանդտեսի երթալու , կամ ուրիշ մարդասիրական գործ մը կատարելու ։ Պրատֆորտ վերջին աստիճանի ճգամբ կ՚աշխատէր՝ որ ասանկ պատեհութիւնները ձեռքն անցած ատենը՝ օգտակար բաներու գործածէ . և իր բանտարկութեան օրերը քարոզութիւնով՝ կարդալով ու աղօթքով կ՚անցընէր ։ Շատ մարդիկ քովը կու գային իրմէ խրատ առնելու . ոմանց խօսքով խրատ կու տար , և ոմանց գրով , և իր թուղթերուն շատը են-

Digitized by Google

չուան հիմա կը մնան ։

Յայտնի է որ Բողոքականք՝ աս դարձած բա-
ներուն ժամ մը չէին համբերեր՝ թէ որ ձեռուը-
նին ըլլար ․ ուստի փնտռած իշխանութիւննին գը-
տածնուն պէս՝ Պրատֆորտը Քրիստոսի հօտին
առաջիններէն ըլլալով՝ առաջին զոհ ընելիքներ-
նուն կարգը դասեցին , և Յունվարի 22ին՝ որ
մինչև անատենը գրեթէ տարի ու կէս կ՚ընէր
բանտը մնալը , քննութեան հանեցին ։ Կարտինէր՝
ապստամբութեան յանցանք դրաւ անմեղ մարդուն
վրայ , և իմացուց որ՝ եթէ Բողոքականութեան
յարի նէ՝ կը ներուի իրեն աս յանցանքը , եթէ
ոչ՝ պիտի դատապարտուի ։ Պրատֆորտ բողոք ը-
րաւ Պօլսին եպիսկոպոսին՝ որ գայ աս բանիս սուտ
ըլլալուն համար վկայէ , բայց անիկայ ամենևին ա-
կանջ չկախեց ․ և ասկէ 'ի զատ ըսին ալ թէ՝
"Թագուհին քեզի պէտներէն պիտի մաքրէ իր տէ-
րութիւնը", և ապստամբութեան վրայով՝ ալ բան
մը չխօսեցան Պրատֆորտին ։ Հիմա Բողոքական
եկեղեցականաց ձեռքը պէտք եղածին չափ իշխա-
նութիւն անցած ըլլալով՝ ուզածնին կրնային ընել ,
ալ այնուհետև սուտ պատճառանքներ՝ զրպարտու-
թիւններ պէտք չէր մարդ մը բռնելու դատապար-
տելու համար ․ "Բողոքական չես , յանցանքդ աս
է , դատապարտեալ ես , պիտի այրուիս", ըսէին լմըն-
ցընէին նէ , ո՞վ կրնար բան մը ըսել ։ Եւ աս դա-
տիս մէջ ալ Պրատֆորտ "Յանցանքս ցուցուցէք"
կ՚ըսէ նէ , յանցանքը ցուցընելուն տեղը՝ կը
գոռան՝ "Դուն գէշ մարդ ես , Թագուհին քեզի
պէտները բնաջինջ պիտի ընէ իր տէրութենէն" ,
կ՚ըսեն ։

Դատապարտելէն ետև խորհեցան որ՝ Ման-
չէսդրի մէջ այրեն ․ բայց աղէկ սեպեցին ժամանակ

Digitized by Google

մը ուշացընել անոր մահը , յուսալով որ գուցէ միտքը կը դարձընեն : Նոյն օրովհետև Պրատֆորտ՝ թէ որ բռնած ճամբաս սխալ է նէ՝ զիս համոզեցէք , կամ ուրիշ աւոր պէս խօսք մը չըրաւ , որ անոնք ալ կասկածի երթային հաւատքին վրայ երկբայութիւն ունենալուն , իրենք իրենցմէ մէկ քանի անուանի եկեղեցականներ՝ քանի մըն ալ երևելի աշխարհականներ ընտրեցին՝ ու գացին քովը , որ անոր հետ խօսին , և զանիկայ համոզեն Հռովմէականութեան դառնալու . սակայն իրենց յառաջ բերած ձեռնարկութիւններուն ամենուն ալ հերքումը լսեցին : Ասոնց մէջն էին Նօրքի Արքեպիսկոպոսն ու Չիչէսդրի Եպիսկոպոսը : Պրատֆորտ լսած ըլլալով՝ որ զինքը անիրաւ տեղը կը բամբասեն եղեր՝ ըսելով թէ՝ Իրմէ մեծին յարգը չճանչնար . աս բանիս վրայ զրպարտութիւն ըլլալը ցուցընել ուզելով՝ աս եկողներուն դիմացը չնստաւ , ոտքի վրայ կայնեցաւ . ինք ոտքի վրայ կայնելուն համար՝ անոնք ալ չնստան , և իրեք ժամ ոտքի վրայ հետը խօսելէն ետև՝ դատածնուն պէս հաստատ ձգեցին գացին :

Պրատֆորտ՝ Փօլդրի ըսուած բանտը կեցաւ ինչուան Յունիսի վերջը . ան օրը բանտապետին կինը եկաւ իմացուց Պրատֆորտին՝ թէ գիշերը Սմիթ֊կէյդ պիտի տանին զինքը , և հետևեալ առտուն պիտի այրեն : Աս որ լսեց Պրատֆորտ , գլուխը բացաւ , և աչուըները դէպ 'ի երկինքը վերցընելով՝ "Փառք քեզ Աստուած", ըսաւ , "երկար ժամանակէ 'ի վեր է որ՝ աս բանիս կը սպասէի . ասիկայ յանկարծական լուր մը չեղաւ ինծի , այլ ամէն որ և ամէն ժամ ակնկալած լուրս աս էր . Տէրը արժանի ընէ զիս աս օրհնութեանը" : Յետոյ իր սենեակը մտաւ , և ան իրիկունը առանձին աղօթ֊

քով ու մէկ քանի բարեկամներու հետ շատ մեծ ջերմեռանդութեամբ հոգևոր խօսակցութիւններ ընելով անցուց , որոնք բանտապետին յատուկ շնորհքովը կրցեր էին քովը երթալ ։

Գիշերը շապիկը փոխեց ու նոր շապիկ մը հագաւ , որն որ իր բարեկամներէն մէկուն կնիկը կարեր ու ընծայեր էր՝ այրուելու ատենը հագնելու համար ։ Աս ընելէն ետև ջերմեռանդ աղօթք մը ըրաւ՝ Տեառն մերոյ առակի մը մէջ յիշած հարսնիքի հանդերձը յիշելով ։ Երբոր զանիկայ բանտէն դուրս հանեցին , բոլոր հոն գտնուող պաշտօնեաներուն զատ զատ ստակ շնորհեց , մեծ եռանդով յորդորելով որ երկիւղածութեամբ Աստուծոյ ծառայեն , և միշտ չարէն փախչին ․ յետոյ պատին դարձաւ՝ հառաչելով աղաչեց Աստուծոյ՝ որ ան ըսած խօսքերը անպտուղ չըլլան , այլ իր շնորհօքը ազդեն անոնց սրտին՝ 'ի փառս Քրիստոսի ։ Բանտարկելոց սրահէն անցած ատենը՝ ամէնն ալ լալով հրաժարական ողջոյն տուին ։

Հալածիչները Գրատֆորտը Նիւկէյթ իջեցընելը կէս գիշերուան ձգեցին , յուսալով որ՝ անանկ ուշ ատեն մարդ չըլլար որ զանիկայ տեսնէ ։ Բայց Փօլդրիէն ու Չիփսայտէն անցած ատեններին՝ փողոցները հազարաւոր մարդիկներով լեցուած գտան , որոնք կայներ՝ լալով ու ողբալով աղօթք կ'ընէին ․ Գրատֆորտն ալ կրկին հրաժարական ողջոյն կուտար առջևնուն անցած ժամանակը , սրտանց օրհնութիւն խնդրելով Աստուծմէ ամենուն համար ։

Աս միջոցիս շուտ մը անանկ ձայն մը հանեցին թէ՝ Գրատֆորտ առտուանց կանուխ ժամը չորսին պիտի այրուի Սմիթֆիլտի մէջ ․ աս լուրը հանելնին ան նպատակաւ էր՝ որ քիչ մարդ գայ Գրատֆորտին մարտիրոսանալը տեսնելու ․ բայց ընդհա-

Digitized by Google

կառակին իրենց կարծածէն շատ աւելի մարդ ժողովուեցաւ : Ըն գիշերը Լոտորայի մէջ քիչ մարդ կար քունով անցընող . և արդարև ան առենը հոն գտնուող օտարականք կրնային Սուրբ Գրոց սա խօսքերովը հարցընել թէ՝ «Քեզի ի՞նչ եղաւ , որ ամէնքդ տանիքներու վրայ ելեր էք . ո՛վ խռովութեամբ լեցուած աղմուկի քաղաք»: Սակայն մինչև անգամ ան չար ժամանակները թէև Քրիստոսի աշակերտները կ՚ողբային և կ՚արտասուէին իրենց մարտիրոսացեալ ընկերներուն վրայ , մէկդիէն ալ սա մեծ ուրախութիւնը ունէին՝ որ Աստուած իր սքանչելի ողորմութեամբը պաշտպան կեցեր էր իրենց , և թշնամին ամենևին չէր կրնար կոր յաղթել զիրենք , և բաժնել Քրիստոսի սէրէն : Շատ յարմար կու գայ մարգարէին վերյիշեալ խօսքէն ետև ըսած սա խօսքն ալ՝ որ կ՚ըսէ . «Քու սպանուածներդ սրով սպաննուած չեն , և պատերազմի մէջ մեռած չեն» . այլ ՚ի վկայութիւն Քրիստոսի աւետարանին այրուող մարտիրոսներ են : Բայց արդեօք Հռովմէականաց քովն ալ կա՞ր մի սա ուրախութիւնը , ի՛նչ . ան օրերը նեղութեան և սրտմաշուքի օրեր էր անոնց : Եւ յիրաւի շիտակ էր ըրած կասկածնին . իրաւունք ունէին վախնալու՝ թէ շատ մարդիկ Պրատոֆորտին մահուամբը ճըշմարտութեան պիտի դառնան :

Մութնուլրուսուն սկսան անձրևի պէս թափիլ Սմիթֆիլտ՝ Պրատոֆորտին մարտիրոսանալը տեսնելու . և ինչուան ժամը չորսը այնչափ մարդ լեցուեցաւ դաշտը , որ տանիքը ելլող նայողներուն սեպէ թէ հրաշք երևցաւ՝ այնքան քիչ ատենի մէջ անանկ անհամար բազմութիւն մը ժողվուիլը : Ժողովուրդը Պրատոֆորտին այրուելուն սահմանեալ ժամանակէն չորս ժամ ալ աւելի սպասելէն ետև՝

Digitized by Google

բերին մարտիրոսը , վախերնուն մեծ գունդ մը զօր-քով շրջապատած ։ Երբոր կու գային՝ Պրատֆոր-տին քեռայրը դիմաւորեց զանիկայ , ու երբոր քովն եկաւ որ Հրաժարական ողջոյնը տայ , մարտիրոսնե-րուն դէմ գազանային անգթութիւն բանեցընող Վուտրօֆ պաշտօնատարէն անանկ հարուած մը կերաւ ճակտին՝ որ խեղճ մարդը վիրաւորուած մէկդի կայնեցաւ ։

Երբոր ցիցին քովն հասան , Պրատֆորտ ծունկի վրայ եկաւ , և սկսեց մեծ ջերմեռանդութեամբ ա-ղօթել ․ վայրկեան մը չթողուցին որ հանգիստ ա-ղօթէր , պաշտօնատարը հրաման ըրաւ որ աղօթքը վերջացընէ ու ելլէ ։ Բազմութիւնը այնքան կոխեր էր՝ որ վախերնուն կ'ուզէին թանը շուտ մը լմնցը-նել ։ Նստեն ոտքի վրայ ելաւ Պրատֆորտ , ցիցը համբուրեց՝ ու համուեցաւ ․ յետոյ բոլորտիքը պա-տող բազմութեանը բարձր ձայնով պոռալով՝ ը-սաւ ․ "Ո՛վ Անգղիա՝ ապաշխարէ մեղքերդ ․ զգու-շացիր կռապաշտութենէ ․ զգուշացիր սուտ քրիս-տոններէն ․ զգուշացիր , չըլլայ որ քեզ խաբեն" ։ Պաշտօնատարը հրաման ըրաւ որ լռէ ․ Պրատֆորտ նայեցաւ որ ալ խօսելու հրաման չկայ , վերջա-ցուց իր խօսքը այսչափ մըն ալ իմացընելով ժո-ղովրդոց՝ թէ ինքը յօժար սրտով անոնց յան-ցանքը կըներէ , և խնդրեց որ անոնք ալ իր յան-ցանքը ներեն ։ Յետոյ դարձաւ քովը կապուած պատանիին՝ որ ան ալ իր հետը պիտի այրուէր , "Ուրախացիր՝ սիրելի եղբայր", ըսաւ , "աս իրիկուն մեր Տէրոջը սեղանը ընթրիք պիտի ընենք իրեն հետ" ․ ու առջևը դիզուած խուրձերը գրկելով՝ աս խօսքն ալ ըսաւ ․ "Նեղուցաք է ան դուռը՝ ու նեղ է ան ճամբան , որ դէպ 'ի կեանքը կը տա-նի ․ և քիչուոր են անոնք՝ որ զանիկայ կը գտնեն" ։

Digitized by Google

Ասոր հետ մէկտեղ այրուողը Յովհաննէս Լիֆ անուն պատանի մըն էր տասնուինը տարեկան: Սակայն Զատկին օրերը բռնուեցաւ արքունի խորհրդականաց մէկուն ձեռքը, և Պօննէր եպիսկոպոսին առջևը քննուելէն ետև՝ դատապարտուեցաւ: Ճշմարտութիւնը՝ Ռօճէրսին քարոզութեամբը հասաւ Լիֆին, ու Աստուծոյ շնորհքովը հաստատուելով Քրիստոսի վրայ՝ շուտով սկսաւ համարձակ դաւանիլ ընդունած վարդապետութիւնները: Պօննէր երկու թուղթ խրկեց աս տղուն. մէկը ուրացութեան թուղթ, իսկ միւսը Աւետարանական վարդապետութեանց դաւանութիւն մը: Խեղճը ինք կարդալ չգիտնալուն՝ կարդացին առջևը: Ուրացութեան թուղթը մէկդի ըրաւ, ու միւսը ընդունեց: “Արեան նշան մը դիր”, ըսին, “որ իմացուի թէ որն է քու ընդունածդ”: “Շատ աղէկ” ըսաւ, ու գրիչով նշան դնելուն տեղը՝ ասեղ մը հանեց ձեռքը ծակեց, ու արիւնը թուղթին վրայ ցրցնեց ապսպրելով որ Եպիսկոպոսին ցուցընեն, որ իմանայ թէ՝ այն դաւանութիւնը իր արիւնովը կնքելու պատրաստ է:

Աս օրերս բանտերը լեցուն էին Քրիստոսի ճշմարիտ աշակերտներով: Աս բանտերը անանկ դարշելի տեղեր էին՝ որ եթէ մէկը անոնց մէկուն մէջ մտար նէ, առանց բանտապետին յատուկ շնորհքովը աղէկ տեղ մը դրուելու, ու աղէկ նայուելու, ճարը չկար՝ կը մեռնէր. անանկ որ՝ բանտ ու ցիցը իրարմէ շատ տարբերութիւն չունէին: Շատ մարդիկ աս բանտերուն մէջ կը մեռնէին, ու մարմիններն շան դիոյ պէս անդին ասդին՝ լճերը՝ փողոցները ու ճամբաներու վրայ կը նետուէր:

## ԳԼՈՒԽ Ը։

Գլանտ և ուրիշներ ալ կ'այրուին Պանդուարիոյ մէջ — Աւէյդ և Մարգարիտ Բօլլի կ'այրուին — Բարմէր կ'այրուի Լէվէսի մէջ — Րիտլէյ և Լադիմէր վերջին անգամ դատաստանի կը կանչուին — Կը դատապարտուին ու կ'այրուին — Րիտլէյին անողորմ տանջանքը ։

Գանք հիմա Պանդուարիոյ Թեմին մէջ եղած հալածանքին մէկ քանի դիպուածները պատմել։

Գրամէր Պանդուարիոյ արքեպիսկոպոսը բռոթէստանդ ըլլալուն համար յամառեալ հերետիկոս անուանեցաւ. այսու ամենայնիւ անոր տեղը յաջորդելու եպիսկոպոս մը չընտրուեցաւ. և այնչափ ժամանակ աս Թեմը պարապ մնալուն բուն պատճառը Կարտինէրն էր. քանզի Պանդուարիոյ եպիսկոպոսութիւնը՝ Անգղիոյ եպիսկոպոսութիւններէն մեծ ըլլալուն համար, ասիկայ շատոնցուընէ կը փափաքէր ան Թեմին Արքեպիսկոպոսը ըլլալ, և միանգամայն Պապին նուիրակութեան աստիճանը առնել։ Որովհետև կը խորհէր՝ որ ան ատեննուան Պապը Կարդինալ Փօլին մեծ թշնամին ըլլալով՝ Փօլ չկրնար Պանդուարիոյ Արքեպիսկոպոս ըլլալ. ուստի Գրամէրին մեռնելէն ետև՝ աս պաշտօնը իրեն պիտի տրուէր։ Արդ՝ մէկ հնարքով մը դիտմամբ Գրամէրին մահը ուշացուց, որպէսզի ինքը Թագուհւոյն աչքը մտնելով՝ մէկ կերպով մը աս իր դիտաւորութիւնը յառաջ տանի։

Աս միջոցիս ան Թեմին առաջնորդութեան ժամանակաւոր պաշտօնը՝ Գօրնդօն անուն Տօվէրի քորեպիսկոպոսին ու Հարփսֆիլտ անուն Պանդուարիոյ վարդապետին յանձնուեցաւ։ Գրամէր անգամ մը Գօրնդօնը արդար պատիժէ մը ազատեր էր. բայց արդեօք ինք ալ հիմա անկէ ազա-

Digitized by Google

տութեան յոյս մը կրնա՞ր ունենալ. ամենևին։ Գօրնդօն իր բոլոր կարողութեամբը բարեկարգողաց ետևէն ինկեր՝ խելքը միտքը ձեռքէն եկած միասը անոնց հասցընել էր. ալ Գրամէր կրնա՞ր անոր աչքին ազատիչ ու բարեկամ երևնալ ։

1555, Յուլիս 12ին՝ Պլանտ՝ Ֆրանքիշ՝ Ռէդէրտէն՝ Միտտլդօն՝ աս չորսը մէկէն մէկ կրակով այրուեցան Քանդուարիոյ մէջ։ Պլանտ Ատէսհամի փոխանորդն էր, և Ֆրանքիշ Բօլվէնտէնին փոխանորդն էր. Ռէդէրտէնն ու Միտտլդօնը աշխարհական մարդիկ էին ։

Յուլիս 19ին՝ Նիկողայոս Հալ անուն Տարտֆօրտցի որմնադիր մը այրուեցաւ Ռօչէսդր քաղաքը ։

Նոյնքը այրուեցան Մարգարիտ Բօլլին ու Քրիստափոր Ուէյդը ։ Մարգարիտ՝ աս Թագուհւոյն օրովը այրուող առաջին մարտիրոսուհին եղաւ ։ Քրիստափոր Ուէյդ Տարտֆօրտցի ոստայնանկ մըն էր, ու Գրէնդ քաղաքին մէջ այրուեցաւ Յուլիսի մէջտեղուանքը ։ Երկու քարոզիչ հոն ներկայ գտնուելով՝ կը պատմեն անոր այրուելուն պարագաները ։ "Այնքան մարդ ժողվուեր էր", կ'ըսեն, "որ մօտը գտնուող պարտէզներէն չորս հինգ ձիու բեռ կեռաս բերեր էին, բոլորն ալ ծախուեցաւ"։ Ժամը իրեքին՝ նայիս հեռուէն բազմութիւն մը փրթաւ, պաշտօնատարը առջևնին ինկած, ու հետը մէկտեղ Ուէյդն ու Մարգարիտը ձեռուըներնին կապուած՝ կառքը հեծած կու գային ։ Աս նեղութեանը մէջ Հոգւոյն Սրբոյ մխիթարութիւնովը լեցուն Քրիստոսին աս երկու վկաները անուշ անուշ փառաբանութեան երգեր կ'երգէին ։ Երբոր իրենց այրուելը տեսնելու սպասող բազմութիւնը տեսան, "Ուրախացիր Ուէյդ", ըսաւ Մար-

գաղիա , “Նայէ՛ որչափ մարդ եկեր է հարսանեացդ հանդէսին” : Շիտակ՝ իջեւան մը կար մօտը՝ հոն տարին ասոնք : Ուէյդ պատանքի նման երկար շապիկ մը հագաւ՝ որ իր կինն էր կարեր , ու ցիցին քովը գնաց : Ամէն բան լմննալէն ետև՝ ձեռուըները վեր վերցուց , ու բարձր և զուարթ ձայնով մը ձե երորդ սաղմոսին վերջին համարը ըսաւ . “Բարութեան նշան մը ըրէ ինծի , որ իս ատողները տեսնեն ու ամչնան . ինչու որ դուն՝ ով Տէր , ինծի օգնեցիր ու իս մխիթարեցիր” :

Շուտով ամպիոն մը տնկեցին , ու կրօնաւոր մը վրան ելաւ որ քարոզ տայ . իսկ Ուէյդ աս մարդը տեսածին պէս՝ պոռալով սկսաւ ժողովուրդը յորդորել որ զգոյշ կենան աս Բաբիլոնեան պոռնիկէն , ու ձայնը չկտրեց՝ ինչուան որ կրօնաւորը տեսնելով իր խայտառակ ըլլալը՝ ամչնալուն քարոզ տալը ձգեց՝ կամացուկ մը վար իջաւ : Պաշտօնատարին սպասաւորները խեղճ մարդուն ինչուան գլուխը բարձրայուցին խուրձերը . և թէպէտ կը ջանար երեսը բանալ , բայց չթողուցին՝ գոցեցին չորս դին : Երբոր փայտակոյտը բռընկցուցին , սկսեց աղաղակել . “Տէր Յիսուս՝ ընդունէ հոգիս” . ու մինչև ետքը սաստիկ պոռաց , սակայն առանց անհամբերութիւն մը ցուցընելու : Այրուած ատենը հանդարտ կայնեցաւ , ձեռքը ձեռքին մօտեցուցած գլխէն վեր բռներ էր՝ աղօթք ընելու ձևով մը : Մարմինը խորովեցաւ , հոգին փչեց , ձեռուըները ան նոյն դիրքովը՝ տակէն նեցուկներով բռնուածի պէս մնաց : Աստի կրնանք ըսել թէ՝ աս բանը քանի մը վայրկեան առաջ իր Աստուծմէ խնդրած նշանն է , որ զինքը ատողները տեսնան ու ամչնան : Մարգարիտ Բօլլին Գըրմըրիճ տարին , ու հոն այրեցին :

Digitized by Google

Յուլիսի 22ին՝ Պրայդօնցի Տէրիք Քարվէրին այրեցին Լիւէսի մէջ. Հետեւեալ օրն ալ Կոտսդոնցի Յովհաննէս Լոնտէրը՝ Սդէյնինկ քաղաքը։ Ասոնք առջի տարուան Հոկտեմբերին բռնուեցան, ու պատճառով՝ որ Քարվէրին տանը մէջ աղօթք ընելու վրայ գտնուեցան, ու Լոնտրա խրկուեցան Պօննէր եպիսկոպոսին դիմացը քննութեան ելլելու։ Նիւկէյդի բանտը մնացին ինչուան Յունիս, երբոր Եպիսկոպոսին առջեւը ելան. սովորական ամբաստանութիւններին ըսածէն զատ՝ սա ալ վրայ բերին, թէ Քարվէր իր տանը մէջ Անգղիարէն Աստուածաշունչ կը կարդար, ու Անգղիարէն աղօթքներ կ'ընէր՝ Լոնտէրն ալ հետը։ Աւելորդ խօսք է, սակայն յիշենք՝ թէ երկուքն ալ 'ի մահ դատապարտուեցան։

Ան ատենները երբոր մէկը այրելու կը տանէին, ժողովրդոց մէջէն անցուցած ատեննին՝ ամէն մարդ աղօթք կ'ընէր ան մարտիրոսանալու գացող մարդուն համար։ Քարվէրն ալ այրուելու համար Լիւէս եկած ատենը՝ անանկ ըրին։ Ան ալ շնորհակալութիւն ցուցուց, եւ փոխարէն ինքն ալ ան կը խնդրէր Տէրոջմէ, որ ան նոյն հաւատքը՝ որ իրեն շնորհեր էր, անոնց ալ շնորհէ։ Տակառ մը դրին փայտակոյտին մէջտեղը, ու Քարվէրին Նոր Կտակարանը մէջը նետեցին. երբոր զինքը տակառը խոթածնուն պէս՝ Կտակարանը ամբոխին մէջ վերցուց նետեց. պաշտօնատարը չթողուց որ մէկը առնէր, ու հրաման ըրաւ որ նորէն նետեն։

Երբոր փայտակոյտը բռնկցուցին, աղաղակեց. “Ո՛վ Տէր՝ ողորմէ՛ ինծի”. երբոր կրակին մէջ վեր ցատկելով՝ “Յիսուս” պոռաց, ու հոգին աւանդեց։

Հիմա սկսինք պատմել երկու եպիսկոպոսաց՝ այսինքն Լադիմէրին և Րիտլէյին մարտիրոսութեանը վերջին տանջանքները : 1555 , Սեպտեմբերին , Կարդինալ Փօլը՝ որ ան ատենը Պապին նուիրակն էր Անգղիոյ մէջ , հրամանագիր խրկեց Լինքօլնի Եպիսկոպոսին՝ և երկու ուրիշ Հռովմէական եպիսկոպոսներու՝ որ Լադիմէրն ու Րիտլէյը քննեն նային՝ թէ անցեալ տարի հրապարակաւ եղած վէճի մը մէջ՝ ու նաև կորստեան ժամանակները՝* և անկէ հետէ ինչուան հիմա պաշտպանած վարդապետութիւններնուն վրայ կը կենա՞ն տակաւին՝ թէ չէ . թէ որ յամառին կենան նէ , պիտի այրուին . բայց թէ որ ուրանան նէ , հաշտուած են Պապին հետ :

Այս սահմանուած դատաւորները Օքսֆօրտի աստուածաբանական դպրոցը գացին՝ ատեան կազմեցին Սեպտեմբերի 30ին : Նախ Րիտլէյը ատեան հանեցին . ան ալ բոլորովին մերժեց Պապին ու անոր նուիրակին՝ Կարդինալ Փօլին իրենց վրայ իշխելու իրաւունք մը ունենալը , միանգամայն աս ալ ցուցընելով՝ թէ բոլորովին սրտիւ պատրաստ է ամէն քաղաքական օրինաւոր իշխանութեանց հնազանդելու : Լինքօլնի եպիսկոպոսը յորդորեց զանիկայ՝ որ Հռովմայ եկեղեցւոյն դառնայ . "Քանզի", ըսաւ , "սաիկայ Պետրոս առաքեալէն է , որուն վրայ Քրիստոս իր եկեղեցին հաստատեց". և աս խօսքը ապացուցանելու համար՝ աս սուտ ձեռնարկութիւնք ըրաւ թէ՝ բոլոր հայրապետները ասանկ կը վկայեն . ու "դուն ալ", ըսաւ , "անգամ մը աս գաղափարէն էիր": Ասոր պատասխան՝

---

* Հռովմէականք ան ատենները կորստեան ժամանակ կը կոչէին Հէնրիկոս Ըին և Էդուարդ Զին թագաւորութեան տարիները .

Ռիտլէյ ըսաւ որ , «Այն տեղը յիշուած վէմը Քր-րիստոս ինքն է , և թէ հայրապետները յայտնի կը ցուցընենեն թէ՝ Հռովմ կայսրութեան մայրաքաղաքն ըլլալուն համար էր՝ որ ան տեղի եպիսկոպոսը այնքան մեծ պատիւ գտաւ : Իրաւ է ըսածնիդ՝ որ անգամ մը ես ալ աս գաղափարէն էի . բայց կը խոստովանիմ որ ինչպէս որ Պօղոս առաքեալ քրիստոնէութեան չդարձած՝ հալածիչ մըն էր , անանկ ալ ես ընդունած էի Հռովմայ եկեղեցւոյն վարդապետութիւնները դեռ Աւետարանին լուսովը չլուսաւորուած» : Յետոյ վրան ամբաստանութիւն եղած բաները ցուցուցին իրեն . որոնց մէկը աս էր թէ՝ հրապարակական վէճի մը մէջ գոյափոխութեան դէմ խօսեր է , սակայն բարեկարգողները պապականաց ստիպմամբը խօսեր էին աս վէճին մէջ : Ետքը ըսին իրեն . «Վաղը պիտի գաս ատոնց պատասխանը տաս» . և այսպէս բանտը խրկեցին :

Ան ատեն Լատիմէրը ներս խոթեցին : Աս ազնիւ եպիսկոպոսին վրայ երևցած պարզութիւնը սաստիկ կը նկարագրեն տեսնողները : Գլխարկը ձեռքը , գլուխը թաշկինակ մը կապած՝ վրայէն ալ գդակ մը ու գիշերուան խոյր մը դրած , հին՝ մաշած թանձր չուխայէ կապայ մը հագած վերէն ՚ի վար , մէջքը անշահ գօտի մը կապած՝ որ տակ մը չարժեր , անկէց ալ վար՝ կաշեէ լարով մը ՚Նոր Կտակարանը կախած , ու վիզէն վար ակնոց մը կախած . ահա էր աս վեհանձն մարդուն կերպարանքը :

Դատաւորները յորդորեցին զանիկայ՝ որ Հռովմայ եկեղեցւոյն հաւատքին դառնայ : «Մտածէ անգամ մը թէ ինչ կ՚ընես կոր» , ըսաւ Լինքոլնի Եպիսկոպոսը . «առանց եկեղեցւոյ հետ միութիւն ունենալու մարդ չկրնար փրկուիլ , և անհնար բան

է որ եկեղեցւոյ մէջ մոլորութիւն գտնուի": «Մեր եկեղեցին Պետրոս առաքելոյն վրայ հիմնուած է, և ասիկայ յայտնի հաստատուած է Սուրբ Գրոց մէջ": Աս լսելուն Լադիմէր սկսեց գլխի խոյրը ու գդակը և Թաշկինակը ականջին վրայէն վեր հանել, որ աղէկ մը լսէ. Եպիսկոպոսը իր խօսքը շարունակեց, և «Արածէ" բառին վրայ խել մը իմաստակութիւններ բանեցընելով՝ ասիկայ «Իշխէ" ըսել է, ըսաւ, որ արդար և մէկ մարդով մը ան նշանակութեամբ կ'առնուի. անկէ ալ հետեւցուց թէ՝ եկեղեցին անկախ իշխանութիւն ունի հաւատքներնուս վրայ: Ասանկ շատ մը բան զրուցելէն ետև՝ խօսքը վերջացուց, իմացընելով Լադիմէրին՝ որ եթէ ատանկ փտած անդամ մնալու ըլլայ նէ եկեղեցւոյ մէջ, անոր գլխուն՝ այսինքն Սրբազան Պապին ցաւ ու նեղութիւն չըլլալու համար, անշուշտ պիտի կտրուի ու ձգուի:

Երբոր Եպիսկոպոսը խօսքը կտրեց, Լադիմէր գլուխը վեր վերցուց՝ և հարցընելով իմացաւ որ խօսքը լմընցուցեր է նէ, հրաման խնդրեց ինք ալ մէկ երկու խօսք ըսելու. և երբոր հրաման եղաւ, աս վերապատուելի հայրը սկսաւ խօսիլ այսպէս: «Յարգութիւննիդ յորդորեցիք զիս՝ որ եկեղեցւոյ հետ միութիւն ունենամ: Ես խոստովանիմ որ Կաթուղիկէ եկեղեցի մը կայ աշխարհիս մէջ տարածուած, որ անոր մէջ մոլորութիւն չկայ, ու թէ որ մէկը անոր հետ միութիւն չունենայ նէ՝ չկրնար փրկուիլ: Բայց կատարելապէս գիտեմ Աստուծոյ խօսքէն՝ որ աս եկեղեցին Հռովմայ մէջ հաստատուած չէ, այլ աշխարհիս ամէն կողմն է: Արդարև՝ ո՛ տեարք՝ Պետրոս առաքեալ իր պաշտօնը աղէկ կատարեց, և ճշմարիտ է որ ան մեծ իշխանութիւն մը ունէր, բայց Հռովմայ

Յեղափոխականներուն բանեցուցածը՝ ուրիշ տեսակ իշխանութիւն մըն է ։ Յերաւի անոնք ալ իշխողութիւն ընելու են , բայց ի՞նչպէս . Աստուծոյ խօսքին սորվեցուցած եղանակաւը ։ Իսկ ասոնք մէկզի ձգելով Աստուծոյ ցուցուցած ճամբան՝ իրենց կամքովը ուզածնուն պէս տիրապետութիւն մըն են հնարեր" ։ Քիչ մը ատեն աս պարզ բայց ազդու խօսակցութիւնը շարունակելէն ետև՝ մէկը ելաւ , "Դուն դեռ շատ բան կ'ուզես սորվելիք" ; ըսաւ . "Իմ բերնէս իմաստուն խօսքեր ելլելո՞ւն կը սպասէք" , պատասխանեց Լագիմէր . "Այսչափ ժամանակ զիս մոռացութեան գիրոցը՝ բանտի մէջ պահեցիք , և ձեր հրամանաւը կեցած տեղիս չորս պատը գրատունս ըրած առանց գրքի և գրիչի՝ այսքան ատեն անգործ մնացի . հիմա կապանքներս քակեր՝ զիս դիմացնիդ էք բերեր՝ ամբաստանութեանց պատասխա՞ն կ'ուզէք կոր ։ Ես ինչո՞ւ կը նմանի՝ գիտէ՞ք . ըսենք թէ՝ երկու հոգի իրար մեռցընելու համար մենամարտութիւն ընելու ըլլան , և առջի իրիկուընէ մէկը՝ շատ բարեկամներ ու կողմնականներ ունենալով՝ քաջալերական խօսքերով սիրտ տան իրեն , ու սորվեցընեն՝ թէ ինչ վարպապետութիւններ բանեցընել պէտք է հետևեալ օրը՝ ախոյեանը յաղթելու համար . իսկ մէկալը՝ թշնամութեամբ՝ և կամ բարեկամ ու կողմնական չունենալուն՝ մինչև լոյս երկաթները զարնուի , ի՞նչ կ'ըսէք , ասոնք առտուանց դիմացէ դիմաց ելած ատեննին՝ ան տկարացած ու բոլորովին ուժէ ինկած մարդուն նիզակը առնել՝ ու վրան յարձակելով կրկին ուժով հետը մենամարտողին դէմ դնելը՝ քան զամէն քաջութիւն չի՞ գերազանցեր" ։ Քիչ մ'ալ խօսելէն ետև՝ տեղը խրկեցին զանիկայ բանը հետևեալ օրուան ձգելով , թէպէտև շատ ուզեց

Digitized by Google

որ՝ ինչ որ պիտի ընեն նէ՝ ան օրը ընեն լմըննայ ։
Հետեւեալ օրը նորէն առեան ելան ։ Րիտլէյ Հաղորդութեան վրայ ըրած խօսքերուն մէջ ըսաւ թէ՝ "Նշդուարդ Թագաւորին օրովը Հաղորդութեան մատակարարութիւնը շատ աղէկ կերպով կը կատարուէր, և արժանաւորապէս կ՚ընդունուէր" ։ Լինքոլնի Եպիսկոպոսը դարձաւ՝ "Սա ամենէն աղէկ կերպով և արժանաւորապէս եղած Հաղորդութիւն ըսածդ՝ կեր ու խումէ ետև երթալ ոստրէ ուտելու սեղանէ Հաղորդութիւն առնելնիդ չէ՞", ըսաւ ։ Րիտլէյ պատասխան տուաւ թէ՝ "Յարգութեանդ ատանկ անարգական խօսքեր գործածելովը՝ բանը չգէշնար. գուցէ ան կեր ու խումէ եկողներուն սրտին մէջ՝ հիմակուան ուրիշ բաներէ եկողներէն շատ աւելի ջերմեռանդութիւն կար" ։ Ըստենը Րիտլէյ հրաման խնդրեց՝ որ վրան ամբաստանութիւն եղած բաներուն պատասխան գրածները կարդայ ։ Եպիսկոպոսները թուղթը առին կարդացին. "Ասոր մէջ չկարդացուելու հայհոյութիւններ կան, կարդալ չըլլար", ըսին, ու հրաման չտուին ։ Քիչ մը ատեն վէճով անցնելէն ետև, Րիտլէյ խնդրեց որ՝ առջի օրը ըրած խոստմունքնին կատարեն, թոյլտուութիւն տալով իրեն՝ որ ցուցընէ թէ ինչ պատճառաւ Պապին իշխանութիւնը չէր կրնար ընդունիլ. իրենց խարդախ խոստմունքին պէս թոյլտուութիւն ըրին ։ Քանզի երբոր Րիտլէյ "Խօսելու թոյլտուութիւն կ՚ընէ՞ք", հարցուցեր է նէ առջի օրը, Ընգղիական ոճով ըսեր էին թէ՝ "Քառասուն բառ խօսէ", որ ըսել էր թէ՝ քիչ մը ժամանակ խօսէ ։ Սուտի Րիտլէյ խօսքին առջի իմաստը չմընցուցած՝ "Կեցիր՝ կեցիր, քառասուն բառ եղաւ", ըսին, խօսքը բերանը թողուցին ։

Հուայդ եպիսկոպոսը բարեկամութիւն ցուցընելու մտօք կեղծաւորութեամբ ըսաւ ․ “Սիրտս շատ կը ցաւի կոր վրադ”, և ուրիշ սաստիկ խօսքեր ալ ըրաւ ։ “Արդարև շատ տրտմելու ես” , պատասխանեց Րիտլէյ , “քանզի ասոր հետևանքը պիտի քաշես օր մը” ։ Յետոյ դատապարտութեան վճիռը կարդացուեցաւ , ու զանիկայ դուրս հանեցին ։

Լադիմէր ներս մտաւ ։ Պատարագի վրայ ունեցած հաւատքն որ հարցուցին նէ , սաստիկ ըսաւ ․ “Քրիստոս մէկ և կատարեալ պատարագ մը ըրաւ բոլոր աշխարհիս մեղացը համար ․ ալ ասկէ ետև ոչ պատարագ պէտք է , և ոչ հնար է ըլլալ” ։ Ալ սաստիկ մարդը առանց դատապարտութեան թող տալ չըլլար ․ ուստի անոր մահուան դատակնիքը գրեցին ։

Հոկտեմբերի 15ին՝ Կլօսէսդրի եպիսկոպոսը՝ մէկ քանի ուրիշ մարդիկ ալ հետը առած՝ Օքսֆորտի քաղաքապետին՝ Այրիշին տունը եկաւ , ուր որ պահուած էր Րիտլէյ ։ Ան տեղը Հռովմէական քահանայից՝ պատարագի զգեստներովը հագուեցուցին զանիկայ բռնութեամբ , (քանզի եպիսկոպոս ըլլալը ուրացան ,) ու սկսեցին Հռովմայ եկեղեցւոյն սովորութեանը պէս՝ կարգը առնել ։ Րիտլէյ ծանր խօսքերով սկսաւ ան կատարած աբարողութիւններուն ինչ յիմարական բաներ ըլլալը ցուցընել ․ նայեցան որ պիտի չըլլայ նէ , “Հիմա բերնիդ գայլ կը դնենք՝ ձայնդ կտրէ” , ըսին ։ Ուստի պէտք եղաւ որ լուռ կենայ ․ լուռ կեցաւ՝ մինչուան որ Աւետարանը ձեռքը տուին , ու յետոյ առին՝ ըսելով ․ “Կ'առնունք քենէ Աւետարան քարոզելու պաշտօնդ” ։ Ասոր վրայ հառաչանօք դէպ 'ի յերկինս նայելով՝ ըսաւ ․ “Տէր՝

մեղք մի՛ սեպեր ատոնց՝ իրենց ալս գործած չարութիւնը" ։ Երբոր լմնցուցին արարողութիւնը , Ռիտլէյ ալս ըրած բաներնուն վրայով պիտի խօսէր Եպիսկոպոսին հետ . "Ըլ հիմա եկեղեցիէն դուրս ես դուն , մէջը եղողները քեզի հետ չեն կրնար խօսիլ" , ըսին ։ Սակայն Ռիտլէյ ըսաւ Եպիսկոպոսին . "Կ՚աղաչեմ Պէրդրամին հաղորդութեան վրայ գրած գրքերը կարդա՛ որ սորվիս . նաև ալս գրուածն ալ իմ ընտանեացս համար թագուհւոյն մատուցանես" ։ Ոստեանը պաշտօնատարին մէկուն սպասաւորներուն յանձնեցին զանիկայ , սաստիկ պատուիրելով՝ որ մարդ չթողուն հետը խօսելու ։

Ռիտլէյ ան իրիկունը քաղաքապետին ընտանեացը հետ ընթրիք ըրաւ ։ "Վաղը հարսնիք ունիմ , հրամայեցէք", ըսելով՝ առջի իրիկուընէ զանոնք հրաւիրեց՝ հետևեալ օրը իր այրուիլը տեսնելու ։ Քաղաքապետին կինը հռովմէական էր , բայց լացաւ ալս խեղճ մարդուն քաշելու տանջանքին համար ։ Ռիտլէյին եղբայրը ուզեց որ ինչուան լոյս անոր քովը նստի . բայց անիկայ ըսաւ . "Չէ , ես ալս գիշեր պիտի երթամ խաղաղութեամբ քնանամ , ինծի համար հոգ մ՚ըներ" , ըսաւ , գնաց իր սենեակը ։

Հետևեալ առտուն Հոկտեմբերի 15ին՝ այրելու տեղը պատրաստեցին Ճեմարանին առջևը ։ Լօրտ Կուլիէլմոս հօն էր եկեր արքունի խորհրդականաց հրամանաւը՝ դունդ մը զօրքով ։ Ռիտլէյ իր սովորական մուշտակաւոր սև վերարկուն հագած կու գար , հետը մէկտեղ մէկ քովէն քաղաքապետը՝ ու մէկալ քովէն ալ ուրիշ մէկը . ետևէն ալ Լատիմերը՝ իր հին կապայովը՝ վրան պատանքին լաթը առած գետինը քքրսելով կու գար ։ Ռիտլէյ բանտի մը առջևէն անցած ատենը՝ վեր նայեցաւ

Digitized by Google

բանտին պատուհաններուն՝ Գրամէրը տեսնելու յուսով ․ բայց Արքեպիսկոպոսը ան միջոցին մէկ քանի Սպանիացի կրօնաւորներու հետ վէճ կ՚ընէր կոր ․ դարձաւ ետևը նայեցաւ որ Լադիմէրն ալ կու գար կոր ․ և երբոր ցիցին քովը հասան , ծերունի ընկերոջը փաթթուելով՝ ըսաւ ․ "Սիրտ առ՝ եղբայր , քանզի Աստուած կամ կրակին ցաւերը պիտի թեթևցընէ՝ կամ մեզի մեծ համբերութիւն պիտի տայ դիմանալու" ։ Անատենը առանձին առանձին ծունկի վրայ եկան՝ աղօթք ըրին , և յետոյ իրարու հետ սկսան քաջալերական խօսակցութիւններ ընել ։ Ամիթ անուն մէկը քարոզ մը տուաւ բազմութեանը՝ ա՜ Կորնթ ․ ժգ. Գլուխէն աս խօսքը բնաբան ընելով ․ "Թէ որ իմ մարմինս այրելու տամ , և սէր չունենամ , օգուտ մը չեմ ունենար" ։ Կարդացողները ինքնիրեննուն կրնան հասկընալ ինչ տեսակ խօսքեր ընելը ․ քարոզը քառորդ մը չքշեց՝ լմնցաւ ։ Րիտլէյ Լադիմէրին՝ "Դո՞ւն կու տաս աս քարոզին պատասխանը , թէ ես տամ", ըսաւ ։ "Կ՚աղաչեմ առաջ հրամանքդ սկսէ", պատասխանեց Լադիմէր ։ "Բարի", ըսաւ Րիտլէյ , ու ծունկի վրայ գալով՝ երկուքնին միատեղ սկսան աղաչել Լօրտ Կուլիէլմոսին՝ որ քանի մը խօսք խօսելու հրաման տայ ։ Ազնուականը ուզեց խնդիրքնին կատարել ․ բայց Մարշէլ՝ մեծ Եպարքոսին փոխանորդը՝ ու պաշտօնատարին մարդիկը վազեցին Րիտլէյին վրայ , ու բերանը գոցեցին , ըսելով թէ՝ "Դարձի պիտի գաք նէ՝ խօսեցէք , չէ նէ՝ բերաննիդ բանալ չըլլար"։ "Ուրեմն", պոռաց Րիտլէյ բարձր ձայնով , "Մեր փաստը Ամենակարող Աստուծոյ կը թողում , որ անաչառապէս պիտի դատէ զամէնը" ։ Լադիմէր ալ ըսաւ ․ "Ծածուկ բան չկայ՝ որ յայտնի չըլլայ , թէ որ



Digitized by Google

թող տայիք, պատասխան ունէի ատ քարոզին" ։ Անատենը հրաման եղաւ որ այրուելու պատրաստուէին ։ Րիտլէյ խել մը ձեռքին բաներ տուաւ քովը կայնողներուն . Լադիմէր բան չտուաւ, հապա իր դուրսի հանդերձները թող տուաւ որ պահապանը առնէ . և տեսնելով որ իր ճամբորդութեանը վախճանին հասած է՝ վրան մէկ կենդանութիւն մը եկաւ . ո՜ւր էր այն տարիքի շատութենէն մէջքը ծռած՝ չորցած ու կուրճմտած ծերունին, կտրիճի մը պէս շիտակ կայներ՝ իր բոլորտիքը եղողներուն վրայ կը նայէր ։

Անատենը Րիտլէյ ցիցին քովը կայնելով, ձեռուըները վեր վերցուց՝ ու ըսաւ . "Ո՛վ երկնաւոր Հայր, բոլորով սրտիւ շնորհակալ կ'ըլլամ քեզի՝ որ զիս կանչեցիր քու ճշմարտութիւնդ խոստովանելու մինչև մեռնիլս . կ'աղաչեմ՝ ո՜վ Տէր Աստուած, ողորմէ՛ ատ Անգղիոյ թագաւորութեանը, և ազատէ զանիկայ իր բոլոր թշնամիներէն" ։ Յետքը դարբինը եկաւ, ու մարտիրոսին բոլորտիքը երկաթէ շղթայ մը անցընելով՝ բևեռով մը ցիցին զամեց որ հաստատ մնայ ։ "Բա՛րեկամ", ըսաւ Րիտլէյ, "ամո՛ւր զամէ, քանզի մարմինը տանջանքի մէջ ազատուելու պիտի ջանայ" ։ Իր քեռայրը վառօդ բերեր էր . Րիտլէյ երբոր անոր ինչ ըլլալը իմացաւ նէ, ըսաւ . "Ես կ'ընդունիմ ատիկայ իբրև Աստուծմէ խրկուած", և հարցուց թէ՝ Լադիմէրին համար ալ կա՞յ արդեօք ։ Անկէ ետև Լօրտ Կուլիէլմոսէն խնդրեց՝ որ իր ընտանեացը խնամք ընելու վրայով խօսի թագուհիին, նաև Լոնտրայի թեմին կալուածքները վարձքով բռնողներուն վրայով, որոնք թէպէտ վարձքը իրեն վճարեր էին, բայց Պօննէր եպիսկոպոսը հանել կը ջանար՝ որ ուրիշ մարդիկներու տալով ան կա-

Digitized by Google

լուածքները , նոր վարձքեր առնէ * ։

Վերջապէս ամէն բան պատրաստ էր ․ վառած փայտակոյտ մը բերին , ու Ռիտլէյին քովը դրին ։ Ընատենը Լատիմէր իր ցեղի ընկերին այս նշանաւոր խօսքերը խօսեցաւ ․ “Քաջալերուէ՛ տէր Ռիտլէյ , ու կտրիճ կեցիր ․ վասնզի այսօր Աստուծոյ շնորհօքը այնպէս մէկ լոյս մը պիտի վառենք Անգղիոյ մէջ , որ կը յուսամ թէ բնաւ պիտի չմարի” ։

Կրակը սաստիկ բռնկեցաւ ։ Ռիտլէյ բարձր ձայնով կրկին և կրկին աղաղակեց ․ “Ո՛վ Տէր՝ քու ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս , ո՛վ Տէր՝ ընդունէ՛ իմ հոգիս”։ “Նոյնպէս ալ Լատիմէր բոլոր ուժովը աղաղակեց ․ “Ո՛վ երկնաւոր Հայր , ընդունէ՛ իմ հոգիս” ։ Աս ըսելով բոցերուն վրայ ծռեցաւ զանոնք գրկելու պէս , ետքը ձեռուընե-րովը երեսները շփեց , ու զանոնք կրակին մէջը խոթեց , և իսկոյն քիչ մը ցաւով մեռաւ ։

Ռիտլէյին տանջանքը աւելի սաստիկ եղաւ ։ Անոր փայտակոյտը շատ բարձր դիզուած ըլլալով՝ բոցերուն արգելք մը եղաւ , ու շուտով չբռնկեցաւ ։ Վարը գտնուողներուն կ'աղաչէր որ կրակը իրեն մօտ բերեն ․ իր եղբայրը կ'ուզէր անոր խնդիրքը կատարել , բայց անոր խօսքը աղէկ չիմանալով ալ աւելի բարձր դիզեց փայտերը , անանկ որ մարտիրոսին մարմնոյն վարի մասերը բոլորովին այրեցան , իսկ վերի մասերուն դեռ կրակը չէր

* Երբոր Ռիտլէյ Լոնտրայի առաջնորդ էր , ինքը կը կերակրէր Պօններին մայրը ու քոյրը , և մեծ պատուով կը յարգէր զանոնք ․ կերակուրի ժամանակ ամէն անգամ Պօններին մայրը սեղանին խիստ պատուաւոր տեղը կը բազմեցընէր ․ իսկ Պօններ աս վարմունքին փոխարէն՝ Ռիտլէյին քեռայրը իր ստացուածքէն զրկեց , ու անոր վրայ հերետիկոսութեան յանցանք դնելով ամբաստանութիւն ընելու պատճառ կը փնտռէր ։

Digitized by Google

դպած ։ Քիչ մը ատենէն ետքը 'ի զննին կեցողներէն ոմանք տեսան որ՝ անոր ծունկերը կրակէն սպառեր էին , իսկ մէկ քովի հանդերձները հազիւ թէ խանձուեր էին ․ և ինքն ալ դեռ շարունակ այսպէս կը կանչէր ․ “Ո՜վ Տէր՝ ողորմէ՛ ինծի” ․ և սակայն ստէպ ալ՝ “Կրակը ինծի մօտ բերէք” , կ'ըսէր ։ Վերջապէս անոր խնդիրքը իմացուեցաւ ․ սպասաւորներէն մէկը վերի փայտակոյտը վար ձըգեց , բոցը բորբոքեցաւ , և վառօդը մեծ շառաչիւնով բռնկելով , ալ մարտիրոսին ձայնը չէր լսուեր ․ հապա անոր ծունկերը կրակէն սպառուած ըլլալով , մարմինը շղթային վրայէն ծռեցաւ , ու Լադիմէրին քովը ինկաւ ։

Զարհուրաւոր մարդիկ՝ Րիտլէյին կրած սոսկալի տանջանքները , և անոր վախճանը շուտով հասցընելու շնորհք մը ընելու համար եղբօրը ջանքը տեսնելով , դառնարցունք կու լային , և խորին զգացմամբ կը յիշէին թէ աս մարդիկը Անգղիոյ մէջ երևելի պաշտօնի տէր էին , և իրենց կեանքը գործունէութեամբ և օգտակար կերպով անցուցին , և իրենց գիտութեանը , բարեպաշտութեանը և անստգիւտ վարմունքին համար , և միշտ մարդոց մարմնաւոր և հոգևոր երջանկութեանը 'ի սրտէ հոգ տանելնուն համար գովելի էին ։ Արդարև ցաւալի բան է ասանկ երկու պատուական անձեր կրակի մէջ ձգուած և այրուած տեսնելը ։

“Յիրաւի” , կ'ըսէ Ֆօքս , ասոնց չարչարանքին ստորագրութիւնը վերջացընելով , “հիմա անոնք մեռած են , և արդէն աս աշխարհիս վարձքը առին ․ անոնց համար երկինքին մէջ ի՛նչ վարձք կը մնայ ․ Տէրոջը փառաց օրը՝ երբոր Ինքը գայ իր սուրբերովը , կը հաւատամ որ պիտի յայտնուի”։

Digitized by Google

## ԳԼՈՒԽ Թ։

Կարտինէրին սոսկալի մահը — Ուէրպ, Բօքէր և Բարք — Փօլին վարմունքը — Փիլքօդին քննութիւնները ու դատապարտութիւնը — Բանտի մէջ Բրօթէստանդներուն քաշած չարչարանքները — Եօթը մարտիրոս կ'այրուին Սմիթֆիլտի մէջ։

Հոս տեղ մէկ խիստ տարբեր վարմունք ունեցողի մը՝ այսինքն Կարտինէրին կենացը վերջին ժամերուն վրայով խորհրդածութիւն ընենք։ Ասիկայ Վինչէսդրի առաջնորդն էր՝ և մեծ Եպարքոս, որ շատ տարի Անգղիոյ մէջ Բարեկարգութեան դէմ հակառակորդներուն գլխաւորը եղաւ։ Րիտլէյին և Լադիմէրին մարտիրոսանալու օրը անհամբերութեամբ անոնց այրուելուն լուրը առնելու կը սպասէր։ Ան ատենները սովորական մարդոց սովորութիւնն էր ժամը տասնումէկին ճաշ ընել. բայց աս պատճառով Կարտինէր իր կէս օրուան ճաշը չըրաւ, մինչև որ իր փափաքած լուրին վրայով տեղեկութիւն մը չստացաւ։ Ժամը չորսին ատենները պատգամաւոր մը եկաւ, որ կը ծանուցանէր թէ մարտիրոսաց փայտակոյտը բռընկցուցին. ան ատենը մեծ ուրախութեամբ սեղան նըստաւ. բայց երբոր իր մարմինը կը զուարճանար իր առջևի կերակուրներովը, և իր միտքը Ամենաբարձրելոյն մարտիրոսացած սուրբերուն չարչարանքներովը, յանկարծ վրան հասաւ մահաբեր հիւանդութիւն մը, (իր երկար ժամանակուան ձեռք զարկած մոլութիւններուն հետևանքը,) ու մինչև գերեզմանը տարաւ զանիկայ։ Իր սակաւատև հիւանդութիւնը Բարլամէնդի ժողովին ներկայ գըտնուելուն՝ և ուրիշ գործեր տեսնելուն արգելք չեղաւ. սակայն օրէ օր իր տկարութիւնը աւել-



Digitized by Google

նալու վրայ էր , և ինչպէս որ իր ժամանակակից-
ներէն մէկը՝ Պուրհամի եպիսկոպոսը Փիլքինկթըն
կը ստորագրէ , "Անոր մարմինը դեռ հողը չմտած
փտեցաւ , անանկ որ գրեթէ անկարելի եղաւ
որ մէկը անոր քովը մօտ երթայ" ։ Անոր մտա-
տանջութիւնը՝ մարմինին ցաւերէն աւելի կը նեղէր
զանիկայ ։ Շատ անգամ այսպէս կ'աղաղակէր ․
"Պետրոսին պէս մեղք գործեցի , բայց անոր պէս
չզղջացի"։ Այս դիպուածը ահաւոր ազդարարութիւն
մըն է անոնց՝ որ զղջման ժամը օրէ օր ետ կը ձըգ-
գեն ։ Տէյ անուն Չիչէստրի եպիսկոպոսը՝ տեսնե-
լով անոր միտքին ու մարմնոյն սոսկալի վիճակը , և
աղէկ գիտնալով որ Հռովմէականութեան ծիսա-
կան բաները պիտի չկրնային անժամուն մէջ մխի-
թարութիւն մը տալ անոր , ուստի մի միայն
փրկութեան միջոցը ձեռք առաւ ․ բոլոր ջանքով
աշխատեցաւ որ Աստուծոյ շնորհացը խոստմունք-
ներովը , և Քրիստոսի արեանը միջոցով ձրի ար-
դարանալու հրաւէրներովը մխիթարէ զա մահուան
դուռը հասած եպիսկոպոսը , առաջ բերելով
Սուրբ Գրոց խօսքերը ։ Կարտինէր՝ մարդկային
սրտին բնական թշնամութեամբը՝ սաստիկ կատղե-
ցաւ շնորհաց վարդապետութիւններուն դէմ ․ բայց
համոզուելով՝ թէպէտև առանց սրտի փոփոխու-
թեան , այսպէս պոռաց ․ "Ի՞նչ , տէր իմ , հիմա
աս ճամբա՞ն բանալ կ'ուզես ․ ուրեմն երթայք բա-
րով , ամէնքդ ալ ։ Այո՛ ինծի՝ և ուրիշ իմ վի-
ճակիս մէջ եղողներուն կրնաք խօսիլ ատանք ․ բայց
աս պատուհանը բաց ժողովուրդին , ու ետքը եր-
թաք բարով , ամէնքդ ալ" ։ Կը կարդանք որ սա-
տանաները կը հաւատան և կը դողան ․ աւելի
բան է ըսել՝ թէ Կարտինէրին դիպուածն ալ անոր
կը նմանի ։

Digitized by Google

Կարտիններին վարմունքը երկար ստորագրութեան պէտք չունի : Ասիկայ ըստ երեւութին հանդարտաբարոյ՝ և ներսէն խորամանկ ըլլալով, հալածանաց տորին ծառայութիւնը ուրիշներուն թող տուած էր, որպէս զի ինքը իր բոլոր ճգամբը աշխատի Հռովմէականութիւնը անխախտ հիման վրայ հաստատելու : Իր ընթացքը փոխելով Պապին դէմ գնելուն վրայով, ու ետքը անոր իշխանութիւնը նորէն պաշտպանելուն վրայով երկարօրէն խօսիլ հարկ չէ : Մէկ խօսքով վերջացընենք. անիկայ Քրիստոնէական սկզբունքներէն բոլորովին զուրկ էր:

1555, Հոկտեմբերի մէջ՝ Յովհաննէս Ուէպպ, Գէորգ Ռօփէր, և Գրիգոր Փարք՝ Քանդուարիոյ մէջ այրեցան, ու մեծ համբերութեամբ իրենց տանջանքները կրեցին : Կրակին բորբոքած ատենը՝ Ռօփէր իր թեւերը բացաւ, ու այնպէս անշարժ պահեց զանոնք, մինչև անոնց բոլորովին այրուիլ ու վար իյնալը :

Կը պատմուի թէ՝ աս միջոցին շատ մարդիկ Լոլլարտեանց բերդին մէջ և ուրիշ բանտերու մէջ մեռած են, իրենց կրած սաստիկ տանջանքներուն պատճառաւը, և ամէն անգամ անոնց մարմինները դաշտերու մէջ նետուած են. սակայն ողորմած մարդիկ՝ թէ գիշերով և թէ առտուանց կանուխ զանոնք կը թաղեն եղեր : Աս մեռելները սովորաբար Փինսպէրի կոչուած դաշտերուն մէջ կը նետեն եղեր, ու հոն տեղի աղեղնաւորները զանոնք կը թաղեն եղեր՝ գերեզմաններուն բոլորտիքը կայնած սաղմոսներ երգելով :

Հոկտեմբերի 21ին՝ Պարլամէնդի ժողովը գումարուեցաւ. բայց մարդիկ խիստ շատ տժգոհութիւն կը ցուցընէին նոր հալածմունքներուն վրայ և բոլոր իշխանութիւնը Հռովմէական եկեղեցականաց ձեռքը

Digitized by Google

ձգտելուն յայտնի որոշմանը վրայ ։ Այս անոնց ատգոհութիւնը ալ աւելի զօրացաւ , քանզի Թագաւհին որոշեր էր որ Թագաւորութեան ձեռքն եղած բոլոր ստացուածքը ետ դարձընէ , որն որ Պապին Նուիրակը իբրև «եկեղեցւոյ օրինաւոր ժառանգութիւնը» կը պահանջէր ։ Այս ասոր համեմատ Բարլամէնդը վճիռ տուաւ ։

Փօլ մեծ իշխանութեան հասաւ Կարտինէլին մահուամբը . ուստի զանազան հրամաններ առաջարկեց ։ Առաջինը աս էր՝ Թէ պարտին միշտ յիշել որ Անգղիա Հռովմայ հետ հաշտուած է ։ Միւսները Հռովմէականութիւնը զօրացընելու վըրայով էին . բայց շատ բաներու կողմէ եկեղեցականները բարեկարգելու խնամք կը տանէր ։ Փօլ կը գիտէր որ Անգղիոյ մէջ մարդոց միտքը այնչափ լուսաւորուած էր , որ առջի ատենի եկեղեցականաց մէջ սովորական եղած մեծ մոլութիւններուն պէտի չկրնային համբերել , Թէ և աս ատեններէն ետքն ալ ուրիշ երկիրներու մէջ դեռ կը մնային ան մոլութիւնները ։ Աղէկ գիտէր որ եԹէ եկեղեցականք իրենց ընԹացքը չփոխէին , աւելորդապաշտութեան և մոլորութեան դրութիւնը նորէն պէտի կործանէր ։ Ուստի խորագիտութեամբ հալածանաց սաստկութիւնը մեղմացուց . այսու ամենայնիւ խորհելով որ Հռովմայ Աթոռը մեղմ միջոցներ բանեցընելու պէտի չզիջանի , Թող տուաւ անոր փոխանորդները և ուրիշ առաջնորդները որ իրենց ուզածին պէս բռնութիւն բանեցընեն ։ Շուտով յայտնի եղաւ՝ որ Թէպէտ Կարտինէլը մեռած էր , բայց հալածանքը անդադար պէտի շարունակուէր ։ Վասնզի անիկայ յաւէտ ան եկեղեցւոյն սկզբունքներէն յառաջ կու գար , որ Յայտնութեան մէջ յիշուած է իբրև Յիսուսի սուրբերուն ու մարտի-

Digitized by Google

րոմներուն արիւնը խմող , քան թէ մարդոց կերքերէն , որ բնականաբար անոնց բռնած միջոցներուն սաստկութիւնը կրնայ աւելնալ ու նուազիլ : Հոս տեղ յիշատակութեան արժանի բան մըն ալ աս է , որ Փօլ Յիսուսեան կրօնաւորներուն ըրած խընդիրքը մերժեց , երբոր աղաչեցին՝ որ Անգղիոյ մէջ քանի մը վանքեր իրենց յանձնուի , (որովհետեւ Թագուհին զանոնք բանալու միտք ունէր ,) որպէս զի դաստիարակութեան դպրոցներ և ուսումնարաններ հաստատեն :

Դեկտեմբերի 18ին՝ Յովհաննէս Փիլբօգ Վինչեստրի վարդապետը Ամիթֆիլտի մէջ այրուեցաւ : Ասիկայ Համբշայրացի ասպետի մը որդի էր , ու Օքսֆորտի մէջ համբաւ ստացեր էր իր ուսմանցը համար , մանաւանդ Եբրայեցերէն աղէկ գիտնալուն համար , որ ան օրերը աս լեզուին հմուտ մարդիկ հազուագիւտ էին : Ասիկայ Եւրոպայի զանազան կողմերը պտըտելէն ետեւ՝ իր հայրենիքը վերադարձաւ , Բարեկարգութեան սկզբունքները ամուր բռնած : Եդուարդ Թագաւորին օրովը Փիլբօգ մեծ համբաւ ստացեր էր՝ իբրեւ հաւատարիմ և յաջողակ քարոզիչ : Մարիամ Թագուհիին առջի օրերը ասիկայ Ճշմարտութեան նախանձաւոր և քաջ ջատագով մը եղաւ . և աս պատճառաւ շուտով բանտը դրուեցաւ : Հռովմէականք խիստ շատ փափաք ունէին զանիկայ իրենց կարծիքներուն համոզելու , աղէկ գիտնալով որ անոր սրամտութիւնը և գիտութիւնը իրենց փաստին մեծապէս պիտի օգնէր . ասոր համար Թագաւորութեանը առջի մարտիրոսներուն հետ մէկտեղ չէր . հապա Կարտինէր իր մեռնելէն քիչ մը ժամանակ առաջ Պօննէրին խրկեց զանիկայ : Հոն շատ խստութեամբ վարուեցան անոր հետ , և դարձեալ շատ աշխա-

տեցան որ զանիկայ Հռովմէական կրօնքին դարձը֊նեն ։ Փիլքօդ միջոց գտնելով՝ իր տասուիրեք ան֊գամ քննութիւններուն պարագաները՝ և իր քա֊շած նեղութիւններուն կատարեալ ստորագրութիւ֊նը գրեց , և իր բարեկամներուն յանձնեց ։

Փիլքօդ նախ մէկ քանի ուրիշներու հետ ստոր֊երկրեայ տեղ մը արգիլուած էր Պօննէրին տանը ածխանոցին մէկ ծայրը , ու ետքը մայր եկեղեցւոյն բերդին մէջ , առանց կրակի ու լոյսի ՙՆոյեմբեր ամսուն մէջ . բայց հոն անոր հետ մէկը կար , այսինքն "Մխիթարիչը" , և անոր ազդեցութեամբը՝ ինչպէս որ Փիլքօդ գաղտուկ կը գրէ ածխանոցին մէջէն , "Ես իմ վեց ընկերներովս յարդերուն մէջ անանկ ուրախ սրտով կ'արթըննանք , ու Աստու֊ծոյ փառաբանութիւն կու տանք , ինչպէս որ ու֊րիշները իրենց փետրալի անկողիններուն մէջ" ։ Բայց ասանկ նեղութեան մէջ իր եղբայրներուն հետ մէկտեղ ըլլալը՝ պապականութեան փաստին վնասակար սեպելով , ամբաստանութիւն ըրին ա֊նոր վրայով թէ՝ "Ուրիշ բանտարկեալները կը քա֊ջալերէ որ իրենց մոլար կարծեացը վրայ հաստատ կենան". ուստի ժամանակ մը վերոյիշեալ բերդին մէջ առանձին տեղ մը դրին ։ Անիկայ իր փոխա֊դրուիլը այսպէս կը ստորագրէ . "Մայր եկեղեցիին մէջէն անցնելով Լօլլարտեանց բերդը եկայ , ու ետքը եկեղեցւոյն արևմտեան կողմը դառնալով՝ պատին մէջտեղէն , ու վեց կամ եօթը դռներէ անցնելով իմ բնակարանս եկայ . երբոր ասանկ զանազան նեղ տեղերէ կ'անցնէի , յիշեցի ան խօսքը թէ՝ ՙՆեղ է ան ճամբան՝ որ դէպ 'ի երկինքը կը տանի . և իմ բնակարանս Լօլլարտեանց բերդին ճիշդ մէկալ կողմի բերդն էր , և գրեթէ մայր եկե֊ղեցւոյն մարտկոցին չափ բարձր էր . լայնութիւնը

Digitized by Google

ուԹը տող , ու երկայնուԹիւնը տասուերեք տող էր , և իմ առջինեղած բանտիս վրայովը կ'իյնար , ու դէպ 'ի արևելք մէկ պատուհան մը ունէր , ուսկից շատ տուներու վրայ կրնայի նայիլ , բայց մարդու անցուդարձ չկար»: Ես բանտին մէջ մըտնելու առենը բանտապետը ու անոր սպասաւորները եկան զգուշուԹեամբ վրան նայեցան , բայց իր գրուածքները անանկ տեղ մը պահեր էր որ չգտան:

Փիլքօզին քննուԹեանցը մէջ պապական եկեղեցւոյն երևելի մոլորուԹիւնները Թէ շատ և Թէ քիչ յիշուած են: Եկեղեցւոյն միուԹեանը վրայով՝ որուն համար Հռովմէականք այնչափ եռանդով կը վիճին , և իրենց աս դրուԹեանը վրայով՝ Թէ իրենց եկեղեցւոյն սահմանէն դուրս փրկուԹիւն չկայ , Փիլքօզ այսպէս խօսեցաւ . «Դուք կ'ըսէք Թէ՝ դուք ճշմարիտ եկեղեցւոյն անդամն էք , ու մենք կ'ըսենք Թէ՝ մենք ենք ճշմարիտ եկեղեցւոյն անդամը : Դուք կ'ըսէք Թէ՝ Ո՛վ որ ձեր եկեղեցիէն դուրս է , դատապարտեալ է . և յիրաւի մենք ալ կը հաստատենք որ՝ եԹէ մենք (Քրիստոսի) ճշմարիտ Եկեղեցիէն զատուինք , որուն վրայ պատուաստուած ենք Աստուծոյ խօսքովը , դատապարտուԹեան վիճակին մէջ պիտի գտնուինք : Աւստի Թէ որ ձեր տէրուԹիւնը կրնայ աւելի աղէկ վկայուԹիւններ առաջ բերել ձեր եկեղեցիին համար , քան որչափ մենք կրնանք բերել մերինին համար , ու Թէ որ Սուրբ Գրոց խօսքերովը կրնայ ապացուցանել՝ Թէ Հռովմայ եկեղեցին է՝ Ճշմարիտ Կաթողիկէ Եկեղեցին , ինչպէս որ ձեր ամէն քարոզներուն , գիրքերուն և ձեռնարկուԹիւններուն մէջ կը հաստատէք , և Թէ ամէն Քրիստոնեայ մարդիկ դատապարտուԹեան պատժոյն ենԹակայ ըլլալով՝ պարտին անկէ առաջնորդուիլ , ինչպէս որ դուք

Digitized by Google

կը պնդէք , և թէ ան միայն իշխանութիւն ունի իր ուզածին պէս մեկնութիւն տալ Սուրբ Գրոց խօսքերուն , և թէ ամէն մարդիկ միայն անանկ մեկնութիւններուն մտիկ ընելու են . Թէ որ աս բաները կրնաք հաստատել վկայութեամբ , ես ալ ձեր ուզածին չափ ձեր եկեղեցւոյն պիտի հնազանդիմ : Ուրեմն կը խնդրեմ ձեզմէ՝ Աստուծոյ սիրոյն համար աս բանիս մէջ զիս հաճեցընէք": Խօսք տուին որ աս բանը ընեն , բայց կարող չէին . և թէպէտ հայրապետներուն գրքերէն քանի մը վկայութիւններ առաջ բերին՝ իրենց դրութիւնը հաստատելու համար , սակայն Փիլբօդ դիւրաւ հերքեց զանոնք ան նոյն գրքերուն խօսքերովը . և իրենց եկեղեցւոյն ընդհանրականութեանը համար աս պատասխանը տուաւ թէ՝ աշխարհիս երկու մասը՝ Ասիա և Ափրիկէ Հռովմայ եպիսկոպոսին պահանջած գլխաւորութեանը բնաւ հաւանութիւն չտուին :

Մէկ ուրիշ անգամ մը Պօններ յանցանք գտաւ Փիլբօդին վրայ , քանզի իր մէկ գրքին մէջ այսպէս գրած էր թէ՝ «իմ վրաս՝ այսինքն Յովհաննէս Փիլբօդիս՝ որ աւելի եղաւ մեղքը , ալ աւելի եղաւ շնորհքը": Փիլբօդ յանդիմանեց Եպիսկոպոսին տգիտութիւնը Սուրբ Գրոց վրայով , յիշեցընելով անոր՝ թէ անիկայ Պօղոս առաքելոյն խօսքն է , և թէ իր մխիթարութեանը համար զանիկայ իրեն յարմարցուցեր էր , գիտնալով որ թէպէտև իր մեղքերը անչափ ու մեծ էին Աստուծոյ առջևը , սակայն Անոր ողորմութիւնը ու շնորհքը անոնց ամենուն վրայ յաղթական կը հանդիսանայ : Բայց անկարելի է աս քննութիւնները տեղն 'ի տեղը ստորագրել . բաւական է ըսել՝ թէ Փիլբօդ արիութեամբ մարդոց անդրդուելի նախատինքը ճեղքեց , և զօրաւոր փաստերով անոնց ձեռնարկու-

Digitized by Google

թիւններուն դէմ գրաւ, նոյն ատենը իրեն մէկ գերազանցութիւն մը չսեպհականելով՝ իր գիտութեան մէջ զարգացած ըլլալուն համար, հապա հաստատուն հիման վրայ կենալով, ինչպէս որ ինքը ըսաւ: «Իմ պարծանքս ուրիշ գիտութեան վրայ չէ, հապա հաւատքի ու Քրիստոսի վրայ. և աս գիտութիւնը ունենալու պարտաւոր եմ, ու անշուշտ գիտեմ որ ունիմ»:

Վերջապէս Դեկտեմբերի 16երորդ օրը՝ Պօններ պարզապէս խօսեցաւ Փիլքօդին թէ մարդիկ կ'ըսեն որ «Հիմա Կարտինէլը մեռած ըլլալով՝ ալ հերետիկոսները պիտի չայրին». սակայն անոնց աս կարծիքը սուտ հանելու համար՝ Փիլքօդ պիտի սպաննուի: Նոյն ատենը անոր դէմ եղած ամբաստանութիւնները առաջ բերին. զանազան սուտ և հայհոյալի կարծիքներ կը դնէին անոր վրայ, ինչպէս որ Հռովմէականաց սովորութիւնն էր՝ երբոր Լուլարաններուն և Բրօթէսդանդներուն վրայով ամբաստանութիւն կ'ընէին: Փիլքօդ ան զրպարտութիւնները մերժեց, և հարցուց Պօններին թէ արդեօք չամչնար որ այսանկ զրպարտութիւններ կը դիզէ իր վրայ: Նոյն ատենը Պօններ դատապարտութեան վճիռը տուաւ, նախապէս աղօթք մը ըրաւ՝ աստուածային լոյսը օգնականութեան կանչելով. Փիլքօդին վրայ սա յանցանքները դրուած էր, թէ Կաթուղիկէ Եկեղեցիէն բաժնուած էր, և թէ հաստատեր էր թէ՝ պատարագը կռապաշտութիւն է, և թէ սրբագործութեան մէջ Քրիստոսի մարմնոյն իրօք ներկայ ըլլալը ուրացեր էր: Երբոր Պօններ դատակնիքը կը կարդար, Բաթի եպիսկոպոսը Պուրն՝ կանգ առնել տուաւ անոր, ու ըսաւ. «Տէր իմ, հարցուր իրեն՝ գուցէ դարձի գայ»: Նա բանը սովորաբար կ'ըլլար, ցուցընելու



Digitized by Google

համար թէ իրենք ակամայ կը դատապարտէին ։ Աս անգամ Պօննէր իր ինչ ոգւոյ տէր ըլլալը յայտնեց, ըսելով. «Թող տուր զանիկայ», և այսպէս դատակնիքին մնացորդը կարդալը շարունակեց ։

Ասկէ ետև Փիլբօդ Նիւկէյլի բանտը տարուեցաւ, ան տեղի չար բանտապետը՝ որ Աղեքսանդր կը կոչուէր, հրաման ըրաւ որ տանել կրցածին չափ շղթաներ դնեն անոր վրայ, ու խուարին բանտ մը տանին ։ Պաշտօնատարը իմանալով աս անօգուտ անգթութիւնը, հրաման խրկեց բանտապետին որ այնչափ խստութեամբ չվարուի հետը ։ Աղեքսանդր խիստ դժկամակութեամբ զիջաւ աս հըրամանին, սպառնալով որ եպիսկոպոսներուն պիտի երթայ գանգատ ընէ պաշտօնատարին միջամուխ ըլլալուն համար ։ Հետևեալ իրիկունը Փիլբօդ իմանալով որ իր այրուելուն հրամանը ելած է, ըսաւ. «Ես պատրաստ եմ. թող Աստուած ինծի զօրութիւն, և ուրախալի յարութիւն մը պարգևէ» ։ Ուստի առանձնացաւ, և ջերմեռանդութեամբ աղօթեց, և օրհնեց զԱստուած, որ զինքը արժանի ըրաւ ճշմարտութեան համար չարչարուելու ։

Առաւօտուն ժամը ութին պաշտօնատարները եկան ու Փիլբօդը կանչեցին. ան ալ մեծ ուրախութեամբ անոնց քովը գնաց. աս միջոցին իր հաւատարիմ ծառան աս պատեհութեանս կը սպասէր որ հրաժարական ողջոյնը տայ ։ Մարտիրոսը առին ու Սմիթֆիլտ կը տանէին. ճամբան տղմուտ ըլլալով՝ երկու ոստիկան թևերնուն վրայ առին մարտիրոսը, որ ցիցին քովը տանին. «Ատ ի՞նչ կ'ընէք», ըսաւ խնդալով, «միթէ զիս պապ ընել կ'ուզէք. ես գոհ սրտիւ դէպ 'ի իմ ճամբորդութեանս վախճանը ոտքով երթամ պիտի» ։ Սմիթֆիլտ մըտնելուն պէս՝ ծնկան վրայ գալով՝ ըսաւ. «Ո՛վ

Սմիթֆիլտ , իմ ուխտերս քու մէջդ պիտի կատարեմ"։ Երբ ցիցը համբուրեց , ու ըսաւ . "Միթէ ես այս ցիցին վրայ չարչարուելէն պիտի խորշիմ , քանի որ իմ Փրկիչս ինծի համար խաչին վրայ անարգանօք մեռնիլը յանձն առաւ"։ Ուստի Ճղ , Ճէ , և Ճը երորդ սաղմոսները խօսելէն , և զինուորներուն սատակ բաժնելէն ետև՝ ցիցին կապուեցաւ , և համբերութեամբ մարտիրոսացաւ ։ Ժողովուրդը շատ ցաւակցութիւն ցուցուց այս մարտիրոսին քաշած չարչարանքներուն վրայ . այս պատճառով Ժողովքը գիր մը գրեց քաղաքապետին , պատուիրելով որ հերետիկոսաց սպանութեան ա- որոնք եթէ մէկը տեսնեն որ հերետիկոսները կը մխիթարէ , անոնց կ'օգնէ կամ զանոնք կը գովէ , շուտով բռնեն ։

Քովրտէյլ այս միջոցիս Աւետարանին հետևողներուն կրած չարչարանքները ազդու կերպով կը նկարագրէ , ըսելով . "Շատ մարդիկ ստորերկրեայ բանտերու , աղտեղի փոսերու , մութ՝ զզուելի և գարշահոտ անկիւններու մէջ բանտարկուած էին" . ուրիշները ոտնակապերու և շղթաներու տակ ճնշուած , անանկ որ դժուարաւ կրնային շարժիլ . ոմանց ոտուըքները բարձրէն կոճղերու մէջ դրուած , ու պարանոցնին երկաթէ անուրներով պատին կպցուած . և ոմանց մէկ ոտուըքը կամ մէկ ձեռքը կոճղի մէջ դրուած , իսկ միւսը դուրս ձըգուած , առանց մէկ աթոռի մը կամ քարի՝ որ անոր վրայ նստին , իրենց վշտացած մարմինները հանգստացընելու համար ։ Ուրիշներն ալ երկաթեղէն տանջանարաններու մէջ դրուած էին , որուն մէջ մարտիրոսաց մարմինները կծկուած կը մնար ։ Շատերը ոգեպահ կերակուրի պակասութենէն կընե-

զուէին. որոնցմէ ոմանք սովամահ կ'ըլլային. անոնց հալածիչները շատ անգամ մնապարծութեամբ կ'ըսէին թէ՝ աս չարչարուած սուրբերը այնչափ նեղը պիտի ձգեն, «մինչև որ անօթութեան պատճառաւ ստիպուին իրենց մատերուն միսերը ուտել»: Մէկ կողմէն ալ բարեկամները ամենայն արթնութեամբ պատրաստ էին աս խեղճ բանտարկելոց օգնութիւն մատուցանելու, պատեհութիւն գտած ատեննին՝ անոնց ուտելիք և ստակ տալով: «Աս ամէն տանջանքները», կ'ըսէ Բոլլոտէյլ, «և ասոնցմէ զատ շատ ուրիշ տանջանքներ ալ պապականք 'ի գործ կը դնէին մարտիրոսաց վրայ. Սա-
[illegible]
պէս կը զուարճանային Աստուծոյ սուրբերուն դէմ եղած զանազան բռնութիւններով ու տանջանքներով, ինչպէս որ ամենուն յայտնի է. և ինչպէս որ շատերը որ դեռ ողջ են՝ և թէ քիչ շատ նեղութիւն կրած են, կրնան աս բանիս ստուգութեանը համար վկայել»: Թէպէտ և աս բանտարկեալները գրիչէ, մելանէ և թուղթէ զուրկ էին. սակայն իրենց հաւատոյ վրայ հաստատուն ըլլալնուն լուրը իրենց բարեկամներուն հասցընելու միջոց մը գտեր էին: Երբեմն գրիչի տեղ՝ պատուհանէն փրցուած կապարի մանր կտորուանքները կը բանեցընէին, ու մելանի տեղ իրենց արիւնը կը գործածէին: Անոնց այսպէս արիւնով գրուած նամակները, որ Մարիամին արիւնաղաղախ թագաւորութեանը յիշատակն էին, ան ցաւալի ժամանակներուն պատմագրութեանց մէջ յիշուած են:

Աս միջոցիս Աւետարանին յարողները գաղտուկ կերպով յորդորելու պտըտող եղբայրները զգուշութեամբ կը փնտռուէին:

Յիրաւի ան օրերը Աստուծոյ խօսքը հազուա-

գիւտ էր , և Քրիստոսի հետևողները պատահու-
թիւն գտած ժամանակնին մէկտեղ կը ժողվուէին ։
Աս պզտիկ ժողովներուն անդամները շատ անգամ
իրենց ժողվուած տեղը կը բռնուէին , այսու ա-
մենայնիւ տակաւին ժողովք ընելը կը շարունակէին։

Երբոր քարոզիչ երէցները վռնտուեցան , կամ
մեռցուեցան , աշխարհականներէն ոմանք՝ որ Սուրբ
Գրոց տեղեկութիւն ունէին , անոնց տեղը բռնե-
ցին ։ Աթրայփ կը յիշէ քանի մը աշխարհական
քարոզիչներ , և մասնաւորապէս որմնադիր մը Տա-
ունս անունով՝ որ ամէն տօնի օրերը իր պարտէզին
մէջ Աւետարան կը քարոզէ եղեր ան ամենուն՝ որ
անձերնին վտանգի մէջ դնելով կու գային մտիկ
ընելու ։

Քոլտէյլ և ուրիշ մարդիկ ալ Քրիստոսի
հալածեալ հօտին գրուած շատ տետրակներ ու
պզտիկ գրքեր տպել կու տային օտար երկիրներու
մէջ , և գաղտուկ Անգղիոյ մէջ կը տարածէին ։
Բարլամէնդին մէկ Հռովմէական անդամը այսպէս
կը գրէ . «Կ'ըսուի թէ հոս զանազան Ձոր Գէրէր
կը գտնուին գիրքերով քաղաքին բոլորտիքը նե-
տուած , որոնք ուրիշ երկիրներէ բերուած են" ։
Եւ աս բանիս միջամուխ եղող մարդիկը մեծ զգու-
շութեամբ փնտռուեցան . ու անոնց ընթացքը խա-
փանելու համար՝ հետևեալ տարւոյն սկիզբը ըն-
կերութիւն մը հաստատուեցաւ , անոր հրամանա-
գրին մէջ աս բանս կը պարունակուէր , թէ ան
միաբանութիւնը աս նպատակիս համար հաստա-
տուած է՝ որ հերետիկոսական գիրքերուն արգելք
մը դնէ . և մասնաւոր իշխանութիւն մը տրուած
էր անոնց՝ որ պապականութեան դէմ հրատարա-
կուած բոլոր գիրքերը փնտռելով ձեռք անցընեն ։

Պօննէրին ըսածը՝ «թէ Հերետիկոսները պիտի



Digitized by Google

այրուելն՝ Կարտինէրը մեռած ըլլալով ալ"․ չուտով ճշմարիտ ելաւ ։ 1556, Յունվար 27ին՝ եօթը մարտիրոս այրուեցան Սմիթֆիլտի մէջ, որոնցմէ երկուքը կնիկ էին ։ Անոնց վրայով եղած ամբաստանութիւնը աս էր, թէ Անոնք Կաթուղիկէ Եկեղեցւոյն մէջ մկրտուած էին․ բայց Եկեղեցւոյ միութենէն բաժնուեր էին, պատարագ տեսնելու չերթալով, ու Հաղորդութեան մէջ իրօք Քրիստոսի ներկայութիւնը ուրանալով ։ Ու եօթը Հոգին մէկտեղ մեծ համբերութեամբ մարտիրոսացան Սմիթֆիլտի մէջ ։

Յունվար 31ին ալ՝ չորս կնիկ ու մէկ էրիկ մարդ մէկտեղ այրուեցան Կանտաբրիգիոյ մէջ ։

## ԳԼՈՒԽ Ժ ։

*Գրամէրին քննութիւնը ու դատապարտութիւնը — Հնազանդութեան գրուածք մը կը ստորագրէ — Այն գրուածքը կը հերքէ, ու կ՚այրուի ։*

Այսչափ ճշմարտութեան հետեւող մարդոց չարչարանքները յիշելէն ետեւ, պէտք է որ անոնց ցանկին մէջ յիշատակենք Թովմաս Գրամէր անունը երեւելի Բարեկարգիչը՝ Քանդուարիոյ Արքեպիսկոպոսը ։ Անիկայ Անգղիոյ մէջ Աստուծոյ մէկ ընտրեալ ծառան էր․ որ թէ Հենրիկոս Ը.ին և թէ Եդուարդ Զ.ին օրերը պապականութեան դէմ դնող զօրաւոր գործիք մը եղաւ, և բարեկարգութիւնը յառաջ տարաւ ։

Մարիամ Թագուհին որոշեց որ Գրամէրը մեռցնել տայ․ քանզի իր կոյր նախանձաւորութեամբը չէր կրնար հաւանութիւն տալ, որ Բարեկարգու-

Digitized by Google

թեան ասանկ մէկ զօրաւոր սիւնը անխախտելի մնայ ․ թէպէտև առջի ժամանակները իր կէտերը տատա-նող էր ։ Թագուհին ասանկ անարգ ապերախտութիւն մը ընելու համար՝ Հռովմայ եկեղեցւոյն իմաստակական թելադրութեանցը համեմատ իր խիղճը հանդարտեցուց , իրեն եղած բարերարութեանը փոխարէն՝ Կրանմէրին վրայ դրուած դաւաճանութեան յանցանքը ներելով ․ որ թէև աս բանիս մէջ Թագուհւոյն մէկ քանի նախապատիւ սիրելիները աւելի յանցաւոր էին , այսու ամենայնիւ Կրանմէր դատաստանի կանչուեցաւ , ու նոյն ատենը անոնք առանց քննութեան անպատիժ մնացին ։ Այսպէս Թագուհին անոր աս մէկ յանցանքը ներելով՝ ինքնիրեն կը խորհէր թէ դէպ 'ի անոր ունեցած պարտաւորութիւնը վճարած է ․ ուստի այնուհետև ուրիշ յանցանքի մը համար զանիկայ բանտարկելու ու իբրև հերետիկոս այրելու հոգ տարաւ ։

Արդէն տեսանք որ Կարտինէլին թիւր խորամանկութիւնը՝ Կրանմէրին կեանքը քիչ մը ժամանակ պաշտպանելու միջոց մըն էր ։ Անիկայ չէր ուզեր որ Փօլը Քանդուարիոյ վիճակին առաջնորդ ըլլայ ․ թէպէտև չէր կրնար ալ փափաք մը ունենալ Կրանմէրը պաշտպանելու , անոր Հռովմէականութեան դէմ հակառակելուն հետևութիւններէն ․ և վերապատուելի Արքեպիսկոպոսը Օքսֆօրտի մէջ բանտարկուած էր , երբոր անոր կործանմանը համար եղած խորհուրդները կամաց կամաց առաջ կ'երթային ։ 1555 , Սեպտեմբերի 12ին՝ Կրանմէր՝ Րիտլէյը ու Լադիմէրը դատապարտող գործակալաց առջևը բերուեցաւ ․ Պրուքս եպիսկոպոսը՝ որ աս ժողովին գլխաւորն էր , բարձր աթոռի մը վրայ նստեր էր , Սրբոյն Մարիամու եկեղեցւոյն արև-

ելեան կողմը՝ հաղորդութեան հացին տակը , որ ինչպէս որ սովորութիւն էր՝ տուփով մը կախուած էր անոր գլխուն վրայ ։ Գրամէր իր եղբայրներուն պէս Պապին իշխանութիւնը չուզեց ճանչնալ ։ Եղբոր յորդորեցին զանիկայ որ իր հերետիկոսութենէն զեղջի գայ , ու եկեղեցիին դառնայ , և ուրիշ ասոր պէս խրատներ որ տուին , մարտիրոսը ծունկի վրայ գալով՝ Տէրունական աղօթքը ըսաւ , եաքը ելնելով , իր հաւատքը և իր բռնած վարդապետութիւնները յայտնեց . Պապին իշխանութեանը վրայ որ խօսք բացուեցաւ նէ՝ այսպէս խօսեցաւ . "Աւա՜ղ , Պապը Անգղիոյ մէջ ի՞նչ բան ունի , որուն իրաւասութիւնը այնչափ տարբեր է աս թագաւորութեանը իրաւասութենէն , որ անկարելի բան է՝ մէկուն ալ ու մէկալին ալ հաւատարիմ ըլլալը ։ Անոնց օրէնքներն ալ իրարմէ խիստ տարբեր են , անանկ որ՝ եթէ մէկը երկուքին ալ երդում ընէ , մէկուն սուտ երդում ըրած պիտի ըլլայ" ։ Գրամէր աս երկու իշխանութեանց տակը ապրած ըլլալով՝ կարող էր անոնց մէջտեղի տարբերութիւնը ցուցընել ։ Ասկէ ետև ցուցուց թէ՝ Հռովմայ օրէնքները դատաստանի մէջ ինչպէս կը պաշտպանէին ամենամեծ եղեռնագործները անգամ , երբոր անոնք եկեղեցական ըլլային ։ Աս ալ վրայ բերաւ որ՝ Աղեքսանդր Գ. Պապը իր ոտքը Փրիդերիկոս Ա. կայսրին պարանոցին վրայ դրած ատենը՝ ստիպեր էր զանիկայ որ իր առջևը գետնատարած խոնարհութիւն ընէ . և ըսաւ ալ թէ՝ պապերը աստուածոց կարգը դասեցին զիրենք , ու մէկ նոր կրօնք մը հնարեցին , կաշառակերութեան և շահախնդրութեան կրօնք մը , բոլորովին Սուրբ Գրոց վարդապետութեանը հակառակ , միայն իրենց թագաւորութիւնը հաստատուն պահելու համար , և

Digitized by Google

Թէ անոնք շատ անգամ իրենց վճիռներուն մէջ կը պարծենային՝ թէ իրենք կարող են մէկդի՝ ձգել Պետրոսին և Պօղոսին , և Հին և Նոր Կտակարանաց պատուիրանքները , և թէ իրենց լիակատար իշխանութեամբը Աստուծոյ չափ բան կրնային ընել . նաև Գրամէր ըսաւ . "Ո՛վ Տէր , աստնկ հայհոյութիւն մը արդեօք լսուա՞ծ է : Թէ որ անանկ մարդ մը գտնուի՝ որ զինքը Պապէն վեր կը դասէ , թող անիկայ նեռ սեպուի . սակայն Աստուծոյ և մեր փրկութեան թշնամին անանկ յայտնի կերպով ցուցուած է Սուրբ Գրոց մէջ՝ ան բացայայտ նշաններով ու հանգամանքներով , [illegible] անոր (Պապին) վրայ , մինչզի եթէ մէկը իր աչքը ու սիրտը լոյսին դէմ գոցելու չըլլայ , անշուշտ պիտի իմանայ թէ ան յիշուածը Պապն է": Բայց աս տեղս հարկ չէ որ Գրամէրին իր անձը պաշտպանելու համար ըրած բոլոր խօսքերը մէկիկ մէկիկ ստորագրենք : Աս քննութեան ժողովին մէջ անանկ ազդու կերպով կը խօսէր , որ Պրուքս եպիսկոպոսը ալ ուրիշ պատասխան մը չգտնելով՝ միայն աս ըսաւ թէ , "Մենք եկանք քեզ քննելու , բայց կը տեսնեմ որ դուն մեզ կը քննես" :

Ան ատենը անոր դէմ եղած ամբաստանութիւնը կարդացուեցաւ : Գրամէրին վրայ դրուած յանցանքները ասոնք էին , թէ կնկան մը հետ ամուսնացած է , հերետիկոսական գրքեր գրեր է , և հրապարակաւ հերետիկոսութիւններ պաշտպաներ է Օքսֆորտ քաղաքը եղած վիճաբանութեանը մէջ* , և ասոնց պէս ուրիշ զանազան յօդուածներ : Ամբաստանութեանը առաջին յօդուածին իրաւունք

---

* Պապականք ատիպեր էին Գրամէրը որ իրենց հետ վիճաբանի :

տուաւ , ցուցընելով թէ աւելի աղէկ է որ ինքը մէկ օրինաւոր կնիկ մը ունենայ , քան թէ ուրիշ քահանայից ըրածին պէս օտարին կնիկը առնէ ու պահէ ։ Քանի որ աս նիւթիս վրայ քննութիւն կ'ընէին , Մարտինոս անուն մէկը ըսաւ թէ՝ Գրամերին տղաքը Ռանդուարիոյ վիճակին գերի էին ։ Ասոր վրայ Արքեպիսկոպոսը ժպտեցաւ , և հարցուց որ՝ եթէ մէկ քահանայ մը իր հարճէն պոռնկորդիներ ունենար , անոնք իր վիճակին գերի՞ կ'ըլլային . աս ալ ըսաւ որ՝ ինքը կը յուսայ թէ անոնց որդիներէն գէշ պիտի չըլլայ իր որդւոցը վիճակը ։

Նոյն [illegible] նազանդի Պապին կոնդակին , որով Գրամեր հրաւիրուած էր Հռովմայ Պապին առջևը անձամբ ներկայանալու՝ ութսուն օրուան միջոցին մէջ ։

Ասիկայ բռնտարգել մըն էր . սակայն Առաքելոյն Հռովմ խրկուելուն պէս՝ աս ալ յօժարութիւն կը ցուցընէր հոն երթալու , թէ որ թագաւորը ու թագուհին հրաման տալու ըլլային ։ Ինքն ալ նամակ մը գրեց թագուհիին . արիաբար ցուցընելով Հռովմէականութեան երևելի սխալմունքները , և միանգամայն առաջարկելով իր Հռովմ երթալու փափաքը , թէ որ անիկայ հրաման տար . վստահ ըլլալով՝ "թէ Աստուած պիտի հաճի իր ճշմարտութիւնը իր ծառային բերնովը պաշտպանելու ինչպէս հոս՝ անանկ ալ հոն" ։ Հրաւիրանաց կոնդակը ծաղրաբանութիւն մըն էր . Գրամեր զգուշութեամբ բանտի մը մէջ պահուեցաւ ։ Ութսուն օրը լմըննալուն՝ Արքեպիսկոպոսը Հռովմայ մէջ դատապարտուեցաւ իբրև անհնազանդ և կամակոր . քանզի սահմանեալ ժամանակին հոն չերևցաւ ։ Դեկտեմբերի 4ին՝ հրատարակուեցաւ թէ Ռանդուարիոյ

թեմը առանց առաջնորդի է ։ Յիշեալ ամսուն 11ին՝ Կարդինալ Փօլը որոշուեցաւ որ ան վիճակին առաջնորդութեան պաշտօնը վարէ . և ինչպէս որ Ճ՛իւէլ կը ստորագրէ , Գրամէր նմանութեամբ այրուեցաւ Հռովմայ մէջ ։

Պապին վճիռը Փետրվարի մէջ Անգղիա հասաւ ։ Թիրլէպի՝ Իլիի եպիսկոպոսը , և Պօննէր՝ Լոնտրայի եպիսկոպոսը՝ Օքսֆորտ խրկուեցան Գրամէրը դատապարտելու ։ Ասոնք նախ իրենց յանձնարարութիւնը կարդացին , որուն մէջ գրուած էր թէ՝ Գրամէրին վրայով եղած ամբաստանութեան յօդուածները զգուշութեամբ քննուեցան Հռովմայ մէջ . երկու կողմի վկաներուն ու փաստաբաններուն ունկնդրութիւն եղաւ , անանկ որ ալ ուրիշ միջոց չմնաց՝ որ ամբաստանեալը պաշտպանելու համար չքանեցրնէին ։ Երբոր Գրամէր աս լսեց , ալ չկրնալով զինքը զսպել , բարձրաձայն աղաղակեց , թէ՝ "Աս ի՞նչ զարմանալի սուտեր են , որ ես հոս զգուշութեամբ բանտի մէջ գոցուած էի , առանց վկաներ ու փաստաբան ունենալու ։ և ասոնք ինծի համար կ՚ըսեն թէ՝ վկաներ մտիկ ընել տուեր եմ , ու փաստաբան դրեր եմ Հռովմայ մէջ . Աստուած անշուշտ պիտի պատժէ աս յայտնի և անպատկառ ստութիւնը" ։ Աս խօսքը կրնայինք հիմակու Հռովմէական մատենագրաց առջևը դնել ։ Իսկ ան ստութիւնը ծածկելու համար ձեռքերնին պատրաստ միջոց մը ունէին . գործակալները Պապին լիակատար իշխանութեամբը շնորհուած ուրիշ կոնդակ մը հանեցին , որով ներողութիւն կը տրուէր Գրամէրին դէմ եղած դատին մէջի պակասութիւններուն , միանգամայն հրամայելով որ անոր դատապարտութեան գործը առաջ տանին , և աշխարհային իշխանութեան

Digitized by Google

ձեռքը մատնեն զանիկայ ։ Ահա Պապին անսխա֊լութիւնը. աս կերպով գործածուած է ։

Ասկէ ետև Հռովմէական քահանայից հագած սովորական զգեստներովը զգեստաւորեցին Գրամէ֊րը , բայց ան փառաւոր նիւթերուն տեղը՝ խոշոր կտաւէ և հնոտի լաթի կտորուանքներէ շինուած էին , իբրև խայտառակութիւն իր առջի բարձր աստիճանին ։ Կարգը առնելուն արարողութիւնն ալ կատարուեցաւ ։ Պօննէր իր սովորական ան֊գթութիւնը ՚ի գործ կը դնէր , բայց Թիրլէպի՝ առաջուց սերտ բարեկամութիւն ունենալով Արքե֊պիսկոպոսին հետ , և Հռովմէականաց սովորական անգթութեամբը աս գործս տեսնելու համար որո֊շուած ըլլալով , զուր տեղը կ՚աշխատէր իր ընկե֊րին կշտամբանաց խօսքերը զսպել , յիշեցընելով անոր իր խոստմունքը որ անարգանօք պիտի չվա֊րուէր ։ Երբոր Արքեպիսկոպոսէն գաւազանը առ֊նել ուզեցին , անիկայ չուզեց անոնց յանձնել Քրիստոսի հօտին վրայ իր ունեցած հոգևոր և հովուական պաշտօնին նշանը , և գրութեամբ մը բողոքեց առաջիկայ ընդհանուր ժողովին ․ սակայն ան բողոքին վրայով զանցառութիւն եղաւ , և ի֊րենց կարգ առնելու արարողութիւնը առաջ տա֊րին ։ Գրամէր ըսաւ ․ "Աս ձեր ըրածը պարապ բան է ․ քանզի շատ ատենէ ՚ի վեր է որ՝ ես աս զգեստները մէկդի ձգեր եմ"։ Ասկէ ետև փոքրա֊ւորի հին ու պատռտած վերարկու մը հագցուցին անոր ․ աս միջոցին Պօննէր զազանային ցնծու֊թեամբ կանչեց ․ "Ալ ասկէ ետև՝ Տէր իմ պիտի չըլլան քեզի", ու պաշտօնատարին սպասաւորներուն ձեռքը մատնուեցաւ որ սպաննուի ։

Գրամէրը նորէն բանտը տարին ։ Կլօսէսդըր֊շայրցի աղնուական մը ետևէն կ՚երթար , և իմա֊

Digitized by Google

նալով անոր կարօտութիւնը և քովը ստակ մը չունենալը , անոր քիչ մը բան տալու միտք ունէր , բայց երբոր յիշեց թէ մարդիկ ժամանակով նեղութիւն կրեցին ասանկ միջոցի մը մէջ ուրիշներուն օգնութիւն ընելնուն համար , սպասաւորներուն տուաւ ստակը , ըսելով . թէ որ դուք բարի մարդ էք , աս ստակը մարտիրոսին պէտք եղած բաները հոգալու պիտի գործածէք ։ Աս բանիս համար Պօններ և Թիրլէպի ան ազնուականը բռնել տուին , և դժուարաւ համոզուեցան զանիկայ ազատ արձակելու ։

Այլ հիմա Գրամէրին պատմութեանը մէկ մասը պէտք է ծանուցանենք , որն որ կընայինք անտես ընել , թէ որ միայն իր անձնական համարումը փնտռէինք . և Գրամէր ինքն ալ աս բանիս պիտի չփափաքէր , այլ մանաւանդ պիտի ուզէր որ իր սխալմունքները ցցուած մնան աշտարակներու պէս , որով ուրիշները իրենց հաւատքին նաւաբեկութենէն զգուշանան , և անոնք որ մահուան ու յուսահատութեան մէջ ընկղմելու վրայ են , սիրտ առնեն , ինչպէս որ իրեն պատահեր էր , և դառնան ան մեծ Քահանայապետին՝ որ մեր տկարութիւնները գիտնալով կարեկից կ'ըլլայ ։

Պապականք տեսնելով որ Գրամէր իրենց անգութ վարմունքներուն և սպառնալեացը դէմ հաստատ կեցեր է , որոշեցին որ անոր հետ քաղցրութեամբ վարուին . քանզի թէ և թագուհին միտքը դրած էր որ զանիկայ մեռցընէ , այսու ամենայնիւ իրենք փորձառութեամբ գիտէին՝ որ եթէ Գրամէր հրապարակաւ իրենց դէմ վկայութիւն տալով մեռնէր , Հռովմէական կրօնքը անբուժելի վէրք մը պիտի ընդունէր ։ Ուստի զանիկայ բանտէն հանելով՝ աւագերէցի մը տունը փոխադրեցին . անոր



Digitized by Google

բոլորտիքը առեր էին զանիկայ գովաբանողները , և դրսուանց ամէն տեսակ սէր ցուցընող շողոմարարները , և կը խոստանային որ եթէ իր Հռովմէականութեան դէմ հակառակիլը ուրանալու թուղթ մը ստորագրելու ըլլայ , իրեն պիտի շնորհուի իր կեանքը , և իր թեմը պիտի դառնայ , կամ թէ որ աւելի նախապատիւ կը համարի , պիտի կրնայ հանգստութեամբ առանձնանալ . և ըսին ալ թէ՝ ինչպէս որ իրեն հաճոյ կը թուի այնպէս կրնայ գրել ։ Պապականք աս խորհուրդը ըրին , քանզի գիտէին որ Գրամէր խաղաղասէր բնաւորութեան մը տէր էր , և որ ամէն տեսակ քաղաքական դատերէ հեռանալ կ'ուզէր . ուստի իրենց խորհուրդին համեմատ՝ հաւանութիւն տուաւ Գրամէր , ու աս հետևեալ ծանուցումը թուղթի մը վրայ գրեց՝ ու ստորագրեց . "Որովհետև թագաւորին և թագուհւոյն վեհափառութիւնը իրենց Բարլամէնդին հաճութեամբը ընդունած են Պապին իշխանութիւնը աս թագաւորութեանս մէջ , ես ալ հաճութիւն կու տամ անոնց օրէնքներուն հնազանդելու , և Պապը աս Անգղիոյ եկեղեցւոյն իբրև գլուխ կ'ընդունիմ , որչափ որ Աստուծոյ օրէնքները և աս թագաւորութեանս օրէնքները և սովորութիւնները կը ներեն" ։ Բայց սակայն ընդունելի չեղաւ , հապա պապական մատենագրաց ստորագրութեանը նայելով՝ համոզուեցաւ հետզհետէ ուրիշ հինգ իրարմէ աւելի զօրաւոր թուղթեր ստորագրելու ։

Մարդկային տկարութեան աս ցաւալի դիպուածը հաւատարմութեամբ յիշելով , կրնանք խորհիլ թէ աս փորձութիւնը Աստուծոյ թոյլտուութեամբն եղած է՝ ուրիշներուն խրատ ըլլալու համար ։ Ո՛հ , Աստուծոյ խօսքին հակառակ եղած բանի մը միջա-

Digitized by Google

մուխ ըլլալէն ետ կեննանք , և մեր մտքին մէջ չե֊րեւակայենք թէ սասնկ բան մը ճշմարտութեան հետեւելուն հետ կը միաբանի ։

Մարիամ և իր խորհրդականները Գրամէրին վրայ աս անհաստատութեան նշանը տեսնելով՝ կ՚ուրախանային . այսու ամենայնիւ Մարիամ իր արիւնահեղ դիտաւորութենէն ետ չդարձաւ . հա֊պա ալ աւելի հաստատուեցաւ աս մտքին վրայ փօլին խորհուրդներովը , նմանապէս Փիլիպպոս թագաւորին և անոր Սպանիացի եկեղեցականաց խրատներովը ։ Այսպէս Գրամէրին մահուան վճիռը ելաւ . և Բօլ վարդապետին հրաման եղաւ՝ որ աս պատեհութեանս վրայով քարոզ մը պատրաս֊տէ ։ Մարտիրոսին չիմացուցեր էին իր մօտալուտ մահը . քանզի կը յուսային որ անիկայ պիտի մեռնի՝ իր բերնին մէջ սուտ վկայութիւն ունենալով ։ Մարտի 20ին՝ Բօլ այցելութիւն ընելու գնաց Գրամէրին , և հարցուց թէ արդեօք իր ստորա֊գրած գրութեանը յարմ՞ծ է ։ Հետեւեալ առա֊ւօտուն կանուխ նորէն եկաւ , ու Գրամէրին քիչ մը ստակ տուաւ , ըսելով թէ՝ աղքատաց ողոր֊մութիւն տալու համար է . և Գրամէրին ըսին ալ՝ որ պատրաստուի հրապարակական քարոզի մը ներ֊կայ գտնուելու ։ Աս եղած բաներէն Արքեպիսկո֊պոսը կասկածի գնաց թէ իր թշնամիները չար խորհուրդ մը ըրած են իր վրայով . և նոյն ա֊տենը հաւատքի վրայ հաստատ չկեցողներուն դառն վշտաց համը քիչ մը առած ըլլալով , շուտով դարձաւ Անոր՝ որուն գթութիւնը անհուն է , և Աւետարանին ճշմարտութեանը վրայ իր ունեցած հաւատքին դաւանութիւնը գրեց ։ Սպանիացի կրօնաւորները՝ որոնք Գրամէրին բանտարկուած ա֊տենը շատ անգամ տեւ կ՚երթային , եկան անոր

ըսէն թէ՝ պարտի հրապարակաւ յայտնել իր դարձի գալը՝ որուն համար ստորագրութիւն տուած է ։ Կէս օրէն առաջ՝ Թինէյնի Լօրտ Կուլիէլմոսը և ուրիշ ազնուականներ և ազատազգիներ իրենց սպասաւորներովը եկան Թագուհիին հրամանաւը ։ Օքսֆորտի ժողովքի անդամները և Սպանիացի կրօնաւորները Գրամէրը առին Սուրբ Մարիամու եկեղեցին տարին, ուր որ մեծ բազմութիւն ժողվուած էր ։ Հռովմէականք խիստ կ'ուրախանային, յուսալով որ աս երևելի Բարեկարգիչը հրապարակաւ պիտի խոստովանի իր պապականութեան դառնալը · Նոյն ատենը Բրօթէսդանդներն ալ հոն կը դիմէին, մէկ կողմէն կը վախնային որ աս կարծիքները իրօք պիտի կատարուին · սակայն մէկալ կողմէն ալ յուսերնին բոլորովին չէին կտրեր, ըսելով թէ՝ Ան որ այսչափ երկար ժամանակ ուրիշներուն Աւետարանը քարոզեց, վերջապէս խոտելի մէկ մը պիտի չըլլայ ։

Երբոր եկեղեցին մտան, կրօնաւորները Սիմէօնին երգը սկսան երգել · «Ալ հիմա ո՜վ Տէր՝ արձըկես քու ծառադ խաղաղութիւնով» · և Գրամէրը ամպիոնին դիմացը շինուած բարձր նստարանի մը վրայ հանեցին · հոն աս վերապատուելի և ակնածելի անձը՝ որ քիչ մը առաջ բոլոր ազնուականներէն և արքունական պաշտօնատարներէն երևելին էր Անգղիոյ մէջ, պատռտած լաթերով և անարգական մահուան դատապարտուած կը կայնէր · սակայն իր Աստուծոյն վրայ հաստատ վստահութիւն ունէր թէ և իր վերջին վարմունքին համար խորին մտատանջութեան մէջ էր ։ Քօլ վարդապետը իր պատրաստած քարոզը իրեք մասերու բաժնեց ։ Առաջին մասը կը պարունակէր Աստուծոյ ողորմութիւնը · երկրորդը՝ Անոր արդարութիւնը · երրորդը՝ Թա-

Digitized by Google

գաւորաց վարմունքին պատճառը չքննելու վրայով ։ Ես վերջէնը Գրամէրին ներկայ վիճակին վրայ դարձընելով, յայտնապէս խօսեցաւ թէ պիտի մեռնի, և յորդորեց զանիկայ որ համբերութեամբ ընդունի իր մահը, յիշեցընելով անոր՝ աջակողմեան աւազակին մահը, և Գրամէրին դարձի գալուն վրայ ուրախութիւն ցուցուց. և սա խոստմունքն ալ ըրաւ որ՝ անոր հոգւոյն հանգստեանը համար պատարագներ պիտի մատուցուին ։

Գրամէր մտիկ կ'ընէր աս յորդորանքը, ու մէջը գտնուած ստութիւններուն համար կու լար ։ Քարոզը լմննալուն, Քօլ վարդապետը յորդորեց Գրամէրը որ հրապարակաւ իր հաւատքը յայտնէ ։ ‹‹Աս բանդ յօժար կամօք պիտի ընեմ", ըսաւ Արքեպիսկոպոսը ։ Ուստի իր հաւատոյ դաւանութիւնը հանեց, և Աստուծմէ 'ներում խնդրելով իր գործած մեղքերուն համար, յորդորեց ժողովուրդը որ Աստուծոյ հնազանդին, և իրենց հոգիներուն բարութիւնը փնտռեն. նաև ըսաւ. ‹‹Հիմա ան երևելի բանին վրայով խօսիմ, որ իմ կենացս մէջ գործքով ու խօսքով ըրած բաներէս աւելի իմ խղճմտանքիս կը դպչի, և աս է՝ որ ճշմարտութեան դէմ գրութիւն մը հրատարակեցի"։ Ան ատենը իր պաշտօնէ զրկուելէն ետև ինչ որ գրած էր 'նէ՝ հերքեց, ու ետքը ըսաւ. ‹‹Որովհետև իմ ձեռքս յանցանք գործեց իմ սրտիս դէմ բան գրելովը, առաջ պէտք է որ իմ ձեռքս պատժուի. ուստի երբոր կրակին մօտենամ, առաջ անիկայ պիտի այրուի" ։

Ասկէ ետև Գրամէր յայտնապէս ըսաւ. ‹‹Թէ որ Պապին վրայով իմ ունեցած կարծիքս կը հարցընէք 'նէ՝ կը մերժեմ զանիկայ իբրև նեռ՝ և Քրիստոսի թշնամին՝ իր ամէն սուտ վարդապետու-



Digitized by Google

թիւններովը . իսկ հաղորդութեան վրայով՝ եւ այնպէս կը հաւատամ , ինտոր որ սորվեցուցած եմ Վինչէսդըրի Եպիսկոպոսին դէմ գրած գրքիս մէջ , որ հաղորդութեան վրայով անանկ ճշմարիտ վարդապետութիւն մը կը սորվեցընէ , որ վերջին օրը Աստուծոյ դատաստանին առջեւը պարզերես պիտի ներկայանայ , իսկ պապականին վարդապետութիւնը՝ որ անոր հակառակ է , պիտի ամչնայ իր երեսը ցուցընելու" :

Փողը կայնողները ապշած կը նայէին անոր վրայ : Բրօթէսդանդները անոր հաւատքի վրայ հաստատ կենալը տեսնելով՝ կ'ուրախանային . իսկ Հռովմէականները սաստիկ կատղած ամօթապարտ կ'ըլլային , որ իրե՛նց խորամանկութեան հնարքները իրենց վերջին խայտառակութեանը պատճառ եղան . ուստի ամբաստանութիւն ըրին՝ թէ ստախօս ու կեղծաւոր մէկ մըն է . ու երբոր անիկայ սկսաւ ալ աւելի բանձր խօսիլ պապականութեան դէմ , Փօլ և իր ընկերները աղաղակեցին , "Գոցեցէք սա հերետիկոսին բերանը , ու զանիկայ մէկդի տարէք":

Կայնած տեղէն վար առին զանիկայ , ու ցիցին քովը տարին , որ Րիտլէյին ու Լադիմէրին այրուած տեղն էր . իր թշնամիները ճամբուն մէջ չարաչար կը նեղէին զանիկայ . և շուտով պէտք եղած պատրաստութիւնները կատարուեցաւ : Գրանմէր համառօտ աղօթք մը ընելէն ետև՝ լաթերը վրայէն հանեց , և իր բոլորտիքը ժողվուած Սպանիացի կրօնաւորները վռնտելով , քովը կայնող տարիքը առած մարդոցը և ուրիշներու ալ ձեռքը երկընցուց ու հրաժարական ողջոյնը տուաւ . երբոր Իլի անուն մէկու մ'ալ ձեռք երկընցուց նէ՝ անիկայ ետ քաշուելով ըսաւ . արժան չէ հերետիկոսները բարևել : Ասկէ ետև շղթայով մը ցիցին կապեցին

Գրամէրը , ու կրակը բռնկցուցին : Երբոր բոցը իրեն կը մօտենար , Գրամէր իր աջ բազուկը երկընցընելով , ձեռքը բոցերուն մէջը խոթեց , ու անշարժ պահեց , միայն մէկ անգամ մը ան ձեռքով երեսը շփեց , որպէսզի ամէն մարդ տեսնէ ձեռքին այրուիլը՝ դեռ կրակը մարմինին չդպած : Վերջապէս կրակը մարտիրոսին բոլորտիքը առաւ , սակայն ինքը իր ցիցին պէս՝ որուն վրայ կապուած էր , շարունակ անշարժ կը կենար . իր աչքերը դէպ 'ի երկինքը վերցընելով ստէպ կը կանչէր , «Անարժան աջ ձեռք», և Ստեփաննոսին մեռնելու ժամանակին ըսած խօսքերը կը կրկնէր , «Տէր Յիսուս՝ ընդունէ իմ հոգիս», մինչև որ վախճանեցաւ :

Յովհաննէս անունով Սպանիացի կրօնաւոր մը զարմանալով աս մարտիրոսին արիութեանը վրայ , վազեց Լօրտ Կուլիէլմոսին գնաց , ու ըսաւ թէ՝ Արքեպիսկոպոսը մեծ յուսահատութեան մէջ մեռաւ : Ըզնուականը բանին աղէկ տեղեակ ըլլալով , ժպիտով մը կրօնաւորին յիմարութիւնը կշտամբեց : Մոխիրները վերցընելու ատենին Գրամէրին սիրտը գտեր էին որ ամբողջ մնացեր էր , ու բնաւ այրուած չէր : Աս ի՞նչ գերազանց առարկայ մը պիտի ըլլար Հռովմէական հրաշք մը սեպուելու համար , թէ որ անիկայ պապական մեռնէր : Պըրնէթ պատմագիրը կ'ըսէ թէ՝ «Ըն եկեղեցին աս բանը պիտի չհրատարակէ՞ր աշխարհիս չորս կողմը իբրև նշան անոր սրտին շիտակութեանը , թէ և իր ձեռքը մեղանչեց» : Այսպէս մեռաւ Թովմաս Գրամէր՝ Քանդուարիոյ Արքեպիսկոպոսը : Իր կրած մահը շատ անգամ իր առջևը դրուած էր , իբր թէ հաւանականաբար նոյն մահով պիտի վախճանէր :

Աս միջոցիս մանաւորապէս կանայք իրենց հաւատքը ու համբերութիւնը ցուցընելով , կրակ-

Digitized by Google

ներու մէջ զԱստուած կը փառաւորէին ։ Երկու կնիկ այրուեցան Իսվիչրէի մէջ , որ ատոնք էին ․ Ակնիս Ռօթթէն՝ և Յովհաննա Թրընչֆիլտ ․ ցիցին վրայ ատոնց ցուցուցած քաջութիւնը նշանաւոր էր ․ երբոր այրուելու վրայ էին , Սուրբ Գրքէն շատ վկայութիւններ բերելով թախանձանօք կը յորդորէին ժողովուրդը՝ որ Աստուծոյ խօսքին յարին , և ոչ թէ Հռովմայ նեռին աւելորդապաշտական պատուէրներուն ու ստութիւններուն հետեւին ․ Յովհաննա Թրընչֆիլտ բանտին մէջ եղած ատենը՝ իր ընկերին չափ ճշմարտութեան նախանձաւոր չէր երեւնար , բայց երբոր ցիցին քովը բերուեցաւ , վրան թուլութիւն մը անգամ չնշմարուելէն 'ի զատ՝ արիացած ալ էր , և գրեթէ յոյսի և ուրախալի ակնկալութեան կողմանէ իր ընկերն ալ գերազանցեց ։

Արդ՝ հիմա որ կը վերջացընենք աս պատմութիւնները , կ'ուզենք յիշել աս թագաւորութեան օրովը չարչարուողներուն գումարը՝ հաւատարիմ մատենագրաց գրութիւններէն առնելով ։ Մարտիրոսաց ցանկին մէջ՝ ամէն աստիճանի , հասակի և հանգամանաց տէր մարդիկ կը գտնենք ․ կոյր , կաղ , փափկասուն կանայք , մէկ ժամու երախաներ ։ Ասոնք ամէնն ալ բոցերու մէջ ձգուեցան ։ Հարուստին , աղքատին , քահանային , և աշխարհականին , ազնուականին , արուեստաւորին , գործատանց տէրերուն , մշակին , և մուրացկանին հետ մի և նոյն անգթութեամբ կը վարուէին ։ Եղիսաբեթ թագուհւոյն մեծ Եպարքոսը՝ Լօրտ Պըրլէյհ՝ կը հաստատէ թէ՝ Մարիամին թագաւորութեանը վերջին չորս տարիներուն մէջ ՈՂՋ ՈՂՋ ԱՅՐՈՒԱԾ մարդոց թիւը՝ ԵՐԿՈՒ ՀԱՐԻՒՐ ՈՒԹՍՈՒՆԵՒՈՒԹԸ

Հոգիի կը Համնէր. այսինքն 1555ին՝ եօթանասունումէկ, 1556ին՝ ութսունուինը, 1557ին՝ ութսունութը, 1558ին՝ քառասուն. և կրօնքի Համար՝ թէ՛ բանտարկութեամբ, թէ տանջանքով, թէ սովով և թէ կրակով մեռնողներուն թիւը՝ գրեթէ ՉՈՐՍ ՀԱՐԻՒՐԻ կը Համնէր: Ուրիշ մատենագիրներ կը Հաստատեն թէ աս թիւէն շատ աւելի մարդիկ մեռած են զանազան մաՀուամբ, որոնց ենթակայ էին Բրօթէստանդները, և թէ ան չորս Հարիւրը Հրապարակաւ այրուողներն են:

Վերջապէս աս պատմութիւնները՝ որոնց մէջ կը ստորագրուին սուրբերուն Համբերութիւնը ու Հաւատքը, այսինքն անոնց «որ զենուած էին Աստուծոյ բանին Համար, ու անոր վկայութեանը Համար՝ որ իրենք ունէին», շատ կերպով օգտակար կրնան ըլլալ, և պէտք չէ զանոնք մտքերնէս Հանել: Քանզի անոնք մեզի կը ցուցնեն թէ որուն պէտք է ապաստանինք՝ երբոր սաստիկ փորձանաց և նեղութեան տակ կը ճնշուինք, և թէ որչափ պարտինք շնորՀակալութիւն մատուցանել որ մենք անանկ չար ժամանակներու մէջ գտնուած չենք. նաև կ՚իմացընեն մեզի ամէն տեսակ կրօնական Հալածանքներէն գարշիլ, և անոնց վրայ անարգանօք նայիլ, և նոյն ատենը կարեկցութեան շարժիլ, և աղօթել անոնց Համար՝ որոնք այնչափ սխալ իմացած են Աւետարանին ճշմարիտ ոգին և սկզբունքները, որ այսպէս չարութիւններ գործելու անձնատուր կ՚ըլլան: Վերջապէս սորվինք աս գրքէս Հռովմայ եկեղեցւոյն ինչ բնաւորութեան և ոգւոյ տէր ըլլալը, որ այնչափ դարեր շատ անգթութիւններ բանեցուց ան աստուածասէր մարդոց դէմ, որոնք անոր վարդապետութիւնները չընդունեցին, և անոր բռնաւորական իշխանութեանը գլուխ

չծռեցին ։ Ան եկեղեցւոյն մնոտի պարծանք մը եղած է իր անփոփոխութիւնը . այո՛ մենք ալ գիտենք որ իր սկզբունքները դեռ չլուսաւորուած դարերուն ինչպես էին նէ՝ հիմակու օրս ալ այնպես են . սակայն իր զօրութիւնը տկարանալով , և մարդկային մտաց լուսաւորութիւնը օր ըստ օրէ զօրանալով , և քրիստոնէից երկիրներուն մէջ քաղաքական ազատութիւնը տիրելով , հիմա աս գրքիս մէջ ստորագրուած բարբարոսական գործքերուն արգելք մը դրուած է , անանկ որ ալ չկրնար յայտնի կերպով նոյն ընթացքը բռնել ։ Աւստի ամէն ով որ զԱստուած կը սիրէ՝ թող ջերմեռանդութեամբ աղօթէ , որ չըլլայ թէ անանկ նախատալից գործքեր երևան ելլելով՝ քրիստոնէական անունը անարգուի , հապա ամէն քրիստոսադաւան եկեղեցին ճանչցուի "ան վերին իմաստութիւնով , որ նախ սուրբ է , ու երկրորդ՝ խաղաղարար , հեզ , դիւրահաւան , ողորմութիւնով ու բարի պտուղներով լեցուն , անխիղճ , ու առանց կեղծաւորութեան" ։

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

3 2044 038 354 6

Digitized by Google

Digitized by Google